Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1932

L 5

1999

ԴԱՄԱԳԻՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

հատոր երկրորդ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՑ

Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՃԻԲ—1872

43806-Ա.Հ.

ՀՐԱՄԱՆԱԴ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՆ Գ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

28284-62
(1932-40)
4
28 1940

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԷՈՐԳԵԱՅ Դ.

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ԱԶԳԱՍԷՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԵՑՆ ՀԱՅՈՑ

ՆՈՒԻՐԷ

Ք. Մ. ԳԵՈՐԳ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՈՒՐԷՆԵԱՆՑ.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԻՋԻՆ ԴԱՐՈՒՑ

Աղգաց գաղթումն և Հայաստանեայց ազգամաքառ Պայծերամանեան անկումն։

Միջին և հիւսիսային Եւրոպա կ'բնակէին յետագայ ցեղերը։ Արևմտեան կողմը՝ Գաղղիայում և Բրիտանիայում՝ կ'բնակէին Կելտաց ցեղը, Կելտաց ցեղից դէպ ի արևելք (Գերմանիայում) կ'բնակէին Գերմանացիք, և Գերմանիայի արևելեան կողմը կ'բնակէին Սլաւեանք և Ֆինեանցիք։ Գերմանիայի տարածութիւնն էր՝ Հռենոսից մինչ Վիսթուլա գետը, և Հիւսիսային ծովից մինչ Պալթիկ ծովը և Դանուբ գետը։ Այս երկրիս հիւսիսային կողմը տեղ տեղ տափարակ է և ճախճախուտ, իսկ միւս մասը լեռնային։ Գերմանիան բարձր լեռներ չունի, այս լեռները ի հնումն ունէին խիտ անտառներ, նոցա մէջ կանգնին անթիւ գետեր։ Գերմանացիք հարաւային ցեղերից կ'որոշուէին բարձր հասակաւ, կա-

պոյտ աչքերով և հերաց մութ դեղին գունով։ Ինութեամբ էին պատերազմասէր և յանձնապատման ու գործունեայ, նոքա էլ միւս անկիրթ ազգաց պէս կոշտ կեանք կ'վարէին, կ'զգենուին անասնոց մորթի, և իւրեանց ղէնքերն էին փայտեայ վահան, տապար, նիզակ և գաւազան, կ'սիրէին պատերազմ և որսորդութիւն, իսկ խաղաղութեան ժամանակ շուայլ և ծոյլ կեանք կ'վարէին, և միշտ խնջոյից մէջ կ'անցնէին իւրեանց օրերը։ Որպէս այժմ նոյնպէս և ի հնումն նոցա սիրելի ըմպելին գարեջուրն էր. և այնպէս սաստիկ վէգ կ'խաղային փողով որ ոչ միայն իւրեանց հարստութիւնը կ'վատնէին, այլ և իւրեանց անձնական ազատութիւնը։ Իսկ տնտեսական կառավարութեան, խաշնարածութեան և հողագործութեան հետ կ'լինէին կանայք, ծերունիք և ստրուկները։ Ո՛չ մէկ ազգ այնպէս չէր պատուի կանանց ցեղը, ինչպէս կ'պատուէին Գերմանացիք։ Նա սոքա միայն միակին էին, մինչդեռ իսկ միւս ցեղերի մէջ կար բազմակնութիւն։ Գերմանացւոց կանայքն էլ շատ հաւատարիմ և սիրով էին իւրեանց արանց հետ. պատերազմի ժամանակ կանայք էլ արանց հետ կ'գընային, և վիրաբուժի պաշտօնը կ'վարէին, զօրաց համար կերակուր կ'պատրաստէին և կ'քաջալերէին զօրաց։ Շատ անգամ փախուստական զօրքը կանանց քաջալերութեամբ կրկին կ'սկսէր պատերազմիլ։ Առաւել կ'պատերազմէին այն պատճառաւ, որպէս զի նոցա ընտանիքը գերի չմատնուի և թշնամեաց ստրուկ չլինին։

Գերմանացիք գիւղեր չէին կազմել, այլ իւրաքանչիւր գերդաստան առանձին կ'բնակէր և իրեն շրջակայքը ունէր սեպհական դաշտ և ծառատունկ։ Աղգակից ընտանիք իրենց մէջ հասարակութիւն կ'կազմէին, քանի մի հասարակութեանց անդամները իմիասին ժողովելով աղգային ժողով կ'կազմէին։ Այն տեղ ղոհ կ'մատուցանէին ի պատիւ չաստուածոց, յետ այնորիկ զանազան գործեր կ'վճռէին, զանազան առաջարկութիւնք կ'անէին պատերազմի կամ խաղաղութեան վերայ, իրենցմէ կ'ընտրէին Դուքս, Կոմս։ Երբ պատանեակը չափահաս կ'լինէր, աղգային ժողովքից կ'ստանար պատերազմական զրաշիք։ Երիտասարդաց սովորական խաղերն էին բոպիկ ոտով վազել թրերի և նիզակաց վերայ։

Նոցա առաջնորդները (Դուքսերը) պատերազմի ժամանակ բաւական հարստութիւն կ'դիզէին իրենց համար կ'կազմէին առանձին զօրք (կեչայթէ) քաջ մարդիկներից, և այն զօրաց օգնութեամբ կարողանում էին իշխանութիւն ձեռք ձգել հայրենեաց մէջ, կամ կ'տիրէին զանազան երկիրներ։ Այսպէս ծագեցան Գերմանիայում թագաւորութիւնք։

Երկիրս, արեգակը, որոտումն և բնութեան միւս մասերը իբրև Աստուած կ'համարէին Գերմանացիք. դեռ ևս նոքա տաճարներ չէին իմանում շինել, բայց միայն վայրից և քարից կ'քանդակէին կոշտ մարդակերպ արձաններ, և այն արձանները կ'պահէին առանձին սուրբ անտառի մէջ, ուր ժողովուրդը կ'երթար երկրպագելու նոցա։ Նուիրական տեղերից ե-

բևեղին էր երկրի կերտա չաստուածուհւոյ լիճը. այն լիճը Պալթիկ ծովու մէկ անտառաւոր կղզւոյ մէջն էր, այնտեղ կար չաստուածուհւոյ կառքը՝ նորա արձանը վրան շինուած, և միայն քուրմը կարողէր նրան մերձենալ։ Միւս նուիրական տեղն էր Երևու չաստուծոյ Օտինի անտառը։ Սա Գերմանացւոց գլխաւոր չաստուածն էր, և պատերազմի բաղդը նրանից էր կախեալ, նրան կ'ներկայացնէին հսկայ մարդ՝ գլխաւորեալ, և սպիտակ ձի հեծած, որ օդոյ մէջ կ'թռչէր, կ'պաշտէին նա և Օտինի որդին շեկամորուս թոռը, որ էր չաստուած որոտման, և ձեռքին ունէր ծանր մուրճ կամ կռան։ Պալտուր չաստուած խոհեմ և գեղեցիկ երիտասարդ, որ կ'բնակէր ոսկեայ ապարանից մէջ. խորամանկ Լոքքը՝ որ միշտ չարութիւն կ'գործէր, և այլն։

Գերմանացիք անմահական կեանք ևս կ'ընդունէին, և իրենց պատերազմական բնութեան համաձայն՝ կ'ներկայացնէին երկնային դրախտը իբրև ահագին դղեակ (Վալհալլա) ուր Օտինի հետ կ'բնակէին այն զինուորաց ստուերները՝ որ պատուով ընկել էին պատերազմի դաշտում։ Այն ստուերներն էլ այնտեղ ժամանակ կանցուցանեն միմեանց հետ որպէս զուարճութիւն պատերազմելով, կուտեն զանազան համադամ կերակուրներ և կ'ըմպեն միշտ գարեջուր, որ կառաջարկեն նրանց դրախտի գեղեցիկ աղջկունքը, վալկարիները։ Միւս ազգերի նման՝ նոքա ևս կ'ընդունէին գուշակութիւն, և այնպէս կ'կարծէին թէ ապագայն միայն կանայք կարեն գու-

շակել. այն պատճառաւ էլ նոքա ունէին քրմութիւնք՝ որք տեսակ տեսակ դուշակութիւնք կանէին, հմայք կանէին, վիճակ կ՚ձգէին, զօհաբերութեան ժամանակ Օտինի հրամանը կ՚նայէին և այլն։

Գերմանացիք շատ ցեղեր կ՚բաժանուէին, որ անկախ էին միմեանցից (Սաքսք, Հերուսկք, Ռուսաք, Մարկոմանք և այլն)։ Բայց երբ նոքա սկսան պատերազմ ունենալ Հռովմայեցւոց հետ, հետզհետէ միացան և կազմեցին քանի մի հզօր ազգեր, ինչպէս, Ֆրանկք՝ Հռենոսի հիւսիսակողմը, Ալամանք՝ Փրանկներից դէպ ի հարաւ, Սաքսոնք՝ Գերմանիայում, յետ այնորիկ Լոնգոբարդացիք, Վանդալք, Ռուրգոնտք և այլն. իսկ արևելեանքն էին Գութք կամ Գոթացիք, որ երկու մասն կ՚բաժանուէին. արևելեան Գութք և արևմտեան Գութք։ Գոթացիք նուաճեցին իւրեանց մերձակայ ցեղերը՝ Սլաւեաններն ու Ֆիններեը, և նրանց իշխանութիւնը կ՚տարածուէր միջին Դանուբից մինչ Տոն գետի եզերքը։

Այս այն Գոթաց ազգն է որ սոքա անհամար զօրքով Հռովմայեցւոց երկիրն արշաւեցին, Դիոկղետիանոսին նոցա թագաւորը դեսպան ուղարկեց ասելով թէ եկ փոխանակ միմեանց հետ պատերազմ անելու և զօրք ջարդելու ես և դու մենամարտենք, թէ որ ես քեզ յաղթեմ բոլոր Յոյները ինձ հնազանդեն, իսկ թէ որ դու ինձ յաղթես մենք ամենքս էլ քեզ հարկատու լինինք։ Դիոկղետիանոսը ինքը տկար դոլով շատ նեղացաւ և չ՚գիտէր ինչ պատաս-

խանել, բայց Լիկիանոս կոմը որուն մօտ կ'մնար Տրդատը, և որուն ցոյց էր տուել իրեն քաջութիւնները, ասաց Դիոկղետիանոսին թէ տէր արքայ ամենեւին մի՛ մտածիր, վասն զի իմ գունդիս մէջ ՝ այոց թագաւորին ցեղէն Տրդատ անունով մի երիտասարդ կայ և նա կարող է Դ-թաց թագաւորին հետ մենամարտիլ։ Դիոկղետիանոս անմիջապէս հրամայեց որ Տրդատին կանչեն, նրան կայսերական զգեստ հագցրեց, կայսերական նշանով զարդարեց, և Դ-թաց թագաւորին միւս օրը հրաւիրեց մենամարտելու։ Երկրորդ օրը Տրդատ կայսերական զօրաց գլուխն անցած մօտեցաւ Դ-թաց բանակին և սկսաւ մենամարտիլ նրանց թագաւորին հետ, Տրդատը իր սաստիկ ուժովն և քաջութեամբն բռնեց նրան և բերաւ Դիոկղետիանոսի առաջ։

Կայսրը սաստիկ ուրախացած, կամեցաւ Տրդատին մեծ պարգև տալ և երբ կայսրը իմացաւ որ նա ՝ այոց թագաւորին որդին է, թագաւորական զգեստ հագցրեց, թագ դրաւ գլուխը և շատ զօրքով ՝ այաստան ուղարկեց։ Տրդատն եկաւ Կեսարիա ուր ՝ այոց շատ նախարարներ իրեն մօտ ժողովեցան, և նրանց հետ միասին մտաւ ՝ այաստան ուր որ Օտայ Ամատունեաց նախարարը բոլոր թագաւորական դանձն և Տրդատին Խոսրովիդուխտ քոյրը, որոց Անի բերդին մէջ պահած էր բերաւ իրեն մօտ։ Տրդատը նրան այս հաւատարմութեանը փոխարէն ՝ այոց տէրութեան հազարապետ նշանակեց։

Բայց այս Գոթերն էլ շուտով արտաքսուեցան Հունաց վայրենի ցեղից որոնք Ասիայէն եկին։

Այն վայրենեաց գալուստը Եւրոպա եղև գլխաւոր պատճառ դաղթականութեան ազգաց։

Հունք Մոդոլեան ցեղից էին, և կ՝թափառէին միջին Ասիայի անապատներում։ Քրիստոսական չորրորդ դարու երկրորդ կիսումը իրենց իշխանաց առաջնորդութեամբ Պասպից ծովուն մօտ գտնուած երկիրներով անցան Եւրոպա, իրենց հետ ունելով իրենց սայլերն և խաշինքը։

Եւրոպացւոց վերայ առանձին երկիւղ տիրեց տեսնելով նրանց այլանդակ և վայրենի կեանքը։

Հունք էին կարճահասակ, ունէին լայն թիկունք ամուր կազմուածք, սև մորթ, տափակ քիթ, մեծ բերան և փոքրիկ աչքեր։ Եւրոպացիք նրանց դիւական ծնունդ կ՝համարէին, նոցա երիվարքը թէպէտ գեղեցկութիւն չունէին, բայց սաստիկ արագընթաց էին, գիշեր և ցերեկ ձիաների վերայ հեծեալ կ՝մնային, այնպէս էլ կուտէին կ՝ըմպէին և կ՝ննջէին։ Նոցա կերակուրն էր բուսոց արմատներ և անեփ միս որը իրենց թամքի տակը կպահէին, և նոցա սիրելի ըմպելին էր ձիու կաթը (խրմրզ)։ Իրենց յարձակման ժամանակ նոքա կ՝կողոպտէին, կ՝այրէին և կ՝սպանանէին առանց խնայելու։ Պատերազմի ժամանակ ոչինչ կարգ չունէին, բայց յանկարծ կը յարձակէին՝ ձիչ և աղաղակ ունելով։

Այս Հունաց աղգը այնպիսի սարսափ տարածեց Պարսից վերայ որ Յազկերտը ամեն կողմ հրովար-

տակներ ուղարկեց, որ իւրաքանչիւր իշխան իրեն զօրքով Պարսկաստան գայ, այս հրովարտակը Հայաստան հասնելով նախարարները իրենց զօրքով գնացին Յազկերտին մօտ, որոնց հետ Պարսից զօրքն էլ միացած գնացին Հոնաց վերայ երկու տարի շարունակ պատերազմեցան, բայց ոչինչ չկարողացան անել, և այդ միջոցին սկսեալ Յազկերտը սկսաւ աշխատել իրեն աղանդը մտցնել Հայաստան դրամ, պատիւ և իշխանութիւն խոստանալով քրիստոնեայ նախարարաց։ Հայաստանը իրեն բարեպաշտ իշխաններուն քաջութեամբը կռապաշտութեան դէմ յաղթութիւններ կատարած ժամանակ, Հոնաց կողմն եղած Պարսից զօրքն իրենց Սերուխտ զօրապետին հետ Աղուանից երկիրն արշաւեցին և սկսան եկեղեցիները կործանել և շատ մարդիկ բռնութեամբ իրենց աղանդը դարձրին։ Եւ այս օրից սկսաւ սաստիկ ատելութիւն Հայոց և Պարսից մէջ որոյ հետևանքն եղև Վարդանանց պատերազմը. երբ նախարարները միաբանեալ պատրաստութիւն կը տեսնէին Պարսից զօրապետը և Վասակը (որ արդէն ընդունած էր այն աղանդը) մեծ երկիւղ կրեցին։ Պատերազմի առաջին երեկոյ Ս. Վ. Լեոնդ երէցը Ս. Յովսէփ կաթողիկոսի հրամանաւ. զօրաց ճառ խօսեց, միւս օրը բոլորքեանք հաղորդութիւն առին։ Պատերազմի ժամանակ Հայոց զօրքը քաջութեամբ յարձակուեց թշնամեաց և նոցա փղերի վերայ և Տղմուտ գետը անցնելով սկսան Ջարդել Պարսից։ Ս. Վարդանը երկար ժամանակ քաջու-

թեամբ բիւրաւոր թշնամեաց հետ պատերազմելուց յետոյ վերաւորուեց, սպանուեց և մարտիրոսութեան պսակն ընդունեց։ Իսկ Ճեացած զօրքը մինչև երեկոյ պատերազմեց, և այս պատերազմի մէջ 1036 հոգի ընկան իշխաններու հետ միասին։ Իսկ Պարսից կողմէն սպանուեցան 3544 զինուոր և 9 իշխան։ Ոնաց զօրքը Այաստանի վերայ էլ արշաւեց և շատ գաւառներ ասպատակելով մինչև Սասուն լեռնոտ գաւառը հասաւ, որ այժմ Տիգրանակերտ կամ Տիարպէքիրի նահանգի գաւառնէ որոյ բնակիչքն են աղատաբարոյ և քաջ Այք և Թուրոք։

Որ և իցէ քաղաք եթէ կ'նուաճէին, նրանցից էլ զօրք կ'ժողովէին և այսպիսով նրանց զօրքը հետ զհետէ կշատանար։ Երևելեան Գոթացիք այս բարբարոսաց չկարողացան ընդդիմանալ և նոքա նեղեցին արևմտեան Գոթացւոց, որ ստիպուեցան Թողուլ իւրեանց բնակութիւնը և Թիւզանդեան Վաղէս կայսեր հրամանաւ անցան Դանուբ գետի հարաւային կողմը և բնակեցան Պալգանեան թերակղզւոյ վերայ 375 թ։

Ոնք տիրեցին այժմեան հարաւային Ռուսիոյ և Ունգարիոյ անապատները, և քանի մի ժամանակ խաղաղ կեանք անցուցին։ Մի և նոյն ժամանակ Գերմանական և Սլաւեան ցեղերը Ոներից մեծ շարժմունք ստացան։ Դախ Վիսիգոթերը չհնազանդեցան Ոռվմայեցւոց, ապստամբեցան, աւերեցին Ռոմայ երկիրները, և նոցա կարողացաւ նուաճել քաջն Թէոդոս մեծը։ Դորա որդւոց Արկադիո-

սի և Ենորիոսի կառավարութեան ժամանակ, Վիսիգոթերը կամեցան հեռանալ Պալդանեան թերակղզից և գնալ դէպի արևմուտք։ Նոցա առաջնորդ ընտրուեց քաջն Ալարիկոս, նորա հանճարից և քաջութիւնից յափշտակուած, ազգային ժողովքում նրան վահանաց վերայ բարձրացրին և ընտրեցին Ալարիկոսը թագաւոր։ Ալարիկոս մտադրուեց մտնել Իտալիա, ուր մեծ հարստութեան յոյս ունէին, բայց այնտեղ նրան հանդիպեց Հռովմայեցւոց քաջ սպարապետը Ստիլիքոն, որին մեծն Թէոդոս նշանակել էր իրեն որդւոյ Ենորիոսի համար արևմտեան Հռովմայեցւոց կայսերութեանը կառավարիչ։ Այն ժամանակ Հռովմայ զօրաց մէջ շատ գերմանացիք կային, որոնք վարձու կ'ծառայէին։ Ինքը Ստիլիքոնը Վանտալաց ցեղից էր։ Թանի որ Ստիլիքոնը ազնուապետական կառավարութիւնն իւր ձեռին ունէր, Ալարիկոսին Իտալիա մտնելու ջանքը զուր անցաւ, նոյնպէս անյաջող եղաւ Գերմանացւոց և միւս ազգաց արշաւանքը Բուրգոնտացւոց, Սուեվաց և Վանտալաց։ Նոցա ջարդ տուաւ Ստիլիքոնը և ստիպուեցան գնալ արևմուտք, այն է Գաղղիա։ Բուրգոնտացիք Հռոդանոս կամ Ռոն գետի մօտ տիրեցին և հիմնեցին Բուրգոնտեան թագաւորութիւն. Սուեվացիք և Վանտալք անցան Պիրենեան լեռները, և Սպանիայում բաժանուեցան։

Յետ այնորիկ Վանտալք իւրեանց Գենսերիկոս թագաւորի առաջնորդութեամբ մտան Հիւսիսային Աֆրիկէ և Կարթագինէ և Նումիդիայի տեղը հիմ-

նեցին Վանտալաց թագաւորութիւնը։ Գենսերիկոս այն տեղից սկսաւ ծովային յարձակումներ տալ Միջերկրական ծովու եղերաց բնակիչներին. միով բանիւ Գերմանական ցեղերից աւերման և կողոպտելու մասին առաջինն էին Վանտալք։ Նոյն ժամանակ թոյլ Անորիոսը Սիկիլիոնի ոսոխներին լսելով հրամայեց Սիկիլիոնին սպաննել։ Այս լսելով Ալարիկոս անմիջապէս յարձակուեցաւ Իտալիոյ վերայ, և ոչինչ արգելք չտեսաւ այն լայնատարած դաշտի վերայ։

Յաղթութեամբ նուաճեց Հռոմը, և այն տիեզերական քաղաքը երեք աւուր մէջ իսպառ կողոպտեցին. միայն խնայեցին Քրիստոնէից տաճարները։ Հար. Իտալիոյ պատերազմի ժամանակ Ալարիկոսը մեռաւ։ Գոթացիք իւրեանց գերեաց ստիպեցին որ գետի ընթացքը փոխեն, այն գետի տակը թաղեցին իւրեանց թագաւորին իր հարստութեամբ, և դարձեալ գետի առաջին ընթացքը տուին, և այն գերիներին սպանեցին, որպէս զի նոքա թշնամեաց չյայտնեն թէ որ տեղ է թաղուած իւրեանց թագաւորը և չշարժեն նորա մարմինը (410 թուին)։ Ալարիկոսին յաջորդը Գոթացւոց առաջնորդեց, և գնացին հար. Գաղղիա, այնտեղ հիմնեցին արևելեան Գոթացւոց թագաւորութիւնը, որոյ մայրաքաղաքն ընտրուեց Տոլոսա կամ թուլուզ քաղաքը Կառոն գետի վերայ։ Այն տեղից Գոթացիք սկսան իւրեանց տէրութիւնը ընդարձակել, անցան Պիրենեան լեռները, և տիրեցին ամբողջ Սպանիոյ։

Այն ժամանակ էլ հիւս. արևելեան Գաղղիայում Ֆրանկաց իշխանութիւնը կ'տարածուէր, և արևմտեան Հռովմայեցւոց կայսերութիւնը կ'կազմէին միայն Իտալիան և Գաղղեոյ փոքրիկ մասը։

Հինգերորդ դարու կէսում Հունաց առաջնորդներից մինը Ատիլաս միացոյց բոլոր Հունաց իւր իշխանութեան ներքոյ, չբաւականանալով այն հարկերից՝ ինչ որ կ'տային իւր հպատակները. կամեցաւ յարձակիլ Հռովմայեցւոց արևմտեան կայսերութեան վերայ և կողոպտել նոցա հարստութիւնը։ Սաստիկ ագահութեան հետ ունէր նա և նուրբ միտք և հաստատ կամք, նորա թագաւորութեան աթոռանիստ քաղաքը Հունգարիայումն էր Մաճառաստան) ահագին բանակ կ'կազմէր։ Ռնակարաններն էին փայտեայ տներ ցեխով պատած։ Ատիլասի բարեկամները շռայլ կեանք կ'վարէին և թանկագին հանդերձ կը զգենուին, բայց ինքը պարզ կեանք կ'վարէր, իւր հասարակ կերակուրը փայտեայ ամանից կ'ուտէր։ Ատիլասը արտաքին երևութով անճոռնի Հոն էր, բայց հպարտ և զուարթ դէմքը, սուր և փոքրիկ աչքերը ցոյց կ'տային նորա գերազանցութիւնը քան միւսները։ Առասպելը կ'պատմէ թէ մէկ Հունացի հովիւ նկատեց մէկ մեծ վէրք կովու ոտի վերայ, հովիւը արեան շաւղով գնաց և տեսաւ այն տեղ մէկ մեծ նիզակ ծայրը ժանկոտ։ Երևի թէ այն նիզակներից մինն է որ հին Սկիւթացիք կ'նուիրէին իւրեանց պատերազմի չաստուածոյն։ Հովիւը այն նիզակը հանեց և տարաւ Ատիլասին, Ատիլաս

ընդունեց մեծաւ ուրախութեամբ և յայտնեց թէ այն սրբազան նիզակը հաստուածները ուղարկեցին նրան, որով կարողանայ բոլոր աշխարհը նուաճել։ Ատիղասը կազմեց կէս միլիոն զօրք իւր հպատակ ազգերից, և հպատակ ազգերն էին, Հունք, Գերմանացիք։ Սլաւեանք և ուրիշ փոքրիկ ցեղեր։ Հանապարհին ամենայն քաղաք և գիւղ աւերելով՝ Գերմանիայէն անցաւ և մտաւ Գաղղիա։ Նուաճեալ ազգերը այնպէս կերկնչէին նրանից, որ անուանեցին հարուած Աստուծոյ, ինքն էս այն անուամբ կ'հպարտանար՝ ասելով թէ այն տեղ ուր որ նրա ձին կ'կոխէ՝ խոտ կարող չէ բուսնիլ։ Գաղղեոյ ազգային առասպելաց մէջ զանազան հրաշքներ կ'պատմեն որ իբր թէ պատահած են նորա արշաւելու ժամանակ, կ'պատմեն որ իբր թէ Փարիզը ազատեց մէկ սուրբ օրիորդ Ժէնվիէվը, նա այնպէս աղօթեց առ Աստուած որ Ատիղասը իւր ճանապարհը փոխեց, թէպէտ ժողովուրդը պատրաստ էր արդէն քաղաքից իսպառ հեռանալու, բայց Ատիղասը անցաւ և պաշարեց Օռլեան քաղաքը։ Օռլեանի Սենթ—Անեան եպիսկոպոսը կ'քաջալերէր բնակչաց՝ յուսադրելով Աստուծոյ օգնութեանը։ Պաշարեալները վերջին կէտն էին հասել. շրջակայքը տիրել էին թշնամիք և Օռլեանի պարիսպներն էլ հետ զհետէ կ'խախտէին. նոքա որոնք չէին կարողանում պատերազմել՝ ջերմեռանդօրէն կ'աղօթէին առ Աստուած, նա իրենց օգնական կ'հրաւիրէին։ Եպիսկոպոսը ամրոցից, բուրգերից կ'դիտեր թէ արդեօք ուրիշ տեղից օգնու-

28284-62 (Ж15.)

թիւն հասնող չկայ. յանկարծ տեսան ի հեռուստ փոշի. երբ եպիսկոպոսին ծանուցին, նա պատասխանեց թէ այդ Աստուծոյ օգնութիւնն է որ կ'հասնի մեզ, և արդարև այն էր Հռովմայեցւոց Աբեմելեքոս զօրավարը, որ բացի Հռովմայ զօրքից ժողովել էր նա և Պիսիդոթաց և Փրանկաց։

Ատիղասը փոքր ինչ փոխեց ճանապարհը, գնաց դէպ ի Շալոն Մառնայի վերայ ուր առաւել յաջող կարէր պատերազմել նորա հեծելազօրքը։ Այն տեղ սկսաւ սաստիկ արիւնահեղ պատերազմ, դաշտի աղբիւրները արիւն էին փոխուել, և վաստակեալ զինուորները ծարաւից տիպուած ըմպում էին այն արիւնոտ ջուրը և նոյն ժամայն մեռանում։ Մօտ 150,000 զինուոր ջարդուեց այն պատերազմում։ Աբեմելեքոսի հնարագիտութեամբ և Պիսիդոթացւոց քաջութեամբ Օռլեանը յաղթող հանդիսացաւ, Ատիղասը այն անյաջողութիւնը տեսնելով՝ տիպուեց Հռենոս գետը անցնել (451 թուին)։ Գաթալաունեան պատերազմը փրկեց արևմտեան Բրիտանիան և Եւրոպան վայրենի բարբարոսաց աւերմունքից։

Հետևեալ տարին Հունաց զօրապետը նոր զօրքով մտաւ Իտալիա։ Փօ գետի դաշտերը բոլորովին աւերեց և ցանկացաւ ուղղակի գնալ Հռովմ։ Փոքրոգի Պաղենտիանոս Գ. կ'աշխատէր դուրը շարժել կամ ողորմութիւն ստանալ վայրենի բարբարոսից, և նրան ընդառաջ գնաց Հռովմայ Լևոն Ա. պապը հարուստ պարգևներով և խաղաղութեան առաջար-

կութեամբ։ Ատտիղասը քաղցրութեամբ ընդունեց դեսպանաց. մանաւանդ որ այն ժամանակ նորա զօրաց թիւը սկսել էր արդէն նուազել թէ ԽոսրովջերմուԹենից և թէ զանազան հիւանդուԹիւններից, Ատտիղասը յօժարեց խաղաղուԹիւն խօսելու, և վերադարձաւ իւր մայրաքաղաքը։ Այն տեղ Ատտուածային հարուածոյն յանկարծակի մահ պատահեց, և իսկ այն ժամանակ՝ երբ նա իւր հարսանեաց հանդէսը կ'կատարէր Գերմանիոյ ժառանգուհի Իլտեգոնտի հետ։ Առասպելը կ'պատմէ թէ Իլտեգոնդը իւր ծնողաց սպանուԹեան վրէժն առաւ Ատտիղասից։ Հունք սարսափեցան իւրեանց թագաւորի մահը լսելով, և սկսան լալ, գոռալ. երևելի մարդիկ էլ իւրեանց մազերը կտրեցին և սկսան թրով իւրեանց վիրաւորել, ինչպէս որ կ'պատմեն՝ թագաւորի մարմինը ամփոփեցին երեք դագաղի մէջ, ոսկեայ, արծաթեայ և պղնձեայ։ Գիշերը թաղեցին նորա մարմինը լապտերները լուցեալ մէկ անապատ տեղ նրա հետ թաղեցին նաև այն ծառայից որք նրա գերեզմանը փորել էին, որպէս զի ժամանակաւ ո՛չ ոք չիմանայ թէ ուր է Ատտիղասի գերեզմանը։ Ատտիղասի հետ թաղեցին նա և զանազան թանկագին բաներ և իւր թուրը։

Հունաց թագաւորութիւնն էլ Ատտիղասայ որդւոց վրայ բաժանուեց։ Հպատակ ազգերը, Ոստրոգոթերը, Լոնգոբարդացիք, Հիպետները և միւսները ապստամբեցան և Հունաց մեծ մասը ջարդուեց նրանցից, մնացած մասը սկսաւ հեռանալ և գնալ դէպ ի արևելք։

Արևմտեան Հռովմայեցւոց կայսերութիւնը փոքր առ փոքր կ'բաժանուէր, Հռոմայեցւոց մեծ զօրապետներից մինը՝ Ռայտիոսը Սիլիքոնի վիճակն ունեցաւ, այսինքն սպանուեց Վալենտիանոս երրորդից. վասնզի նա կ'նախանձէր այն զօրապետի պատուոյն: Վալենտիանոսի յաջորդները միայն կայսերութեան անուն ունէին նրանց կ'բարձրացնէր և կ'ցածացնէր գահից՝ դլխաւոր զօրապետը՝ դնդապետներով և զօրքով: Նրանց զօրքը մեծաւ մասամբ կլինէր գերմանացւոց մէջ վարձած և նոքա եղան Իտալիոյ տէր և կառավարիչ: Ի վերջոյ այն զօրապետներից մինը Ոդոադր անուն՝ սոփակց արևմտեան Հռովմայեցւոց կայսեր Հռովմուլոս Աւգոստոլային որ հրաժարուի իւր գահից և ինքն իրեն անուանեց Թագաւոր Իտալիոյ (476 թուին փրկչի) Այս թիւը պատմութեան մէջ կ'համարուի Հռովմայեցւոց արևմտեան կայսերութեան անկմանը թիւ: Ոդոադրի իշխանութիւնը երկար չտևեց նա պարտաւորուեց իւր տեղը ուրիշին թողուլ, առաւել քաջ Գերմանիոյ սպարապետին, որ էր Թէոդորիկ Ոստրոգոթացին: Հնաց իշխանութեան ժամանակ Ոստրոգոթերը դաղթեցին և բնակեցան Իւլզանդիոյ կայսերութեան երկիրներում՝ Դանուբ դետին և Եդրիական ծովու մէջ: Ատտիղասից յետ նրանց Թագաւորն էր մեծն Թէոդորիկոս, նա իւր պատուով բոլոր Գերմանացւոց սպարապետներից անցաւ, և նա էր ժողովրդոց մեծը գաղթականութեան ժամանակ: Իւլզանդիան ցանկանալով ազատուիլ այնպիսի վտանգաւոր և երկիւղալի դրացիից, ցոյց տուաւ նրան գաղ-

թելու համար հարուստ Իտալիան, Բիւզանդիոյ կայսրը իրեն Հռոմուլոս Աւգոստոլոսի կանոնաւոր ժառանգ կհամարէր, և այն ժառանգութիւնը յանձնեց Թէոդորիկին։ Ոստրոգոթացւոց թագաւորը գնաց պատերազմ՝ իւր բոլոր ժողովուրդը հետ առնելով, ունէր պատրաստի զօրք 200,000 մարդ և նրանց կը-հետևէին կառքերը, նոցա կանայքը և երեխայքը։ Մեծաւ նեղութեամբ անցնելով արևելեան Էլպեան լեռները, մտան հիւս. Իտալիա։

Ոդոադրը փակուեց Հռաւեննայի ամրոցում, և երեք տարի շարունակ քաջութեամբ պատսպարուեց, բայց վերջը սովից ստիպուած անձնատուր եղաւ. դաշնն առնելոյ ժամանակ նա իրեն համար մի բացառութիւն արեց, և թշնամին ընդունեց. այն է իրեն՝ կեանք և ազատութիւն (493 թ.)։ Բայց Թէոդորիկոսը միշտ կերինչէր իւր նուաճեալ թշնամուց և մէկ խնջոյից մէջ սպանելով Ոդոադրին՝ իրեն պատիւը նսեմացաւ։ Ամբողջ Իտալիան ընդունեց Թէոդորիկոսի իշխանութիւնը, և նա կազմեց Ոստրոգոթաց տէրութիւնը։

Այն միջոցներում Բրիտանիայում կազմել էին Անգլոսաքսոնեան պետութիւնք։ Լինդերոդ դարու սկզբում Ստիլիքոնը յետ կանչեց Հռովմայ լեգեոնները՝ որ Իտալիան պաշտպանեն Գերմանացւոցմէն, երբ Հռովմայ լեգեոնները վերադարձան Իտալիա հար. Բրիտանիան մնաց առանց պաշտպանութեան, և այն միջոցին սաստկացաւ Պիքտաց և Սկովտացւոց յարձակմունքը։ Բրիտանացւոց ցեղերի զօրապետնե-

ը կ՚վարձէին իրենց պաշտպանութեան համար Գերմանացւոց զօրքեր, որ կազմած էր Անգղիացիներից և Սաքսոններից, որք կ՚բնակէին Լուսլանտի եղերաց մօտ, և հիւս. Գերմանիայում։ Երբարև այն նոր եկաւոր զօրքը մեծ հարուած տուաւ Սկոտիոյ լեռնականաց, և յետ այնորիկ կ՚աշխատէին որ Բրիտանացւոց ևս նուաճեն։ Սկսաւ սաստիկ խռովութիւն։ Այն խռովութեան ժամանակ յաղթող հանդիսացաւ Արթուրը՝ Բրիտանիոյ թագաւորը։ Նա դարձաւ առասպելաց և երգոց գլխաւոր նիւթ որ միշտ կ՚երգէին Բրիտանիոյ երգիչները կամ պարդեները։ (Այն երգոց մէջ այս ևս կ՚յիշեն, իբր թէ մէկ կախարդ, Արթուրին ընծայել է մի բոլորակ դիւթեալ սեղան և թագաւորը միշտ այն սեղանոյ վերայ կ՚ուտէր խնջոյից ժամանակ իրեն մարտակիցների հետ, և այն սեղանոյ վերայ ուտելիքը և ըմպելիքը երբէք չէր պակասի)։

Բրիտանացիք թէպէտ մեծ քաջութեամբ կ՚ընդդիմանային, այնու ամենայնիւ վերջը յաղթուեցան. վասն զի նրանց թշնամիք միշտ նոր զօրք կ՚ստանային իրենց օգնութիւն՝ հիւս. Գերմանիայից։

Այն նոր յաղթող զօրքերը հետ զհետէ սկսան թագաւորութիւններ կազմել, և հիմնեցին եօթն Անգլոսաքսոնեան պետութիւնք (Կենտ, Սուսսէքս, Նորթումբերլանտի և այլն), միայն կղզւոյն հարաւային արևմտեան մասին մէջ Վալիսի և Կորնվալիսի լեռնային ապաստանարանաց մէջ Բրիտանացիք քանի մի դար կարողացան իրենց ազատութիւնը

պահպանել։ Նրանց մէկ մասն էլ դաղթեց Գաղ-
ղեոյ մերձակայ թերակղզոյ վերայ որ է Պրեթայն։

Դէ այսպէս ազգայ մեծ դաղթականութենէն
սկսեալ՝ Գերմանական ցեղերը այս կերպով բնա-
կուեցան Հռովմայեցւոց արևմտեան կայսերութեան
երկիրներում։ Իտալիայում մնացին Ոստրոգոթերը
հիւսիսային Գաղղիայում Ֆրանկները, Գաղղիոյ
հարաւային արևելեան մասին մէջ — Բուրգոնտները,
Սպանիայում և հարաւային արևմտեան Գաղղիա-
յում կամ Աքուիտանիայում — Վիսիգոթները,
հիւսիսային Աֆրիկէի մէջ Վանդալները, Իլիտա-
նիոյ մէջ Անգլոսաքսոնները։

Գերմանացւոցմէ հիմնեալ նոր տէրութիւնք։

Մեծն Թէոդորիկոս 30 տարի խոհեմաբար և
արթնութեամբ կառավարեց Ոստրոգոթաց թագա-
ւորութիւնը։ Բայց նորա Իտալացւոց, Գոթացւոց
հետ բարեկամացնելու աշխատութիւնը զուր անցաւ։
Իտալացիք իրենց նուաճողներին վերայ կ'նայէին իբ-
րև բարբարոս և հերետիկոս ազգի վերայ. հարկաւոր է
իմանալ, որ այդ միջոցներում Քրիստոնէութիւնը
արդէն կ'տարածուէր Գերմանացւոց ցեղերի մէջ,
բայց սկիզբը Արիոսի աղանդոց պէս։ Դրբ առաջին
ժողովը եղև Նիկիոյ մէջ, Արիոսի հետևողներից
շատերը գնացին հիւսիսային Գերմանիայ և այն տեղ
կ'քարոզէին նոր հաւատ, և առաջին ընդունողները
Գոթացւոց ազգը եղաւ։

Թէոդորիկոսը իւր կառավարութեան վերջին ժամանակներում իմացաւ Հռովմայ գաղտնի հաղորդակցութիւնը Կոստանդնուպօլսոյ հետ, սաստիկ վրդովածէր այս դաւանութեամբ և սպանել տուաւ քանի մի Հռովմայ երևելի իշխաններին, որով առաւել գրգռեց իրեն դէմ Հռովմայեցւոց։

Թէոդորիկոսը թողաւ իւր մահուան յետոյ դեռահասակ թոռն (526 թուին). և Գոթացւոց մէջ մեծ խռովութիւն ծագեց։ Այս ներքին խռովութեան ժամանակ մեծ օգուտ ունեցաւ Բիւզանդիոնի կայսր Յուստինիանոսը (Բիւզանդիոնի թագաւորները դարձեալ իրենց կ'համարէին Հռովմայ արևմտեան Կայսերութեան ժառանգ)։ Յուստինիանոսի քաջ սպարապետ Բելիսարիոսը, որ առաջուց նուաճել էր Աֆրիկէի մէջ Վանտալաց թագաւորութիւնը մտաւ Իտալիա, և արձակուեց Գոթացւոց վերայ։ Գոթացիք քաջութեամբ կ'պատերազմէին, բայց Իտալացիք անցան նոցա թշնամեաց կողմը՝ այսինքն Բելիսարիոսի։ Սակայն Յուստինիանոսը չ'թողաւ որ Բելիսարիոսը այդ պատերազմը վերջացնի, նրան յետ կանչեց և նորա տեղը նշանակեց Ներսէսին։ Նորոգ կարգեալ Սպարապետը բոլորովին ջնջեց Ոստրոգոթաց տերութիւնը (554 թ.), և այնպէս Իտալիան դարձաւ Բիւզանդիոյ կամ Յունաց կայսերութեան երկիր (նահանգ)։ Ներսէսը առաջին կուսակալ նշանակուեց՝ Եկզարխոս տիտղոսը կրելով, և իրեն բնակութեան համար ընտրեց Հռաւենա քաղաքը։

Բայց Յոնք նոյնպէս չկարողացան երկար միջոց Իտալիային տիրել։ Այնտեղ երևեցան Գերմանական նոր բարբարոսներ, Լոնգոբարտներ (այսինքն երկար մօրուս ունեցողներ)։ Կ'պատմեն թէ Յուստինիանոսի մահուան յետոյ նորա Եկզարխոս տիտղոսը առին նաև վրէժը առնելու ազատաւ ինքը հրաւիրեց Լոնգոբարտներին։ Ազգաց դաղթականութեան ժամակ Լոնգոբարտները եկին Դանուբի եզերաց մօտ և իւրեանց դրացի Հելիանների հետ սկսան սաստիկ թշնամութիւն անել։

Լոնգոբարտացւոց թագաւորը Ալբոյինոս յաղթեց Հելիրացւոց զօրավար Կունիմունդին, և իւր յաղթած թշնամոյ գանկից՝ բարբարոսաց սովորութեան համաձայն, հրամայեց որ իրեն համար սեղանոյ դաւաթ շինեն, և նորա ազջիկ Ռոզիմունդային էլ իրեն կնութեան առաւ։

Յետ այնորիկ Ալբոյինոսը անցաւ Ալպեան լեռները և տիրեց հիւս. Իտալիան (որ այն օրից կոչուեցաւ Լոնգոբարտիա կամ Լոմբարտիա), տիրեց նոյնպէս միջին Իտալիան, բայց այն յաղթութեանց ժամանակ սպանուեց իւր վրիժառու կողակցից։ Կ'պատմենթէ միանգամ խնջոյից ժամանակ թագաւորը հրամայեց որ դաւաթ բերեն, որ շինուած էր Կունիմունդի գանկից ի թիւս միւս ներկայ գտնուող անձանց իւր կնոջն էլ տուիցեց որ նա էլ այն գանկովը խմէ։ Դեռ այն ժամանակ մտաբերեց բարբարոսաց սովորութիւնը՝ իւր հօր մահուան վրէժն առնել։ Խօսակցեց թագաւորի թիկնապահին հետ, որ եթէ նա թագաւորին սպանէ

ինքն նրա հետ կ'գտակուի, և Թիկնապահը կ'դառնայ Թագաւոր: Մինչդամ երբ Թագաւորը քնած էր, Թիկնապահը մտաւ նորա ննջարանը դահճի հետ: Էլբոյինոսը յանկարծ զարթեց, և կամեցաւ առնել եր բայց չկարողացաւ ոտի կանգնել, վասն զի Ռոզիմունդան առաջուց նրան կապել էր մահճակալի վերայ, նա բաւական միջոց ընդիմացաւ՝ աթոռը ձեռք առած. բայց շուտով սպանուեց իւր թշնամիներից անկողնոյ մէջ: Ռոզիմունդան սարսռուեց փախչել Լոնդորբարտացւոցմէ ազատուելու ազագաւ, և գընաց Ֆռաւենա՝ Յունաց Էկզարխոսի մօտ: Էկզարխոսը ցանկացաւ նորա հետ ամուսնանալ, նա էլ յօժարեց, բայց կամենալով ազատուել իւր առաջին ամուսնոյ Թիկնապահից, որուն խօսք էր տուել առաջուց, Թունաւորեալ գինով սպանեց նրան, նա զգալով Թոյնը, սուրը ձեռքին առած՝ սարսռեց Ռոզիմունդային որ մնացածն էլ նա խմէ:

Ռոզորովին ուրիշ պատիւ տացաւ Լոնդորբարտացւոց միւս Թագուհին Թէոդոլինդա: Էլբոյինի յաջորդներից մինը Ավտարիս անուամբ՝ դեսպաններ ուղարկեց Պաւարիոյ դքսին մօտ, խնդրելով նորա Թէոդոլինդա դուստրը ի կնութիւն. և ինքն իրեն անուանելով Ավտարիսի բարեկամ դեսպանաց հետ գնաց Պաւարիա: Երբ դուքսը ընդունեց դեսպանաց առաջարկութիւնը, կեղծեալ դեսպանը (ինքն Ավտարիսը), խնդրեց աղջիկը տեսնել, որ նա սրա ձեռքից ընդունի գաւաթով գինի, բաժակը տալով՝ աղջկայ փոքր մատը սեղմեց· աղջիկը շատ նեղացաւ

նորա անկիրթ վարվելուն վերայ, բայց նորա պահապան կինը նորան հանդատացրեց ասելով թէ բաց ի քո ամուսինը ոչ ոք չէր կարող այդպէս վարուիլ։ Դէ, պաններըը կ'վերադառնային Պաւարիացւոց ճանապարհորդակիցների հետ, Եվտարիը յանկարծ կանգնեց թամբի վերայ, և արադութեամբ իմն ձըգեց իւր տապարը, որ շատ խոր մտաւ ծառի մէջ. ,,Ահա այսպիսի հարուածներ կ'տայ Լոմբարտացւոց թագաւորը'' աղաղակեց նա, և յայտնեց իրին ով լինելը։

Թէոդոլինդան երբ դարձաւ Լոմբարտացւոց թագուհի. այնպէս գրաւեց ժողովուրդը, այնպէս սիրելի եղաւ իրին հպատակաց, որ երբ Եվտարիը վախճանեց Լոմբարտացիք յայտնեցին թէ նա կ'լինի մեր թագաւոր՝ որոյ հետ մեր թագուհին կ'ամուսնանայ։ Թէոդոլինդան պատուեց Լոմբարտիոյ դուքս Ագիլուլֆին հետ։ Լոմբարտացիք էլ առաջուց ընդունած էին Արիստոնէութիւն, բայց Գոթացւոց նման Արիոսեան էին։ Ընդհակառակն Թէոդոլինդան ջերմեռանդ քաթոլիկ էր և նամակագրութիւն ունէր Հռոմայ Գրիգոր Ա. պապին հետ Գրիգորը ոչ թէ միայն կարողացաւ Թէոդոլինդայի բարեկամութեամբ Հռոմը պատերազմասէր Ագիլուլֆի ձեռքից ազատել, այլ և Թէոդոլինդայի աշխատութեամբ կարողացաւ թագաւորին և հպատակ ազգաց կաթոլիկ եկեղեցի մտցնել։ Թէպէտ Լոմբարտիոյ թագաւորները կ'շարունակէին Արիոյինի յաղթութիւնները, սակայն չկարողացան Իտալիան խպառ առ-

նել Ռիզանդացւոց ձեռքէն։ Ընդաջողութեան գլխաւոր պատճառը իրենց անկարգութիւնն էր։ Լոմբարդիոյ դուքսերը իրարու մէջ բաժանած էին նահանգները, միշտ խռովութիւն էր նրանց մէջ, և չ'էին հպատակում իրենց թագաւորաց։ Երկրորդ գլխաւոր արգելքն եղաւ Հռովմայ պապերի կողմից։ Կոստանդնուպոլիսը հեռու լինելով նրանցից, պապերը կարողացան ձեռք բերել ոչ միայն հոգևոր, այլ նաև քաղաքական իշխանութիւնը, և քաջութեամբ Հռովմը կ'պաշտպանէին Լոմբարդացւոցմէ։ Երբ վերջը Լոմբարդացիք շատ նեղեցին Ստեփաննոս պապը ստիպուեց օգնութիւն հրաւիրելու Փրանկաց թագաւոր Պիպինոս կարճահասակին։ Պիպինոս յաղթեց Լոմբարդացւոց, առաւ նրացից Հռաւենան կամ Նեցա Եկղարխութիւնը և տուաւ Հռովմին։ Եւ այն օրից սկսաւ անուանել Եկեղեցական կամ պապի երկիր։ Ու հասարակ այն միջոցներում Իտալիան շատ խղճալի դրութեան մէջ էր։ Ընդ ծաղկեալ թերակղզին բոլորովին աւերակ էր դարձել բաւական պատերազմներով և բարբարոսաց յարձակումներով, շատ դիւղեր բոլորովին անմարդաբնակ մընացին, և Հռովմայ հարուստ քաղաքները ծածկուեցան աւերակներով։ Ի Դաղղիաբնակեալ գերմանական ազգաց մէջ ամենաքաջը Փրանկաց ցեղն էր։ Բարձրահասակ և ամուր կազմուածքով, զինաւորեալ մեծ տապարներով և երկար վահաններով, այս բարբարոսաց մէկ տեղ երևելուն պէս ահագին սարսափ և երկիւղ կ'տարածուէր բնակչաց վերայ։

Նոքա զանազան ցեղեր կ'բաժանուէին, որոց կ'առաջնորդէին առանձին թագաւորներ: Փրանկաց մեծագոյն մասին վերայ տիրապետող Մերովեան տունը, որոնք կ'որոշուէին իրենց երկար մազերով որ երբէք չէին կտրի: Դ. դարու վերջում սրանցից երևելին էր Վլոդովիկոս՝ շատ խորամանկ և վատահ թագաւորը, նա էր Փրանկաց հզօր թագաւորութեան հիմնողը:

Ըլամանները այն ժամանակ կ'տիրէին միջին Հռենոսի երկիրներուն: Յուլպիին քաղաքին մօտ Վլոդովիկոսը յաղթութիւն առնելով, այն երկիրներուն տիրեց և դարձաւ Փրանկաց երկիր: Բուրգունտացւոց իշխանուհին Կլոթիլդէ Վլոդովիկոսի կողակիցը քրիստոնեայ էր, և միշտ կ'համոզէր իւր մարդուն կռապաշտութիւնը թողուլ: Բայց Վլոդովիկոսը կ'հետաձգէր: Կ'պատմեն թէ Յուլպիինի պատերազմի ժամանակ՝ երբ թշնամեաց կողմը կ'անցնէր յաղթութիւնը, Վլոդովիկոսը բարձր ձանիւ խոստացաւ մկրտուիլ՝ եթէ յաղթող հանդիսանայ այն պատերազմում, նոյա զօրաց մէջ կային շատ Գազղեացի և Հռովմայեցի քրիստոնեայք՝ նոքա երբ այն խոստումն լսեցին, մեծապէս քաջալերուեցան և մեծ յաղթութիւն արին: Հռեմս քաղաքում Վլոդովիկոսը իւր զօքրով մեծ հանդէսով մկրտուեց: Երբ մկրտութեան ժամանակ Եպիսկոպոսը սկսաւ պատմել Քրիստոսի չարչարանքը, Վլոդովիկոսը խոժոռուեց և ազազակեց ասելով թէ՝ " ես լինէի այն տեղ իմ Փրանկներով սասաթիկ վրէժ կառնուի նրանցից՝ :

Նշանաւոր մի բան էր որ Փրանկիները ընդունեցին մկրտութիւն քաթոլիկաց հոգևորականներից. սրանով նոքա Գաղղիացւոց և Հռովմայեցւոց գաւառակից եղին, և ժամանակին կ'դառնային մի ազգ։ Պլոդովիկոսը մատրուեց Ասարոդոթներից առնել Ակուիտանիան կամ հար. արևմտեան Գաղղիան, և յաջողութեամբ վերջացուց այն ձեռնարկութիւնը. վասն զի Ասարոդոթները իբրև Արիոսականք ատելի էին տեղւոյն բնակիչ քաթոլիկաց Հոգևորականները կ'աշխատէին օգնելու Պլոդովիկոսին, և այնպէս Ասարոդոթները արտաքսուեցան Գաղղիայէն։ Մի և նոյն ժամանակ Պլոդովիկոսը կ'աշխատէր որ կարողանայ նուաճել և միաց Փրանկաց ցեղերը, որք կը հպատակէին ուրիշ Մերովէանց։ Նա հասաւ այս նպատակին իւր խորամանկութեամբ և չարադործութեամբ, և համարեա թէ իւր բարեկամաց բոլորովին ջնջեց։ Պատմեն թէ մարդ ուղարկեց մէկ թագաւորի ազգի մօտ և ասաց թէ՝ քո հայրդ ծեր է. եթէ նա կ'մեռնի, հողը և իմ բարեկամութիւնը քեզ կ'պատկանի։ Ակերախտ որդին սպանեց իւր հայրը, և ինքն էլ սպանուեց Պլոդովիկոսի մարդկերը անցին, նրանց զօրքն էլ անցաւ Պլոդովիկոսի կողմը, և վահանի վերայ բարձրանալով իրենց թագաւորը ընտրեցին։ Նոր նուաճեալ ազգաց վերայ թագաւորը մեծ իշխանութիւն ունէր. իսկ Փրանկները իրենք իրենց ազատ կ'համարէին և թագաւորին կը հնազանդէին միայն պատերազմի ժամանակ՝ իբրև իրենց սպարապետին։ Թէ ինչպէս կ'հնազանդէին նո-

քա՝ ահ՝ ցոյց կ՝տայ հետագայ անց.քը։ Փրանկները միանգամ կողոպտեցին քրիստոնէից եկեղեցին, Եպիսկոպոսը խնդրեց Արդովիկոսէն որ անօթներից միայն մէկ թանկագին անօթ տան, Արդովիկոսը խոստացաւ դարձնել բայց հարկաւոր էր զօրաց համաձայնութիւնն առնել. վասն զի միշտ կողոպտած գոյքից միայն մէկ մասն էր թագաւորին։ Կողոպտած գոյքի բաժանումն եղև Սուասոնն քաղաքում, զօրաց մեծ մասը համաձայնեց որ թագաւորի բաժնի հետ տան նա և այն թանկագին անօթը։ Բայց Փրանկներից մինը զոռաց ասելով՝ թէ իւր բաժնից աւելի ոչինչ կարելի չէ տալ, և բարկացած՝ տապարը զարկեց այն թանկագին անօթոյ վերայ։ Արդովիկոսը լռեց, այն անօթը առաւ Եպիսկոպոսի ծառային, և մատաղրուեց յաջող ժամանն այն զինուորից վրէժն առնուլ, ըստ սովորութեան Փրանկաց՝ մարտ ամնում թագաւորը զօրահանդէս ունէր, անցնելով զօրաց առաջ՝ յանկարծ կանգնեց այն վերոյիշեալ յանդուգն զինուորի առաջ. առաւ նրա ձեռքից տապարը, ձգեց գետնի վերայ և ասաց, "ոչ ոք չունի այդպիսի վատ գ.նք՝ ինչպէս դու ունիս", Փրանկ զինուորը խոնարհեց որ տապարը առնու, այն խոնարհած ժամանակ Արդովիկոսը գլխատեց նրան՝ ասելով թէ՝ նոյնպէս և դու այդպէս զարկեցիր անօթոյն Սուասոն քաղաքում։ Արդովիկոսի մահուան յետ (511 թ.) Փրանկաց թագաւորութիւնը բաժանուեց նորա որդւոց մէջ, և այն բաժանումն էր պատճառ Մերովեանց ներքին խռովութեան։ Այն խը-

ռովութեան հետևանքն էր միմեանց սպանելը և տեսակ տեսակ չարութիւններ, թէպէտ Փրանկերը Քրիստոնեայ էին, բայց դարձեալ բարբարոսներից առաւել վայրենի էին։

Այն միջոցին պատահեց սաստիկ վրիժառութիւնը երկու Փրանկաց թագուհեաց Բրունիգիլդայի և Փրեդիգոնդայի։ Բրունիգիլդան Փրեդիգոնդայից կամենում էր իւր քրոջ մահուան վրէժն առնուլ, և կստիպէր իւր մարդուն պատերազմ բանալ, որ նորոգուեց և տևեց 40 տարի։ Բրունիգիլդան իւր մարդոյ մահից յետոյ ինքը կկառավարէր իւր որդւոյ անուամբ և յետ այնորիկ իւր թոռան անուամբ։ Երևելի իշխանաւորները զզուեցան նորա կառավարութենից և իշխանութիւնը յանձնեցին Փրեդիգունդայի որդւոյն և նա առաջին եօթանասնամեայ թագուհի Բրունիգիլդային սպանել տուաւ բարբարոսական կերպիւ, կապելով վայրենի ձիու պոչէն (619 թ)։

Գրեգորիկոսի ժառանգաց ժամանակ Փրանկաց երկիրների հետ միացան նոյնպէս Բուրգոնիան և Թուրինկան, այնպէս որ սրանց տէրութիւնը կտարածուէր Պիրենեան լեռներից մինչև խորին Գերմանիան, Փրանկաց թագաւորութիւնը երկու զըլխաւոր մասն կբաժանուէր. արևելեան Աւստրազիա կամ բնիկ Գերմանական երկիրը, և արևմտեան Նեյստրիա կամ Գաղղիա։ Մերովեան տան վերջին թագաւորները մինը քան զմիւսն անպիտան էին, և նրանց ժամանակ կկառավարէին պալատականները

կամ (արքունի հազարապետ) որ միշտ Փրանկ իշ-
խանաց կողմն էին։

Այս արքունի հազարապետներից մինը՝ Պիպինոս
Հերիստալեան՝ այնպէս հզօր էր որ ստիպելով եղաւ
և Նեյստրիոյ արքունի հազարապետ։ Նորա որդի
Կարոլոս Մարտելը (Ուռն) նոյնպէս իւր ձեռքի տակ
ունեցաւ այն երկու մասը։ Նա մեծ անուն ստացաւ
յաղթելով արևելեան պատերազմող Արաբացւոց։

Արաբացիք Սպանիան նուաճելով՝ մտադրուեցին
Գաղղիա էլ մտնելու։ Բայց այն տեղ հանդիպեց
նրանց Կարոլոս Մարտելը իւր Փրանկներով, և պա-
տերազմը սկսաւ Պուատիէ քաղաքին մօտ որ Արա-
բացւոց քաջութիւնը ոչնչացաւ Փրանկաց զարմա-
նալի պատերազմելուն առաջ։ Այս առաջին անգամ
պատահեց որ Արաբները յաղթուեցան, և ստիպուե-
ցան դնալ յետ Սպանիա։ Կարոլոսը իւր քաջ պա-
տերազմելուն և սաստիկ հարուածներ հասցուցանե-
լուն աղագաւ կոչուեցաւ Մարտել (Ուռն) (732
թուին)։

Մերովինք կ'բաւականանային իրենց թագաւո-
րական տիտղոսով, նախկին սովորութեան համա-
ձայն երկար մազեր կ'պահէին, և կ'բնակուէին խո-
հեմաբար հեռաւոր ամրոցներում, երբեմն նստելով
դահի վերայ հանդէսով և մեծ փառքով կ'ընդու-
նէին օտար ազգութեանց դեսպանաց, և թագաւորը
այն կ'պատասխանէր և այն կ'խօսէր ինչ որ նրան
կ'ասէր արքունի հազարապետը։ Իրեն ամրոցից տեղ
գնալու ժամանակ՝ կառք կ'նստէր՝ եզներ լծած, և

կառավարն էլ կողքին կ'երթար։ Ելյոպէս կ'երևէր նա ժողովրդեան առջին միանգամ մարտ ամսում ազգային ժողովոյ ժամանակ։

Կարոլոս Մարտելին յաջորդեց նորա խնլացի որդի Պիպինոս կարճահասակը (թէպէտ հասակին պատճառաւ կարճ կոչուեցաւ, սակայն միանդամայն ասատիկ ուժով էր)։ Նա չ'բաւականացաւ արքունի հազարապետի անուամբ, այլ իրեն անուանեց թագաւոր (752 թուին), և վանքը մոցրուց վերջին Մերովեան թագաւոր Պիլդերիկոս Գ-ին։ Ալնիփակիոս եպիսկոպոսը Պիպինին օծեց թագաւոր, և յետ այնորիկ Հռովմայ Ստեփաննոս պապը, որ եկած էր Պիպինի մօտ Լոմբարտացւոց դէմ օգնութիւն խնդրելու նոյն օծումը կրկնեց։ Պիպինն էլ այն պատճառաւ սիրով օգնեց պապին և պարգևեց նրան Հռաւեննա քաղաքը։ Նրանից սկսաւ նոր տուն թագաւորել Փրանկաց մէջ՝ Կարլովինկեան կամ Կարոլոսեան անուամբ, այսպէս իւր մեծ Կարոլոս որդւոյ անուան պատճառաւ ասուեցաւ։ Փրանկաց և միւս գերմանական ազգաց, որք բնակեցան արևմտեան Հռովմայեցւոց կայսրութեան մէջ, նախկին կոպիտ վարքը սկսաւ հեզշեան փոխուիլ։ Յաղթողները բնակուելով ուսումնական և կրթեալ ժողովրդեան մէջ, նրանցից ասին նոցա սովորութիւնները, Լատինացւոց լեզուն բաւականին աղճատել էին, նոր ազգերը և նոր լեզուները որ ծագեցան այս խառնուրդից կ'կոչուին Ռոմանեանք, որք են Գաղղիացիք, Իտալացիք, և Սպանիացիք։

Գերմանացիք հիմնելով նոր թագաւորութիւններ՝ պատրաստեցին նոյնպէս նոր գրաւոր օրէնքներ, այս ինքն նոցա հին սովորութիւնները ժողոված էին և գրած լատիներէն լեզուաւ։ Այն օրէնքով կ'դատէին ամենայն բան։ Առաջ Գերմանացիք՝ որպէս և միւս վայրենի ցեղերը՝ սովորութիւն ունէին արեան վրէժ առնել. բայց յետոյ այն սպանութեամբ վրէժն առնելը վերջացաւ, և սկսաւ դրամական տուգանք։

Աղատ մարդոյ պատիւը առաւել բարձր էր քան սարկին, աղատ մարդոյ սպանման կամ վիրաւորելուն համար մեծ տուգանք էր նշանակուած՝ քան թէ սարկի համար։ Դատարանը կ'բացուէր կամ թագաւորի ներկայութեամբ, կամ իրեն նշանակուած կոմսից և դքսից նախագահութեամբ. դատապարտելի մեղքը կամ անմեղութիւնը իմանալու համար նոքա կ'երդուեցնէին, և սասիկ կ'փորձէին։ Օրինակի համար, կ'ստիպէին ձեռքը կոխել տաք ջրի մէջ, կամ բոպիկ ոտքով անցնել կարմրացած երկաթի վերայ, և եթէ քանի մի օրից յետոյ այրուած տեղ չերևեար, այն ժամանակ կ'հաստատուէր որ նա անմեղ է։ Հաստ անգամ դատը մենամարտութեամբ կ'վերջանար. ով ուժ կ'յաղթէր՝ նա արդար կ'լինէր, և նոքա կ'ասէին, նա մեղաւոր է, և Աստուած միշտ արդարին կ'օգնէ. այդ պատճառաւ այն դատաստանը կ'կոչուէր Աստուծոյ դատաստան։

Յետ այնորիկ Գերմանացւոց բոլոր թագաւորութեանց մէջ սկսաւ կաշուածական կամ լենական նոր կանոնը։ Այս բանը այս կերպով սկսաւ։

Յաղթողները յաղթեալներից կ'առնէին նոցա հողի երրորդ մասը, երբեմն էլ աւելի, կ'բաժանէին միմեանց մէջ և կ'բնակէին այն նոր բաժնի մէջ։

Այն Գերմանացիք որ կ'ստանային այն մասը երկրի իրենց սեպհականութիւնը և անկախ կ'լինէին բոլորովին, կ'կոչուէին պարոններ։

Մեծ և լաւ մասը միշտ կ'ստանար թագաւորը, նա ունէր միշտ առանձին զօրք վարձու։

Երբ նոքա սկսան Հռովմայ երկիրները նուաճել, այն օրից վարձու տեղ հող կ'ստանային։ Բոլոր այն հողը ժամանակաւոր կ'տային, այն պատճառաւ էլ կ'կոչուէին ֆէոդ կալուած, կամ լեն, այս ինքն փոխ, բայց վերջը այն փոխ տուած հողերն էլ սեպհականութիւն դարձան։

Հողը դուքսերը և կոմսերը, որ իրենք թագաւորի հպատակ կ'համարուէին, նոյնպէս թագաւորի նման ունէին զօրք կէլայՆէ. ունէին նոյնպէս իրենց հպատակներ, և նրանց էլ իրենց հողից մասը կ'որոշէին։ Այսպէս սրանք Եւրոպայում սկսաւ կալուածապետութիւն, հպատակները կամ կալուածատուք ամենայն թագաւորութեանց մէջ առանձին կարգ կը կազմէին, նրանք առ հասարակ զինուորական և երկրագործ էին։ Նրանցից ծագեց այժմեան Եւրոպայի ազնուականութիւնը։

Այս հպատակները, միշտ իրենց զինուորական ծառայութեան մէջ հեծելազօր էին, այն պատճառաւ էլ ասպետ անունը պատուաւոր եղաւ. վերջը այս տիտղոսը առանձին հանդիսով կ'տրուէր։

Քաղաքի բնակիչք իրենց ազատութիւնը պահպանեցին, և միայն կախու

սաքսոնացւոց մէկ մասը Զ. դարում։ Աւգոստինոսը դարձաւ առաջին Եպիսկոպոս Քէնթրպրի քաղաքում (Քէնթի մայրաքաղաքում, Բրիտանիոյ հարաւային արևելեան ծայրում)։ Յետոյ Քէնթրպրիոյ Արքեպիսկոպոսին սատրապրուեցան Անգլիոյ միւս եպիսկոպոսունք։

Նորթումբերլանդիոյ մէջ Բրիտոնէութեան տարածուիլը այսպէս կ'պատմեն։ Թագաւորը խորհուրդի հրաւիրեց Սաքսոնիոյ իշխանաց, և հարցուց նոցա կարծիքը քրիստոնէութեան վերայ։ Նոցա գլխաւոր քուրմը խոստովանեց իրենց չաստուծոյ անկարողութիւնը, ասելով թէ ամենից ջերմեռանդօրէն կ'ծառայեմ նրան և մինչև ցայժմ չունեցայ ոչ հարստութիւն և ոչ պատիւ։ Նրանից յետոյ խօսեց մի զօրապետ, և յետագայ բաղդատութիւնը արեց։ Մէկ աշնանային օր թագաւորը խնջոյք ունէր և կրզուարճանար իրեն զօրաց հետ մեծ դահլիճում յանկարծ ներս թռաւ մի թռչուն, նրան շատ ախորժելի թուեց այն սենեակը, բայց մի րոպէից յետ դարձեալ դուրս թռաւ և ընկաւ ձեռան և հողմոց ձեռքը։

Մարդոյս կեանքը կարելի է նմանացնել այս թռչնոյ թռչելուն, որպէս անցեալը նոյնպէս և այս աշխարհումս ունեցած ապագայ կեանքը խաւար է և անյայտ։ "Մենք կ'վախենք այս ժամանակից ատաց զօրապետը, վասն զի մեզ բոլորովին անծանօթ է։ Եթէ նոր ուսմունքը մեզ որքան և իցէ այդ բանը կ'բացատրէ հարկաւոր է ընդունել։

Բրիտանացւոց վանքերից նոյնպէս շատ քարոզիչներ գնային Գերմանիա։ Նրանցից երևելին էր Վոնիֆակիոսը, որ Անղլոսաքսոնացւոց երևելի ցեղից էր. ընդունեց վարդապետութիւնը, քանի մի տարի մնաց Իտալիայում, և այն տեղից պապի օրհնութիւնը առնելով գնաց քարոզելու արևմտ. Գերմանիա։ Սկսաւ մերանել հեթանոսաց, հիմնեց եկեղեցիք և վանօրայք, այն էլ մեծաւ մասամբ Գաղղիացւոց հպատակ երկիրներում, և նորա պաշտպաններն էին Կարոլոս Մարտել և Պիպին կարճահասակը։ Նա մեծ յառաջադիմութիւն ունեցաւ իւր քաջութեամբ և ճարտարութեամբ։ Մի անգամ մեծ քաջութիւն ցոյց տուին Հեսսենի երկրում. այն տեղ մեկ լերան վրայ կար հին կաղնի ծառ, որ նուիրուած էր որոտման աստուծոյ։ Երբ այն կաղնիի մօտ ժողովեցան զոհ մատուցանելու, Վոնիֆակիոսը իւր մարդկանց հետ սկսաւ այն սուրբ ծառը կտրել հեթանոսաց ցոյց տալու համար նոցա աստուածոց անզօրութիւնը։ Կռապաշանները կ'սպասէին՝ մտածելով թէ երկնային կայծակը յանդուգն օտարականին կ'հարկանի, բայց ի զարմանս նոցա ծառը վայր ընկաւ առանց մեկ վնաս տալու նորա հատանող քրիստոնէից, և այն միջոցին շատերը ընդունեցին քրիստոնէութիւն։

Երկար և շատ դժուար աշխատութեամբ Վոնիֆակիոսը կարողացաւ քանի մի եպիսկոպոսական վիճակներ հաստատել արևմտ. Գերմանիայում։ Զարմանալին այն է որ պապը մեծ ճարտարութեամբ կա-

բողացաւ օգուտ քաղել նրա աշխատանքից, այն է իւր հոգևոր իշխանութիւնը տարածելով նրանց վերայ. Վոնիֆակիոսը երդուեց միշտ հպատակ և հաւատարիմ լինելու պապին և ստացաւ Արքեպիսկոպոսութիւն, և նա եղև գլուխ Գերմանիոյ եպիսկոպոսաց: Նորա Արքեպիսկոպոսարանն էր Մոգունտիա քաղաքում, իւր քարոզութեան աղագաւ կոչուեցաւ "Գերմանիոյ առաքեալ": Վոնիֆակիոսը եօթանասնամեայ ծերունին գնաց քարոզելու նաև Փրիկիա, որ և (Հոլանտա), քանզի նա պաշտամունքը կուռքերը, և կառոյց եկեղեցիք: Փրիզացիք նրան առաջ վատ ընդունեցին՝ կարծելով թէ նա Ֆրանկաց պաշտօնեան է որոնք միշտ կ'աշխատէին Փրիզացիքը նուաճել: Մէկ անգամ տեսաւ որ դէպ ի իրեն կ'գան մէկ խումբ զինուորեալ կոտպաշտներ, և նրանց վայրենի աղաղակը լսելով իմացաւ նրանց դիտաւորութիւնը: Նորա ճանապարհորդակիցները շուտով զէնք առին, և կամեցան պաշտպանել ծերունի քարոզչին. բայց Վոնիֆակիոսը արգելց նրանց զէնք գործ ածել, և քաջութեամբ հանդիպեց մահուան, 755 թուին:

Ռի-պանդիա և Էրֆուրտցի:

Յետ անկման հար. Հռոմէական կայսերութեան Ռիւզանդիոյ կամ Յունաց կայսերութիւնը մնաց դեռ ևս հազար տարի: Ազգաց մեծ գաղթականութեան ժամանակ Գերմանացւոց մեծ մասը գնաց ա-

բեմտեան Հռովմայ կայսերութիւնը, և նրանց բնակութեան տեղը՝ Գերմանիոյ արևելեան մասին մէջ բնակվեցան Սլաւեան ցեղեր։

Ֆիւզանդիոյ երկիրները յայսկոյս Դանուբի և ի մէջ Դանուբի և Եդրիական ծովու նոյնպէս Սլաւեանց բնակութեան տեղ դարձան, բայց նոքա չկարողացան ուժով տիրել Յունաց կէս Կայսերութեանը, ինչպէս տիրեցին Գերմանացիք Հռովմայեցւոց մասին։

Երկադիոսի յաջորդներից երևելի կայսրն էր Յուստինիանոս մեծը Սլաւեան ցեղից։ Նորա հօր եղբայրը Յուստինոս, գիւղացի երիտասարդ դոլով գնաց մայրաքաղաք՝ բախտ որոնելու, և մտաւ զինուորական ծառայութեան մէջ, իւր քաջութեամբ և եռանդեամբ ստացաւ գնդապետութիւն կայսերական թիկնապահ զօրաց. յետ այնորիկ ձեռք բերաւ և կայսերական աթոռը, և նշանակեց իւր եղբօրորդւոյն իրեն ժառանգ։

Յուստինիանոսի թագաւորութիւնը (527—565 թուին) հռչակուեց նորա երկու զօրապետաց մեծամեծ յաղթութիւններով, Բելիսարիոսի և Ներսէսի որոնք արևմտեան կողմը տիրեցին Վանդալաց և Ոստրոգոթաց թագաւորութեանցը 888։ Բայց հիւսիսային կողմից կայսերութիւնը մեծ նեղութիւն կ'կրէր Բուլղարացիէ, իսկ յարևելից Պարսից։ Այրաքաղաքումն էլ սաստիկ խռովութիւն կար եկեղեցական վէճերի պատճառաւ, որոց հետ միացաւ նաև կրկիսական ընկերութիւնը։ Կոստանդնուպօլսոյ

որպէս և Հռովմայ ժողովուրդը սաստիկ կ'սիրէր կրկէս սացեալ տեղը, ուր կ'լինէր ձիավարժութիւն։ Նոցա ներհակ ձիավարները և կառավարիչները կը-զանազանուէին արտաքին զգեստով, և նոքա միշտ կ'աշխատէին հանդիսականներից պաշտպան ունենալ ումանաւանդ երևելի իշխան երիտասարդներից։ Սրանով սկսան կրկիսական ընկերութիւններն կամ ժողովները, որ իրենց անուն կ'կրէին նայելով գոյներին. մեծ ընկերութիւններն էին Կանաչ և Կապոյտ, որք սաստիկ կ'հակառակէին միմեանց։

Յուստինիանոսի ամուսինն էր Թէոդորա, ստորին կարգից. իւր օրիորդ ժամանակ երևելի էր անբարոյականութեամբը, բայց շատ գեղեցիկ էր, շատ խելացի և քաջասիրտ կին։ Առաջ դերասանուհի էր, և իւր աղքատութեան ժամանակ կապակցութիւն ունեցաւ Կապոյտ ընկերութեան հետ, այն պատճառաւ Կանաչ ընկերութիւնը նրան հակառակեցաւ ու հեռացրեց անարգութեամբ։ Երբ նա թագուհի եղաւ, պաշտպան հանդիսացաւ Կապոյտ ընկերութեան և համոզեց նոյնպէս թագաւորին, և Կանաչները կ'հալածուէին, մանաւանդ այն պատճառաւ որ նոքա Նեսթորականաց հերձուածին մօտեցան։ Իսկ կապոյտ ընկերութիւնը ուղղափառ կ'համարուէր։ Այս ընկերութեանց խռովութիւնը կ'տևէր մեծաւ խռովութեամբ կռիւներով, մինչև անգամ մաղասպանութեամբ։

Անգամ մի Յուստինիանոս իւր գահակալութիւն տօնը մեծ հանդիսիւ կ'կատարէր, և մեծ խաղարկու-

թիւն կար այն օրը կրկէս ասացեալ հրապարակում։ Կանաչները սաստիկ վրդովեալ սերուբեան հալածանքից՝ խաղարկութեան ժամանակ նրան կրկէսից և քաղաքի փողոցներում մեծ աղմուկ բարձրացրին, Կապոյտներից մեծ մասը անբաւական լինելով կայսերից՝ միացան նրանց հետ։ Հինգ օր տևեց այս խռովութիւնը մայրաքաղաքի մէջ, ընտրեցին ուրիշ կայսր, բայց զօրքը դեռ ևս անորոշ դրութեան մէջ էր։ Յուստինիանոսը մատդրուեց նաւել ի Կոստանդնուպօլսոյ, նրան ընդդիմացաւ հպարտ և հանճարեղ Թէոդորա թագուհին, և համոզեց կայսեր պատուով մեռանիլ՝ քան թէ փախչելով ապատուիլ։ Թագուհւոյ շնորհիւը վերջին հնարները գործ դրին, Belիսարիոսը ժողովեց իւր հին զինուորներից բաւական մարդ, յանկարծ յարձակուեց կրկէսից վերայ ուր ապստամբեալները նորընտիր կայսեր հետ կ՚զուարճանային, սկսաւ սաստիկ կոտորած Կանաչների, և սորանով բոլորովին դադարեց խռովութիւնը։ Յուստինիանոսը յանձնեց իւր սիրելի նախարար Թրիբոնիանին որ նա ժողովի Հռովմայեցւոց օրէնքները, և կայսերաց հրովարտակները որ նորանցից կազմի մէկ Օրինաց դիրք։ Թրիբոնիանը միւս իրաւաբանից օգնութեամբ կատարեց կայսեր յանձնարարութիւնը։ Այն երևելի Հռովմայ իրաւանց դիրքը, օրինակ եղաւ Եւրոպացւոց օրէնսդրութեան։

Յուստինիանոսը կառոյց Կոստանդնուպօլսոյ մեծ հոյակապ տաճարը յանուն սրբոյն Սոփիայի։ Նա մայրից մեռաքսադործութիւն և շերամնապահու-

թիւն, վասն զի նրա ժամանակ առաջին անգամ բերին Եւրոպա շերամի որդ։

Յուստինիանոսը Հայաստան էլ գնաց, Ս. աղարշը Ս. Հան Մամիկոնեանին իր հրովարտակով Մամիկոնեան ցեղին նախարար և բոլոր Հայաստանի զօրաց վերայ սպարապետ դրաւ։ Նոյնպէս ուրիշ նախարարներուն էլ պատիւներ ու պարգևներ տուաւ ու փառքով Հայաստան ուղարկեց, որոնք եկան նախ Ս. աղարշապատու Մայր Եկեղեցւոյն մէջ շնորհակալութեան հանդէս կատարեցին և աղքատաց առատ ողորմութիւն բաժանեցին և այն տեղից դարձան Դուին քաղաք։ Հայաստան այսպէս ամէն կողմանէ բոլորովին խաղաղանալով՝ Անդիկան իշխանը թագաւորէն մարզպան դրուեցաւ։ Այս իշխանը իւր իշխանութեան ժամանակը Ս. Հանին արած իմաստուն կարգադրութիւններն և ամեն ձեռք տուած գործերը յաջողութեամբ կատարելը տեսնելով, նրա վերայ մեծ համարում ունեցաւ և շատ սէր կապեց։ Եւ երբ որ հարկաւոր գործքի համար Պարսկաստան գնաց, Ս. Հանին արած գործքերը թագաւորին առջևը պատմելով, նրան ասաւ թէ Հայաստան լաւ ծաղկեցնելու և խաղաղութեամբ պահելու համար, պէտք է Ս. Հանը մարզպան դնել։ Ս. աղարշ այս առաջարկութեան հաճեցաւ և հրովարտակ գրելով նրան մարզպանութեան իշխանութիւն տուաւ։ Ս. Հանը այս հրովարտակը առածին պէս բոլոր իւր ուխտակից նախարարներովն եկեղեցին գնաց, ժողովրդեան բազմութիւնն էլ ամեն կողմանէ այն տեղ վա-

ղեցին, և շնորհակալութեան փառաւոր տօն կատարեցին։ Յովհան Պաթուղիկոսն էլ ժողովուած բազմութեան գեղեցիկ յորդորական ճառ խօսեցաւ։

Հայաստանը 8 տարիի չափ խաղաղութիւն ու հանգստութիւն վայելելէն եաւ, նոր քաղաքային խռովութեան փոթորիկ իրեն պատեց և ամէն բան տակը ու վրայ արեց։ Գանձի Պաւատ պարսից թագաւորը մոգերուն դրգռելովը Հայոց դէմ նորէն հալածանք սկսեց և Հայաստան շատ զօրք և մոգեր ուղարկեց, որոնք եկան զանազան տեղերից և կրակատուններ շինեցին։ Վահան Մամիկոնեան մարզպանն՝ որնոր այնչափ տարի կրակապաշտութիւնը ջնջելու համար պարսից դէմ պատերազմ արած է, այս բաները տեսնելուն պէս, աստուածապաշտ նախարարները ժողովեց և պարսից դէմ գնաց, զօրքերն ու մոգերը ջարդեց և կրակատունները կործանեց։ Պաւատ սաստիկ բարկացած՝ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Հայաստան արշաւէ, բայց իր իշխաններ ապստամբելով՝ իրեն աթոռէն ցած բերին։ Փոքր միջոց անցնելով Պաւատ թագաւորութիւնը նորէն ձեռք ձգեց, և ուզելով Յունաց դէմ պատերազմի գնալ, Հայոց հետ հաշտութիւն արաւ։

Վահան 25 տարիի չափ Հայաստան կառավարելէն եաւ վախճանեցաւ, և իւր Վարդ եղբայրը մարզպան եղաւ, բայց իւր իշխանութեան երրորդ տարին Պաւատը մարզպանութենէ ձգեց և Ռուրդան պարսիկը մարզպան դրաւ։ Սրա ժամանակ Հոնաց զօրքը Հայաստան արշաւեցին և շատ դաւառներ ասպա-

տակելով՝ մինչև Սասուն դաւառը հասան, այնտեղ Մ՝ժէժ Գնունի քաջ իշխանն իւր զօրքովն նրանց դէմ եկաւ և ջարդելով փախցրուց։ Կաւառը Մ՝ժէժին այս քաջութիւնը լսելով նրան Խուրդանին տեղ ՝այոց Մարզպան դրաւ, որն որ 30 տարի ՝այոստան խաղաղութեան մէջ պահեց։

Մ՝ժէժին մահուանէն յետոյ Խոսրով պարսից թագաւորը Գենշապուհ իշխանը մարզպան դրաւ։ Սրա իշխանութեան տարիները Մովսէս Խ. Կաթողիկոս եղաւ, որն որ աթոռը բաղմելուն պէս առաջին փոյթն եղաւ ՝այոց Տոմարը նորոգել և կարգի դընել, այս պատճառաւ Գուրին քաղաքը ժողովք կազմեց, շատ դիտուն մարդիկներ հրաւիրեց և նրանց դործակցութեամբը Տոմարը կարգաւորելուց յետոյ, ՝այոց թուական էլ հաստատեց որն որ Երիսատոսի 551 թուականէն կսկսի։ Սրանից յետոյ տեսնելով որ Գենշապուհ նորէն ՝այոց հաւատքը փոխելու կաշխատի և ժողովրդեան բռնութիւն կանէ, Խոսրով թագաւորին աղաչանաց մէկ թուղթ կդրէ, որուն մէջ Վաղարշ թագաւորին ՝այոց հաւատքին ազատութեանը համար տուած հրովարտակն նրան կյիշէ։ Խոսրովը այս աղաչանքի թուղթը կարդալով Գենշապուհը փոխեց և նրա տեղ Վշնաս Վահրամ իշխանը դրաւ, որուն յաջորդեց Վարազդատ նրան էլ Սուրէն, Խոսրով թագաւորի ազգականներէն մէկը։

Այս վերջինը կաշխատէր որ կրկին պարսից աւանդը մոցնի և Մանուէլ Մամիկոնեանին էլ սպանել տուաւ։ Վարդան Մանուէլի եղբայրը զայրացած և

բարկացած իւր եղբօր սպանման վերայ՝ Յունաց կայսեր դեսպան ուղարկեց և նրանից պարսից դէմ օգնութիւն խնդրեց, խոստանալով որ այնուհետև Հայերը պարսից տուած հարկը իրեն կտան: Կայսրը Հայոց դեսպաններին շատ սիրով ընդունեց և երդմամբ խոստացաւ նրանց օգնել: Վարդան այս խոստման վրայ վստահացած՝ նախարարներն ու զօրքն Արտաշատ քաղաքը ժողովեց, յարձակեցաւ պարսից վերայ բոլոր իշխանաց և մոգերին սպանեց և Հայաստան կայսեր յանձնեց: Խոսրովը այս բանը լսելով՝ սկսաւ մեծ պատրաստութիւն տեսնել որ Յունաց և Հայոց դէմ գնայ, բայց իւր իշխանները իրեն համոզեցին որ բանը խաղաղութեամբ վերջացնէ, ուստի Յոհաննոսն դեսպան ուղարկեց և խնդրեց որ հաշտուին: Բայց երբ որ կայսրն նրա գրած պայմանները մանաւանդ Հայաստան նորէն պարսից տալը յանձն չառաւ, Խոսրով անհամար զօրքով Վարդանին վերայ եկաւ, իսկ Յոհաննոս Հայոց օգնելու ամենևին հոգ չտարաւ: Վարդան թէպէտ ուրիշ կողմանէ օգնութիւն չունէր, ի վերայ այսր ամենայնի իւր փոքրիկ զնդովը թշնամոյն դէմ գնաց և նախ նրանց բանակն լաւ լրտեսելով՝ իւր զօրքն երեք մաս բաժանեց մէկը դարանի դրաւ, երկրորդը ձախ կողմը ուղարկեց, իսկ երրորդը ինքն առաջ աջ կողմը կանգնեց և երկրորդ օրն առաւօտեան սաստիկ զօրութեամբ պարսից վերայ յարձակեցաւ, որոնք դեռ կարգի մտնելու վրայ էին: Նրանք առաջուց շփոթեցան ու խռովեցան, բայց վերջը կարգի մտնելով՝ կատաղաբար սկը-

սան պատերազմել և երկար միջոց յաղթութիւնն անորոշ մնաց։

Նոյն ժամանակը դարանը մնած Հայոց գունդը յանկարծ դուրս եկաւ և արդէն յոգնած Թշնամին այնպէս ջարդուեց, որ ցրուեցաւ ու փախաւ։ Խոսրով Հայոց վերայ աւելի մեծ բանակ ուղարկեց Վահրամ զօրավարին հրամանին տակ, բայց Հայ նախարարներուն մէջ երկպառակութիւնն ծագելով՝ Վարդանը չկարողացաւ նրանց միաբանել և նորէն Թշնամւոյն դէմ գնաց, այն պատճառաւ ընտանիքն առաւ Յուստինոսին մօտ գնաց և նրանից օգնութիւն խնդրեց։ Կայսրը հրաման տուաւ Մարկիանոս զօրավարին որ շուտով Յունաց զօրքն առնու Հայոց օգնութեան երթայ, որուն հետ Վարդանն էլ եկաւ, և երկար ժամանակ պարսից հետ կռուեցան, բայց վերջապէս Խոսրով յաղթող եղաւ և Հայաստանին նորէն տիրեց, և որպէս զի Հայոց սիրտը շահի, նրանց հետ քաղցրութեամբ սկսաւ վարուիլ, զանազան տեղեր ցրուածներուն և ամուր տեղեր փախածներուն էլ հրաման ուղարկեց որ տեղերնին դառնան և ամենայն մարդ խաղաղութեամբ իւր տաճուաքը վայելէ, և Վոնձիհր իշխանը մարզպան դրաւ։

Խոսրովին մեռնելէն յետոյ նրա յաջորդն Որմիզդ դարձեալ Յունաց դէմ պատերազմ գնալով՝ Հայաստանը նորէն իրեն հանգիստը կորցրուց, մինչև որ Մաւրիկիոս հայազգի քաջ իշխանը Յունաց կայսր ընտրուելով պատերազմելուն վերջ

տուաւ և խաղաղութիւն հաստատեց։ Սրա ժամանակ Խոսրով Բ. առաջին Խոսրովին թոռն, որն որ Որմզդին տեղը թագաւոր դրուած էր իր իշխանները դահավիժեցին. Խոսրով դիմեց Մօրիկ կայսեր և նրանից օգնութիւն խնդրեց։ Այսպէս նստեցուց հայ իշխանը Յունաց բանակով նրան օգնութեան ուղարկեց, որուն հետ միացան նաև Մուշեղ Մամիկոնեան Հայաստանին Յունաց մասին իշխանն և Սմբատ Բագրատունի սպարապետն իւրեանց զօրքովը, և գնացին սաստիկ քաջութեամբ Խոսրովին թշնամիներուն հետ պատերազմեցան, նրանց յաղթեցին և նրան նորէն իւր աթոռը բազմեցրին։

Յուստինիանոսից յետոյ Բիւզանդիոյ կայսերութեան մէջ սկսան խռովութիւնք. զինուորները շատ անգամ կձգէին կայսերաց, և զօրապետներից կայսր կընտրէին։

Առ հասարակ Պօլսոյ արքունեաց մէջ սկսաւ խարդախութիւն, մեծ խռովութիւնք և մահ։ Եւ այդ միջոցում Բիւզանդիոյ կայսերութեան ձեռքից Սլաւեանք, Պարսք և Արաբացիք կյափշտակէին զանազան նահանգներ։ Միւս կայսրներից ուշադրութեան արժանի մարդ է Հերակլ (610—641), նա իւր երևելի պատերազմերով աղատեց կայսերութիւնը Պարսից Խոսրով թագաւորի արշաւանքից։

Այս Հերակլն էր որ Դաւիթ Սահառունուցն կիւրապաղատ դրաւ։ Դաւիթ Սահառունին մարզպանութեան 23 երրորդ տարին Վարազդատոց Բագրատունին՝ Սմբատ մարզպանին որդին, նրա տեղ մարզ-

պան դրուեցաւ, որն որ 8 տարի իշխանութիւնը վարելէն յետոյ իմանալով որ Ատրպատականին Ռոստոմ իշխանը իրեն սպանելու կաշխատի, ընտանիքն առաւ Յունաց երկիրը փախաւ, որուն տեղը Հերակլ կայսրը Դաւիթ Սահառունին կիւրապաղատ դրաւ։ Բայց հաղիւ թէ երեք տարի անցաւ, իշխաններն ու զօրքն իրեն դէմ ապստամբեցան և արտաքսեցին, և իրենք սկսան միմեանց հետ հակառակութիւն անել և Հայաստանը խռովել։ Մինչև Թէոդորոս Ռշտունի բարեպաշտ և քաջ իշխանն իւր զօրքով խռովութիւնները դադրեցնելու կաշխատէր, և Հայաստան յարձակող արտաքին թշնամիներուն դէմ կդնէր։

Հերակլի երեսէն յաջորդն էր Լեւոն Իսաւրացին փոքր Ասիոյ Իսաւրեայ գաւառէն (717—741)։ Սա մեծ քաջութեամբ պատերազմեց Արաբացւոց հետ, որք արդէն կմերձենային Կոստանդնուպօլսին, բայց չընայելով նորա քաջութեանց, նա իւր պատկերամարտութեամբ մեծ խռովութեանց պատճառ եղաւ։

Պատկերաց յարգութիւնը Քրիստոնէութեան հակառակ կկարծէր, նրա դէմ սաստիկ օրէնքներ հրատարակեց, և հրամայեց եկեղեցիներից հանել պատկերները, բայց հոգևորականաց մեծ մասը, մանաւանդ վարդապետները պաշտպան հանդիսացան ժողովրդեան օգնութեամբ։ Լեւոնի յաջորդներն Կոստանդին Դ. Կոպրոնիմոս, և Լեւոն Դ. և միւսները, շարունակեցին պատկերամարտութիւնը մօտ 100 տարի։ Վերջապէս պատկերաց յարգութիւնը մնաց

բարեպաշտ Թէոդորա Թագուհւոյ հաճութեամբ (842 թ), այն միջոցները նորա որդի Միքայէլ երրորդը դեռահաս գոլով՝ ինքը կվարէր կայսերական իշխանութիւնը։

Հ՝ուստով կայսերական գահը ժառանգեց խելացի և քաջ Վ՝ասիլ (կամ Բարսեղ) Մակեդոնացին (867 թ)։

Այս Բարսեղ Մակեդոնացին է որ մեր Բագրատունոյն Թագ ուղարկեց Աշոտ Բագրատունին Սմբատ խոստովանողին որդւոյն, հօրը Պաղտատ երթալու ժամանակ Հայոց սպարապետութիւնն առաջնորդելով, նրա աղետալի մահուանէն զկնի սկսաւ աղքին խնամ տանել և ամենուն հետ սիրով վարուելով և կարօտութիւն ունեցողներուն առատ օգնութիւն անելով՝ ժողովրդեան սիրտն իրեն հետ կապեց։ Աշոտին այս վարմունքին համբաւը փոքր ժամանակուան մէջ Մահմատ Ջաֆր ամիրապետին ականջն էլ հասաւ, որով նա էս իշխանին վրայ մեծ համարում և շատ սէր ունեցաւ, և Էլի Երմէն անունով մէկն Հայաստան ոստիկան ուղարկելով, նրա ձեռքովն Աշոտին իշխանաց իշխանի պատիւ տուաւ և բոլոր հարկերն ժողովելն նրան յանձնեց։ Սրա վերայ Աշոտ սկսաւ աւելի ևս աղքը խնամել և երկիրը կարգի դնել, և երբ որ գերի գնացած նախարարները նորէն Հայաս, տան դարձան և արած ուրացութիւններուն վրայ ղղջալով՝ դարձեալ Քրիստոնէութիւնն ընդունեցին։ Աշոտը նրանց շատ օգնութիւն անելով և շատ սէր ցոյց տալով ամենուն սիրելի եղաւ։ Իւր քաջ և ա-

ին եղբայրն Աբաս զօրաց վերայ սպարապետ դրաւ, երկու աղջիկներէն մէկը Սիւնեաց Պ. ասակ Գ. ափուռ իշխանին կնութեան տուաւ և ամիրապետին հրովարտակովը նրան Սիւնեաց նախարար կարգեց, իսկ երկրորդը՝ Գ. ուիդոր Դերենիկ Երծրունի Պ. ասպուրականի իշխանին հետ ամուսնացուց: Այս երկու երևելի իշխաններն Աշոտին շատ օգնութիւն արին և շատ տեղեր նրա ձեռքին տակ նուաճեցին

Բայց հաղիւ թէ Հայաստան այսպէս նորէն կենդանանալու կսկսէր, Ջ. ահապ անունով Պարսիկ իշխանն 80000 զօրքով սրա վերայ յարձակեցաւ, և մինչև Երասխ գետին եղերքը յառաջանալով, այն տեղ սպասեց մնաց, Աբաս սպարապետն անմիջապէս 40000 Հայադունդ զօրքով նրա դէմ գնաց և նրա զօրքին վերայ ընկնելով՝ մեծ մասը ջարդեց, մնացածը ցրուեց, իրեն էլ 16 հոգւով փախցրուց: Այս յաղթութեան լուրը շրջակայ ազգերուն սիրտը մեծ ահ ձգեց, և այնուհետև մէկ միջոց այս նոր կազմուած տերութեան վերայ յարձակուելու համարձակող չեղաւ:

Սրանից յետոյ Աշոտը խաղաղութիւն գտնելով՝ իր սկսած կարգադրութիւնները յառաջ տարաւ, և բոլոր ջանքով Հայաստանին առաջին քաղաքականութիւնն և պայծառութիւնը կենդանացնելու ետևէ եղաւ: Նախարարներն երբ որ այս իշխանին իմաստուն կառավարութիւնն և նրա ձեռքովն քիչ միջոցուան մէջ ազգին արած յառաջադիմութիւնը տեսան, նրա վերայ աւելի սէր և մեծարանք ստացան,

և այս իրենց մեծարանքը նշանով էլ ցոյց տալու համար, միաբան որոշեցին որ նրան իրենց վերայ թագաւոր դնեն։ Այս որոշումին անմիջապէս Յիսէ ոսոիկանին ձեռքովն ամիրապետին իմաց տուին և աղաչեցին որ ինքն էլ իր հաւանութիւնը տայ, խոստանալով որ միշտ իրեն հաւատարմութեամբ կը-ծառայեն։

Ամիրապետն որովհետև արդէն Աշոտին այս պատուոյն արժանաւոր և յարմար լինելը գիտէր, նախարարաց աղաչանքը սիրով ընդունեց և նոյն Յիսէ ոսոիկանին ձեռքովն նրան թագ և թագաւորական զգեստներ խրկեց։ Եկաւ ոսոիկանը Շիրակ գաւառն և Անի քաղաքին մէջ Աշոտին թագաւորական զգեստներն հագցրուց և արքունական գահը նստեցրուց։ Այնուհետև Գրիգոր Կաթուղիկոսը մեծ եկեղեցական հանդէս կատարելով՝ նախարարներուն և անհամար բազմութեան առջևը նրան թագաւոր օծեց, և այսպէս Հայաստան նորէն իր գահին վերայ տեսաւ իւր ազգային բուն թագաւորը։ Աշոտին թագաւորելուն լուրը Վասիլ Երշակունի Յունաց կայսրին առաջին պէս՝ սաստիկ ուրախացաւ և ինքն էլ նրան թագ և թագաւորական ընծաներ ուղարկեց։ Աշոտ թագաւորութիւնն հաստատելով սկսաւ ամբրութեան հարկաւոր կարգադրութիւններն անել և ամէն իւր իշխանութեան տակն եղած քաղաքներն և գիւղերը շինցնել։ Այն հիւսիսային ազգերն՝ որոնք մի միջոց Հայոց տէրութեան հպատակ էին և թագաւորութիւնը ընկնելուն պէս ինքնագլուխ

եղած էին նորէն իր ձեռքին տակ նուաճեց։ Դերեցուոյ թագաւորին և ուրիշ ընչակայ թագաւորներուն և իշխաններու հետ բարեկամութեան դաշինք հաստատեց և այնպէս տէրութիւնն ամէն կողմանէ ապահովացրեց։

Պարսեղը իւր երիտասարդ ժամանակ նա մէկ երևելի մարդոյ ծառայէր, զարմանալի ոյժ ունէր։ Պատմեն թէ մէկ խնջոյից ժամանակ մինչև այն կէտը անյաղթ մէկ ըմբիշ՝ Ռուզարաց դեսպանատան ծառաներից մինը՝ կառաջարկէր որ դուրս գայ Յունացմէ ամենաքաջը և մենամարտի նրա հետ։

Հրաւիրեցին Վասլին և նա յաղթեց Ռուզարը ըմբշին։ Այն տեսնելով Միքայէլ երրորդը և սիրելով այն տեսակ ուրախութիւններ, ընդունեց Վասլին իրեն մօտ, և վերջը կարգեց իրեն պաշտօնակից։ Բայց երբ վերջը Միքայէլ ցանկացաւ Վասլին հեռացնել, սպանուեց նրանից, և Վասիլը այս չարագործութիւնը անելով իւր բարերարին, բոլորովին ընկաւ իրեն առաջին պատուից։ Վասլի Մակեդոնացւոյ ցեղը թագաւորեց մօտ երկու հարիւր տարի, մեծ պատուով, թէպէտ այն ժամանակ՝ ինչպէս նաև առաջ՝ Իւրանդիոյ արքունիքը լի էր շռայլութեամբ և խանդարեալ վարուք, թագաւորութեան գործերը շատ անդամ կանանց և ներքինեաց ձեռքը կկառավարուէին։

Այս Մակեդոնեան թագաւորական ցեղից եղած թագաւորներն մեր Հայաստանի գործոց մէջ էլ խառնուեցան։ Երբ Սմբատը 20 տարի թագաւորու-

թիւն անելէն յետոյ 1040 թուին վախճանեց Անիին մէջ, իւր եղբայր Աշոտն էլ, որն որ թագաւորութեան յաջորդ պիտի լինէր, Սմբատից առաջ մեռած էր միայն նրա որդին Գագիկ թագաւորութեան ժառանգ մնաց։ Սմբատը մեռնելուն պէս Հայաստանին խաղաղութիւնը բոլորովին խռովեցաւ, նախարարաց միմեանց հետ ունեցած կռիւը քանդուեցաւ. արտաքին թշնամիքն էլ երկիրն անտէրունչ տեսնելով՝ ամեն կողմանէ ներս յարձակեցան։ Յովհաննէս Սմբատ թագաւորն իւր կենդանութեան ժամանակ Յունաց կայսեր սահմանած թուղթ էր տուած որ իր մահուանէն յետոյ Անի քաղաքն և նրա շրջակայ գաւառներն իրեն տայ։ Երբ որ ինքը վախճանեցաւ Միքայէլ կայսրն Հայոց դէսպան ուղարկեց ու պահանջեց որ քաղաքն իրեն տան։ Նրանք այս բանը յանձն չարին, սրա համար կայսրը երիք անգամ մեծ բանակներ ուղարկեց, որոնք հասարձակ Հայաստան մտան, շատ տեղեր աւար առին, ջարդեցին ու քանդեցին. շատ քաղաքներ էլ իրենց պաշտպանող չը-գտնելով՝ Յունաց անձնատուր եղան։ Նախարարներն ու զօրքն իրենց մէջ ծագած երկպառակութեան համար չկարողացան միաբան Յունաց դէմ դնալ և երկիրը պաշտպանել։ Վասն զի Վեստ Սարգիս իշխանը՝ Սմբատին տէրութեան հոգաբարձուն, նրա մահուան ժամանակ բոլոր արքունի գանձը ժողոված իրեն էր սեպհականացրել և ցանկար որ ինքը թագաւորէ. շատ ամրոցներ ու քաղաքներ էլ իրեն կողմնակից զօրքով բռնած էր։ Իսկ Վահրամ պահլաւու-

նի սպարապետ և ուրիշ շատ իշխաններ Սարգսին դէմ առանձին միաբանութիւն էին կազմել։ Այս խառնակութեան մէջ Դաւիթ Անհոդն Աղուանից թագաւորն Հայաստան յարձակեցաւ և շատ աւեր և վնաս տուաւ, նոյնպէս Յոյներին էլ առաջին երեք արշաւանքներուն յաջողելուն վերայ վստահացած չորրորդ անգամ 100,000 զօրքով Հայաստան մտան և մինչև Ենիին առջևն հասնելով ամէն կողմանէ սաստիկ պաշարեցին։ Քաղաքին մէջ եղած զօրքն՝ որոնց թիւը 30,000 էր տեսնելով որ վերջին վտանգի մէջ են, և միանդամայն Յոյն զօրքին ամէն օր իրենց առած սաստիկ անարգանքէն և խօսած հայհոյութենէն չափազանց վշտանալով և դրդռվելով՝ իրենց Վահրամ սպարապետին առաջնորդութեամբը քաղաքին Ծաղկոց ասուած դռնէն յանկարծ դուրս յարձակուելն և այնպիսի կատաղութեամբ սկսան Յոյներին ջարդել որ նրանք սարսափած, խուռն ի խուռն փախան։ Հայոց դունդն նրանց յետևից ընկաւ և որուն որ հասաւ առանց խնայելու սպաննեց, և քաղաքին առաջի եղած կանաչ դաշտը դիակներով ծածկեց, մինչև արեան յորդութիւնն Էխուրեան գետին ջուրը կարմիր ներկեց։ Վահրամ սպարապետին սիրան այս ողորմելի տեսարանէն շարժելով՝ աղաչանօք և յորդորանքով հաղիւ իւր զօրքն համոզեց որ պատերազմը դադարացնեն։

Յոյները պատերազմի դաշտին վերայ 20,000 մեռած և վերաւորուած թող տուին, իսկ բանակին մնացած մասը ցիր և ցան եղած փախաւ։

Այս յաղթութիւնէն յետոյ Վահրամին հետ միաբանած նախարարները խորհուրդ արին և Պետրոս Կաթողիկոսն էլ կանչելով՝ Սմբատին եղբօրորդին Գագիկ Բ. առոյգ և իմաստուն երիտասարդն Հայոց թագաւոր օծել տուին։

Արդիս երբ այս բանը լսեց, դանձերն առաւ Անիի բերդը մտաւ ամրացաւ։ Գագիկ արիական քաջասրտութեամբ եկաւ միայն գնաց նրա մօտ ու յորդորեց որ այնտեղից դուրս գայ երթայ. նա էլ համոզուեց և Սուրմաի բերդաքաղաքը գնաց, բայց իւր ձեռքին տակն եղող քաղաքներն ու բերդերն թագաւորին չտուաւ, այլ կմտածէր որ Յունաց երկիրն անցնի և այն ամենը կայսեր տայ։ Գագիկ նրա միտքն իմանալով՝ քանի մի հոգի առած՝ նրա բանակը գընաց, մտաւ անեկիւղ նրա վրանը, բռնեց ու Անի բերաւ, և սաստիկ պատիժներով սարսափելով՝ ամեն բերդերն ու թագաւորական գանձը ձեռքէն առաւ։ Երբ որ այսպէս բոլոր Հայրենի երկիրներուն տիրեց, զօրքը ժողովից ամէն կողմ պտըտեցաւ, և իրեն հնազանդել չուզողները նուաճեց, այնուհետև Գրիգոր Պահլաւունին՝ Վահրամ սպարապետին եղբօրորդին հետն առած՝ Թաթարներուն վերայ յարձակեցաւ, որոնք նոյն ժամանակ բազմութեամբ իրեն երկիրը մտած կաւերէին ու կասպատակէին, յանդիպեց նրանց Հուրասան գետին մօտ և շատերը ջարդելով՝ մնացածը փախցրուց և այսպէս թագաւորութիւնը ամէն կողմից ապահովացնելով իւր աթոռը դարձաւ։ Բայց հաղիւ թէ մէկ տարի խաղաղութեամբ անցաւ,

Սարգիս՝ անհաւատարիմ և տիրանելոց իշխանն ընկաւ դարձեալ թագաւորին դէմ դաւաճանութեան։ Իւն անել։ Զ՝ան զի Գագիկ այսնեղուորին կեղծաւորութենէն խաբուելով՝ նրա յանցանքին թողութիւն տուած և նորէն մեծ պատուոյ հասցրած էր։

Սարգիս այս բարերարութեան երախտագէտ լինելու փոխարէն, այն ինչ որ իւր միտքը դրած էր այն սկսաւ առաջ տանել։ Այս ժամանակները Կոստանդին Մոնոմաքոս Միքայէլ Ե—ին յաջորդելով Սարգսին գաղտնի դրդութեամբը Գագիկին դեսպան ուղարկեց և Անին իւր դաւառովն նրանից ուզեց։ Թագաւորն ամենևին յանձն չառաւ իւր արքունի քաղաքն օտարի տալ, այն ժամանակ կայսրը Միքայէլ, Ասիա իշխանը մեծ բանակով Հայաստան խրկեց որ քաղաքը բռնութեամբ առնու։ Գագիկ Հայոց ուղղափառ զօրքով նրա դիմացն ելաւ, ցրուեց նրա բանակը ու յաղթանակաւ իրեն քաղաքը դարձաւ։ Կոստանդին իւր զօրաց յաղթուելուն գոյժն առաջին պէս՝ Նիկոդայոս զօրապետն աւելի շատ զօրքով Գագիկին վերայ ուղարկեց. Դուինի Ապուսվար ամիրային էլ թուղթ գրեց որ նա էլ արևելեան կողմանէ նրա վերայ յարձակի, և այսպիսով ամեն կողմից նեղը ձգեն։

Հայոց Ծանր ու վտանգաւոր վիճակի մէջ էր Հայոց երիտասարդ թագաւորը, բայց իւր անվեհեր քաջութիւնը շուտով իրեն հնարք սովորցրուց։ Անմիջապէս իւր զօրութիւնը մէկ տեղ ժողովելով, իմացաւ որ կարող չէ երկու մեծ թշնամիներուն մէկ տեղ

յաղթել, ուստի ամենապարեց Աղուսվարին շատ ընծաներով դեսպան ուղարկեց, և նրա հետ հաշտութիւն արեց։ Այնուհետև բանակին դլուխն անցած՝ գնաց Յունաց վերայ, որոնք յաղթութիւնն ստոյգ իրենց կողմը կարծելով, կփութային ժամ յառաջ ՝այոց հետ պատերազմիլ։ Բանակներն միմեանց մոտեցածնուն պէս, հրաման տուաւ ՝այոց թագաւորն որ փողերը հնչուին և զօրքը պատերազմ սկսի։ Պատերազմն երկար չտևեց, վասն զի ՝այ զօրքը սաստիկ յարձակմամբ Յունաց բանակը ցրուեց և փախչելու ստիպեց։

Կոստանդին կայսրը տեսնելով որ կարող չէ իւր կամքը բռնութեամբ յառաջ տանիլ, ուրիշ կերպ սկսաւ վարուիլ, որուն վրա Սարգիս եկ իւր դրդիչներով օգնական լինելով ՝այոց թագաւորութեան վերջին կործանումն բերաւ։ Որովհետև այս իշխանին խորհրդով կայսրը Դաղիկին տերց թուղթ գրեց և նրան հրաւիրեց որ իրեն մօտ դայ տեսութիւն անելու, ու Խաչէ և Աբեսարանի դերայ երդուելով կխոստանար որ նրան կրկին իրեն ՝այրենիքը կդարձնէ որ խաղաղութեամբ թագաւորէ։ Միայն կասէր, մէկ անգամ քեզ տեսնեմ այնուհետև քո թագաւորութիւնդ որդւոց որդի թող կաամ, բայց իմաստուն թագաւորն Յունաց խաբէութիւններն ու նենգաւորութիւնը դիտնալով, ամենևին յանձն չառաւ։ Այն ժամանակ Սարգիսը և իւր դաւակիցներն սկսան թագաւորն յորդորել որ երթայ, և Պետրոս Կաթողիկոսը միջնորդ բռնելով, խոս-

տում տուին որ իրենք հաւատարիմ կմնան և նրա համար կեանքները կզոհեն։ Այս խոստմունքը հաստատ պահելու համար Կաթողիկոսն և ամեն իշխաններն երդմամբ դաշինք հաստատեցին թագաւորին տուին։ Գագիկ այնուհետև վստահացած՝ Անիին բանալիները Պետրոս Կաթողիկոսին յանձնեց և կայսեր մօտ գնաց, թէպէտ և Վահրամ սպարապետն և ուրիշ իրեն թագաւորեցնող իշխանները խորհուրդ կտային որ չերթայ։ Կոստանդնուպոլիս հասածին պէս բոլոր կայսերական իշխանները հանդիսաւոր կերպով դիմաւորելով ընդունեցին և կայսեր մօտ տարին։ Կոստանդին մէկ քանի օր պատուեց և յետոյ սկսաւ պահանջել որ Անին իրեն տայ. և երբ որ Գագիկ ամենևին չզիջաւ, բարկանալով՝ մէկ կողմից բանտի մէջ բանտարկեց։ Այսոյ հշխաններն երբ այս լուրը իմացան խորհուրդ կազմեցին, և ոմանք կուզէին Անին Ավիսաղայ Գագարատ թագաւորին, ոմանք էլ Աղուանից Դաւիթ թագաւորին յանձնել։ Կաթողիկոսը տեսնելով, որ ինչպէս որ վարուին քաղաքը օտարի ձեռքն է անցնելու, Սամուստատ նստող Յոյն իշխանին այսպիսի թուղթ գրեց, "թագաւորին իմաց տուր որ ես Անին և բոլոր մեր տէրութեան երկիրները իրեն կտամ, բայց թէ նա սրա հանդէպը ինչ հատուցում կանէ։,, Այսորը Սամուստատի իշխանէն Կաթողիկոսին միաքն իմանալով՝ շուտով նրան շատ դրամ ու զարդերից և զանազան պատիւներ շնորհեց, որով Պետրոս հաճելով՝ Անիին 40 բալանին երը կայսեր ուղարկից, բանալիներ-

բուն հետ մէկ տեղ տիրանենդ իշխաններն էլ կայ-սեր թուղթ գրեցին, որոց մէջ կայիշխին թէ Անին և բոլոր արևելեան (Հայոց թագաւորի իշխանութեան ներքոյ եղած) երկիրները քեզ կտանք։

Մանոմաքոս երբ որ այն նամակը ստացաւ, կանչեց Գագիկն և նրա առաջ դնելով՝ ասաւ. «Հայ տասիկ քո իշխաններդ բոլոր քո երկիրները ինձ տուին։ Թագաւորը սատիկ զայրացաւ և հառաչելով պատասխանեց. «Ասուած, իմ և նենգաւոր իշխաններուն մէջ դատաստան անէ. բայց Հայաստանին տէրն ու թագաւորն եմ ես, ուստի թէպէտ և իշխաններն այն քեզ կտան, ես ամենևին չեմ տայ։»

Կայսրը 30 օր անդադար աշխատեցաւ որ Գագիկն հաւանութիւն տնտու, բայց անկարելի եղաւ. վասն զի նա միշտ հաստատամտութեամբ պատասխան կտար թէ չեմ կարող իմ հայրենեաց երկիրն ու մայրաքաղաքս քեզ տալ։ Կ՚երթը տեսնելով որ իրեն Հայաստան դառնալու և նորին թագաւորութիւնը ձեռք ձգելու ամենևին յոյս և միջոց չկայ, ակամայ զիջաւ, և Անիին տեղ Պիղու քաղաք և մէկ քանի ուրիշ քաղաքներ առնելով այնտեղ քաշուեցաւ։ Այնուհետև Յունաց երկրին մէջ միշտ այս կողմ այն կողմ կպտրտէր, և ուր որ կերթար, Յոյներուն շատ նեղութիւն կտար նրանց իրեն արած չարիաց վրէժն առնելու համար։

Կոստանդին կայսրը Գագիկն հաւանութիւն առածին պէս՝ Պարսկամանուս նենգինին զօրքով Հայաստան խրկեց որ Անին առնու, բայց երբ որ նա քա-

զաքին առջևն հասաւ, դռները փակուած տեսաւ, որովհետև Թագաւորին հաւատարիմ մնացած զօրքն ու ժողովուրդն՝ իրենց տիրոջը վրէժն առնելու համար Անիի մէջ ժողոված և պատերազմի պատրաստուած էին։ Պարսկամանոս, քաղաքը պաշարեց և սկսաւ նեղել, ներս եղածներն էլ քաջութեամբ կընդիմանային։ Բանի մի օր այնպէս վարու ելով մէկ օր քաղաքացիք ու զօրքը կարգի մանելով՝ յանկարծ դուրս յարձակեցան Յունաց բանակը չարաչար ջարդեցին, ցիր և ցան արած փախցրին և նրանց աւարը քաղաքի ներսը ժողովեցին։ Դեռ այս յաղթութեան ուրախութեան մէջ էին, երբ որ գոյժ հասաւ որ Գագիկ Թագաւորն Յունաստան արգելուէր է և այնուհետև այլ ևս չպիտի վերադառնայ. ամենուն ուրախութիւնը տրտմութեան փոխուեց, բոլոր քաղաքը մեծէն մինչև փոքր սուգ ուտան և կոծով ու լացով սկսան իրենց Թագաւորն ողբալ և նրա դատաստանութիւն անողներուն դէմ անէծք ու նզովք կարդալ. վասն զի իրենց ապագայ վիճակն յայտնի կդուշակէին։ Եւ տեսնելով որ ուրիշ հնարք չկայ, Յունաց զօրապետն հետ կանչեցին ու խաղաղութեամբ քաղաքն իրեն յանձնեցին։

Ահաւասիկ այս վախճանն ունեցաւ Բագրատունեաց ցեղն 160 տարուան Թագաւորութիւնն՝ որոյ ընկնելով Հայաստանի մէջ աղէտից ու թշուառութեանց ընդարձակ ասպարէզը բացուեցաւ, մանաւանդ Եկեղեցւոյ վերայ Հայաստանի մէջ։

Մակեդոնացւոյ ցեղին յաջորդից Կոմնենեան ցեղը (1057 թ)։ Այս ցեղից երևելի թագաւորն էր Ալեքս Կոմնենոս (1081—1118 թ) որոյ ժամանակ սկսաւ խաչակրաց արշաւանքը ընդդէմ Մահմետականաց։ Մահմետականաց կրօնի բուն Արաբիան էր։ Այս ահագին թերակղզին կձևացնէր մեծամեծ աւազոտ անապատներ, որոյ վերայ տեղ տեղ կպատահէին Ովասիսներ, այսինքն խոտաւէտ և ջրաբեր տեղեր։ Հին ժամանակից մնացած այն տեղ կբնակին Պէդէվիներ, այսինքն վրանաբնակներ, որոց հարստութիւնն է ձի և ուղտ, զանազան մանր ցեղեր կրաժանուին, որոնք կկառավարուին՝ իրենց շեխերով և էմիրներով։ Հատատուն բնակութեամբ կենալ կվարեն միայն բուն Արաբացիք, որք կբնակին լեռնային եզերաց մօտ։ Այս մասին հարաւային արևմտակողմը առաւել լաւ ջուր ունի և լաւ բոյսեր, այն պատճառաւ էլ կկոչուի Արջանիկ Արաբիա։ Այն տեղի բոյսերից երևելին է սուրճը (ղայֆէն), անուշահոտ և համեղ արմտիք, և նոքա են վաճառականութեան գլխաւոր հարստութիւնը։ Արաբիոյ ծոցին մօտ կան հին երևելի քաղաքներ, ինչպէս Մեքքէ և Մեդինէ։

Արաբիայում զանազան դաւանութիւնք կային Քրիստոնէից, Հրէից, և Հեթանոսաց։ Պէդէվիները մեծաւ մասամբ աստեղաց կերկրպագանէին։

Մեքքէն բոլոր Արաբացւոց համար սուրբ քաղաք կհամարուէր, այնտեղ էր նոցա հեթանոսական սրբութեան տեղը ուր Մահմետը դաւ 360 կուռք։ Ի միջի այլոց կար այնտեղ նաև սև քար մի ինչպէս առաս-

պելը ցոյց կաց՝ երկնքից հայր Աբրահամին ուղարկուած։ Պատմեն թէ Աբրահամ անապատում շրջելու ժամանակ՝ վաստակեալ կամեցաւ հանգստանալ, տեղ չկար որ նստէր, յանկարծ երկնքից հրեշտակը իջաւ՝ մէկ սպիտակ մարմարեայ քար ձեռքին, և դրաւ Աբրահամի մօտ որ նա հանգստանայ։ Երբ Աբրահամը հանգստացաւ, գոհացաւ զԱստուծոյ, այն տեղ մէկ փոքրիկ մատուռ շինեց, և սպիտակ քարը դրաւ մէջը. շատ մեղաւորներ համբուրելով զայն քարը՝ սեւացաւ։ (Աբրաքցիք իրենց Ուրէից հետ ցեղակից կհամարեն. ինչպէս սուրբ գրոց մէջ էլ կերևի՝ նոքա ծնան Աբրահամից և Եգարից)։ Աբրաքցւոց ուխտաւորները միշտ կերթային Մեքքէի տաճարը յերկրպագութիւն, նոքա ուօթն անդամ Վեսապէի չորս կողմը պտտելուց զինի կմերձենային այն սեւաւ քարին համբուրելու։

Խուրէյշեանց ցեղը կտիրէր Մեքքէին, և Վեսապէի բանալիքը նոցա ձեռքին էր. այն պատճառաւ առաջին երևելի ցեղն էր Արաբիայում։ Այն ցեղից էր և Մահմէտը։ Մահմէտը ծնաւ 570 թ, շուտով որբացաւ, մնաւ իւր մօր եղբօր մօտ, որ վաճառականութեամբ կպարապէր։ Երեխան շատ անդամ վաճառականաց հետ կերթար ուրիշ քաղաքներ. այն ճանապարհորդութեանց ժամանակ ծանօթացաւ շատ ազգաց և շատ դատաւորութեանց, սկսաւ դիտել ամենայն բան և մտածել, կերևի թէ այն ժամանակից նրա մէջ նոր միտք ծնաւ՝ մէկ նոր դատա-

նութիւն քարոզելու, որով կարողանայ բոլոր Արաբացւոց ի մի ազգ ժողովել։

Յետոյ սկսաւ վարել մէկ այրի կնոջ վաճառականութեան գործերը, վերջը ամուսնացաւ նրա հետ, և իւր դրութիւնը ապահովացնելով՝ սկսաւ իւր գործոց վերայ մտածել, այն է գործը առաջ տանելու համար։

Արաբացիք առ հասարակ այս լաւ յատկութիւնները ունին, որք են՝ սաստիկ վառվռուն երևակայութիւն և սէր առ բանա տեղծութիւնն։

Մահմէտին այս յատկութիւններն վերջին ծայրը էին հասած, միանգամայն ճարտար էր և ունէր արագաքին քաջութիւն և գեղեցիկ դէմք։ Դառատանամեայ հասակին մէջ Մահմէտը սկսաւ իւր նոր կրօնը քարոզել։ Առաջինք որք ընդունեցին նրան իբր մարգարէ յԱստուծոյ առաքեալ՝ էին նորա կինը, աղգական Ապուպէքրը և Ալին։ Բայց Մէքքէի բնակչաց հակառակ երևեցաւ նորա քարոզութիւնը, մինչև անգամ գաղանի խորհուրդ կազմեցին նրան սպանելու։ Կպատմեն թէ արդէն թշնամիք պատել էին Մահմէտի տունը որ սպանեն, բայց նա կարողացաւ ազատիլ, և մէկ այրի մէջ ճնալով քանի մի օր՝ փախաւ գնաց Մեդինէ 622 թ. այն փախուստը կատուի Հէճրէն։ Այս թիւը Արաբացւոց տարեգրութիւն է, և աստի կսկսին իրենց թուականը հաշուել։ Մեդինէ բնակիչք ընդունեցին Մահմէտին իբրև մարգարէ, և սոյա օգնութեամբ սկսաւ իւր ուսմունքը տարածել դէպի ցեղերի մէջ։ Մահմէտ իւր քարոզութիւնը

իրեն խրատ կ'խօսէր ժողովրդեան, որ վերջը ժողովեցին և կալմեցին Պ.-ոյան անուանեալ գիրքը։ Մահմէտ իւր կրօնը անուանեց Խալամ, այս ինքն համակամութիւն ընդ Աստուծոյ, գլխաւոր առարկան այս է՝ թէ Աստուած մէկ է, և Մահմէտը նորա մարգարէն է. և Աստուած առաջուց էլ ուղարկած է մարգարէք (ի թիւս որոց էին Մովսէս և Յիսուս). բայց Մահմէտը բոլորից բարձր է։ Մուսիւլմանաց՝ այս ինքն հաւատացելոց պարտաւորութիւնն էր՝ ըստէպ աղօթել, լուացուիլ, ծոմ պահել և ողորմութիւն տալ։ Իսկ գլխաւոր նոցա առաքինութիւնն էր պատերազմ ընդդէմ անհաւատից, և զէնքով տարածել մահմետականութիւնը. այն պատերազմի ժամանակ մեռածներին Մահմէտը դրախտ կամ արքայութիւն կ'խոստանար։

Այն արքայութիւնը կամ դրախտը ըստ ասելոյն Մահմէտի ունի այն ամենայն, ինչ որ Երաբացիք կ'սիրէին, այս ինքն գեղեցիկ այգիներ, համեղ կերակուրներ, մեռաքսեայ բարձեր, և փափկասուն օրիորդներ։ Մահմէտից սկսաւ Երաբացւոց մէջ բազմակնութիւնը։ Ամենայն մարդոյ վախճանը իւր ճակատագրից կախեալ կ'համարէր։

Այս տեսակ ուսմունքը վերջին աստիճանի հաճոյ էր Մահմէտի հետևողաց, այնպէս կ'պատերազմէին որ դրացի ցեղերը բոլորը յաղթուած՝ ստիպուեցան նոր հաւատը ընդունել, ի թիւս նոցա և Մեքքէի բնակիչքը։ Մահմէտը Մէքքէի տաճարը կամ մեհեանը ընդունեց գլխաւոր սրբութեան տեղ, և հրամայեց

որ այն տեղից կուռքերը դուրս հանեն։ Այն միջոցներում ինքն մեռաւ (632 թ). և ինչպէս կ'կարծեն՝ նա թունաւորեցաւ մի հրէայ կնոջմէ։ Մահուանից առաջ հրամայեց որ իրեն տանեն մզկիթ, այն տեղ ժողովրդեան բարեւեց և հարցուց, չ'լինի թէ նա նրանցից մարդու ձեռաս առած է. ժողովրդից մինը պատասխանեց թէ, մարդարէ, դու ինձ պարտական ես երեք դահեկան։ Մահմէտը լսելով զայն՝ շնորհակալութիւն մատուցանելով հատոյց նորան երեք դահեկան։ Մահմէտի շիրիմը Մեդինէ կ'մնայ, բոլոր աշխարհից ամենայն տարի ուխտաւորք կ'գնան Մեդինէ՝ Մահմէտի գերեզմանին երկրպագելու, և Մեքքէ՝ Քէաբայի տաճարը՝ սեւ քարը համբուրելու։ Մահմէտի յաջորդները խալիֆա կամ խալիֆէ, կամ ամիրապետ կոչուեցան, ինչպէս և ինքը Մահմէտը։ Խալիֆաները իրենց ձեռքին ունէին հոգեւոր և քաղաքական իշխանութիւնը։ Առաջին խալիֆայից ժամանակ (Ապուպէքր, Օմար և Օսման) Արաբացիք իրենց կրօնամոլութեամբը մեծ յաջողութիւն ունեցան զէնքով տարածելու այն կրօնը որ Մահմէտից սկսեալ էր, փոքր միջոցում նոքա Բիւզանդիոյ կայսրութենից առին Ասորիքը և Եգիպտոսը, և նուաճեցին Պալեսից թագաւորութիւնը, որ այն ժամանակ սակաւ դրութեան մէջ էր։ Հպատակ ազգերը կ'ազատուէին հին իշխող բռնաւորութենից. նոքա էլ երբ կ'ընդունէին այն հաւատը՝ կսկսէին պատերազմել և տարածել Մահմէտի ուսմունքը, բայց դեռ ևս վայրենի դրութեան մէջ լինելով՝ յաղթու-

թեան ժամանակ կ'կողոպտէին և կ'քանդէին քաղաքները և գիւղեր։ Կ'պատմեն թէ մէկ Էրարիոյ զօրապետ՝ առնելով Աղեքսանդրիա քաղաքը՝ մարդ ուղարկեց Օմար խալիֆային, հարցանելու թէ Աղեքսանդրիոյ ահագին մատենադարանը ինչ անէ։ Օմարը այս կերպ պատասխանեց "Եթէ այդ գրքերուն մէջ այն է գրած՝ ինչ որ զուրանի մէջ, աւելորդ է պահպանել, իսկ եթէ դոցա մէջ այն է գրած՝ ինչ որ զուրանի մէջ չկայ, նոքա ՀԱՍԱԿԱՐ են, ապա ուրեմն հարիւրաւոր է այրել։,, Կ'պատմեն թէ քանի մի շաբաթ հասարակաց բաղանիքները Յունաց ձեռագիրներով կսաքնային։

Զորրորդ խալիֆայի ժամանակ, որ էր Ալին, ներքին խռովութիւն պատահեց Էրարիոյ մէջ։

Ալի միջոցն Մահմետականք սկսան երկու կրօնական մասն բաժանուիլ. Սէ-ննի՝ որոց սուրբ գիրքն էր այն գիրքը՝ որոյ մէջ կային զանազան առասպելներ Մահմէտի կենաց վերայ, և Շէյ, որք Սիւննի գիրքը չէին ընդունի, (այժմ Թուրքերն Սէ-ննի են, Պարսիկները Շէյ)։ Պարսիկները Ալիի հետևողները էին, և կամենում էին որ իշխանութիւնը նորա ցեղը շարունակի վարել։ Սիւննիք ապստամբեցան Ալիի դէմ՝ Սորեսատ՝ի փոխարքայ Մուավիայի առաջնորդութեամբ։ Ալի սպանուեց, և Մուավիան դարձաւ խալիֆայ 691 թ։ Նրա ամրոցանիստ քաղաքն էր Դամասկոս, և նրա ցեղն կոչուեցաւ Իւմմեանց ցեղ։ Իւմմեանք նախկին խալիֆայի պարզ կեանքը մոռացան, սկսան շռայլ կեանք վարել, և իրենց անմերձենալի

կպահէին և հետու բոլորից, ինչպէս և Պարսից հին թագաւորները։ Ամենից ժամանակ դարձեալ Աբրաբացիք իրենց յաղթութիւնները և պատերազմը կըշարունակէին։ Նոքա նաւատորմիղ կազմեցին, և քանի մի անգամ էլ մօտեցան Պօլսոյ, բայց Ռիւզանդիոյ կայսերութիւնը փրկուեց, Յունական կրակով։ Մէկ Աստրեսանցի Յոյն հնարել էր մի տեսակ գործիք, որ կապելով նեռից՝ կձգէին, մինչև անգամ ջրի մէջ էլ կայրուէր։ Նորա շինելու գաղտնիքը այժմ անյայտ է։

Առաւել տիրեց նոցա յաղթութիւնը միւս երկիրներում։ Եգիպտոսից Աբարացիք գնացին հիւսիսային Աֆրիկէի ծովեզերաց մօտ։ Կ'պատմեն թէ երբ նոքա հասան Ատլանտեան Ովկիանոսի եզերքը, Աբաբացւոց զօրապետը սաստիկ իւր երիվարին մտնել ծովու ալեաց մէջ, և բարձր ձայնով յայտնեց իւր անբաւականութիւնը՝ որ այլ ևս չկայ տեղ առաջ գընալու։ Նոքա այն տեղից վերջը անցան մտան Սպանիա։

Վիսիգոթաց թագաւորութիւնը, որ հիմնուած էր Սպանիայում, նեղ վիճակի մէջ էր նեղքին խռովութիւններից, մանաւանդ թագաւորի և իշխանաց միջև եղած անբաւականութիւնից։ Իշխաններից մինն՝ Ջուլիանոս անուամբ՝ թագաւորական գահը ձեռք բերաւ։ Նրա հակառակորդ իշխանները Աֆրիկէից հրաւիրեցին Մաւրները կամ Մաւրիտանացիները, որ նոցա օգնութեամբ Ջուլիանոսին գահավիժեն։ Աբաբացւոց զօրապետ Էլ—Թարիքը անցաւ նեղուցը

(որ նրա անուամբ Ռ'էպէլ-ԷԼԼԻՍ կամ Ռ'էպրալԼԻՍ կոչուեց), և յաղթեց Վ. Խսիդոթաց թագաւորին երեք օր պատերազմելուց յետ Խերէս քաղաքին մօտ (711 թ.): Հոդերիկոսը իսպառ. կորաւ: Ընդհանուր Արաբացիք փոքր միջոցում առին Պիրենեան թերակղզին: Գոթացւոց քաջերը հետացան դնացին դէպի Հիւսիս՝ Աստուրիոյ լերանց մէջ բնակվելու, և միայն այն տեղ կարողացան պահպանել իրենց ազատութիւնը: Արաբացիք միտք ունէին Պիրենեան լեռները անցնելու, մտնելու Աքուիտանիա, բայց այն տեղ մեծ հարուած տացան և մեծ ջարդ արուաւ նրանց Կարոլոս Մարտելը (Ուռն): Ը. դարու կէսում (750 թ.) Իւմմեանք յաղթուեցան Ապիւլ Ապպասիդ, և սկսաւ նրա ցեղը իշխել, որ կոչուեց Ապասեանք. նոցա մայրաքաղաք տեղը դարձաւ Պաղդատը: Այս ցեղի թագաւորութեան ժամանակ Խալիֆայից տէրութիւնը շատ ծաղկեց: Մահմեդականաց կրօնամոլութիւնը սկսաւ հետ զհետէ նուազել, և պատերազմները վերջացան: Արաբաց քիրենց տիրած երկիրներում սկսան պարապել երկրագործութեամբ, արհեստիւ և վաճառականութեամբ: Ինքեանք խալիֆաները սկսան ծաղկեցնել արհեստները, իրենց դրանը կժողովէին ուսումնական և բանասէր անձինք, ուսումնարաններ կհիմնէին, Յունաց մատենագրաց երեւելի գրութիւնները կասային Արաբացւոց լեզուաւ թարգմանել, քաղաքները կզարդարէին մզկիթներով, պալատներով, այգիներով, բաղանիքներով, աւազաններով, կշինէին կամուրջներ,

ամբարանոցներ, կշինէին լաւ ճանապարհներ և ջրանցքներ։

Ամենից երևելի խալիֆան էր Հարուն-Էլ-Բաշիտ Ապասեան ցեղից (786—809)։ Արաբացւոց պատմաբանները նրան կանուանեն իմաստուն և արդարադատ թագաւոր, կպատմեն թէ նա շատ անգամ կնստէր կերպիւ կպարսէր, կմտնէր ժողովրդեանմէջ և կտեղեկանար դատաւորաց և դաւառապետաց կառաւարութեանցը։ Ասեն թէ Պաղտատը Հարուն Էլ-Բաշիտի ժամանակ ունէր 100000 մզկիթ և 1000,000 այգի։ Վերջը Պաղտատու խալիֆաները իրենց շռայլութեամբ ընկան։ Արձրագոյն իշխանութիւնը Պաղդիացւոց ալքունի հազարապետաց պաշտօնին նման անցաւ Էմիր-ալ-ամիրայի ձեռքը, այսպէս կկոչուէր հեծելազօրաց մեծը, և խալիֆան միայն առաջին անձն կհամարուէր։

Այն միջոցումն էլ զանազան առանձին անկախ տէրութիւններ կազմեցին իրենց համար։ Առաջինն էր Սպանիա, որ բաժանուեց Հարուն-Էլ-Բաշիտից առաջ։ Կմնար Իւմմեանց ցեղից միայն, Ապտուրահման անուամբ որ Ասպահանց սպանելու ժամանակ փախչելով ազատուել էր։ Սպանիոյ Մաւրիտանացիք իրենց աշխատութեամբ բաւական հարստութիւն շահեցան և ունեցան շատ գեղեցիկ քաղաքներ։ Հարստապետութիւնը շատ ծաղկեց նրանց մէջ, Մաւրիտանացւոց շինութիւնները արտաքուստ կզմայլանուին բոլորակ աշտարակներով, բոլորակ սիւներով և կամարներով, և ինքնքուստ իրենց հարա-

տութեամբ, ուր շատ ոսկի, թանկագին տիւնք և աւազաններ կգտանուէին։ Հարստութեամբ և բազմամարդութեամբ երևելի քաղաքն էր Սպանիոյ Կորդուբա կամ Քորտովա քաղաքը։ Մաւրիտանացւոց ճարտարապետութեան վերայ ճանապարհորդը այժմ ևս կհիանայ երբ կտեսնի Ալհամբրա պալատին աւերակները։ Աֆրիկէում նոյնպէս մի նոր Խալիֆայութիւն հիմնուեց նորա մայրաքաղաքն էր Գահիրէն, որ շինեցին Երբաբացիք Մեմֆիսի մօտ. այն տեղ կը թագաւորէր Ֆաթիմեան ցեղը։ Բայց Ասիայում Պաղատատու Խալիֆայութեան դէմի Երևելք, նոյնպէս մի նոր Խալիֆայութիւն հաստատուեց՝ Պարսից կամ Պ՝աղնեւեանց (գլխաւոր Պ՝աղնա քաղաքի անուամբ կոչուած)։ Պ՝աղնեւեան խալիֆաները կպահէին ուսումնական և բանաստեղծ մարդիկ, Մահմուտի ժամանակ երևելի էր Ֆիրդաուսի բանաստեղծը որ գրեց Շ՝ահ—նամէն (այսինքն թագաւորաց գիրքը), որ կպատմի հին թագաւորաց կեանքը և այլն։ Պարսկաստանում սկսան նաև տարածուիլ Երբաբացւոց վէպեր ու առասպելներ, որ վերջը ժողովեցին և կազմեցին մի գիրք՝ Հազար և մի գիշերք կոչեցեալը։

Այս բոլոր Մահմետականաց թագաւորութիւնները շատ չտևեցին։ Դրա պատճառն էր առաջին. զանազան խռովութիւնները, և երկրորդ՝ Երևելեան բռնաւորութիւնը, այս ինքն փոխանակ օրինաց վարուելու և դատելու ամենայն բան՝ Խալիֆայի կամքից էր կախեալ և նորա սիրականներից, և ժողո-

վուրյը շատ ճնշեալ էր, այս պատճառաւ էլ Ներ-
բաց։ ոց թագաւորութիւնները յայլմուսեցան, և ընդ-
կան Թուրքաց և Մողոլաց իշխանութեան ներքոյ։

Կարոլոսեանց ժամանակը։

Մեծն Կարոլոս թագաւորեաց (768 — 814)։ Նոր-
բա արտաքին գործոց մէջ երևելին է Լոմբարտացւոց
թագաւորութեան նուաճումն, և պատերազմը Սաք-
սոնացւոց դէմ։ Կարոլոսը ամուսնացած էր Լոմբար-
տացւոց թագաւոր Դեսիդերիոսի դստեր հետ, վերջը
նրան յետ ուղարկեց իւր հօր մօտ, այս եղև Դեսի-
դերիոսի և Կարոլոսի մէջ ծագած անբաւականութեան
գլխաւոր պատճառը։ Այն ժամանակ էլ Հռովմայ
պապը Եպրիանոս, Լոմբարտացւոցմէ նեղի եկած՝ դի-
մեց Կարոլոսին օգնութիւն խնդրելու։ Կարոլոսը ձմեռ-
նային ժամանակ իւր զօրքով անցաւ Էլպեան լեռ-
ները. և մտաւ Լոնդոբարտիա։ Դեսիդերիոսը փա-
կուեց իւր Պաւիա մայրաքաղաքում, և սովից ստի-
պուած՝ անձնատուր եղաւ. բանտարկուեց մի վան-
քում, և Կարոլոսը տիրեց Լոմբարտիային (774 թ.)։
Այն միջոցին Գերմանիոյ մէջ ամենաքաջ ցեղը Սաք-
սոնացւոցն էր։ Նոքա սաստիկ կապուած լինելով կը-
ռապաշտութեան հետ, միշտ կհալածէին Քրիստո-
նեայ քարոզչաց, և իրենց ցեղակից մարդոց, որք Քրի-
ստոնէութիւն կընդունէին. և շատ անգամ կյարձակուէին
սահմանակից Ֆրանկաց նահանգաց վերայ։ Կարոլոսը մտադրուեց նրանց յարձակման առա-

ջն առնուլ, և սրով տարածել նրանց մէջ Քրիս-
տոնէութիւն։ Մեծ պատրաստութեամբ գնաց Սաք-
սոնացւոց երկիրը, մնաց նրանց սրբազան անուա-
նեալ անտառը, և քանդեց Իրմենսուլը, որ նոցա փայ-
տեայ կուռքն էր և մեծ պատիւ և յարգանք կատարին
նրան Սաքսոնացիք (772 թ.)։ Սաքսոնացիք խաղա-
ղութեան դաշն կապեցին, ընդունեցին Ֆրանկաց
զօրքը և քրիստոնեայ քարոզչաց, բայց դարձեալ շու-
տով ապստամբեցան և ալոտաքսեցին Ֆրանկաց իրենց
քահանաներով։ Այն օրից սկսաւ շարունակ պատե-
րազմ Կարոլոսի և Սաքսոնացւոց մէջ։ Քանի մի ան-
գամ Կարոլոսը կարողացաւ յաղթել նրանց, բայց
վերադառնալուն պէս՝ կրկին կապստամբէին, և կար-
տաքսէին Ֆրանկաց։ Այն պատերազմը վատ ուղղու-
թիւն ստացաւ։ Միանգամ Սաքսոնացիք Ֆրանկաց
զօրաց հետ ուղարկուեցան որ Իշպա գետը անցնե-
լով՝ պատերազմեն Սլաւեանց դէմ, Սաքսոնացիք
ճանապարհին Ֆրանկաց զօրքը խսպառ ջնջեցին սը-
րով. նրա վրէժը առնելու աղագաւ՝ Կարոլոսը
հրամայեց կոտորել 4500 գերեալ Սաքսոնացիք։
(Այս տեսակ վարմունքը ժամանակի անկրթութեան
պտուղն էր)։ Սաքսոնացւոց դուքսերի մէջ Ֆրան-
կաց ամենասաստիկ թշնամին էր Վիդեքինտը որ միշտ
կերախուսէր և կհամոզէր Սաքսոնացւոց՝ իրենց կը-
ռնի և աղատութեան համար պատերազմելու։ Դա
յետ ժամանակի դարձաւ առարկայ շատ առասպե-
լաբանութեանց, ահա կպատմեն նրա համար թէ
ինչպէս պաշտպանել է երկու ամրոց։ Սաքսոնիոյ զօր-

քը բաժանուեց երկու մասն երկու ամրոցաց վերայ. Ֆրանկները չգիտէին՝ Ալիքիանոսը որ ամրոցում կը-մնայ, նա ձի հեծած մի ամրոցից կերթար միւս ամրոցը՝ այդպէս թիւն։ Լոմբարդի ոռից տեղը տեսնելով. Ֆրանկները միշտ կիսաբուէին, և մէկ ամրոցի վերայ կերկնային, կարծելով թէ Ալիքիանոսը այն տեղ չէ, նա պատերազմի ժամանակ ինքը դուրս կգար և մեծ ջարդ և ֆնաս տալով Ֆրանկաց յետ կմղէր։ Ալ-ջապէս Ֆրանկները ամրոցում երկու կին կոչատեցին. նոքա տեղեկութիւն տուին որ Ալիքիանոսը այն տեղ չէ. Ֆրանկները յարձակուեցան, և մի ամրոցը յաղ-թութեամբ առին։ Կարոլոսը Ալիքիանին համա-զեց դաշն կապելու, Սաքսոնացոց դիւցազնը եկաւ Ֆրանկաց զօրաց մէջ, և մկրտուեց Քրիստոնեայ. նը-բան հետևեցան շատ Քրիստոնեայք։ Կարոլոսը Սաք-սոնիան բաժանեց եօթն վիճակ, նշանակեց եպիսկո-պոսներ, շինեց վանօրայք և եկեղեցիք։ Սաքսո-նացոց դժուար թուեցաւ յօգուտ քահանայից տա-սանորդ տալ. և այս եղև պատճառ կրկին ապստամ-բութեան։ Կարոլոսը դարձեալ խաղաղացրեց, շատ գերդասան գաղթեց ուրիշ տեղեր, և նրանց տեղ բե-րաւ Ֆրանկաց. սրանով վերջացրուց երեսնամեայ խռովութիւնը (803 թ.)։ Այդ ժամանակներում Կարոլոսը ունէր նաև ուրիշ պատերազմ։ Դա գնաց պատերազմելու Սպանիա, ուր Մաւրիտանացոց իշ-խանութիւնն էր դեռ ևս, և նրանցից յաղթու-թեամբ առաւ Պիրենեան լեռան և Էբրոս գետին մէջ եղած երկիրը։ Վերադառնալու ժամանակ երբ

Պիրենեան լերինքը կանցնէր, Ֆրանկաց մէկ դունդը Ջնջուեց լեռնական Բասքերի յարձակումով Ռոնսվալլեան կրճում։ Այն պատերազմում սպանուեց քաջն Ռոլանդոս, որ միջին դարու ցրանասանդեմից առարկայ դարձաւ։ Բաց յայսցանէ Կարոլոսը նուաճեց և Պաւարիոյ դքսութիւնը, որ ինքն վայրենի Ավարացոց՝ որք եկել էին Ասիայից, և կրնակէին Մաճառաստանում, նոյն կէս յաղթեց Սլաւեան ցեղերին՝ որք կրնակէին Իլլպայի գետարերանին մօտ։ Այս կերպիւ մեծն Կարոլոս մի տէրութիւն կազմեց այն աղգերից որք կրնակէին Եբրոս գետից մինչև Իլլպա գետը, և Ապենեան լեռներից մինչև Ֆիսիսային ծովը։ Այս պատճառաւ էր նա չէր բաւականանում միայն թագաւորական տիտղոսով, և կցանկար կայսր անուանիլ։ Լեւոն Գ. պապը եկաւ Կարոլոսի մօտ՝ օգնութիւն խնդրելու, իւր թշնամեաց դէմ որք կամ խաւէին նրան ձգել աթոռից։ Կարոլոս ինքը գնաց Հռոմ, և հաստատեց իւր իշխանութեան մէջ Լեւոն Գ. պապին։ Պապը երախտապարտ գտնուելով՝ 800 թուին ծննդեան օրը, երբ պատարագի ժամանակ Կարոլոսը ծունկ ընկած կաղօթէր՝ պապը դրաւ նրա գլխին ոսկեղէն թագ և անուանեց նրան Կայսր Հռոմայ։ Մեծ հանդէս եղև և մեծ ուրախութիւն՝ նորոգ Հռոմայ կայսեր Կարոլոսի պատուելուն ապագաւ։ Կարոլոս միշտ կաշխատէր որ իւր հաստատած տէրութիւնը կարգաւորի։ Զանազան Կոմսութիւններ բաժանեց Ֆրանկաց կայսրութիւնը սահմանի վերայ գտնուած նահանգները ունէին զօրք։ Վեր-

ջը սրանցից, այսինքն սահմանակից նահանգներից կազմուց Դանուբի վերայ Ս. սարկայ Դեքսու թիւնը Վենետ մայրաքաղաքով, և Իտալիա և Օաէր գետոց վերջ էլ Պռանտենբուրկի մարգգրաֆութիւնը (Մարգրաֆ-Ընդ-Ը) Պերլին մայրաքաղաքով։ Ֆրանկները տարին մի անգամ Մայիս ամսին կժողովին, և այն ժողովում ինչ գործ որ կվճռուէր կայսեր ներկայութեամբ, այն կլինէր նրանց համար օրէնք։ Կարոլոսը խնամք ունէր նմանապէս և ազգային լուսաւորութեան վերայ, և վարժարանները և մանկավարժները հոգևորական գոլով, նա առաւել ևս կաշխատէր նրանց ուսման, հրամայեց որ վանքերում ուսումնարաններ հիմնեն։ Հոգևորականաց արգելած էր դատարկաշունչի լինելը և արբեցութիւնը. միայն որսորդութիւնը թոյլ էր տուած՝ որ դրանց կազմելու համար կաշի պատրաստեն։ Ինքը շատ բարեպաշտ գոլով շատ հոգի և տեղի կընծայէր վանօրէից, կշնէր գեղեցիկ և հոյակապ եկեղեցիք և առհասարակ կոքնէր գեղեցիկ ժամերգութեան վերայ, մինչև անգամ երգիչներ կհրաւիրէր Իտալիայից, և երգեցողութեան վարժարաններ կ'կարգէր, որպէս զի Ֆրանկներն էլ սովորին քաղցր ժամերգութիւն։ Ինքը Կարոլոսը շատ հետաքրքիր էլ։ Ամէն դարուն հանմամամ՝ երբ գիրքը շատ հազուագիւտ բան էր, Կարոլոս սաստկաւ թեթև ուսումնք. այսինքն գիտէր քանի մի աղօթք, հանգանակն հաւատոյ, Հայր Մեր և փոքր ինչ եկեղեցական Լատինարէն լեզու. ահա այս էր սովորել նա իւր մանկութեան

մէջ։ Սակայն դիտէր լաւ դոյծ ածել սուր և նիզակ, պէտք է լինէր լաւ ձիավարժ, միևնոյն ժամանակ խմնաղու էր լաւ վազել և լողալ։ Պ՝երջը եղաւ երեսելի ձիավար, և իւր ժամանակին ամենաքաջ կ՝համարուէր, այնպէս որ դիւրութեամբ կ՝կոտրէր երկաթեայ պայտը (նալ) ձիու։ Պարոլսը թագաւոր դառնալով՝ զգաց իւր թերութիւնը ուսման մասին։ Սկսաւ իւր կեանքը միշտ ուսմամբ անցուցանել։ Հրաւիրեց իրեն մօտ քանի մի ուսումնական անձանց (Ալկուինոս, Էդինպարդ և այլն), և նոցա հետ կ՝վարուէր իբրև բարեկամ, կաշխատէր միշտ նրանցից գանազան տեղեկութիւններ ստանալու, որոնց կ՝յանձնէր որ Գերմանացւոց դիւցազանց վերայ եղած առասպելները ժողովին. կազմեց Գերմաներէն քերականութիւն և այլն։ Գիշերը քուն չունենալու պատճառաւ՝ շուտով կարթնանար և կընթեռնոյր, և միշտ իրեն բարձի տակ դիրք կ՝պահէր։ Ունէր շատ արտադրողներ, և կարողացաւ բաւականին գիրք ժողովել։ Պարոլսս նոյնպէս իւր հովանաւորութեան ներքոյ կը պահպանէր երկրագործութիւնը և խաշնարածութիւնը, ինքն էլ շատ անտես մարդ էր։ Ինքը կը պահէր իւր տան ելից և մտից ցուցակը, և կ՝նշանակէր թէ իւր դիւղից որքան ձու, սագ և հաւ պէտք է ի վաճառ հանեն, և նորա կինը և աղջկունք՝ ինչպէս միւս Ֆրանկաց կանայք՝ կ՝պարապէին ոստայնանկութեամբ։ Պարոլսի արտաքին երևոյթը բոլորովին գերմանական էր, բարձրահասակ էր, ունէր զուարթ և ուրախ դէմք, շէկ մազեր։ Մինչև խորին ծերութիւ-

նրն պահեց իւր արագաշարժութիւնը և քաջութիւնը, իւր չափաւոր կեանք վարելուց: Եթէ պատերազմ չլինէր, միշտ կերթար որսի՝ վայրենի խոզերի և արջի վերայ: Առ հասարակ երևելի մարդկանց զբաղմունքը որսորդութիւնն էր: Պարոնս իւր ըզգեստովը երբէք չէր զանազանուի միւս Ֆրանկներից. միայն ժողովոյ ժամանակ կնիրկայանար թագաւորական զգեստով, որ էր երկար վերարկու՝ ոսկեայ մեղուներով զարդարած, և ոսկեղէն թագ կկրէր գլխի վերայ: Պարոնս իւր վերջին տարիները խաղաղութեամբ անցոյց իւր Աքուիսկրանա (Եզ — լա — Շ ապէլ, Ակէն) քաղաքի պալատում. բայց մեծ վիշտ կրեց իւր երկու մեծ որդւոց մեռնելուց յետոյ: Երբ նա զգաց իւր մահը, ժողով կազմեց և յանձնեց նրանց իբրև ժառանգ իւր միակ Լուդովիկոս որդոյն, և ժողովոյն համաձայնութեամբը իւր օրհնութեամբ նրան թագադրեցին Աքուիսկրանայի Ստուածամոր մայր եկեղեցում: Յետոյ հետև մի քանի ամիս ապրելով՝ մեռաւ Պարոնսը 72 տարեկում: Նրան նստացրին մարմարեայ թիկնաթոռոյ վերայ կայսերական զգեստով ձեռքն առած ոսկեպատ Աւետարան, և թաղեցին Աքուիսկրանայի եկեղեցում որ ինքն էր շինել: Վերջը ամփոփեցինը-նրան երևելի դամբարանի մէջ:

Ֆրանկաց ահագին թագաւորութիւնը զանազան ազգերից էր կազմեալ, և իւրաքանչիւր ազգ իւր օրէնքով և իւրեանց սովորութեամբ կկառավարուէր բայց Քրիստոնէութիւնը և Պարոնս մեծի քաջու-

թիւնը կարողացան նրանց իմի ազգ դարձնել։ Սակայն Կարոլոսի մահուանէն ետքի Ֆրանկաց թագաւորութիւնը իւրնախկին դրու թիւնը չկարողացաւ պահպանել։ Նորա ժառանգը շատ թոյլ բնաւորութիւն ունէր. աւելի ընդունակ էր կրօնաւորութեան՝ քան թէ թագաւորութեան այնպիսի ահագին ազգերու մէջ։ Լուդովիկոսը զոլով բարեպաշտ և ջերմեռանդ առ եկեղեցին և առ հոգեւորականութիւնն, կոչուեցաւ քաջեմիտ։ Իսկ կառավարութիւնը թեթեւացնելու աղագաւ բաժանեց աշխարհը իւր երեք որդւոցը որ էին (Լոթարիոս, Լուդովիկոս և Պիպինոս)։ Լուդովիկոս բարեմիտն բաժանուելուց ետքի կրկին անգամ ամուսնացաւ Յուդիթ օրիորդին հետ որ Պաւարիոյ Վոլֆ Կոմսի դուստրն էր, և նրանից ծնաւ Կարոլոս զաւակը որ վերջը կոչուեց Ա՛ղատ (Քաալ)։ Կայսրը սաստիկ սիրելով իւր գեղեցիկ ամուսին Յուդիթը, նրա համոզմամբ մեծ որդւոց մասն որոշեց Կարոլոս որդւոյն համար։ Մեծ որդիքը սրանով իրենց արհամարհեալ կարծեցին և զինուորուեցան իւրեանց հօր դէմ. այսպիսով սկսաւ նեղքին պատերազմ Կարոլոսեանց ընդդատանի մէջ։ Նոյն ժամանակ հարաւից Ալրաբացիք կյարձակուէին, իսկ հիւսիսից Նորմանդիոյ ծովային աւազակները։ Նահանգապետները, դաւառապետները և կոմսերը սկսան ինքն իշխանութեամբ վարուիլ, ժողովրդեան կեղեքել, ճնշել և անիրաւաբար վարուիլ։ Լուդովիկոս իւր որդւոց հետ ունեցած պատերազմին ժամանակ մեռաւ (840 թ.), նեղքին խռովութիւնը չը-

դաղարից։ Նորա Լուդովիկոս Գերմանիկոս և Կարոլոս Ճաղատ որդիքը միացան իւրեանց եղբօր Լոթարիոսի դէմ, վասն զի նա էր ժառանգը և նա պէտք էր կրէր կայսերական սիրաղոսը, երկիւղ չկրէին որպէս զի Լոթարիոսը ամբողջ տէրութիւնը յափշտակէ։ Փոքր եղբարք յաղթեցին Լոթարիոսին և դաշն կապեցին նրա հետ Վերաէօն քաղաքում (843 թուին)։ Լոթարիոսը ստացաւ Իտալիան, Բուրգունդիան և Ալսենոս ու Մէօզ գետոց մէջ եղած երկիրները (վերջը այս երկիրները կոչուեցաւ Լոթարինկիա)։ Լուդովիկոս Գերմանիկոս ստացաւ Գերմանիան, իսկ Ճաղատն Կարոլոս Գաղղիան, որ վերջը կոչուեցաւ Ֆրանսիա։ Այսպէս մեծին Կարոլոսի կայսերութիւնը երեք մասն բաժանուեց՝ Գերմանիա, Գաղղիա, և Իտալիա։

Համարեա թէ Կարոլոսեան երկիրները միանգամ էլ միացան Կարոլոս Յոյն (Հաստ) թագաւորի ժամանակ, որ Գերմանիոյ Լուդովիկոսի որդին էր, թէպէտ այն ևս շատ չտևեց։ Յոյն Կարոլոսը սաստիկ ծոյլ և անընդունակ թագաւոր էր։ Նորմանդիոյ աւազակները մասն մինչև Սեն գետը, և պաշարեցին Փարիզ քաղաքը։ Կարոլոս կ՚յապաղէր օգնութիւն տալու ժողովրդեան, բայց վերջը գնաց լաւ զինուորական զօրքով, և փոխանակ պատերազմելու՝ ոսկւով խաղաղութիւն խօսեցաւ։ Գերմանիոյ իշխանները նեղանալով այն տեսակ արարմանց վերայ ձգեցին ըզնա թագաւորութիւնից, և ընտրեցին իսեղի Կարոլոսի նորա բարեկամ Ամնուլֆին (887 թ.)։ Այն

միջոցներում բաժանուեց Իտալիան և Գաղղիան։ Յոյն Կարոլոս իւր վերջին օրերը անցոյց Պոտենի լճին մէջ եղած մի վանքում։

Առնուլֆի ժամանակ եկաւ Գերմանիա մի նոր ցեղ Ասիայից՝ որ էին Մաճառք կամ Հունգարացիք։ Նոքա Գին ցեղերն էին եկան հեռաւոր դաշտերից, և բնակեցան Դանուբի եզերքը, որ այն օրից կոչուեցաւ Հունգարիա։ Այս վայրենի և թափառական ժողովուրդը սաստիկ պատերազմասէր և քաջ էր, և շատ կ'նմանէր Հունաց։ Առնուլֆը ինքը՝ հրաւիրեց նրանց օգնութիւն ընդդէմ Մորաւիոյ Սլաւեանների, որ այն ժամանակ հզօր տէրութիւն էին կազմած, և կ'նեղացնէին դրացի գերմանական ազգաց։ Մաճառները օգնեցին Առնուլֆին, աւերեցին Մորաւիոյ տէրութիւնը, և առին Մորաւիոյ մեծագոյն մասը։ Իսկ յետ մահուան Առնուլֆի և թագաւորութեան որդւոյ նորա Լուդովիկոս մանկան Մաճառները սկսան յարձակիլ մինչև անգամ Գերմանիոյ վերայ։ Մարախի նման ցրուեցան Գերմանիայում, և մեծ նեղութիւն տուին ժողովրդոց, այրելով գիւղերը, տանելով նոցա անասունը, և անթիւ մարդիկ դերելով։ Կարոլոս մանուկը մեռնելով՝ վերջացաւ Կարոլոսեանց ցեղը Գերմանիայում (911 թ)։

Գերմանիայում մեծին Կարոլոսի մահուանէն ղէնի՝ քանի մի կալուածապետք շատ զօրացան, և եղան իշխան Գերմանական ցեղերի, նոքա ստացան դքսութեան տիտղոսը, և հեղհեղեալ ազատութիւն ձեռք բերին։ Գլխաւոր դուքսերն էին Սաքսոնիոյ,

Գրանկոնիոյ, Լոթարինկիոյ, Պաւարիոյ և Շուա-պիոյ (Շուապիան էր այժմեան Վիւրթեմպերկ և Պատէն)։ Բաց յայդմանէ զլխաւոր հոգևորականք նոյնպէս ունէին ահագին նահանգներ իրենց իշխա-նութեան ներքոյ և թուով երկու էին. արքեպիսկո-պոսունք Մոգունտիոյ (որ է Մայնց) և Կոլոնիոյ (որ է Քէլն)։

Գաղղիայում Կարոլոսեանց տունը թագաւորեց մինչև ԺԵ. դարու վերջը։ Վերջին Կարոլոսեանք, ինչպէս և վերջին Մերովեանք, անընդունակ մարդիկ էին թագաւորութեան համար։ Ժողովուրդը ձեր յարդում նոցա, մինչև անգամ նրանք զանազան մա-կանունամբ կոչուեցան՝ Ճատատ, Թլուատ, Յոյր, Պարզամիտ՝ Ծոյլ և այլն)։ Իսկ Գաղղիոյ դուքսերը և կոմսերը Գերմանացւոց նման բոլորովին անկախ էին։ Կարոլոսեանք իրենց հողերը բաժանեցին կալ-ուածապետաց, որով կարողանան դրաւել զնոսա, բայց ընդ հակառակն սրանով իրենց զօրութիւնը թուլացրին։ Կալուածապետները թագաւորաց չէին հնազանդում, ներքին պատերազմը կ'շարունակուէր նրանց մէջ, հզօր կալուածապետները կ'յափշտակէին այլոց հողերը, և նոքա կ'հպատակէին նոցա։ Այսպի-սով Գաղղիան բաժանուեց քանի մի դքսութեանց և կոմսութեանց վերայ. Գլանդրիոյ (Պնչ'իայում), Պուրգոնի բուն Գաղղիոյ (Ել-տը-ֆրանս), Շամ-փանիոյ, Աքուիտանիոյ (Պիէն և Փուաթու), Թու-լուզի, Պրեթայնի և Նորմանտիոյ։ Այսպէս հաստա-տուեցաւ Նորմանտիոյ դքսութիւնը, Նորմանտա-

ցիք կ՚շարունակէին իրենց յարձակմունքը Գաղղիոյ եղերաց վերայ։ Գաղղիոյ թագաւոր Կարոլոս Պարզամիտն պայման կապեց Նորմանտիոյ մի զօրավար Ռոլնի հետ, և տուաւ նրան Գաղղիոյ հիւսիսային մասը, այն պատճառաւ որ նա մկրտուի քրիստոնեայ, նա էլ իրեն յայանեց կաղուածապետ հպատակ Գաղղիոյ կայսեր, և գնաց Գաղղիոյ եղերքը ապահովացնելու ի թշնամեաց (911 թ.)։ Առասպելը կպատմէ թէ Ռոլն դուքսը մերժեց ինքն անձամբ կատարելու կաղուածապետութեան հանդէսը, ուր նա իւր խոնարհութիւնը պէտք էր ցոյց տար թագաւորին, այսինքն որ նա ծունկ ընկած համբուրելու էր թագաւորի ոտքը, դուքսը յանձնեց այդ գործը իւր զինուորներից մէկին։ Նա երբ մօտեցաւ Կարոլոսին, փոխանակ ոտը համբուրելու՝ ոտը այնպէս բարձրացոյց որ Կարոլոսը վայր ընկաւ, կոպիտ Նորմաններին դեռ ևս անծանօթ թագաւորական կանոնապահութեան՝ սկսան բարձր ձայնիւ ծիծաղել։ Նորմանները որք բնակեցան հիւսիսային Գաղղիա՝ ընդունեցին Գաղղիական սովորութիւնները և լեզուն, միայն թէ պահեցին իրենց անհանգիստ և պատերազմական հոգին։ ԺԱ դարում Նորմանտացիք սիրեցին Իտալիոյ հարաւային մէկ մասին, և այն տեղ հիմնեցին Նափոլիի թագաւորութիւնը և Նորմանտացւոց դուքսերից մինը Գուլիելմոս Ծովանցին նուաճեց ամբողջ Անգղիոյ թագաւորութիւնը։ Գաղղիայում Կարոլոսեանց վերջին թագաւորն էր Լուդովիկոս Ծոյլը։ Երբ նա անժառանգ մեռաւ ի

Փարիզ, Ֆուկոսակէթ դուքսը սուլթան Իսէն թագաւոր անուանելու (987 թ.) և այսպէս սկսաւ Գաղղիայում թագաւորել Կապէթեան նոր ցեղը։

Այն միջոցում թ. դարու սկզբում եօթն Անգլոսաքսոնեան թագաւորութիւնք միացան ի մի թագաւորութիւն, որոյ թագաւորն էր Էգպերթը (827 թ.) նա կոչուեց առաջին Անգղեոյ թագաւոր։ Այն ժամանակին էլ սկսաւ Նորմանտացւոց յարձակումնքը Անգղեոյ վերայ։ Նորման կ'նշանակէ հիւսիսային ծարդ. այսպէս կ'կոչուին նաև Գերմանացիք, որ կ'բնակին Ազանտինաւիոյ և Նուրթլանտ թերակղզեաց վերայ։ Իւսիսային ցուրտ օդը, անբեր երկիրը և մերձակայ ծովը կ'պահպանէր նոցա պատերազմական հոգին։ Առ հասարակ իշխանաց հողերը իրենց անդրանկաց ժառանգութիւնն էր, իսկ միւս որդիքը կ'երթային ուրիշ երկիրներ ապրուստ որոնելու, նոքա վերջը կոչուեցան ծովային թագաւորներ։ Շատ անգամ սատիկ փոթորիկից նոցա նաւերը կըխորտակուէին, բայց այն հիները՝ որք միանգամ կազատուէին այն փորձանքից, միւս անգամ կ'ծիծաղէին հողմոց և ալեաց վերայ։ Նոքա կ'երգէին այսպէս՝ թէ հողմը կ'օդնէ մեր նաւարարաց, իսկ փոթորիկը մեզ կ'տանի այն երկիրը՝ ուր որ կ'ցանկամք երթալ։ Վերջը նոքա չբաւականացան ուազակութեամբ, այլ սկսան երկիրներ նուաճել։ Երբ մեան Նորոպան իւր զլխաւոր ուշադրութիւնը դարձոյց Բրիտանական կղզեաց վերայ։ Շուտով Էգպերթից յետոյ Անգղեան ընկաւ Տանիմարքացւոց իշխանութեան

ներքոյ, բայց աղատուեց Էկկերթի Թոռան մեծին Ալֆրեդի աշխատութեամբ (871—900 թ)։ Իւր ժամանակին Ալֆրեդը ուսումնական թագաւոր էր, և շատ կ'սիրէր դրաւոր աշխատութիւն. իւր թագաւորութեան սկզբում տրտունջ լսուեց ժողովրդեան կողմանէ իւր ինքնահաւան բնութեանը համար, և բաց յայտնանէ սկսաւ անարգել Սաքսոնացւոց հին սովորութիւնները։ Տանիմարքացւոց մի յարձակման ժամանակ կալուածապետները ոչինչ օգնութիւն չարին նրան, և ստիպուեց կեղծ անուամբ թաքչել անտառի և ճահճաց մէջ գտնուած մի հովուի խրճթում։ Առասպելը կ'պատմէ թէ ինչպէս մի անգամ հովուի կինը նրան յանձնեց որ հաց եփի, և երբ հացը այրուել էր՝ բարկանալով, նրան անուանել էր անօգուտ հաց կտտակ։ Ալֆրեդը այնքան սպասեց մինչև որ Անգղեացիք իրենք զզուեցան իրենց նոր իշխողներից, և դիմեցին կրկին իրենց թագաւորին։ Ալֆրեդի մօտ գումարուեց բաւական զօրք, և նա սկսաւ նորոգել պատերազմը։ Վերջին պատերազմի ժամանակ Ալֆրեդը ձևանալով Անգղեական երգիչ՝ մտաւ թշնամեաց բանակը, և զուարճացնելով Տանիմարքացւոց՝ կատեց նոցա դրութիւնը և իմացաւ բոլոր գաղանիքը։ Այն պատերազմում Տանիմարքացիք սաստիկ հարուած ստացան, և Անգղեացիք ձեռք բերին իրենց նախկին աղատութիւնը։ Թէպէտ դարձեալ ամենայն տարի Տանիմարքացիք կ'յարձակուին Անգղեոյ վերայ, բայց միշտ յաղթուած կ'վերադառնային։ Ալֆրեդը մեծին Կարոլոսի նման

ոչ թէ միայն իւր պատերազմական քաջութեամբ է երևելի, այլ նա և իւր քաղաքական կառավարութեամբ։ Նա կանոնաւորեալ կերպիւ բաժանեց Անդղեան կոմսութեանց վերայ (այս բաժանմունքը Սաքսոնացիք մոցրին Գերմանիայէն), և հաստատեց հին Գերմանական սովորութիւնը՝ որ քրիստեան յանցանաց ժամանակ երկոտասան անդամ իրենց կարծիքը յայտնելու էին յանցաւորի արդար կամ մեղաւոր լինելուն վերայ։

Ալֆրեդ ինքը շատ արդար դատաւոր էր, և անաչառութեամբ կ'վարուէր բոլորեցունց հետ. ժամանակագրողները կ'պատմեն թէ Ալֆրեդի կառավարութեան ժամանակ եթէ ճանապարհորդը կորցնէր մի պարկ ոսկի, կրկին կարող էր գտնել, դիտնալով որ ոչ ոք չի մերձենայ առնելու, ինքը սիրելով դիտութիւնք՝ միշտ ուսումնարաններ կ'հիմնէր, նրանցից երևելին է Օքսֆորտին ուսումնարանը որ վերջը եղաւ Եւրոպայի ամենահին համալսարան։

Ալֆրեդի յաջորդաց ժամանակ Տանիմարքացիք կրկին սկսան Անդղեան աւերել իւրեանց յարձակմամբ։ Նրանցից վրէժը առնելու աղաղաւ Անդղեացւոց թագաւոր Էթելբերտը խորհուրդ տվաւ որ նշանակեալ օրը իրենց մէջ բնակող Տանիմարքացւոց ջարդեն, և կատարուեց՝ բոլորեցունց կոտորելով (1003 թ)։ Բայց այս կոտորուածը վատ հետևանք ունեցաւ, եկան Տանիմարքացիք, և ամբողջ Անդղեան տիրեցին։ Տանիմարքայի թագաւոր մեծն Կանուտ իւր իշխանութեան ներքոյ ունեցաւ Տանի-

մարքան, Անգղիան և Նորվեկիան, և իւր ժամանակուայ հզօր թագաւորաց մինն էր։ Առաջ ՎանուԹը շատ սաստիկ էր, բայց երբ իւր դահին վերայ հաստատուեց, բոլորովին փոխուեց. նա էր բարեպաշտ, բարի և միշտ կգիտէր դատաւորաց ընԹացից վերայ։ Եհա օրինակ մի նորա ճշմարիտ և արդարադատ լինելուն. իրեն մարդիկը նրա հետ կեղծաւորաբար կվարուէին, մինչև երկինքը կհանէին և կասէին Թէ մինչև անդամ ցամաքը և ծովը նրան կհնազանդին, բայց նա մի անդամ դանուելով ծովու եզերաց մօտ՝ մակընԹացութեան ժամանակ հրամայեց ծովուն որ ալիքը առաջ չգան, բայց ալիքը առաջ գալով սաստկացին նրան փոքր ինչ հեռանալ, այն ժամանակ ասաց իրեն շրջապատող կեղծաւորաց. "կտեսնէք ինչպէս անզօր են երկրային Թագաւորները, միայն Աստուած կկառավարէ ամբողջ տիեզերքը,,։ ՎանուԹի մահուանէն զկնի Անգղիացիք կարողացան ազատուել, հրաւիրեցին իրենց Թագաւոր, իրենց նախկին Թագաւորաց ժառանգ Էդուարդին, որ կուսանէր Նորմանտիայում, որոյ մայրը Նորմանտիոյ դքսի քոյրն էր։ Էդուարդը՝ որ իւր բարեպաշտութեան պատճառաւ խոսովանող կոչուեցաւ, իրենշրջապատեց Նորմանտիոյ իշխաններով. նրանց իրաւունք տուաւ կառավարելու և ինքը Նորմանտացւոց սովորութեանց կհետևէր, սրանով ատելի եղաւ Անգղիացւոց առաջ։ Էդուարդ խոսովանողը մեռնելով վերջացաւ մեծին Ալֆրեդի ցեղը։ Իշխանաց ժողովը ընտրեց կոմս Հա-

բոլորին։ Եւ նրա թշնամին եղեւ Գորմանտիոյ դուքս Գուլիելմոս կամ Վիլհելմը։ Վիլհելմը Գորմանտիոյ Պատանոյ անուանեալ Գոբերտի խորթ որդին էր (այսպէս էին անուանել սրան իւր խիստ վարուց պատճառաւ)։ Եդուարդ խոստովանողը անժառանգէր, սա էլ լինելով Եդուարդի ազգական՝ յուսալ էր որ ժամանակին Անգղիան նրա ժառանգութիւնը կ'լինի։ Հետաւոր Վիլհելմը կ'աշխատէր նոյնպէս իրեն ապահովացնելու պատուասէր Հարոլդ դքսին կողմանէ։ Մեկ դիպուած օգնեց նրան։ Մի անգամ Հարոլդի նաւը աղէկութեան ժամանակ հանդիպեց Գաղղիոյ եղերաց ու ընկաւ Վիլհելմի ձեռքը։ Վիլհելմը թէպէտ նրա հետ շատ սիրով վարուեց, սակայն նրան հանդիսով երդուեցրուց սրբոց մասանց վերայ, որ նա կ'օգնէ Վիլհելմին՝ անգղիոյ թագաւորական գահը ժառանգելու։ Երբ Եդուարդ խոստովանողը մեռաւ, Գորմանտիոյ դուքսը յիշեցուց Հարոլդին իրեն երդումն, բայց Հարոլդը չկատարեց, ասելով թէ այն երդումն ստիպմամբ ընդունեց, այլ ոչ կամաւ։ Եւ առաջարկեց որ ազգը ընտրէ իրեն համար թագաւոր։ Վիլհելմը այդ լսելով՝ նրան անուանեց ուխտադրուժ և թագաւորական գահն յափշտակող։ Հռովմայ պապը Գորմանտիոյ դքսի կողմը պահեց. ուղարկեց նրան օրհնած դրօշակ և բանադրեց Վիլհելմի հակառակորդաց։ Վիլհելմի շուրջը բացի Գորմանտիոյ կոմսերէն ժողովեցան նաև Գաղղիոյ և Գիտէրլանտիոյ քաջերը, և Վիլհելմը իւր

քաջ և ընտիր զօրքով անցաւ հարաւային Անգղիա (1066 թ)։

Հարոլդը իւր Անգլոսաքսոնացւոց հետ շուտով հանդիպեց Վիլհելմին, և խառնուեցան Պասինքս քաղաքին մօտ։ Հարոլդի բարեկամները սեսնելով թշնամեաց կանոնաւոր զօրքը, համոզեցին Հարոլդին որ չպատերազմի, և սպասի օգնութեան. նա մերժեց նոցա խորհուրդը և ամրացաւ մեկ բարձրաւանդակ տեղ։ Սաքսոնացիք մեծ ուրախութեան մէջ էին. երգելով և դարձնելով անցուցին այն գիշերը, իսկ Նորմանացիք ընդ հակառակն կ'խոստովանէին քահանայից և կ'հաղորդէին։ Յաւուրսն Նորմանաց զօրքերը կանոնաւորեալ կերպիւ պատերազմելու դուս ելան, զենուորներից մինը առաջ գնաց, և սկսաւ երգել Ռոլանի քաջութիւնները. նոյն ժամանակ նա իւր սուրը վեր կ'ձգէր և դարձեալ արագութեամբ կ'բռնէր։

Օրքն էլ վերջը սկսումէր նոյն երգը կրկնել։

Սաքսոնացիք երկար տապարներով զենուորեալ բաւական ընդդիմացան իրենց թշնամի Նորմանացւոց։ Վիլհելմը ի վերջոյ հրամայեց որ իրենց նիզակները և աղեղունքը ձգեն թշնամեաց վերայ։ Թափեցին Սաքսոնացւոց գլխի վերայ, և Հարոլդը զրկուեց մեկ աչքից, բայց դարձեալ Նորմանները չկարողացան բռնակին առնել։ Այն ժամանակ Վիլհելմը մի խորամանկութիւն արեց, հրամայեց որ իրեն զօրաց մեկ մասը սուտ ի փախուստ երթայ, Անգլեացիք պատերազմով տաքացած՝ դնացին թշնամեաց ետե-

ուէն, և իջան իրենց բարձր տեղից, այն տեղ նոքա պաշարուեցան Վիլհելմի կանոնաւորեալ զօրքից։ Այն տեղ սկսաւ սաստիկ պատերազմ, Անգլեացիք այլ ևս չկարողացան ընդդիմանալ, մեծ ջարդ կերին և զրկուեցան Հարոլտից։ (Պատմեն թէ Հարոլտի մայրը շատ թախանձեց Վիլհելմին որ իւր որդւոց մարմինը տայ թաղելու իրեն հիմնած վանքում, և երկու վարդապետ եկան որ նրան տանեն թաղելու, բայց նա այնպէս սաստիկ էր վերաւորուած որ նոքա չկարողացան Հարոլտին դուռնելու. այն ժամանակ ըստիպուեցան նոքա հրաւիրելու Հարոլտի սիրուհոյն և նա կարողացաւ Հարոլտին ճանաչել.)։ Պատմինքսի մօտ եղած պատերազմը շատ նշանաւոր եղաւ իւր հետևանքներով։ Այն պատերազմով ամբողջ Անգղիան անցաւ յաղթական Վիլհելմի ձեռքը։ Նա անմիջապէս մտաւ Լոնդրա, պտակուեց արքունական թաղով և ձեռնադրեց երևելի Թրոուէր պատրիարքը շինելու։ Առաւ Անգղեացւոց իշխաններից նոցա հողերի մեծ մասը, և բաժանեց իրեն պարոններին։ Որք նոյնպէս շինեցին ամուր ամրոցներ և մնան իրենց զօրքերով. առ հասարակ Վիլհելմը նմանելով իւր հօրը նոյնպէս խստութեամբ վարուեց Անգղեացւոց հետ, անարգեց նոցա օրէնքները, և կաշխատէր Անգղիայում մտցնել Գաղղիական սովորութիւններ և նոցա լեզու։ (Նորմանդիոյ դքսերը արդէն իսկ մոռացել էին իրենց մայրենի լեզուն և կիսօսէին Գաղղիերէն)։ Վերջը Գաղղիերէնը խառնուելով Էնգլը Սաքսոնացւոց լեզուի հետ կազմուեց

այժմեան Անդղիայոց լեզուն։ Այլ հիսնեալի մահուանէն զինի նորա քաջ ցեղը վերջացաւ, յաջորդութիւնը անցաւ իգական սեռի կողմը, և ընտրուեց Դաղղիոյ Լոմնը Հենրիկոս Փլանթաժենէն (1151 թ)։ Նա թագաւորեց Հենրիկոս Ա անուամբ, և սկսաւ Անդղիայում թագաւորել Փլանթաժենի տունը։

Պայքարաց խռովութեան պատճառի հետ։
Աղէքսանդր և Արիստոտէլ։

Դերմանիայում յետ մահուան Լուդովիկոս մանկան Դուքսերը, Եպիսկոպոսները, Կոմսերը, և Պարոնները ժողովեցան ի միասին, և ընտրեցին իրենց թագաւոր Ֆրանքոնիոյ դուքս Կոնրադոսին։ Կոնրադոսի առաջնոյ թագաւորութիւնը անյաջողեցաւ։ Նախ սակաւուց պատերազմ բանալու իրեն անհնազանդ դուքսերի դէմ, որք միշտ կուշտատէին անկախ լինել, նրանցից հզօրն էր և հակառակը Սաքսոնիոյ դուքս Հենրիկոսը, որ ունէր մեծ երկիր հիւսիսային Դերմանիայում։ Երկրորդ՝ նոցա ներքին խռովութիւնը միջոց տուաւ Հունգարացոց յարձակուիլ և աւերել Դերմանիայն և Սաւեանք նոյնպէս կը-յարձակուէին հիւսիսային արևելեան սահմանաց վերայ։ Կոնրադոս մեռնելու ժամանակ ցոյց տուաւ իւր վհատութիւնը, խնդրեց Դերմանիոյ դուքսերին և իշխաններին որ արքունական գահը առաջարկեն իրեն թշնամի Հենրիկոսին Սաքսոնիոյ դուքսի ընակու-

թեան ամրոցն էր Վիզիգլինոյ անունը, խոր անտառի մէջ Կարդլերանց վերայ։ Ենրիկոսը շատ կսիրէր այնպիսի մէջ թաքնոց որսորդութեամբ պարապել, և կարամեն թէ Գերմանիոյ դեսպանները նրան հանդիպելու որսորդութեան ժամանակ դրանով նամակ հասուցեց։ Դեսպանները յանձնեցին նրան թագը, դաստակը, վերարկուն և մեծին Կարոլոսի սուրը. թագաւորի ընտրութիւնը շատ յաջող եղաւ։ Ենրիկոս հաւորսը (919 — 936) սահմանեց հղաստակիլ ազգատամբ դուքսերին, և յաղթեց Գերմանիոյ արտաքին թշնամեաց։ Ամանաւանդ երևելի էր նորա պատերազմը Ունգարացւոց հետ։ Նորա թագաւորութեան սկզբում Ունգարացիք իրենց յարձակումը կրկնեցին։ Ենրիկոսի սեպհական հողերում Սաքսոնիայում և Թուրինգիայում սակաւ էին քաղաքներ և ամրոցներ, իսկ կալուածականները չնայելով ուրիշներ վերայ առ հասարակ շատ դանդաղ կմարուէին զօրք ժողովելու ժամանակ. և այդ էր պատճառը որ Ունգարացիք անդադար կմանէին Գերմանիոյ մէջ։ Ունգարացւոց գալուստը կմտցուէր երբ ի հեռուստ կնկատէին գիւղերից հրդեհը և ժողովուրդը նրանց գալը իմանալով շուտով իրենց հարբատութիւնը ժողոված կփախչէին անտառը, և կազատէին իրենց՝ այրերի և ճահճային տեղեր թաղելով։ Ամենչև անգամ ինքը Ենրիկոս կփակուէր իւր ամրոցի մէջ, և կպաշարուէր. և այնտեղ պաշարման ժամանակ կարողացան Ունգարացւոց մի զօրապետին բռնել։

Եւ վերջը Հենրիկոսը արձակեց նրան՝ այն պայմանաւ որ տասն տարի չպատերազմեն, և հարկ հաւուցանեն։ Այն տասն տարին թագաւորը միայն ներքնով կպարապէր որ մէկ յարմար միջոց մեռոդական պատերազմ տայ։ Հրամայեց յարմարաւոր տեղերում քաղաքներ հիմնել որ ժողովուրդը յարձակման ժամանակ իրեն ապաստանարան ունենայ, և պարսաւ որեցոյց մերձակայ գիւղացւոց որ այն քաղաքաց մէջ միշտ իրենցմէ զօրք ունենան։ Այս քաղաքները, որ պարսպապատ էին, կոչուեցան Բուրգ կամ պուրգ (այդ պատճառաւ Գերմանիոյ քաղաքացիք պուրգեր կոչուեցան)։ Քաղաքացիք իւրեանց պարիսպներով ապահով մնացած՝ միշտ վաճառականութեամբ և արհեստով կզբաղէին, միևնոյն ժամանակ նոքա կատանային թագաւորներից իրաւունքներ և արտօնութիւններ, որից զրկուած էին գիւղական բնակիչք։

Այն օրից Գերմանիոյ քաղաքաց թիւը սկսաւ բազմանալ։ Հենրիկոսը նորոգեց Գերմանական հին զինուորութիւնը, իւրաքանչիւր տանից մի զինուոր կպահանջէր։ Նա առանձին ուշադրութիւն դարձրուց հեծելազօրաց վերայ, որ նոքա ընդիմանան Հունգարացւոց քաջ հեծելազօրաց, և նոքա կպատերազմէին ի միասին։ Հենրիկոսը իւր զօրաց քաջութիւնը փորձեց Սլաւեանց դէմ ունեցած պատերազմում, որք կընակէին Էլբա գետոյն մօտ Սլաւեանք յաղթուեցան և նոցա երկրի մի մասը միացաւ Գերմանիոյ հետ։ Եւ այդ միջոցը վերջա-

ցաւ ինամեայ խաղաղութեան ժամանակը։ Հունգարացիք ըստ սովորութեան իւրեանց ուզարկեցին մարդիկ հարկ ժողովելու, Հենրիկոսը զայրացած՝ հրամայեց որ նրանց տան վիրաւորեալ շուն մի։ Այս իմանալով Հունգարացիք՝ նեղացած յարձակուեցան յանկարծ Գերմանիոյ վերայ, բայց այն միջոցը սաստիկ նեղութիւն կրեցին Հունգարացիք։ Նրանց մեծ գունդը հանդիպեց թագաւորին Մերսեբուրգ քաղաքին մօտ (Սալ գետոյն մօտ)։ Դէպ այն պատերազմում մեծ ջարդ տուին Հունգարացւոց և իփախուստ դարձրին նոցա։ Այն պատերազմից երեք տարի անցած՝ Հենրիկոս Ա. մեռաւ։ Իշխանները նախ քան նորա մահը ընտրեցին իրենց թագաւորի որդի Ոթոնին։ Մեծն Ոթոնի առաջնոյ թագաւորութիւնը (936 — 973) տեւեալ երեսուն է քան թէ նորա հօր։ Գ. խապառ նուաճեց Հունգարացւոց, և նոքա բոլորովին դադարեցան յարձակուելուց։ Նորա գործերից զլխաւորն է հիւս. Իտալիոյ միացնելը Գերմանիոյ հետ, և կայսերական տիտղոսը ընդունելը։

Երբ մեծն Կարոլոս թագաւորութիւնը բաժանեց, Իտալիոյ լաւ էս տեսել՝ Լոմպարտիոյ թագաւորները կայսերական տիտղոս կկրէին։ Բայց նոցա զօրութիւնը հետ զհետէ նուազեց, հզօր Վասալները, այսինքն դուքսերը և մարգկրաֆները իրենց համար անկախ տէրութիւններ կազմեցին (ինչպէս դուքսերը Փրիուլի, Սպոլեթի, Մարգկրաֆ Իվրեի, և այլն)։ Վասալները խռովութիւն ունէին թագա

ւորաց հետ, և շատ անգամ նրանց արքունական թագը կյսիշտակէին։ Մէկ Լոմպարտիոյ թագաւորի այրիացեալ կինը Ատելայիտ կհաղածուէր իւր Պասանելի մինի ձեռքից, որ յսիշտակել էր իւր հանդուցեալ ամուսնոյ արքունական թագը։

Ատելայիտէն իրեն օգնութիւն հրաւիրեց Ոթոնին։ Ոթոնը եկաւ Իտալիա, և ամուսնացաւ նրա հետ, և ընդ նմին ստացաւ Իտալիոյ թագաւորութիւնը։ Ոթոնը թագաւորեց Միլան քաղաքում Լոմպարտացւոց երկաթեայ թագով, որ ինքը ասկի էր, միայն թէ ունէր երկաթի շրջանակ. (կպատմեն թէ այն շրջանակը շինուած էր Քրիստի բեւեռներից)։

Լոմպարտիայից Ոթոնը գնաց Հռոմ, ուր պապը Ս. Պետրոսի եկեղեցում նրան օծեց, և դրբաւ թագ իրրև Հռոմայ կայսր։ (Այսպէս կոչուեցան Իտալիան և Գերմանիան միացած)։

Այս կերպիւ կօծուէին նաև Ոթոնի յաջորդները։ Նորա իւրեանց իշխանութիւնը հաստատ պահելու համար ստէպ պատերազմ կունենային։

Այն պատերազմներով նորա Իտալացւոցմէ սովորեցան նոցա շատրութիւնը և փափկակեցութիւնը։ Իտալացիք մեծ նկրտութեամբ կասանէին Գերմանացւոց իշխանութիւնը, և նոցա կհամարէին իրրև կոպիտ և անկիրթ ժողովուրդ։ Դէ այս եղաւ պատճառ վերջին պատերազմաց և ապստամբութեանց։ Մնծին Ոթոնի երկաթ յաջորդներից յետոյ (Ոթոն Բ. Ոթոն Գ. և Հենրիկոս Բ.) Գերմանիայում վերջացաւ Սաքսոնեան ցեղը։ (1124 թ)։

Նոր Թագաւոր ընտրելուն համար Գերմանիոյ իշխանները և Եպիսկոպոսները՝ շրջապատած իրենց մարդիկներով, եկան և ժողովեցան Ֆրանկաց գեղեցիկ երկրում Մոգունտիա (Մայնց) և Գորմս քաղաքաց մէջ։ Հռենոսի ձախակողմը կենային իւրեանց բնակիչներով Լորենացիք և Հռենոսի Ֆրանկները, իսկ աջ կողմը արևելեան Ֆրանկները, Սուապիացիք, Պաւերացիք, Սաքսոնացիք և Գոհիմացիք։ Երկար խորհելուց զինի բոլորեքեան իրենց ուշադրութիւնը դարձուցին երկու Ֆրանկաց իշխանաց վերայ, Ֆրանկոնիոյ կոմս Կոնրադոսի վերայ, և Ֆրանկոնիոյ դուքս Կոնրադոսի վերայ. սոքա բարեկամ էին միմեանց։ Երբ քուէարկութեան ժամանակ մօտեցաւ, Կոնրադոս կոմսը որ առաւել հասակաւոր և երևելի էր քաջութեամբ, տարաւ մի կողմը երիտասարդ դուքսին և հրամայեց որ ձայնից առաւելութեան չընդդիմանայ և երդուեց որ իրեն տայ թագաւորութիւնը՝ եթէ իրեն ընկնելու լինի։ Դուքսը միևնոյնը երդուեց նրան։ Առաջին ձայնը տուաւ Մոգունտիոյ Երբ եպիսկոպոսը, բարձր ձայնիւ յիշեց Կոնրադոս կոմսին, մնացած անդամներն էլ նրան հետևեցին։ Ժողովուրդը ուրախութեամբ ընդունեց այն ընտրութիւնը, և ժողովը գնաց Մոգունտիոյ մայր եկեղեցին և Երքեպիսկոպոսաբնակ գնա թագաւոր։ Այս կերպով թագաւորեց նոր տուն Ֆրանկոնիոյ, որ ութեց ճիշդ հարիւր տարի։

Կոնրադոս Բ. և նորա որդին Հենրիկոս Գ. երևելի են իբրեանց կառավարութեամբ, և նուաճելով հզօր Վասալներին։ Հենրիկոս չորրորդի թագաւորութիւնը յայտնի է (1056 — 1106) ներքին խռովութեամբ, և վիճելով պապին հետ Հենրիկոս Գ. իւր հօր (Հենրիկոս Գ.) մահից յետոյ փոքր մընաց։ Եւ թագաւորից նորա խելացի Ադելէս մայրը ստիպեց Կոլոնիոյ փառասէր Պանոս Ըրք եպիսկոպոսը մոռացուցց յաւիշտակել Անգղեայի հոգաբարձութիւնը, մեծ կողմնակցութիւն կաղմից իշխանների, և վճռեց որ Հենրիկոսին հալածեն։ Մի անգամ հրաւիրեց կայսերուհոյն և ժառանգին։ Պանոսի մարդիքը երեխային տարան իւր նաւ ցոյց տալու համար, յաւիշտակեցին և տարան Կոլոնիա։ Երեխան ճանապարհին շատ դուռաց, մինչև անգամ ընկաւ ջուրը և հազիւ ազատեցին։ Եւ Պանոս հասնելով իւր նպատակին դարձաւ թագաւորութեան կառավարիչ, բոլոր գանձարանը իւր ձեռը առաւ, և այն միջոցը Ադելէս խսպառ հեռու կմնար։

Հենրիկոսը իբրեւ ունէր լաւ յատկութիւններ, բայց ստացաւ վատ կրթութիւն։ Կոլոնիայում նա կվարէր տխուր վանական կեանք, և դարձաւ բարկացող և խիստ։ Վերջը նրան յանձնեցին կրթութեան ազգաւ Պրեմայի եպիսկոպոս Ադալբերթին, որ կսիրէր շռայլ և բարեկեցիկ կեանք։ Հենրիկոս այն տեղ սովորեց չռայլութիւն, ծոյլ և ուրախ կեանք վարել, և հասկացաւ որ թագաւորական գահաժառանգ է։ Կատարեալ հասակում գնաց բնակուելու

Սաքսոնիա, կառոյց սարքոյներ, և մեծ հարկ կառ-
նէր ժողովրդոյմէ որ իւր ծախուց բաւականանայ։
Սաքսոնիոյ կոմսերը և իշխանները անբաւական էին
թագաւորի վարմունքից, նոքա վերջը ապստամբե-
ցան և արտաքսեցին իրենց երկրից։ Հենրիկոս օգ-
նութիւն կանչեց Ֆրանկոնացւոց և միւս Գ. տապ-
ներին, յաղթեց Սաքսոնացւոց և սկսաւ սաստիկ
կերպով վրէժն առնուլ։

Սաքսոնացիք սարսուեցան պատին դիմելու, և
կինդրէին որ նա վերջացնի այն գործը։ Այս եղաւ
պատճառ յայտնի խռովութեան կայսեր և պապին
մէջ։

Արևմտեան Եւրոպա Քրիստոնէութիւնը տա-
բաժուեց Հռովմից, և այս էր գլխաւոր պատճառ
որ Հռովմայ պապը համարուեց դլուխ արևմտեան
հոգևորականութեան։ Մանաւանդ նորա իրաւուն-
քը զօրացաւ այն ժամանակ երբ արևելեան կամ
Յունաց եկեղեցին բաժանուեց Լատինացւոց եկե-
ղեցիէն և այն միջոցն էլ Յունաց մէջ պատկե-
բամարաութիւնը կշարունակուէր։ (վերջը այս եր-
կուսը բոլորովին բաժանուեցան իրարմէ երբ Լա-
տին հոգևորականք ընդունեցին քահանան և բոլոր-
մին Հռովմայ սրբոյ ի Հռոմ և յՈրդեոյ։

Դրա գլխաւոր պատճառն էր իրեն ժողովրդեան
ջերմեռանդութիւնը, որ նրան կհամարէին Փրկչի
փոխանորդ ի վերայ երկրի։ Հոգևոր իշխանութիւն
ունենալով նոքա կաշխատէին քաղաքական իրա-
ւունքներ էլ ձեռք բերել։ Պիպինոս կարճահասակը

ընծայից նրանց Լատալիայում ամբողջ երկիր մի որ առաւել էր Լոմբարտացւոցմէ: Մեծն Կարոլոս կայսերական տիտղոսը ստացաւ պապէն. սորա յաջորդներն էլ նրան հետևեցին: Բայց միևնոյն ժամանակ պապերը կախումն ունէին կայսերներից: Մանաւանդ Ոթոնը և նորա յաջորդները միշտ կաշխատէին որ Հռոմը իրենց հպատակի և իրենց կողմի մարդիկ դահը ժառանգեն: Պապերը ըզգալով իրենց հոգևոր իրաւունքները, ակամայ կը-հնազանդէին կայսերաց, և այսպէս սկսաւ խռովութիւն երկու իշխանութեան մէջ: Այն խռովութիւնը վերջին դրութեան հասաւ՝ երբ պապ ընտրուեց Հիլդեբրանտ վարդապետը: Հիլդեբրանտը հասարակ արհեստաւորի որդի էր. իմանկութենէ ուսաւ աշխատութիւն և համբերութիւն, և հասատ կամաց տէր մարդ էր: Վարդապետ ձեռնադրուելով՝ հոգևորականութեան բարձր աստիճանաց արժանացաւ, և այնպիսի համարմունք ստացաւ որ քանի պապերը շարունակ նորա խորհրդով կդործէին: Եւ նա խորհուրդ տուաւ որ պապերը ընտրուին ոչ թէ ժողովրդեան և հոգևորականաց ձայնիւ, այլ բարձր հոգևորականաց, այս ինքն կարդինալաց ընտրութեամբ:

(Կարդինալները կառնէին ծիրանադոյն փիլոն և կարմիր գլխարկ): Այս կերպով նուազեց կայսերաց իրաւունքը պապի ընտրութեան մէջ: Վերջը ինքը Հիլդեբրանտ պապ ընտրուեց և կոչուեց Գրիգոր Է: Նա հոգևորականութիւնը այնպէս կար-

գաւառից որ միայն պապից կախում ունէին։ Առաջ կաթոլիկաց հոգևորականք՝ որպէս Յունաց՝ ամուսնացած էին, ոչք իրենց ընտանեաց համար ապրուստ գտնելու ազատաւ քաղաքական իշխանութեան կը-հաճոյանային։ Այս պատճառաւ Գրիգոր Գ. պապը ամուսնութիւնը արգիլեց հոգևորականաց. իսկ ամուսնացած հոգևորականաց հրամայեց բաժանուիլ ընտանեացմէ։ Շատ քահանայք առաջ անբաւական էին և կընդիմանային, բայց Գրիգոր հաստատ մնալով իւր կամաց վերայ՝ բոլորովին վերացուց ամուսնութիւնը։ Հոգևորականաց հոգերը առաջ կվաճառէին դրամով. և այս կկոչուէր Սիմոնական-ութիւն, (Սիմոն մոգի անուամբ՝ որ կամեցաւ Աստուածային շնորհքը փողով գնել)։ Բաց յայդմանէ բարձր աստիճան հոգևորականները, Եպիսկոպոսները և Աբբաները աշխարհական իշխանաց կարգը կհամարուէին, և նրանցից կատանային մատանի և գաւազան, և այս կկոչուէր Ինվեստիտուրա։ Գրիգոր Գ. պապը խստաւ արգիլեց սիմոնականութիւնը և ինվեստիտուրան։ Այն հոգևորականք որ չէին հընազանդ նրանց կամաց, կզրկէր հոգևորականութենէ իսկ քաղաքական իշխանաց կրանաղրէր (այնուհետև իրաւունք չունէին հաղորդութիւն առնելու և եկեղեցի գնալու)։

Երբեմն ամբողջ նահանգ կրանաղրէր. այն ժամանակ եկեղեցիք կդիակուէին, և հոգևորականաց կարգուէր թաղել ննջեցելոց և մկրտել նորածին մանկանց։ Բանադրանքը սաստիկ երկիւղ առաւ թագաւորաց։

Բայց Հենրիկոս Գ. Գրիգոր հօթներորդին, Հլսելով կշարունակէր սիմոն կանոնթիւնը և ինվեստիտուրան։ Աքսոնացւոց բոլորը իրաւունք տուաւ պապին իւր իրաւունք ի գործ դնելու կայսրը վերայ։ Գրիգոր պապը հրաւիրեց Հենրիկոսին Հռովմ որ ժողովոյ առաջ արդարանայ։ Հենրիկոսը մերժեց նորա առաջարկութիւնը, սրտաքսեց պապի դեսպանաց, հրամայեց Գերմանիոյ եպիսկոպոսաց որ Գրիգորի տեղ իւրեանց համար նոր պապ ընտրեն։ Այս լսելով բանադրեց, և հպատակաց յայտնեց որ իրենց տուած երդումն թագաւորին ոչ ինչ նշանակութիւն չունի այնուհետև։ Գերմանիոյ իշխանները, որոնք առաջուց հակառակ էին Հենրիկոսին, յայտնեցին նրան որ եթէ մինչև այս քան ժամանակ պապը բանադրանքը չվերցնի, իրենց համար նոր թագաւոր կընտրեն։ Հենրիկոսը տեսնելով իւր նեղ դրութիւնը՝ իւր հաւատարիմ պերթա ամուսնոյն հետ գնաց Իտալիա։

Սասակ ձմեռան ժամանակ (1077թ) նրանք անցան ձիւնապատ և սառնապատ Ալպեան լեռները։ Երբ Հենրիկոս մտաւ հիւսիսային Իտալիա, պապը Կանոսեան ամրոցում էր որ կպատկանէր թոսքանայի մարգկրաֆ Մաթիլդէին։ Պապը խիստ կերպով ընդունեց թագաւորին. հրամայեց որ երեք օր այն ցուրտ ժամանակ դուրսը ապաշխարէ իբրև մեղաւոր, այսինքն բրդէ շապիկով առանց գլխարկի և բոպիկ ոտքով։ Վերջապէս Մաթիլդէի խնդրանքը Հենրիկոսը արժանացաւ պապին ներկայանալու, և

բանադրանքէն ազատուելու։ Պատարագի ժամանակ Գրիգորը առնելով կենարար մարմինը՝ ասաց, եթէ նա անիրաւացի է վարուել, թող Աստուած նորան յանկարծամահ առնէ, և կէսը ճաշակեց. յետ այնորիկ դարձաւ դէպ ի Հենրիկոսը և առաջարկեց որ կէսն էլ նա ճաշակէ՝ եթէ իրեն կհամարի անիրաւացի դատապարտել Գերմանիոյ իշխաններէն։

Հենրիկոսը չընդունեց այն առաջարկութիւնը, սրանով առաւել բարձրացաւ պապին պատիւը։

Երբ Հենրիկոսը Գերմանիա կդառնար, շատ իշխաններ հեռացել էին նրանից, և ընտրել էին նոր թագաւոր։ Հենրիկոսը մատդրուեց զինքով իւրիրաւունքը պաշտպանել, ժողովից բաւականին զօրք և յաղթեց նոր ընտիր թագաւորին։ Յետ այնորիկ գընաց պապին դէմ, որ դարձեալ բանադրած էր զնա։ Հենրիկոսը Հռոմն առաւ, և Գրիգորը փախաւ հարաւային Իտալիա, և այն տեղ շուտով մեռաւ 1085 թուին։

Գրիգոր եօթներորդի յաջորդները կշարունակէին կայսերաց հետ վարուիլ իւրեանց բանադրանօքը, կապառնային և կապատամբեցնէին հպատակներին։ Հենրիկոսի թշնամիքը մինչև անգամ նրա որդուն իր դէմ զինուորեցին։ Որդին իւր հօր գերի առնելով զերի դրաւ։

Կայսրը այն տեղից կարողացաւ փախչիլ. բայց այս խռովութիւնը շուտով դադարեց. շատ չանցաւ, կայսրը մեռաւ։ Յետ մահուան նոյնպէս զրկուեց իր պատուից իրրև բանադրեալ և չարժանա-

ցաւ քրիստոնէավայել թագման, վեց տարի անցնելով՝ պապը բանադրանքից նոր ազատեց և Հենրիկոսին թագուցին Շուէյցի մայր եկեղեցում։ Նորա որդի Հենրիկոս Դ. նոյնպէս շատ ընդիմացաւ պապերին։

Վերջապէս կայսրը և պապը Պապ իսոս Բ. Վորմսի ժողովի դաշնադրութեամբ 1122 թ. վճռեցին որ կայսրը հեռանայ սիմոնականութիւնից և ինվեստիտուրայից միայն թէ նա այնքան իրաւունք ունեցաւ որ կարող էր ժամանակաւոր հող տալ հոգևորականաց, և նոքա կախումն ունենային կայսրից։ Թէպէտ երկու կողմից էլ դիջողութիւն եղաւ, սակայն յաղթութիւնը պապերի կողմը անցաւ։ Ժողովուրդը շատ ուրախացաւ այն մեծ խռովութեան դադարելուն վերայ, որով կայսերութիւնը վերջին աղքատ դրութեանը հասած էր։

Հենրիկոս հինգերորդի մահուանէն զինի (1125 թ.) վերջացաւ Ֆրանկոնիոյ ցեղը։ Տասն և երկու տարի անցնելով Գերմանիոյ թագաւորական գահը նստաւ Սուապիոյ դուքսերի Հոհենշթաուֆենի տունը, այս անունը ստացան իրենց Սուապիայում ունեցած մի ամրոցից։ (Այժմ էլ կերևին այն ամրոցի մնացած հնութիւնները մի լերան վերայ Վիրթեմբերգի թագաւորութեան մէջ)։ Այս տունից առաջին կայսրն էր Կոնրադոս երրորդը, և նա պարտաւորված էր Իւրոսալեմի թշնամի Հենրիկոս դուքսին հետ մաքառելու, որ կռիւներ երկու դքսութիւնք Սաքսոնիոյ և Պաւարիոյ, և ինքն կցանկաք

կայսերութիւնը ստանալ։ Համարեա ամբողջ Գերմանիան երկու կուսակցութեանց վերայ բաժանուեց, Պաւերիոյ և Սուապիոյ, կամ Կուելֆ և Կիպելին։ (Պաւարիոյ դուքսերը Կուելֆի ցեղին էին,) իսկ Կիպելիները իրենց անունը ստացան Գ. Էյպլինկ ամրոցէն որ կպատկանէր Հոհենշթաուֆենների)։ Յաղթութիւնը Կոնրադոսի կողմը անցաւ, և նա խլեց Պաւարիան իւր հակառակորդից։

Գերմանական մի առասպելի մէջ այս բանը կըպատմէ նոյն պատերազմից՝ Սուապիոյ Գ. Էյնպերկ քաղաքը Կուելֆեանց կողմն կպահէր, և պաշարուած էր կայսերական զօրքով և շատ ընդիմանալուց յետոյ ստիպուած էր անձնատուր լինելու։

Կոնրադոս սաստիկ զայրացած վճռեց որ քաղաքը խսպառ աւերէ և բնակչաց կոտորածէ, միայն կանանց հրամայեց որ քաղաքից հեռանան և իրենց հետ տանին ամենաթանգ հարստութիւնները։ Կանայք սկսան քաղաքից հեռանալ, և իրենց հետ կառնէին իրենց հարստութիւնը իրենց մարդկանց և եղբարց։

Կայսրը այս տեսնելով՝ շարժեց նրա սիրտը և բոլորովին ներեց իրենց յանդգնութեանը։ Հոհենշթաուֆենները մեծ համարմունք ունէին իրենց կայսերութեան վերայ, և ոչ թէ չէին ցանկանում պապերին հնազանդել, այլ ընդ հակառակն նոքա կաշխատէին որ պապերը նրանցից կախում ունենան։ Այս պատճառաւ էլ պապերը Կուելֆեանց կողմն անցան, յետ այնորիկ միացան Լատերոյ քա-

զաքաց, որք կցանկային ազատուել Գերմանական լծից։ Էյսպէս Իտալիայում ծագեց երկու մեծ կուսակցութիւն մինը պապերի հաւատող, իսկ միւսը Իտալիոյ ազատութեան համար աշխատողք, և Պաւարիոյ կուսակցութեան նման կկոչուէին Գուէլֆեանք, իսկ կայսերաց հաւատնելը Գիպելեանք։

Կոնրադոս երրորդին յաջորդեց նորա եղբօր որդի Փրեդերիկոս առաջին Պարպարոսսա (շեկա մորուս) (1152—1190)։

Մեծն Կարոլոսից յետոյ Գերմանիայում ամենից երևելի թագաւորը սա էր, ինքն միջահասակ էր և դեղեցկադէմ և գանդրահեր, շատ ամուր կազմուածք ունէր, և երկար շէկ մորուս։ Փրեդերիկոսը իր թագաւորութեան սկզբում հաշտուեց Ղ. Ալիցաց հետ և Պաւարիան վերադարձրեց Հենրիկոս Առիւծին (Հենրիկոս դուքի որդուն)։ Յետ այնորիկ նա սկսաւ պատերազմ, Լոմբարդիոյ քաղաքները փոքրիկ հասարակապետութիւններ էին դարձել, այսինքն ունէին իրենց ընտրած կառավարիչներ, զօրք, ամրոցներ և դաշն միմեանց հետ։ Ամենից հզօր էր Նրանցից Միլանը, և նա էր գլխաւոր հակառակորդը կայսերութեան։

Փրեդերիկոս Պարպարոսսան քանի մի պատերազմներ ունեցաւ Իտալիայում։ Առաջ նուաճեց Միլանի բնակչաց, մի անգամ սովից սատկեց նրանց անձնատուր լինել, և անխնայ կոտորած եղաւ՝ այն երևելի քաղաքը բոլորովին աւերեցին, և նորա կաքը որոյ վերայ կանէին Ամբրոսիոսի սուրբ պատ-

կերը Միլան քաղաքի պաշտպանը ջարդուեց։ (Եմ-
բրոսիոսը Միլանի ազգ եպիսկոպոսն էր Գ. դարում։)
Այս խաղաղութեամբ առաւել զայրացան Իտալացիք
կայսեր դէմ։ Լոմպարտիոյ քաղաքաց հետ միացաւ
Աղեքսանդր Գ. պապը և նզովեց Ֆրեդերիկոսին։
(Ի պատիւ այս պապի Լոմպարտացիք հիմնեցին Ա-
ղեքսանդրիա քաղաքը)։ Միլանը իւր դրութիւնից
բարձրացաւ նորոգուեց և դարձաւ Լոմպարտիոյ
դաշնակից քաղաքաց գլուխ (Վերոնայ, Պատուա,
Բրեսիանա, Մոդենա, Փարմա և այլն)։

Ֆրեդերիկոսը դարձեալ նոր պատերազմ սկսաւ,
բայց անյաջող եղաւ։ Նկատելով իր զօրաց սակա-
ւութիւնը պահանջեց օգնութիւն Գերմանիոյ վա-
սալներից, և փոխանակ տասնալու օգնութիւն՝ լսեց
որ Հենրիկոս Առիւծը, որ մինչև այն օրերը իրեն
հաւատարիմ դաշնակից էր, այժմ պէս պէս պատ-
ճառներով չէր կամենար նորան օգնութիւն տալ։
Կայսրը Հենրիկոսը հրաւիրեց տեսութեան, խնդ-
րեց որ այն նեղ դրութեան մէջ անօգնական չթող-
ուս զինքը, և մինչև անգամ ծունկ ընկած կաղա-
չէր իւր վասալին որ չմոռանայ նրա բարեկամու-
թիւնը։ Ղնայելով կայսեր աղերսանաց՝ Հենրիկոսը
բոլորովին անտարբեր մնաց։ Այն ժամանակ կայսե-
ր ասաց կայսեր,“ կա՛ դնիր թագաւոր, Աստ-
ուած կօգնէ քեզ՝ եթէ մտաբերես դու երբեմն
այս օրը և այս նեղութիւնը,,։ Այն միջոցին
Ֆրեդերիկոսը և Հենրիկոսը մեկնեցան իրարմէ
իբրև թշնամի, թէպէտ Լոմպարտացւոց զօրու-

թիւնը աւելի էր, կայսր մեծ ջարդ տուաւ նրանց Լենեանս քաղաքին մօտ (1176 թ)։ Գերմանիոյ հիծելաղօրը յարձակվեց Խաղաղացոց վերայ, և հասան մինչև Միլանի մօտ։ Բայց այն տեղ հանդիպեց նրանց Միլանի ընտիր զօրքը, մահուան գունդը՝ որք երդուած էին որ կամ յաղթեն կամ սպանուին։ Գերմանացիք սասսիկ ջարդուեցան. ինքը Փրեդերիկոսը ձիուց ընկաւ, և քանի մի օր կորած էր։ Վերջը խաղաղութիւն խօսեց Լոմպարդացոց և Եղբայրանդը Գ. պապին հետ, և Վենետիկ քաղաքումը պաշտօնական տեսութեան ժամանակ պապի ոտը համբուրեց։ Հենրիկոսը զրկուեց երկու դքսութիւնից, Սաքսոնիայից և Պաւերիայից, և կայսրը վճռեց որ նրան Գերմանիայէն արտաքսեն երեք ամեայ ժամանակաւ։ Հենրիկոս Առիւծը շատ քաջ և երևելի սպարապետ էր, թշնամի էր Պաղեստինի ծովուն մօտ բնակող Սլաւեանց. նրանցից բաւականին երկիր առաւ (Մեկլենպուրկում և Փոմերանիայում). այն տեղ կառուց մեծ ամրոցներ և շատ ժողովուրդ գաղթեց այն տեղ Հոլանդիայէն և հիւսիսային Գերմանիայէն, և այս եղաւ պատճառ հետզհետէ Պաղեստինի ծովու եղերաց մօտ բնակող ազգերը սկսան Գերմանական կրթութիւն ստանալ և Գերմանական սովորութիւններ ընդունել։

Գերունին Փրեդերիկոս Պարպարոսան կամեցաւ իր երկարամեայ թագաւորութեանը միջոցում Աստուածահաճոյ արշաւանք մի առնել, այն է խաչակրաց պատերազմ յԱսիա՝ Երուսաղէմը ազատելու Մահ-

մեռանիսայ ձեռքին։ Թէպէտ գնաց, բայց մի գետ անցնելու ժամանակ թագաւորը ղինուորներուն ձիու վերայ հեծած ընկաւ գետը որ շուտով անցնի միւս եղերքը։ Ղաստահարեալ երիվարը չկարողացաւ արագնթացով գետէն անցնիլ և ընկաւ ջրի տակ, Թէպէտ նորա մարդիկը աշխատեցան շուտով այն վտանգից ազատել, սակայն նոցա աշխատութիւնքը զուր անցաւ. նրան գտան ջրահեղձ (1190 թուին)։ Գերմանացիք երկար միջոց չէին հաւատում իւրեանց սիրելի թագաւորի մահը։ Երջը մէկ տեսակ առասպել դուրս եկաւ, իբր թէ Պարպարոսսան չէ խեղդուել այլ կենջէ Թուրինկեան մի ամրոցում թեկն ընկած քարեայ սիւնի վերայ, որոյ վերայ փաթաթուել է նորա մօրուսը, և կդայ ժամանակ երբ նա ոտի կկանգնի և այն ժամանակ կլինի Գերմանիոյ կայսերութեան երջանիկ դարը։ Պարպարոսայի որդի Հենրիկոս վեցերորդը իւր կարճատև կառավարութեան ժամանակ, բացի իւր սեպհական Հոհենշտաուֆէնը ձեռք բերաւ նաև Նապոլիի թագաւորութիւնը։ Նորա դեռատհաս Փրեդերիկոս Բ. որդւոյ ժամանակ ծագեցան ներքին խռովութիւնք կայսերական գահոյն վերայ, Պաւարիոյ և Սուապիոյ տանց մէջ. և մի ժամանակ գահն անցաւ Պաւարիոյ կողմը և կթագաւորէր Ոթոն Գ. Հենրիկոս Ասիւծի որդին։ Այն միջոցներում Փրեդերիկոսը կուսանէր Իտալիայում երրորդ Իննոսկենտիոս պապի հոգաբարձութեան ներքոյ։

Ինոկենտիոս Գ. պապը շատ կնմանէր Լեոթնեռորդ Գրիգորին, նա իւր հանճարով և հաստատամտութեամբ կաշխատէր որ պապի իրաւասութիւնը բարձրանայ և Եւրոպական թագաւորաց մէջ առաջինը համարուի։ Եթէ նա իւր բարձր լինելը կսկսէր ցոյց տալ Եւրոպական թագաւորաց վերայ, կը բաղդատէր իրեն արևու հետ, իսկ թագաւորաց լուսնի հետ։ Ասէր, ինչպէս որ լուսինը իւր լոյսը կառնու արևուց, նոյնպէս և դուք ձեր իրաւունքը կառնաք պապերից։ Եւ արդարև պապերի իրաւունքը երբէք այնպէս չբարձրացաւ ինչպէս որ կարողացաւ ընդարձակել իւր իրաւունք երրորդ Ինոկենտիոսը։ Նա կվարուէր թագաւորների հետ այնպէս իբր թէ իւր վասալները լինէին։ Փրիդերիկոս երկրորդը իւր կատարեալ հաստակը առնելով՝ Գերմանիոյ կայսերական դահը բարձրացաւ (1128—1250). ունենալով օրինաւոր ուսումն և բանասէրջ դոլով, կսիրէր ուսումնարաններ հիմնել և պահպանել իր հովանաւորութեան ներքոյ երևելի գրողներին։ Նա կրնակէր իւր սիրած Իտալիայում։ Իւր նախորդաց նման ինքն էլ կաշխատէր պապերի իրաւունքը կարձելու, այս պատճառաւ էլ Ինոկենտիոսի յաջորդաց և կայսեր մէջ ընկրաւ սաստիկ խռովութիւն շատ անգամ պապերը բանադրեցին զնա, և նրանց դրդմամբ ժողովուրդն էլ քանի մի անգամ ապստամբեց կայսեր դէմ։ Գերմանիայում և Իտալիայում համարեա շարունակ կռուէր Լուէլֆեանց Կիպելեանց մէջ եղած

պատերազմը։ Մանաւանդ Իտալիայում, ամենայն քաղաք երկու հակառակ մասն էր բաժանուած, մինչև անգամ ընտանեաց մէջ բաժանմունք կար, և իրենց վրէժը կառնէին միմեանցից գաղտնի սպանութեամբ և զանազան չարութեամբ։ Փրեդերիկոսը մեծաւ մասամբ յաղթող կ'հանդիսանար իւր թշնամեաց դէմ, բայց մեծ նեղութիւններ կրելով այն խռովութիւններից, այլ և չկարողանալով տանել անտանելի վիշտը որ կրեց պապի կողմնակիցներից, որոնք մահ պատճառեց։ Նորա որդի Կոնրադոս Գ. կայսրը էր Յոհենշտաուֆէնի տանից. չորս տարի թագաւորելուց զինի թողաւ իւր Կոնրադինոս դեռահասակ զաւակը։ Յոհենշտաուֆենաց ձեռքը դեռ ևս կմընար Նափոլին և Սիկիլիան։ Բայց նոցա անհաշտ թշնամի պապերը այն ժամանակ հանդուցացան երբ Յոհենշտաուֆենաց Իտալիոյ մէջ ունեցած հողերը խլուեցան և իրենց ցեղն էլ վերջացաւ։

Պապը Նափոլիի թագաւորութիւնը առաջարկեց Գաղղիոյ իշխան Կարոլոս Անժուցիին (Լուդովիկոս ինեներորդի եղբօրը)։ Կարոլոսը պապի առաջարկութիւնը ընդունեց. Գաղղիոյ հեծելազօրաց օգնութեամբ առաւ Նափոլին Սիկիլիան, և իրեն անուանեց պապի հպատակ նա շատ խիստ և արծաթասէր թագաւոր էր, ժողովրդոց ծանրաբեռնեց հարկերով և սաստիկ կհալածէր Պիզելինեան կողմնակիցներին։ Նափոլիի բնակչաց համբերութիւնը հատնելով իրենց օգնութիւն հրաւիրեցին Կոնրադինոս պատանւոյն։ Այն միջոց Կոն-

բաղինոսը Պաւերիայում իւր մօր հետ խոհեմ կեանք կվարէր, իւր քաջութեամբ և հանճարով մեծ յոյս կտար ձնշեալ Սիսիլիացոց։ Ընդհակառակ իւր մօր ասատասուց՝ Կոնրադինոսը կատարեց Նափոլիի բնակչաց խնդիրքը, և փոքր զօրքով մըտաւ Իտալիա, որ զենքով ձեռք բերէ իւր ժառանգութիւնը։ Սիսիլիները սիրով ընդունեցին զնա և առաջին պատերազմը որ տուաւ պապի և Կարոլոս Անժուցւոյ դէմ յաջողեց նրան, բայց մեծ պատերազմում թշնամին սուտ ի փախուստ դառնալով Կոնրադինոսի զօրքը հետևեց, և Կոնրադինոսի զօրքը յանկարծ փակուեց չորս կողմից՝ այդ առաջուց մտածել էր խորամանկ Կարոլոսը վճռեց Կոնրադիոսին մահ։ 1268 թ, Նափոլիայի հրապարակում դլխատուեց վերջին Հոհենշտաուֆէնը։ Նափոլիի բնակչաց և Գաղղիոյ հեծելազօրաց վերայ սարսափ տիրեց՝ երբ տեսին Կոնրադինոսին սրոյ առաջ կանգնած. բայց քարասիրտ Կարոլոսը, սառնասրտութեամբ կնայէր այն գործողութեան վերայ մի մերձակայ ամրոցից։

Անժուցի Կարոլոսը շուտով զրկուեց Սիկիլիա կղզուց իրեն Գաղղիացւոց խստութեան և վատ վարուց պատճառաւ։

Գաղղիացիք արհամարհանօք կնայէին Նափոլիի և Սիկիլիոյ բնակչաց, տեսակ տեսակ անկարգութեանց պատճառ կդառնային։ Արակոտ Սիկիլիացիք որ ի վաղուց անտի շատ թշնամի էին Գաղղիացւոց, միացան Արագոնիոյ թագաւոր Պետ-

բոսի հետ (որ նա ազգական էր Հոհենշտաուֆենաց) և կպատրաստուէին ապստամբելու։ Նշանակեալ ժամանակից առաջ ծագեց այն խռովութիւնը այս առիթով։ Մի անգամ (Աւագ երկուշաբթի օր 1282թ.) Փալերմոյի բնակիչք երեկոյեան ժողովեցան եկեղեցին աղօթելու և Գաղղիացի մի անպատուեց մի օրիորդի, որն որ իւր ընտանեաց հետ եկեղեցի կերթար։ Ընակչաց տեղւոյն արդեալծ էր զէնք կրելու, և Գաղղիացին այս պատճառաւ բռնելով սկսաւ անվայել և անպարկեշտ կերպով օրիորդին ընել, չէնի թէ նորա վերայ զէնք գտնուի։ Օրիորդի բարեկամները յանկարծ ընկան Գաղղիացւոց վերայ և իսկոյն սպանեցին։ Այս ձայն տուաւ ապստամբութեան, սկսաւ սաստիկ կոտորած, որ շուտով տարածուեց ամբողջ կղզւոյ վերայ, և համարեա բոլոր Գաղղիացիք ջարդուեցան։ Այս անցքը կոչուեց "Սիկիլեոյ երեկոյ"։

Կարոլոսը երդուեց որ սարսափելի կերպով նրանց վրէժը առնու։ Բայց Նրան զգուշացրեց Պետրոս Արագոնացին, որ արդէն մտել էր Սիկիլիա, և նուաճել էր իւր իշխանութեան ներքոյ, Գաղիացւոց ամէն ջանքը Սիկիլիան հետ առնելու համար՝ զուր անցաւ։ Մի և նոյն ժամանակ Արագոնացիք ջնջեցին Նափոլիացւոց նաւատորմիղը Մեսինայի նեղուցին մօտ, Կարոլոս եղելքից կնայէր նաւատորմղի ջնջուելուն և կատաղած փսփսեց և սկսաւ կրծել իւր փայտի դլուխը։

Երշ—անՀ Խաչակրաց։

Պաղեստինը, ուր Փրկիչն մեր կքարոզէր, մինչ-դեռ աշխարհի վերայ էր, յայտնի բան է որ սուրբ երկիր համարուեց յաչս Քրիստոնէից։ Մեծին Կոստանդիանոսի մայր Հեղինէն իւր ջերմեռանդութիւնից շարժեալ գնաց յուխտ և յերկրպագութիւն անօրինական տեղեաց գտաւ սուրբ Խաչը, որոյ վերայ Քրիստոսը խաչել էին, և կառոյց եկեղեցի այն այրի վերայ՝ ուր Քրիստոս թաղուած էր եղել։ Այն ժամանակից սովորութիւն եղաւ Քրիստոնէից գնալ յերկրպագութիւն Փրկչի դերեզմանին։ Երբ Երաբացիք Հրէաստանը տիրեցին, ուխտաւորաց ոչինչ արգելք չէին լինի, և հետ դՀետէ ուխտաւորաց թիւը կրազմանար։ Երեմեան Եւրոպայի բնակիչք կզանազանվէին ուրիշ աղդացմէ իւրենց բարեպաշտութեամբ, և համոզուած էին որ եթէ շատ գնան Երուսաղէմ, մեղաց թողութիւն կստանան։ ԺԱ. դարում փոքր Ասիան, Ասորիք և Պաղեստինը ընկաւ նոր աշխարհակալաց ձեռքը, այն Սելճուկեան Տաճկաց, վայրենի և ամեհի ազգին ձեռքը որք եկին Կասպից ծովու արևելեան կողմերից։ Տաճիկները սկսան նեղել Ասորոց երկրի Քրիստոնէից և Եւրոպացի ուխտաւորաց կըտանջէին, կառնէին մեծ դումար դրամ որ թողլ տան Փրկչի դերեզմանը համբուրելու և կհայհոյէին Քրիստոնէից սուրբ տեղեաց։ Վերադարձեալ ուխտաւորները կպատմէին այն տեղի Քրիստոնէից

խեղճութիւնը, կրած նեղութիւնները և սուրբ տեղեաց անարգ դրութեան մէջ գտնուիլը, այն պատմութիւնը մեծ ազդեցութիւն ունեցաւ արևմտեան Եւրոպայի վերայ։ Այն ուխտաւորներից մինը անապատական Պետրոս Դամիանոս կամ Ամիենացին գնաց Հռոմ՝ երկրորդ Ուրբանոս պապին մօտ, և պատմեց իրեն մտադրութիւնը, այն է պատերազմել ընդդէմ անհաւատից, և ազատել այն նուիրական տեղերը նրանց ձեռքէն։ Պապերը արդէն առաջուց կմտածէին այն պատերազմի վերայ, Յունաց կայսրները բազմիցս կհրաւիրէին արևմտեան թագաւորաց պատերազմելու ընդդէմ անհաւատից։ Եւ այս էր պատճառը որ Ուրբանոս պապը ընդունեց Պետրոսի առաջարկութիւնը։ Ուրբանոսի հաճութիւնը առնելով՝ այն հաղուագիւտ մարդը քրէազդեաս, չուանով գօտեորեալ, բոբիկ ոտքով՝ ջորիի վերայ հեծած, խաչելութեան պատկերը ձեռն առած պտըտեց ամբողջ Իտալիան և հարաւային Գաղղիան։ Ուր որ ժողովուրդ կպատահէր նրան՝ թէ ճանապարհի վերայ, թէ եկեղեցւոյ մէջ, թէ հրապարակում և փողոցներում ամենայն տեղում կսկսէր պատմել սուրբ տեղեաց թշուառ վիճակը, Փրկչի գերեզմանի խղճալի դրութիւնը և արևելեան քրիստոնէից հալածուիլը։ Ամենայն ուրեք նրա ունկնդրաց սիրտը կշարժէր, կձմլէր, և նոքա տենդաբանութեամբ կքաջալերուէին և կպատրաստուէին պատերազմելու Փրկչի գերեզմանը ազատելու աղագաւ։ Ուրբանոս պապը ժողով կազմեց

Գէլէոմոն քաղաքի մէջ (Հարաւային Գաղղիայում), և այնքան հոգևորականք և ժողովուրդ հաւաքուեց, որ այլ ևս ոչ մի տան մէջ տեղ չմնաց բնակուելու, և ժողովքը կաղմեցին դաշտի մէջ, ուր մի բարձր տեղ բաղմել էր պապը։ Առաջ Պետրոս Դամիանոս պատմեց սուրբ տեղեաց աղէտալի վիճակը, յետ այնորիկ սկսաւ ինքը պապը գեղեցիկ ատենաբանութեամբ հրաւիրել Քրիստոնէից մեծ յաղթութեան, այն է ազատելու Փրկչի գերեզմանը։ Ժողովքը յափշտակուած մի բերան աղաղակեց ասելով, "Այդ Աստուծոյ կամքն էր,,. ձեռները բարձրացրին այսինքն ցոյց տուին իրենց յօժարութիւնը, և վճռեցին պատերազմել (1095 թ.)։ Հոգևորականք և աշխարհականք կարեցին իւրեանց հանդերձից վերայ կարմիր խաչեր, այն էր նշան խաչակրաց պատերազմ գնացող մարդկանց։

Այս պատճառաւ այն արշաւանքը կոչուեցաւ արշաւանք խաչակրաց։ Այնպէս վարուած էին որ շատերը իրենց վրայ կրակով խաչի նշան այրեցին։ Խաչակիրք առաջուց ստացան իւրեանց մեղաց ներողութիւն, հեծելազօրք կուրախանային որ գնալու են մահմեդականաց հարուստ երկիրներում պատերազմելու, և կվաճառէին իրենց ժառանգական ամրոցները որ այն դրամով առաւել լաւ հզօր զօրք կաղմեցին։ Դիւղացիք ոչք իրենց իշխաններից միշտ նեղութեան մէջ էին՝ ուրախութեամբ կերթային պատերազմելու, վասն զի նոքա պատերազմ երթալով կաղատէին ծառայութենէ, և աղատութիւն

ձեռք կբերէին։ Մայիս ամսում (1096 թ.) Պետրոսի Դամիանոսի առաջնորդութեամբ ճանապարհ ընկան 100,0000 մարդ։

Այս առաջին խաչակիրք անցան Գերմանիայով և Մաճառստանով առանց դրամաւոր պատրաստութեան, առանց պաշարի և շատ անկարգ և անկանոն կերպով։ Պանայք, ծերք և երեխայք կհետևէին իրենց արանց և որդւոց, և ճանապարհին տեսնելով որ և իցէ քաղաք կամ ամրոց կը հարցանէին «Թէ արդեօք այս էր Երուսաղէմը»։ Ճանապարհին շատ հրէից ջարդեցին նոքա կողոպտեցին նոցա գիւղօրայքը, որով դան իրենց համար պաշար։ Երանցից շատերն ջարդուեցան Մաճառստանում. իսկ մնացած զօրքը հասաւ Կոստանդնուպոլիս։ Թիւրանդիոյ կայսր Ալեքս Կոմնենոս, աշխատելով ազատուիլ այն սոված և մերկ ամբոխից՝ շուտով նրանց անցոյց փոքր Ասիա։ Նիկիոյ դաշտին վերայ նոցա խսպառ ջնջեցին տաճիկները, և նոցա ոսկրներից հետևեալ խաչակիրները իրենց համար ամրոցներ պատրաստեցին պաշտպանութեան համար, այն Ֆոտորածի ժամանակ մի կերպ ազատուեց Պետրոս Դամիանոս և վերադարձաւ իրեն հայրենիքը կրկին համոզելու։

Դարձեալ նոր խաչակրաց զօրք կազմուեց Գաղղիոյ և Իտալիոյ քաջ հեծելազօրից։ Առաջին տեղը ունեցաւ իւր լաւ զօրքով Կոթֆրիտ (Կոնդոպրէ) Պույլիոն հարաւային Լոթարինկոյ դուքսը։ Ֆիւսինային Գաղղիայից եկել էր Նորմանդիոյ դուքս

Հոռերտոսը (Գուլիելմոս աշխարհակալն որդին) և կոմս Հունդոն Վերմանդացին Գաղղիոյ (Փիլիպոս) թագաւորի եղբայրը։ Հարաւային Գաղղիայից խաչակիրք ճանապարհ ընկան թուլու ղն կոմս Բայմունդի և Ադեմար եպիսկոպոսի առաջնորդութեամբ, որուն պապը նշանակել էր այն պատերազմին մէջ իրեն փոխանորդ։ Հարաւային Իտալիայից նաւեցին Նորմանդիոյ իշխանները Բոհեմունդը (Պեմունդ) Տարենտուլիան և Նորա բարեկամ Թանքրէդը (Տանդրի), որ Կոթֆրիտի երկրորդ կհամարուէր իւր քաջութեամբ։ Առաջին խաչակրաց պատերազմի ժամանակ ոչ մի թագաւոր էկար այն տեղ։ Ելն ժամանակ Գաղղիայում կթագաւորէր Ռափեթեան տանից Փիլիպոս Ա. բնութեամբ էր անյուսաջադէմ, և մի և նոյն ժամանակ նորա և պապերի մէջ անբաւականութիւնը կշարունակուէր։ Գերմանիայում կայսր էր Հենրիկոս Դ. այն Հենրիկոսը որ երկար ժամանակ պապերի դէմ կ'պատերազմէր։ Հանապան ճանապարհով խաչակիրք ժողովեցան Կոստանդնուպոլիս՝ որ իրենց ժողովելու տեղ էին նշանակել։ Ալէքս Կոմնենոս խոստացաւ նրանց ամէն տեսակ օգնութիւն տալու իրենց նպատակը յառաջ տանելու համար։ Բայց տեսնելով նրանց ահագին զօրութիւնը. նոցա մեծագումար զօրքը, երկիւղ կրեց և մտածեց Էլինի որ նոքա փոխանակ Ասիա դնալու իրեն կայսերութեան վերայ դարձնեն իւրեանց միտքը։ Երդարեւ քանի մի ասպետներ յափշտակելով Յունաց արեւ-

լեան շուայլութեամբ և Ռիզանդիոյ հարստութեամբ իրենց ցանկութիւնը յայտնեցին որ կկամին տիրել այն կայսերութեան, բայց այն բանին ընդիմացաւ խոհեմ պատուապահ Կոթիֆրիտ Պուլլիոնը: Սա մինչև անգամ խոստացաւ կայսեր ընդունել իբրև զլեաւոր թագաւոր այն երկիրների՝ որոց նոքա կը-տիրեն Ասիայում: Նորան հետևեցին նաև խաչակրաց միւս զօրապետները, որ երդմամբ ընդունե-ցին այն խոստումը:

Փոքր Ասիայում առաջին նուաճեալ քաղաքն էր Նիկիա: Յետ այնորիկ խաչակիրք անցան գնացին հեռու: Ի մեծամեծ նեղութիւններ կրեցին: Տա-քութիւնը, սովը և ծարաւը ջնջեցին զօրաց ճանա-պարհի վերայ, ահագին անապատներում նոքա կը-կրէին իւրեանց վերայ երկաթի զրահներ, սաղա-ւարտ, վահան, և միշտ պարտաւորուած էին պատ-րաստ լինելու պատերազմի, վասն զի Տաճկաց թիւն հեծելազօրք ժամանակ ժամանակ կյարձակուէին նրանց վերայ: Ճանապարհի դժուարութեանց հետ միացաւ նաև զօրապետաց անհամաձայնութիւնը, ոչ մինը միւսին չէր ցանկայ հնազանդիլ, իւրաքան-չիւրը իրեն իշխանութեան վերայ կմտածէր, ոմանք ցը-ուեցան զանազան քաղաքներ, շատերը մնացին ճանա-պարհին և այսպէս նրանց զօրքը նուազեց թուով:

Նուաճեալ քաղաքներից երևելին էր Անտիոք Սորոց մայրաքաղաքը: Այն տեղ հազիւ ազատե-ցան Խարաբուղա Սուլթանի ձեռքից որ կամենում էր խլել ջնջել նրանց և պաշարեց Անտիոք քա-

ղաքը։ Մէկ քահանայ յայտնեց թէ Անդրէաս առաքեալը երևցաւ նրան և հրամայեց որոնել այն գեղարդը՝ որով Փրկչի կողը ծակել էին։ Մէկ հին եկեղեցւոյ մէջ սկսան հողը բրել և արդարև քահանայն գտաւ մի հին գեղարդ, գեղարդի նոյն լինելը թէպէտ չ՚հասկացուեց, սակայն զայն տեսնելով զօրքը, այն պէս քաջալերուեց որ սաստիկ ջարդ տուին Խարարուղա Սուլթանին։ Խաչակիրք երեք տարիից հաղիւ հասան Երուսաղէմ և տեսնելով այն սքանչելի քաղաքը մեծ ուրախութիւն զգացին։ Սակայն 100,000 հեծելազօրից և 300,000 հետևակ զօրքից որ անցան Ասիա (իսկ կանանց հետ միասին նրանց թիւը հասնէր մինչև 600,000) մինչև պատերազմելու տեղը հասնելը մնացին միայն 25,000։ Այն միջոցներում Երուսաղէմը Եգիպտոսի Սուլթանի ձեռքն էր անցել, լաւ ամրացած էր և ունէր բազմաթիւ զօրք։ Թէպէտ քաղաքի պաշարմունքը անյաջող կերթար սակայն խաչակիրք քաջալերուած՝ քաղաքը յարձակմամբ առին։ Խաչակիրք երկար պատերազմելուց զայրացած՝ վայրենի կերպիւ վարուեցան նուաճեալ քաղաքի բնակչաց հետ, և անխնայ համարեա խոպառ ջնջեցին մահմեդականաց և հրէից, այն պէս որ նոցա ձիանները արեան մէջ կլողային։ Երրորդ օրը խաչակիրք փոխեցին իրենց արիւնաշաղախ հանդերձը, զգեցան սպիտակ հանդերձ, և գնացին երկրպագելու Փրկչի կենսատու գերեզմանին։ Այն տեղ նրանց ընդառաջ եկաւ հոգևորականաց դասը խաչեր ձեռք ա-

ուած։ Բոլորիքեանք ի Ջերմեռանդութենէ շարժեալ կուլային, տեսնելով Փրկչի գերեզմանը աղատուած իւր աղէտալի դրութիւնից (1099)։ Յետ այնորիկ սկսան կարգադրել իրենց տիրած երկիրները։ Վ՚ճռեալ էին որ նոր տիրած երկիրներից շատը և Դրուսաղէմայ Թագաւորութիւն և արքունական Թագառաջարկեն Կոթֆրիդ Պուլոնի ընդունելու, վասն զի նա ամենայն կերպ կոչեսաւէր սուրբ երկիրը աղատելու։ Հեզաբարոյ Կոթֆրիդը ընդունեց կառավարութիւնը իւր վերայ, միայն թէ թագաւորական տիտղոսը իսպառ մերժեց, չընդունեց, և իրեն անուանեց «աղատիչ և Պարոն գերեզմանի Փրկչին»։ Յետեւեալ տարին վախճանեց՝ իւր անխոնջ աշխատութիւնից թուլացած։ Նրան յաջորդեց իւր եղբայր Բաղդուինոս Ա. (Պաղտին)։

Դրուսաղէմայ թագաւորութիւնը կպարունակէր իրեն մէջ Ասորւոց երկրին երկար և նեղ ծովեզերքը (Հին Փիւնիկէն և Պաղեստինը)։ Նոյն պէս ստացաւ արևմտեան Եւրոպայի Փորթուքալի կարգը։ Թագաւորը մասնաւոր իրաւունք ունեցաւ, հողերը մեծաւ մասամբ ասպետաց վերայ էր բաժանուած, որք շատ անգամ թագաւորին ևս չէին հնազանդում։ Հոգևորականք և ծովեզերեայ վաճառաշահ քաղաքները համարեա թէ ոչինչ կախումն չունէին թագաւորից։ Դրուսաղէմի նորակազմ թագաւորութեան գլխաւոր պաշտպաններն էին նոր կազմուած վանական ասպետական ընկերութիւնները Յովհաննիսեանք, Տաճարականք, և Տեւտոնեանք։ Յովհան-

նիսեանց ընկերութիւնը կազմուեց Խոտլոյ վանա-
ռականաց ընկերութիւնից նախ քան Երուսաղէմի
առնուիլը, այն տեղ հիմնած էր վանք և հիւանդա-
նոց յանուն Յովհաննու Մկրտչի, այն տեղ իրենց
սնունդ և դեղորայք կգտնէին աղքատ և հիւանդ
ուխտաւորները։ Յետոյ սրանց հետ միացան նաև
շատ ասպետներ Խոտլոյ, որք կուխտէին պաշտպա-
նել ուխտաւորաց, մահմեդականաց յարձակումից
և հալածանքից։ Սոցա հանդերձն էր սև վերարկու
սպիտակ խաչը վրան կարած։ Տաճարականաց ընկե-
րութիւնը հիմնեցաւ Գոդֆրոյ ասպետներից յետ
նուաճման Երուսաղէմ քաղաքի, այն նպատակաւ
որ զինու քաջութեամբ ապահով պահպանեն ուխ-
տաւորաց որք կերթային յուխտ և յերկրպագու-
թիւն սուրբ տեղեաց։ Տաճարական անունը ստացան
այն պատճառաւ որ նոցա բնակութիւնը Սողոմո-
նեան տաճարի աւերակաց տեղն էր կառուցեալ։
պապը նրանց համար որոշեց առանձին տեսակ հան-
դերձ, այն է սպիտակ վերարկու կարմիր խաչով։
Վերջը Գերմանիոյ ասպետ խաչակիրք նոյնպէս
կազմեցին մի նոր ընկերութիւն՝ Տեւտոնեան կոչուած
այսինքն Գերմանական, միւս ընկերութեանց նը-
մանելով, սոքա ևս քանի մի բան կուխտէին, չա-
մուսնանալ, հնազանդիլ իշխանութեան, և մնալ
աղքատութեամբ։ Տեւտոնեանք նոյնպէս կզգենուին
սպիտակ վերարկու և վրան սև խաչ։

Բաց ի այս ընկերութեանց շատ Գրիստոնեայ ասպ-
ետներ կդային արևմտեան Եւրոպայից՝ անհաւա-

տից դէմ պատերազմելու ազազաւ։ Բայց առ սա-
կաւ սակաւ խաչակրաց ցեղը սկսաւ նուազիլ, ի
վերայ այսր ամենայնի անդադար կպատերազմէին դը-
ըսացի Տաճկաց սուլթանաց հետ, որք կջանային
Բրիսանէից նուաճած երկիրները յետ առնուլ։

Առաջին խաչակրաց պատերազմից 50 տարի
անցնելով, պապը յանձնեց Լեոնարդոսի Պլեր-
մոնացւոյ որ նա քարոզէ և համոզէ ժողովրդեան
խաչակրաց պատերազմը նորոգելու։ Լեոնարդոսը
բարեպաշտ ծնողաց որդի էր, ի մանկութենէ
հետու կրմնար աշխարհային վայելչութիւններից
իւր ընկերներից կորոշուէր վարուց աղնուու-
թեամբ և բարեպաշտութեամբ, սիրով կընթեռ-
նոյր սուրբ գիրքը, և վերջը մտաւ վանք։ Միան-
գամայն իւր ճարտարութեամբ կարողացաւ համոզել
իւր բարեկամաց որ նոքա ևս ընդունին վանական
կոչում, և նոցա կանայքը տեսնելով որ իրենց մար-
դիկը վանք մտան, իրենք էլ՝ ստիպուած մտան կու-
սատան։ Փոքր միջոցում Լեոնարդոսից համոզ-
ուած այս աշխարհի ունայնութիւնը՝ վանականաց
թիւը այնպէս շատացաւ որ կանայք մինչև անգամ
սկսան երկնչել նրանցից. և երբ կտեսնէին նրան, իրենց
մարդկանց խօսակցութեամբ կզբաղացնէին որպէս զի
նոքա ևս չհետևին Լեոնարդոսին։

Ընարաւային Գաղղիոյ մի անբեր Ընապատի մէջ
հիմնած էր Պլէսվո (Պայծառաձոր) վանքը իւր
խիստ կանոնադրութեամբ, վերջը օրինակ դարձաւ
միւս վանօրէից, այն սեղ առաջին վանահայր էր

Բեռնարդոսը։ Իւր խիստ կենցաղավարութեամբ դեռ եւս կենդանի ժամանակից սուրբ կոչուեց։ Դա այնպիսի պատիւ և համարմունք ստացաւ որ մինչև պապին և թագաւորին անդամ կերթային նրան մօտ երևելի գործոց ժամանակ խորհուրդ հարցնելու։ Բեռնարդոսը պարտեց Գաղղիոյ և Գերմանիոյ մի մասը քարոզելով և համոզելով, դնաց նորոգել խաչակրաց արշաւանքը կարողացաւ համոզել երկու թագաւորաց, Գաղղիոյ թագաւոր Լուդովիկոս եօթներորդին և Գերմանիոյ կայսր Կոնրադոս Գ. Հոհենշտաւֆենին։ Երկրորդ խաչակրաց պատերազմը շատ անյաջող էր (1147 թ.) Լուդովիկոս և Կոնրադոս դնացին մոտն փոքր Ասիա ընարիր զօրքով, միայն թէ այն տեղ հիւանդութեան և սովու պատճառաւ բաւական զօրք փճացաւ. մանաւանդ մեծ վնաս հասուցին նրանց Տաճիկները և Յոյնք՝ որք նրանց կատաղնորդէին։ Յոյնք խաբելով նրանց կտանէին անմարդաբնակ անապատներով և անանցանելի լեռներով։ Երկու թագաւորք առանց մէկ օգտի և յառաջադիմութեան վերադարձան։ Ընդնելով 40 տարի Եւրոպայն սարսափմամբ լսեց թէ Երուսաղէմը կորկին անցաւ անհաւատից ձեռքը։ Երուսաղէմն առաւ տաճկաց սուլթան Սալահադինը։ Այս երևելի սուլթանը չէր նմանի արևելեան բռնաւորաց, յայտնի էր իւր քաջութեամբ և մեծահոգութեամբ, օրինակ՝ Երուսաղէմի առնելու ժամանակ չնմանեց առաջին խաչակրաց, խնայեց Քրիստոնէից, և անվնաս պահպանեց նրանց։

Պապը հրամայեց որ երրորդ խաչակրաց արշաւանք բանան, և այս անգամ խաչն առին ձեռքը Եւրոպայի ամենաքաջ և հռչակեալ թագաւորները: Առաջինն էր Գերմանիոյ Փրիդերիկոս Պարպարոսան, բայց ինչպէս յայտնի է՝ փոքր Ասիա մտնելուն պէս մէկ գեռ անցնելուն ժամանակ ընկաւ ջուրը և խեղդուեց, և նրա զօրաց մեծ մասը վերադարձաւ Գերմանիա: Յետ այնորիկ գնաց Գաղղիոյ Փիլիպպոս Օգոստոս թագաւորը, և Անգղիոյ Ռիչարդոսը (Ռիչարդ) Առիւծասիրտն այսպէս կոչուեց իւր աննկուն անվեհերութեան պատճառաւ): Սոքա երկու թագաւորները, որ մինչ այն պատերազմը սաստիկ բարեկամ էին, ճանապարհին արդէն Սիկիլիա կղզւոյ վերայ ծագեց սոցա մէջ խռովութիւն և անբաւականութիւն: Ռիչարդոսը իւր անձնական ուժին հպարտանալով մէկ Գաղղիացի ասպետի հետ մենամարտելուց՝ գետնի վերայ ընկաւ ասպետի ձեռքով, և այն օրից դարձաւ ոխերիմ թշնամի Գաղղիացւոց:

Պաղեստին առաջինն եկաւ Փիլիպպոս Օգոստոսը, և միացաւ Եր ուսաղէմայ թագաւոր Գուիտոն Լուսինեանին հետ որ նա արդէն կպաշարէր Ծովեզերեայ Պտղոմայիդ կամ Աքեա քաղաքը: Այն միջոցում էլ Ռիչարդոսը նուաճեց Կիպրոս կղզին, և գերի առաւ Կիպրոսի տիրապետող Իսահակ Կոմնենոսին և շղթայեց արծաթով: Յետ այնորիկ մօտեցաւ Պտղոմայիդ քաղաքին, և բնակիչք սաստկութեան անձնատուր լինելու: Այն

տեղ դարձեալ ծագեց անբաւականութիւն Փիլիպպոսի և Հոլիքարդի մէջ։ Գաղղիոյ թագաւորը շուտով վերադարձաւ, Իսկ Հոլիքարդը Սալահադինի դէմ պատերազմը կ'շարունակէր։

Այն ժամանակ Քրիստոնէից և Սարակինոսաց մէջ եղած փոխադարձ ատելութիւնը ըստ երևութի փոքր մի նուազեց (Տաճիկները իրենց Սարակինոս ևս կանուանէին՝ Աբրահամու Սարրա կնոջ անուամբ)։ Սոքա տեսնելով միմեանց քաջութիւնները՝ սկսան պատուել իրար։ Սալահադինը անդամ հարուստ պարգևները կուտար Քրիստոնեայ զօրապետաց, որպէս և նոքա իրենց կողմանէ թանկագին ընծաներ կուտային Սալահադինին։ Սակայն պատերազմը մի և նոյն սարսափելի դրութիւնը ունէր. Հոլիքարդոսը իւր քաջութեամբ համբաւ ունեցաւ արևելքում. նորա մի հայեցուածքը սարսափ կբերէր մարդոց վերայ, կպատմեն թէ մի հսկայ Սարակինոս որ երևելի էր իւր քաջութեամբ և զինուք, համարձակեց Հոլիքարդոսին մենամարտելու հրաւիրել։ Հոլիքարդոսը տալով նրան մի հարուած՝ գլխատեց և գլխոյ հետ մէկ թիկունքը աջ ձեռքին հետ ընկաւ գետին։ Մի անգամ ժամանակին չստանալով Սարակինոսներից որոշեալ գերբաժը՝ գերի ընկած Սարացինաց աղատելու համար, հրամայեց 2700 կալանաւոր գերեաց՝ տարին դաշտը և կոտորեցին։ Առ հասարակ Հոլիքարդ Առիւծասիրտը թէպէտ ունէր քաջութիւն, բայց չցոյց տուաւ սպարապետութեան տաղանդ,

և այս էր պատճառը որ իւր նպատակին չհասաւ, և չկարողացաւ Երուսաղէմը Քրիստոնէից յանձնել։ Հռիքարդոս իմանալով որ նորա կրտսեր եղբայրը կաշխատի Անգղիոյ արքունական գահը ձեռք բերել, խաղաղութեան դաշն կապեց Սարակինոսաց հետ, և անմիջապէս նաւեց և մտաւ Եւրոպայ։ Նա սարսափելի անուն թողաւ արևելքում։ Կ'պատմեն թէ երեխայն՝ լաց լինելով՝ երբ մայրը Հռիքարդի անունը կտար, երեխայն երկիւղից կլռէր, կամ երբ Սարակինոսի ձին երկիւղից մի կողմ կվազէր, ձիաւորը կհարցնէր "Չլինի թէ Հռիքարդին կտեսնես"։

Վերադառնալու ժամանակ փոթորկից Հռիքարդիոսի նաւը մտաւ Ադրիական ծոցը։ Այն տեղից իբրև ուխտաւոր Գերմանիայով կանցնէր, բայց ճանապարհին նրան ճանաչեցին, ընկաւ իւր թշնամոյ ձեռքը՝ Աւստրիոյ դուքս Լեոբոլտի։ Այս դուքսը երրորդ խաչակրաց արշաւանքի ժամանակ այն տեղ գտնուեց, և Աքքէոն քաղաքի նուաճման ժամանակ հրամայեց որ Գերմանիոյ դրօշակը բարձրացնեն քաղաքի աշտարակաց վերայ, բայց Հռիքարդոս Առիւծասիրտը հրամայեց վարտնել և հորը ձգել։ Այն վրէժը այժմ կամեցաւ Լեոբոլտոսից առնելու, կալանաւորեց և դրաւ բանտը։ Անգղիայում այլ ևս ոչինչ լուր չունէին Հռիքարդոսից, և չգիտէին թէ ուր է անհետացել։ Նորա բարեկամներից մինը (Երգիչ ասպետը) պէտք էր գնաց նրան գտնելու։ Հատ

պրաբտելուց յետոյ այնպէս պատահեց որ մտաւ Աւսարիա, այն տեղ տեղեկացաւ որ Վենտայից փոքր ինչ հեռի մի հին ամրոցում բանտարկեալ է մի երեւելի անձ։ Երդիչ ասպետը երթալով դտաւ այն ամրոցը մի գեղեցիկ դաշտի վերայ Դանուբի եղերաց մօտ շինուած, թափառելով ամրոցի չորս կողմը լսեց նա այն երգը որ Երբեմն Հռիքարդոսի հետ յօրինել էին։

Պլոնդել միամտեցաւ որ դտաւ Հռիքարդոսին, երբ նորան դտնելու լուրը տարածուեց, Վեղոլոը Հռիքարդոսին յանձնեց Գերմանիոյ կայսր Հենրիկոս վեցերորդին, վերջինն էլ այն քան պահեց իրեն մօտ մինչև որ մեծ գումար և թանկագին պարգևներ ստացաւ Անգղիայից։ Երրորդ Խաչակրաց պատերազմից փոքր ինչ միջոց անցնելուն պէս՝ Ինովկենտիոս Գ. պապը հրամայեց չորրորդ պատերազմը յայտնելու։ Նորա քարոզիչը յանկարծ մտաւ Համիայն դաւառը, և պատահեց հեծելազօրաց. հանդիսի ժամանակ նա սկսաւ քարոզել և հմտեցց այն տեղ դտնուած Գաղղիացի իշխանաց և ասպետաց։ Խաչակիրք ժողովեցան Վենտիկ, որ այն տեղից Վենետիկոյ նաւերով անցնեն Պաղեստին։ Այն միջոցին դրբանց օգնութիւն խնդրելու դիմեց Բիւզանդիոյ իշխան Ալեքս Կոմնենոս իւր հօր եղբօր դէմ՝ որ դահը անիրաւաբար յափշտակել էր, և խոստացաւ խաչակրաց հարուստ ընծաներ։ Խաչակիրք համաձայնեցան օգնելու։ Երբ սոքա մերձեցան Կոս-

տանդնուպոլսոյ սահմանին, հիացան տեսնելով այն սքանչելի տեսարանը. նորա հոյակապ և ճարտարարուեստ շինութիւնները, բարձր, ամուր և գեղեցիկ պարիսպները, անթիւ տաճարները ոսկեզօծ գմբէթներով՝ որք կիսալուսին արևու առաջ։ Եղերաց մօտ կսպասէր 60'000 ընտիր զօրք, խաչակիրք դեռ ևս չսկսած պատերազմ Յոյնք ցիր և ցան եղան, և Ալէքս մնաւ քաղաքը և ժառանգեց արքունական գահը։ Խաչակրաց պարգևելու աղագաւ՝ եկեղեցեաց անօթները բաժանեց նրանց և ծանր հարկեր նշանակեց ժողովրդեան վերայ։ Ֆիւզանդացիք վերաւորուած նորա անկարգ կառավարութիւնից՝ ապստամբեցան, ըսպանեցին Ալէքսին և նորա տեղ ուրիշ կայսր ընտրեցին։ Այն ապստամբութեան յետոյ խաչակիրք նուաճեցին Ֆիւզանդիան, կողոպտեցին միջի գանձերը, և մասամբ էլ այրեցին. հրդեհին ժամանակ շատ երևելի շինութիւններ այրուեցան. երևելի արձաններ և միւս արհեստից հնութիւններն էլ խսպառ ջնջուեցան (1204) թ։ Պ՝պատմեն թէ ի սեղծմանէ աշխարհի ոչ մի աշխարհակալ չէ սատցել այնքան հարստութիւն որքան ստացան խաչակիրք Կոստանդնուպոլիս առնելու ժամանակ։ Խաչակիրք համարեա մոռացան իրենց նախկին նպատակը. այսինքն Փրկչի գերեզմանի ազատելը։ Նրա տեղ տիրեցին Ֆիւզանդիոյ կայսրութեանը և միմեանց վերայ բաժանեցին, և կայսերական տիտղոսը ընկալաւ նրանց

առաջնորդներից գլխաւորը՝ Ֆլանդրիոյ կոմսը Բոդդուինոս։ Եւ այս նոր կայսերութիւնը Լատինական կոչուեց, որ շատ չտևեց։

Երանց սակաւաթիւ լինելը, ցրուիլը գաւառաց մէջ և ներքին անհամաձայնութիւնը եղաւ պատճառ որ Ֆրանկները չկարողացան հաստատ մնալ այն տեղ։ Բանի մի նահանգք դուռ ևս կենային Յունաց իշխանաց ձեռքը։ Երանցից մինը Միքայէլ Պալէոլոգ՝ Նիկիոյ իշխանը կարողացաւ արտաքսել Կոստանդնուպօլսից նորաեկ Ֆրանկաց և հաստատել Յունաց կայսերութիւն (1261) թ։ Եւ եղաւ յեղափոխ նոր թագաւորական տան, որ կկոչուէր Պալէոլոգեան։ Այնքան անյաջողութեան յետ սէրը դէպ ի խաչակրաց պատերազմը նուազեց Եւրոպայում, և պապերի աշխատութիւնը կրկին նորոգուելու պատերազմ զուր եղաւ։ Մի և նոյն ժամանակ Եւրոպայի թագաւորները և ասպետները ներքին պատերազմներով էին զբաղուած. Գերմանիայում և Իտալիայում Գուելֆեանց և Գիպելեանց խռովութիւնը կշարունակուէր։ Անգղիայում և Գաղղիայում թագաւորները իրենց հպատակաց հետ կմաքառէին։ Վերջին Խաչակրաց պատերազմաց մէջ մեծ ծառայութիւն և մեծ քաջութիւն ունեցան Փրիդերիկոս Բ. Հոհենշտաուֆէնը, և Գաղղիոյ Լուդովիկոս Թ. թագաւորը Փրիդերիկոս Բ. կայսրը կարողացաւ համոզել Եգիպտոսի սուլթանին, և նա վերադարձրուց Երուսաղէմը Թրքաստանից (12-

29 թ.): Բայց Բրիստոնեայք դարձեալ շուտով կորուսին զայն: Ընդ միջոցին երևեցան նոր աշխարհակալներ, Մողոլներ՝ Յոնաց ցեղակիցք: Մողոլները և Թաթարք հին ժամանակներէ մեծ և փոքր խումբեր կազմած կթափառէին միջին Ասիայում: Իրենց հօտն հետ առնելով՝ դիւրութեամբ կթափառէին, նոցա կանայք և որդիք սայլերի մէջ նստած կպտրաէին նրանց հետ: Իսկ իրենք Մողոլները, ինչպէս և Յոնք, իրենց կեանքը ձիու վերայ կանցուցանէին. կուտէին անելի միս և կըմպէին ձիու թթուած կաթը որ Քըմըզ կասուէր: Նոքա ոչ մի ղեկանքից երկիւղ չունէին, և միշտ կուրօրէն կհպատակէին իրենց իշխանաց: ԶԿ. դարու սկզբում այն իշխաններից մինը Զինկիսխան անուամբ միաւորեց Մողոլաց խումբերը իր իշխանութեան ներքոյ և նրա առաջնորդութեամբ տարաւ նրանց դրացի ազգաց վերայ: Փոքր միջոցում տիրեցին և աւերեցին Չինաստանը, Պարսկաստանը, և Թաթարստանը: Զինկիսխանի որդւոց ժամանակ այն հալածանքը վիճակուեց արևելեան Եւրոպային: Ռուսիան Մողոլները մտան Ռուսիա և Լեհաստան. նոքա առաջին անգամ ջարդուեցան Մորաւիայում Եւրոպայի տպետաններից, և այն տեղից ստիպուեցան վերադառնալ և կրկին մտան Ռուսիա, ուր հաստատեցին իրենց իշխանութիւնը: Մի և նոյն ժամանակ Տաճկաց ցեղերը Մողոլներից հարստահարեալ մտան հարաւային արևմտեան երկիրները այն է Ասորիք: Յարձակեցան Եդեսացիոյ թագաւորութեան վերայ,

այրեցին և տիրեցին (1244 թ.)։ Միայն մի փոքրիկ ծովեզերեայ մասը Պաղեստինի քաղաքով մնաց քրիստոնէից ձեռքը։ Այն ցաւալի լուրը լսելով Ինովկենտիոս Գ. պապը կրկին առաջարկեց Խաչակրաց պատերազմ, բայց այս քարոզութիւնը ոչինչ յառաջադիմութիւն և արդիւնք չէր ունենայ՝ եթէ Գաղղիոյ Լուդովիկոսի թ. անձնական ջերմեռանդութիւնը և մեծահոգութիւնը չլինէր։ Այն միջոցներում նա սաստիկ ծանր տկարութեան մէջ էր, և ուիստ դրաւ որ եթէ առողջանայ՝ գնայ պատերազմ Փրկչի գերեզմանը ազատելու։ Լուդովիկոս շուտով առողջացաւ, և մեծ դժուարութեամբ կարողացաւ ապահովաց համոզել։ Նա ուղղակի Պաղեստին չէր գնայց, նախ նաւեց Եգիպտոս՝ որ առաջ զայն նուաճէ, պատճառ որ Եգիպտոսի սուլթաններին էին Երուսաղէմայ թագաւորութեան գլխաւոր թշնամիք։ Գաղղիացիք առին Տամիատ քաղաքը այն տեղից Նեղոսի վերայ նաւելով գնացին Գահիրէ, բայց մոլորեցան Նեղոսի ջրանցքների և ակունքների մէջ, և նրանց նաւատորմիղը ջնջուեց Յունական կրակից։ Յանապատը և սովն էլ մեծ վնաս հասցրեցին Գաղղիացւոց զօրաց և վերի ընկան թագաւորի հետ միասին (1250 թ.) և մեծ գումար վճարելով կարողացան ազատութիւն ձեռք բերել։ Հետո տարուց յետոյ Լուդովիկոսը կրկին պատերազմ գնաց և ցանկացաւ յաղթութիւնը սկսել, Թունուզ քաղաքը առնելով, բայց այն տեղ ևս չյաջողեցաւ, դեռ պատերազմը չսկսած՝ ինքը ժանտախտի զոհ եղաւ։ Այն

միջոցին Մէմլիւքները հաստատուեցան Եգիպտոսում։ Այն պէս կ'կոչուէին Եգիպտոսի սուլթանի հեծելազօրքը. նոքա ապստամբեցան, սպանեցին սուլթանին և իրենք տիրեցին Եգիպտոսի։ Թաղ Մէմլիւքները սկսան սաստիկ կերպով հալածել Ասորիք բնակող Քրիստոնէից, վերջն էլ առին Նրանցից Պաղեստինի քաղաքը (1291 թ.)։ Այսպիսով ամբողջ Աւետեաց երկիրը անցաւ մահմեդականաց ձեռքը, և համարեա երկու հարիւր ամեայ Եւրոպացոց թագաւորութիւնը իսպառ վերջացաւ։ Խաչակրաց պատերազմները թէպէտ իրենց նպատակը չ'պատակեցին, և Եւրոպացւոց մեծ վնաս եղաւ, սակայն Եւրոպայի համար երևելի և օգտաւէտ հետևանքներ ունեցաւ։ Այն պատերազմաց միջոցին աղնուականաց մէջ նոյն պէս մնաւ ասպետական քաջութիւնը։ Արաբացիներից և Յոյներից քանի մի արհեստներ սովորեցան։ Շատ ծովեզերեայ քաղաքներ, մանաւանդ Խոտալացւոց, սկսան վաճառականութիւն անել արևելքի հետ, և ծաղկեցաւ Եւրոպայի վաճառականութիւնը. շատ դիւղացիք պատերազմի ժամանակ նոյնպէս ստացան ազատութիւն։ Պապերը և առ հասարակ հոգևորականութիւնը լինելով պատճառ Խաչակրաց պատերազմաց, սորանով բարձրացաւ և զօրացաւ պապերի իրաւասութիւնը (բայց հետ զգիտէ լուսաւորութիւնը տարածուելով՝ սկսաւ նուազել)։ Պապերը չէին բաւականանայ արևելքով, արևմտքում ևս կառաջարկէին Խաչակրաց պատերազմ այն Քրիստոնէից դէմ՝ որք Նրանց անսահման իշխանութիւնը

չէին ընդունում, և որոց այն ժամանակ հերիտիկոս կանուանէին։ Այն հերիտիկոսներից երևելիքն են՝ Արիկանց աղանդը որք հարաւային Գաղղիայում կրնակէին (Պրովանսում և Լանկոզք նահանգաց մէջ) և այս անունը ստացան Արա քաղաքից։ Գաղղիոյ այն մասը իւր վաճառականութեամբ և արհեստներով շատ ծաղկեց, սոցա քաղաքները և ամրոցները բազմանալով հիւսիսային Գաղղիայի քաղաքաց հետ շատ հարուստ և ուրախ դրութեան մէջ էին։ Ամենահարուստ իշխանը էր Թուլուզի կոմն Ռայմոնտը համարեա անկախ Գաղղիոյ թագաւորից։

Գաղղիոյ Փիլիպպոս Օդոստոսի թագաւորութեան ժամանակ Ինոսկենտիոս Գ. պապը հրամայեց քարոզել ժողովրդեան խաչակրաց պատերազմ ընդէմ Արիգեանց։ Հիւսիսային Գաղղիայից մեծ զօրք դումարեց որ կրօնամոլութենէ շարժեալ բարբարոսաբար վարուեցան հերիտիկոս կարծեցեալ ընկերութեանց դէմ (1208 թ.)։ Հարաւային Գաղղիոյ քաղաքները և ամրոցները երկար ընդդիմանալուց յետոյ դառն աւերակ դարձան և բնակիչք անխնայ զոհ եղան կրօնամոլ հայրենակցաց նոցա կոտորեցին, շատերին էլ խարուկի վերայ այրեցին։ Ռ՝պատմեն թէ երբ մի քաղաք առնելու ժամանակ Չիստերոզացան որոշել կաթոլիկաց միւս աղանդաւորներից պապի փոխանորդը հրամայեց անխնայ և առանց որոշման բոլորեցուցեց կոտորել ասելով թէ «այն աշխարհում Աստուած կորոշէ մեղաւորաց և արդարոց»։ Այսներ-

քին պատերազմից յետ հարաւային Պաղեստան վերջին աղքատութեան մէջ ընկաւ, և միացաւ հիւսիսային Պաղեստոյ հետ, և այնուհետև իւր արտօնութիւնները կորցրած՝ կհպատակեր Պաղեստոյ թագաւորին։ Այնուհետև նոցա ուրախ երգիչները յաւիտեան լռեցին։

Պարձեալ եղան երեքի պատերազմունք ընդ դէմ հեթանոսաց Լիթուանիացւոց և Գիւնոց, որք կենդանէին Պալթիկ ծովու եզերաց մօտ։ Ալբիգենցց պատերազմի ժամանակ Լեհք հրաւիրեցին Տեւտոնեան կարգի ասպետաց իրենց օգնութիւն ընդ դէմ Լիթուանեան ազգի Պրուսացւոց։ Ասպետները շատով հաստատ բնակութեան տեղ որոշեցին Վիսթուլայի մօտ, հրով և սրով կոտորէին հեթանոսաց Քրիստոնէական կրօնը ընդունել, և Պրուսիայում կազմեցին իրենց յատուկ Գերմանական աէրութիւն։ Այն միջոցներումն էլ Տեւտոնեանց մեծ Լիվոնիայում արեւմտեան Տուինայի եզերաց մօտ բնակեցան ուրիշ Գերմանացի ասպետներ, որք պապի հրամանաւ կազմեցին մի նոր կարգ ասպետաց անուանեալ կարգ Սուսերակրաց։ Նոքա նոյն պէս ջնջուզջրութեամբ սկսան Քրիստոնէութիւնը տարածել Էստոնիացւոց, Լիվոնիացւոց և Ռուրաց ցեղերի մէջ. առաւել լաւ յաւաջադիմութիւն ունենալու համար այս երկու կարգերը Տեւտոնք և Սուսերակիրք միացան սերտ կապով Տեւտոնեան կարգի գլխաւոր կառավարչի կամ մեծ Մագիստրոսի Հերման Զալցի ժամանակ (1237 թ.)։ Գերմանացի ասպետները

նուաճեալ ազգաց իրենց սորուկ դարձրին և կհարստահարէին ողորմելի ժողովրդոց։ Ասպետաց ամրոցների մօտ շուտով հիմնուեցան ամբողջ քաղաքներ, ուր գաղթեցին Գերմանիոյ վաճառականք և արհեստաւորք և սրանցով Ռուսիան դարձաւ Գերմանական տէրութիւն թէ լեզուաւ և թէ սովորութեամբ։ Երբ Տեւտոնեանք և Սուսերակիրք իրենց թշնամեաց դէմ կպատերազմէին նրանց միշտ օգնութիւն կհասնէին Գերմանիայէն շատ ասպետներ։ Էյն միջոցը այն պէս կկարծէին թէ հեթանոսաց դէմ պատերազմելով՝ իրենց մեղաց թողութիւն կլինէր։ Ահա մեզ օրինակ։ (Մի Գերմանացի իշխան, Խաչակիր դարձաւ այս պատճառաւ, Թուրինկիոյ կոմս Կոնրադոսը Էրֆուրթ քաղաքում, առաւօտուն շուտով վեռաց եկեղեցի և տեսաւ որ Մոգունտիա քաղաքի արք Եպիսկոպոսը կպատժէր մի վանահօր այն պատճառաւ որ նա չէր յօժարի հարկ տալու որ անիրաւացի կպահանջէր Եպիսկոպոսը, Եպիսկոպոս տեսնելով նորա յանդգնութիւնը հրամայեց որ փայտով դանեն։ Կոնրադոսը տեսնելով զայն, այն պէս վիրաւորեցաւ որ կամեցաւ Եպիսկոպոսին սպանել. բայց իւր թիկնապահները պահեցին չթողին սպանելու։ Էյն օրից սկսեալ՝ Եպիսկոպոսը և իշխանը ոխերիմ թշնամի դարձան միմեանց և միշտ կաշխատէին միմեանց երկիրը աւերելու։ Կոնրադոս առաւ Եպիսկոպոսի քաղաքներից մինը (Փրեցլար), այրեց և հրամայեց կոտորել բնակչաց, մինչև եկեղեցիք անգամ կողոպտեցին և այրեցին։ Բայց Կոնրադոսը

շուտով զղջացաւ, և կմտատանջուէր, մտաբերելով վերջին դատաստանը և դժոխոց տանջանքը։ Այն օրից սկսաւ նա բոբիկ ոտքով շրջիլ, զգեցաւ մի շապիկ ապաշխարողի և սկսաւ պարտել բոլոր եկեղեցիք և վանօրայք. եկաւ իւր աւերած Գրիգոր քաղաքը և խնդրեց ժողովրդեան որ իրեն գտնեն. ոչ ոք չ՚յօժարեց, միայն մի ծերունի կին քանի մի անգամ զարկեց նրան, և Կոնրադոսը հանգստանալով գնաց տուն։ Յետոյ մտաւ Տեառնեան կարգը որ պատերազմելով հեթանոսաց հետ իրեն մեղաց թողութիւն գտնի։ Վերջն էլ ընտրուեց այն կարգի գլխաւոր կառավարիչ (կամ մեծ Մագիստրոս) իսկ մի երկու ասպետական կարգից էր ուրիշ կերպ փոխուեցան։ Յովհաննիսեանց կարգը Երուսաղէմայ թագաւորութեան անկմանէն զկնի, սուրբ երկրից գնացին Հռոդոս կղզին։ Այն տեղ էլ Տաճիկներից հալածեալ հեռացան, Մալթա կղզին, և Մալթայի ասպետք անուանելով, սկսան պատերազմել բարբարոս ծովային աւազակաց հետ։ Այս կարգը տևեց մինչև ԺԸ. դարու վերջերը, այսինքն մինչև առաջին Նապոլէոնի ժամանակը։

Տաճարական ասպետները շատ փառ և թշուառ վիճակ ունեցան։ Նոքա Պաղեստինից հեռանալով գնացին Դամասկիա ուր իրենց համար ունէին ամրոցներ և մեծ կալուածներ, որ նրանց նուիրել էին բարեպաշտ իշխանները։ Տաճարականք հարուստ գոլով ծոյլ, անզբաղ կեանք կվարէին, ուրախութեամբ կանցուցանէին իւրեանց օրերը, չմտաբերելով իւրեանց

վարդապետական խոստմունքը և ուխտադրութիւնը։ Դրանց հարստութեան և կալուածոց վերայ նախանձեցաւ Գաղղիոյ թագաւոր Փիլիպպոս Գ. գեղեցիկը։ Առաջուց Կղէմէս Ե. պապից համաձայնութիւն առնելով հրամայեց մի օր որ ամբողջ Գաղղիայում Տաճարականաց հարստութիւնը կողոպտեն և յետ այնորիկ նրանց վերայ քննութիւն բացաւ հերձուածող անուանելով նրանց։ Յետ այնորիկ մեծամեծ և անտանելի նեղութիւններ տալով հրամայեց որ շատերին կոտորեն. մի և նոյն ժամանակ Փարիզումն էլ 54 տաճարական այրեցին։ Կղէմէս Ե. մի հոգևոր ժողովում հանդիսաւոր կերպիւ յայտնեց տաճարականաց կարգի վերջանալը (1312 թ.) և այն կարգի կալուածները և հարստութիւնը տէրութեան յանձնուեցաւ։ Տաճարականաց կարգի գլխաւոր Յակոբոս Մոլէն և գլխաւոր ասպետները երկար միջոց բանտարկեալ կմնային մի խոնաւ ամրոցում։ Վերջը նոքա էլ ի հուր մատնուեցան։ Յակոբոս Մոլէն անվրդով ընդունեց մահը։ Կ'պատմեն թէ այրելու ժամանակ Յակոբոս Մոլէն բարձր ձայնիւ գոչեց ասելով թէ ես կհրաւիրեմ թագաւորին և պապին առաջի ահեղ ատեանին Աստուծոյ, և կասեն թէ փոքր միջոցում թագաւորը և պապն էլ վախճանեցան։ Մէջն էլ Հայաստանում տաճարականաց Կիլիկիայի մնացեալ կալուածներն ձեռքերնէն առաւ և իրենց երկրէն արտաքսեց, թէպէտ վերջը դարձեալ սատացան Լևոնից։

Գաղղիա, Անգղիա, և Սպանիա մէջն դարու երկրորդ շրջանում։

Տասներորդ դարու վերջերում Գաղղիոյ արքունական թագը անցաւ Կապետեանց ցեղին, այս իշխանութիւնը հաստատ պահելու համար միշտ կենդանի ժամանակ իւրեանց ժառանգաց թագաւոր կոչէին։ Եւ այս ցեղի կառավարութեան սկիզբը շատ դժուարին էր իրենց համար։ Նոքա կտիրէին միայն Իլ — տը — Ֆրանս նահանգին Սէն գետի վերայ գտնուած Փարիզ քաղաքով։ Իսկ մնացեալ Գաղղիան միւս իշխանաց ձեռքին էին, որոնք թագաւորին անուամբ և եթ կճանաչէին, և իւրեանց հողերը անկախ կկառավարէին։ Թագաւորական իրաւունքները զօրացնելու համար Կապետեանք շատ խելացի և հեռատես քաղաքականութեամբ վարուեցան։ Նախ նոքա իւրեանց հողերը Վասալաց վերայ չէին բաժանում, ինչպէս որ կասային Կարոլոսեանք։ ընդհակառակն՝ սոքա կաշխատէին իւրեանց սեպհական հողը աւելացնել ծախու առնելով, շատ անգամ էլ ամուսնութեամբ միացնելով, երբեմն էլ դինու զօրութեամբ։ Մի և նոյն ժամանակ նոքա սահպուած էին իւրեանց սեպհական հողերը աղատել անհնազանդ իշխաններից, որոնք պատսպարելով իւրեանց ամրոցներում կդժուարացնէին երթևեկութիւն անել թագաւորաց քաղաքաց հետ։ Ինչպէս համարեա թէ Փարիզի դրան մօտ միբլրակի վերայ կար ամրոց կոմս Մոնլերիի։ Պատմեն թէ Լուդովիկոսի Օ. հայրը մեռ-

նելու ժամանակ ասաց իրեն թէ լաւ պահպանիր այս ամրոցը, որ շատ նեղութիւններ է պատճառել ինձ, և ծերացայ մինչև որ կարողացայ ձեռք բերել։

Պապեռանք մաքառելով ինքնազլուխ իշխանաց հետ մեծ յոյս ունէին քաղաքական հասարակութեանց օգնութեան վերայ։

Հռովմայ իշխանութեան ժամանակից մնացել էին բուսական քաղաքներ՝ որք հետ զհնակ բազմացան, և սոցա հիմնեցին վաճառականք և արհեստաւորք, որք եկան բնակեցան ամրոցների և վանօրէից մօտ։ Այս քաղաքները երբ ծաղկեցան և հարստացան, ըսկսան մտածել իրենց ազատութեան վերայ, և կուշտատէին ազատուիլ այն իշխաններից. և շատ անգամ նոքա դրամ տալով իշխանաց, իրաւունք կստանային իրենց համար ընտրել քաղաքագլուխ և դատաւորք. և բաց յայնմանէ կպահէին առանձին զօրք, և շատ անգամ էլ այս իրաւունքը ոչ թէ դրամով կստանային, այլ նաև զէնքով։ Այս միջին խառվութեամբ օգուտ կարողացան քաղել Պապեռանք. նոքա քաղաքացւոց կպաշտպանէին, կտային նոցա արտօնութիւններ և մեծամեծ իրաւունքներ, զէնքով կօգնէին նրանց. ընդէմ իշխանաց, և կքանդէին այն կոմսերի ամրոցները որք միշտ կկողոպտէին վաճառականաց։ Իշխանաց հպատակները այնուհետև թագաւորաց վերայ կնայէին իբրև իւրեանց փրկչի վերայ, և քաղաքներն էլ վերջը սկսան թագաւորին օժանդակել դրամով և զօրքով որ նուաճի ապստամբ իշխանաց։ Այս պատերազմաց ժամանակ

հոգևորականութիւնը նոյն պէս թագաւորաց կողմը կպահէր, նորանց համար առաւել օգտաւէտ էր որ Դաղղիայն մի անփոփ տէրութիւն կազմէր. այս պատճառաւ էլ հոգևորականաց զօրքը միշտ օգնութիւն կհասնէր թագաւորաց։ Այս քաղաքականութեան հետևողներն էին Լուդովիկոս Զ. (Յոյն), նորա որդի Լուդովիկոս Է. որ երկրորդ Խաչակրաց պատերազմն ել գտնուեց, և սոքա թոռն Փիլիպպոս Բ. Օգոստոսը։ Առաջին երկու թագաւորաց խորհրդականն էր խելացի և հանճարեղ Սուժերը Սէն Տընի վանուց վանահայրը, իսկ վերջինը՝ Փիլիպպոս Բ. Օգոստոսը՝ արդէն մեզ յայտնի է որ գնաց Խաչակրաց պատերազմ, և մեծ թշնամութիւն ունեցաւ Անգղիոյ թագաւոր Առիւծասիրտ Ռիչարդոսի հետ։ Փիլիպպոս Օգոստոսի (1180 — 1223 թ.) թագաւորութեան ժամանակ Կապետեանց տէրութիւնը շատ զօրացաւ։ Նա միացրուց իւր տէրութեան հետ շատ իշխանաց հողեր, և միանգամայն խլեց Նորմանդիան Անգղիացւոց Յովհաննէս Անհող թագաւորից։ Նրանից վրէժ առնելու համար Յովհաննէս Անհող թագաւորը դաշն կապեց Գերմանիոյ կայսեր Ոթոնի Դ. և Դաղղիոյ Վատաչ Փլանդրիոյ կոմսին հետ։ Միացեալ զօրութիւնը Գերմանացւոց, Անգղղիացւոց և Փլամանաց (Պելճիացւոց) Ոթոնի Դ. առաջնորդութեամբ յարձակուեց Դաղղիոյ վերայ հիւսիսային արևելեան կողմից։ Փիլիպպոսը իւր պարոններով և կամաւոր զօրքով քաջութեամբ ընդ առաջ ելաւ Ոթոնին և Լիլ քաղաքին

մօտ վճռողական պատերազմ տուաւ։ Ընդ պատերազմի ժամանակ Փիլիպպոսը յանկարծ Գերմանացւոց զօրաց մէջ ընկաւ։ Մի Գերմանացի իւր նիզակի կարթով քաշեց Փիլիպպոսին և ձիուց վար ձգեց որքան աշխատեցան նրան սպանելու՝ չյաջողեցաւ, վասն զի նա ունէր իւր վերայ պողպատեայ զրահներ։ Ընդ միջոցին շուտով վրայ հասան Գաղղիացիք և ազատեցին իւրեանց թագաւորը մահուան վտանգէն։ Թշնամիք ջարդուեցան (1214 թ.)։ Լիլի մօտ ունեցած յաղթութիւնը մեծ նշանակութիւն ունեցաւ Գաղղիոյ համար այնուհետև օտար ցեղերը երկիւղ կկրէին, և այլ ևս չէին յարձակվում Գաղղիոյ վերայ, այնուհետև հայրենասիրութեան ոգի տարածան, իմացան միութեան նշանակութիւնը, և այնուհետև Պապերանց տան հետ մեծաւ յարգանօք կըվարուէին։

Փիլիպպոս Բ. Օգոստոսի ժամանակ բաւականին ծաղկեց Փարիզը, նա և հիմնեց Փարիզոյ համալսարանը, և սկսաւ շինել Լուվրի պալատը։ Բայց նա էլ՝ ինչպէս և միւս թագաւորք Եւրոպայի՝ փորձեց իւր վերայ Ինոկենտիոս Գ. պապի իշխանութիւնը։ Փիլիպպոս ամուսնացել էր Տանիմարքացւոց թագաւորի Ինգիբուրգ աղջկայ վերայ, վերջը ուծեց ամուսնութիւնը, և պսակուեց ուրիշ մի օրիորդի վերայ։ Զուր միրաւորուած Ինգիբուրգան դիմեց պապին, պապը պաշտպան հանդիսանալով հրամայեց որ Ինգիբուրգային կրկին իրեն մօտանու, բայց երբ Փիլիպպոսը մերժեց պապին հրամանը, Ինոկենտիոսը բանա-

բեցներան։ Եկեղեցիք փակուեցան։ Եքահանայապոր-
ծութիւնը դադարեց, ժողովուրդը լսելով պապի բանա-
դրանքը՝ մեծ տրտունջ բարձրացաւ Թագաւորի դէմ,
և Փիլիպպոսը տեսնելով իւր նեղ դրութիւնը, ըս-
տիպուեց Ինգիբուրգին ընդունել իրեն մօտ։ Փիլիպ-
պոս Օգոստոսի ժամանակ եղաւ խաչակրաց պատե-
բազմը Ալբիգենաց դէմ, և քանի մի նահանգ էլ հա-
բաւային Գաղղիա այն ժամանակ միացաւ նրա Թա-
գաւորութեան հետ։ Իսկ Թուլուզի հարուստ կոմ-
սութիւնը Լուդովիկոս ինն երորդի ժամանակ միա-
ցաւ (Փիլիպպոս Օգոստոսի Թոռնէը)։ Լուդովի-
կոս Թ. սուրբն (1226 — 1270) բացի իւր բարե-
պաշտութիւնից և խաչակրաց պատերազմներից յետ
մահուան բարի յիշատակ Թողաւ ժողովրդեան մէջ
իւր արդարադատութեամբ։ Նա արգելից իշխանաց
դատաստան առնել. ինքը օրինաւոր դատարաններ
կազմեց, նախկին ազատ դատաւորաց տեղ օրինաւոր
իրաւարաններ նշանակեց, որք լաւ գիտէին Հռովմա-
յեցւոց օրէնքները, իրենք էլ ժողովրդեան սուրբին
կարդիցն էին. և այդ իսկ էր գլխաւոր պատճառը որ
նոքա ժողովրդեան իրաւունքը կպաշտպանէին։ Լու-
դովիկոսը կհոգար նաև ներքին խաղաղութեան վե-
րայ, իշխանաց ներքին պատերազմները բոլորովին
վերջացրեց որ այն միջոցներում շատ յաճախ կ'պա-
տահէր և ինքնակար հետևանքներ կունենար։ Ամա-
ռը շատ անգամ Թագաւորը կնստէր Վինսէնի անտա-
ռում մեծ կաղնոյ տակ և ամէնքը իրաւունք ունէին
ներկայանալու իւրեանց ցաւը յայտնելու, և շատ

անգամ ինքը վճիռ կտար: Ա. հասարակ սիրելի եղաւ ժողովրդեանն իւր բարեհոգութեամբ և խոհեմութեամբ, և երբէք չէր նեղում իշխանաց իրանց յանցանքները և միշտ կպատժէին՝ իւրեանց յանցանաց համաձայն: Մի իշխան կախել էր երեք երիտասարդաց թեթև յանցանաց համար. թագաւորը իմանալով կամեցաւ պատժել պարոնին. և թէպէտ բոլոր պարոնները միջնորդեցին նրան ազատելու համար, սակայն թագաւորը չլսեց նրանց. մեծ տուգանք վճարել տուաւ:

Պարոններից մինը ծաղր առնելով ասաց. եթէ ես լինէի թագաւոր, բոլոր պարոններին կկախէի, վասն զի թագաւորը արդէն իւր ոյժը ցոյց տուաւ մի պարոնից տուգանք առնելով: Թագաւորը լսելով դայն՝ պատասխանեց "ինչպէս կասես պարոն, ես կախէի իմ պարոնաց. ոչ պարոն, ես այնպէս չեմ վարուի, սակայն մեր թագաւորաց ես անպատիժ չեմ թողնի,,: Լուդովիկոս Թ. սուրբը թագաւորական անունը իւր անաչառութեամբ և առաքինութեամբ այն պէս բարձրացրուց ինչպէս և նորա պապ Փիլիպպոս Օգոստոսը իւր յաղթութիւններով: Լուդովիկոսի Թ. թոռն խորամանկ և խիստ Փիլիպպոս Դ. գեղեցիկը (1285 — 1314) սկսաւ սաստիկ խռովութիւն Հռոմայ պապին դէմ: Դաղղիոյ թագաւորները Գերմանիոյ կայսերաց պէս անբաւական էին պապերից, վասն զի նոքա կաշխատէին որ հոգևորականութիւնը բոլորովին հպատակի իրենց, և անկախ լինին թագաւորական իշխանութիւնից: Փիլիպպոս Դ. Անգղիոյ հետ

պատերազմ ունեցած միջոցը դրամական կարօտութիւն զգալով եկեղեցական հողերի վերայ հարկ նշանակելով, Ս. ոնիփակիոս Բ. պապը խռովից նրանից և բանադրեց։ Բայց Փիլիպպոսը չվախեցաւ բանադրանքից, և պապին դահ ընկէց արաւ։ Մի Գաղղիացի ասպետ Նոգարէթ, որ ուղարկուած էր Թագաւորի կողմից Իտալիա, միացաւ մի երևելի իշխան Բոլոնայի հետ, որ նա օխերիմ թշնամի էր Ս. ոնիփակոսի Բ. Բոլոնան այդ միջոց Անանի քաղաքում կմնար։ Նոգարէթը կաշառեց պահապան զօրաց կառավարչին և մտաւ քաղաք քանի մի հարիւր զինուորական մարդիկներով։ Ութսուն և վեց ամեայ ծերունի պապը ցանկանալով քաջութեամբ մահուան հանդիպել՝ զգեստաւորուեց, թագը դլխին և խաչը ձեռին առած՝ աթոռոյ վերայ բազմեալ կսպասէր թշնամեաց։ Նոքա պահանջեցին որ նա հրաժարուի իւր կոչմանէ, Ս. ոնիփակիոսը պատասխանեց թէ նա պապ կմեռնի։ Այդ լսելով Բոլոննան՝ աթոռից վար ձգեց և երկաթեայ ձեռնոցով երեսին զարկեց և կամեցաւ սպանել, բայց նրան պահեց Նոգարէթը, թոյլ չտուաւ պապին վերայ սուր բարձրացնել (1303 թ.)։ Այն միջոցին Անանի քաղաքի բնակիչք զինուորական եկան օգնութիւն պապին, և արտաքսեցին Գաղղիացւոց։ Ս. ոնիփակիոսը չկարողացաւ տանել այն անպատուութեան, և շուտով վախճանեց նեղութիւնից վշտացեալ։ Ս. ոնիֆակիոս Բ. քահանայապետը զբաղդութեամբ ծանօթ էր Կիլիկիոյ Սմբատ թագաւորին հետ, երբ Լեթումը մի անգամ գնաց մի հար-

սանիք ուրիշ քաղաք նրա եղբայր Ամբատը յարմար միջոց գտնելով իրեն Թագաւոր հրատարակեց իշխաններն և Կաթողիկոսն էլ համոզեց որ Թագաւորութեան իրաւունքն իրեն կպատկանի ասելով թէ Հերթումը Թագաւոր օծուած չէ այլ քահանայ է և այսպիսի հնարներով ինքը հանդիսաւոր օծուեցաւ և շուտով էլ իրեն անուամբ դրամ կտրեց, նաև Վռնիփակիոս Բ. էլ դեսպան ուղարկեց և նրանից օգնութիւն խնդրեց Կիլիկիայի թշնամեաց դէմ։ Վռնիփակիոսի մահուանէն զինի Փիլիպպոսի աշխատութեամբ ընտրուեց պապ Դաղղիոյ Եպիսկոպոսներից մինը Կղէմէս Գ. անուանեալ։ Այս պապը համարեա ամենայն դործ Փիլիպպոսի խորհրդով կվարէր, և նորա օգնութեամբ կարողացաւ Փիլիպպոսը Տաճարականաց ընկերութիւնը ջնջել։ Թագաւորի ցանկութեան համաձայն նա մինչև անդամ Հռովմից Ավենիոն քաղաքը տեղափոխուեց (հարաւային Դաղղիա) 1308 թ. պապերը այն տեղ մնացին մօտ 70 տարի. և այն միջոցը կոչուեց, Բաբիլոնական գերութիւն պապից։ Փիլիպպոս գեղեցիկը Վռնիփակիոսի հետ վէճ ունեցած ժամանակ կաշխատէր որ Դաղղիոյ ժողովուրդը իրեն կողմը լինի. այս նպատակաւ էլ հրաւիրեց երևելի իշխանաց և այն ժողովը կոչուեց Պաշտօնական անձանց ժողով։ Նա կաղմուեցաւ հոգևորականաց, ազնուականաց և ժողովրդական պատգամաւորներից։ Այն առաջին անդամ եղաւ որ քաղաքացիք Եպիսկոպոսաց և ասպետաց հետ ժողովքի մէջ երևեցան։ Նոքա էլ այսինքն քաղաքացիք կաղմեցին

երրորդ կարգ, պատճառ որ առաջին ժողովներում միշտ երկու կարգ կլինէր՝ հոգևորականաց և աշխարհականաց։ Այս պաշտօնական անձանց ժողովում քաղաքաց պատգամաւորները առաւել ջերմեռանդօրէն կպաշտպանէին Թագաւորաց պատկերի դէմ։ Շուտով Փիլիպպոսի մահուանէն զինի վերջացաւ Պապերանց մեծ ճիւղը և սկսաւ Թագաւորել փոքր ճիւղը (1328 թ.) Թագաւոր ընտրուեց Փիլիպպոսի եղբօր որդի Փիլիպպոս Օ. Վալուան։ Որա միջոց սասակացաւ Անգղիացւոց և Գասղիացւոց պատերազմը։ Այս երկու ազգաց մէջ եղած պատերազմի գլխաւոր պատճառն այս էր, Գասղիոյ Լուդովիկոս Ը. Թագաւորը ամուսնացել էր Էլէոնորա իշխանուհոյն հետ որ մեծ հողեր ունէր հարաւային արևմտեան Գասղիայում (Փուաթու, Կիէն, Կասքոն) բայց Լուդովիկոս շուտով լուծեց ամուսնութիւնը։ Էլէոնորան պատկուեց Ենժուի կոմս Հենրիկոս Փլանթաժենի հետ։ Հենրիկոսը վերջը Անգղիոյ Թագաւորական գահը ժառանգեց, միանգամայն իրեն իշխանութեան ներքոյ պահելով իւր և ամուսնոյն Գասղիա գտնուած հողերը։ Նա ունենալով այն հողերը Գասղիայում՝ Գասղիոյ Թագաւորի Վասալ կկոչուէր, բայց անկախ կձևանար, և Գասղիոյ Թագաւորները այնուհետև կաշխատէին որ Փլանթաժենից հողերը խլեն, և այս եղաւ պատերազմի պատճառ։

Հենրիկոս Բ. Փլանթաժենը (1154 — 1189 թ.) մեծ հանճարով, հաստատամտութեամբ կկառավա-

րեր Անգղիան։ Դա երևելի էր վէճերով հոգևորականաց դէմ։

Հոգևորականութիւնը Անգղիայում առաջին թագաւորաց ժամանակ մեծամեծ արտօնութիւններ էր ստացել և մի և նոյն ժամանակ երբէք չէր ենթարկուի քաղաքական օրինաց։ Եւ այս եղաւ պատճառնոցա չարագործութեանց։ Նորմանդացի քահանայից մէջ կային շատ անպարկեշտ մարդիկ՝ որ տեսակ տեսակ անկարգութեանց յետոյ մինչև անգամ մարդասպանութիւն կ'գործէին, ի գայթակղութիւն ժողովրդեան և անպատիժ կմնային, վասն զի թագաւորական օրէնքը չունէր իրաւունք նորանց դատելու հոգևոր իշխանութիւն էլ շատ թեթև պատիժ էր որոշած նրանց համար։ Հենրիկոսը աշխատաց որ հոգևորականաց արտօնութիւնները վերցնի, և շատ անգամ նրանց գործոց մէջ կխառնուէր։ Մինչև թէ դատաւ իրեն համար վատանգաւոր հակառակորդ Քանթորպէրիի Արքեպիսկոպոսը Թովմաս Պէքեթը։ Հենրիկոսի թագաւորութեան առաջին տարիները Թովմաս Պէքեթը շատ բարեկամ էր թագաւորի հետ, և առաջին նախարարի պաշտօնը կվարէր, և իւր շռայլութեամբ անցաւ միւս իշխանաց, թագաւորը մտադրուելով հոգևորականութեան մէջ փոքր ինչ յեղափոխութիւն անելու, մեծ յոյս ունէր Պէքեթի օգնականութեան վերայ, և այն նպատակաւ նրան տուաւ Քանթորպէրիի Արքեպիսկոպոսութեան պատիւը։ Այն միջոցին Թովմաս Պէքեթը իւր բարքը յանկարծ փոխեց հեռացաւ նախկին

շուայլ կեանք վայելելու, հեռացաւ առաջին բարեկամներից՝ որոնց հետ կղբաղեր խնջոյից ժամանակ, սկսաւ բարեկամանալ աղքատ և հասարակ մարդկանց հետ, զգեցաւ պարզ հանդերձ և այնուհետև կ'կերակրուէր բոյսերով, և ըմպելեաց կողմանէ միայն ջրով կբաւականանար, բայց այն տեսակ անապական կենաց հետ ունէրնա և դեռ անյայտ ևս փառասիրութիւն։ Թովմաս Պէքեթը կընդիմանար Թագաւորին կասէր նրան որ իրաւունք չունի հոգևոր գործոց մէջ խառնուելու և բանադրեց այն եպիսկոպոսաց որք Հենրիկոսի կողմը կ'պահէին։ Ընդամենը երբ Թագաւորը Նորմանդիայումն էր, և լուր ստացաւ որ Պէքեթը բանադրել է Թագաւորի համամիտ Եորքի Արքեպիսկոպոսին (որ երկրորդ հոգևորական էր ամբողջ Անգղիայում), սաստիկ զայրացաւ Թագաւորը և ազազակեց ասելով թէ նրանցից մինը, որք ինձ մօտ կ'կերակրուին կարող չէ՞ ինձ ազատել այն վարդապետից։ Այս բանը լսելով նոյն ժամայն չորս ասպետներ գնացին և սպանեցին Պէքեթին Մայր եկեղեցւոյ մէջ։ Բայց այս չարագործութիւնը մեծ վնաս հասոյց Թագաւորին և նա երկիւղ կրելով՝ չլինի թէ պապը նրան բանադրի ըստիպուեց վերադարձուցանել հոգևորականաց իրենց նախկին արտօնութիւնները և իրաւունքները, և առաջի ժողովրդեան հանդիսաւոր կերպիւ երդուեց որ Արքեպիսկոպոսի սպանման հաղորդակից չէ,, հասարակ ժողովուրդը Պէքեթին իբրև նահատակ ընդունեց, համբաւեցին իբր թէ նորա գերեզմանի

վերա բժշկութիւն կ'գտանեն և շատ տեղերից հիւանդներ կբերէին, որ նորա գերեզմանի վերայ բժշկութիւն գտանեն։ Մինչև անգամ ինքն Հենրիկոսը զընաց Հանթոպրէրի և ամբողջ օրով բոպիկ ոտքով կաղօթէր Պէքեթի գերեզմանին վրայ պահք պահելով, որ նրանով կարողանայ հոգևորականաց գրաւել։ Հենրիկոս երկրորդի որդւոյ ժամանակ Անգղեայում սկսաւ սաստիկ խռովութիւն պարոնաց և թագաւորի մէջ։ Նորա երէց որդի Հռիքարդոս Առիւծասիրտը յայտնի է իւր ցանկութեամբը պատերազմական գրգռմանց։ Նա կ'վարէր թափառական ասպետի կեանք և սակաւ կմնաձէր թագաւորութեան ներքին կառավարութեան վերայ։ Երրորդ խաչակրաց պատերազմի ժամանակ Հռիքարդոսի բացակայութեամբ մեծ օգուտ քաղեցին պարոնները և կ'աշխատէին առաւել մեծ արտօնութիւններ և իրաւունքներ ձեռք բերել։ Հռիքարդոսին յաջորդից նորա եղբայր Յովհաննէս Անհողը, սա էր նենգաւոր և խիստ մարդ, որի ամենայն ձեռնարկութիւնը անյաջող կերպով կ'վերջանար։ Գաղղիոյ Փիլիպպոս Օգոստոս թագաւորը յափշտակեց սորանից Նորմանտիոյ գաւառը։ Յետ այնորիկ ապստամբեցան իրեն հպատակները. Անգղիոյ պարոնները միացան քաղաքացւոց հետ և զէնք առին։ Յովհաննէսը յաղթուեց և ստիպուեց ստորագրութեամբ տալ նոցա մեծամեծ արտօնութիւններ և այն ստորագրութիւնը կոչուեց ազատութեան մեծ քարտէս կամ սահմանադրութեան (1215 թ)

Այս սահմանադրութեամբ թագաւորի իրաւունքը նուազեց, իսկ ազնուականք հոգևորականք և քաղաքացիք ստացան մեծ իրաւունքներ։ Օրինակի համար, թագաւորը առանց հոգևոր և քաղաքի իշխանաց կարող չէր նոր հարկ նշանակել ժողովրդեան վերայ, ոչ մի ազատ մարդ չէին կարող բանտարկել կամ զրկել իրեն կայքից առանց դատաստանի ենթարկելու. Յովհաննէսի որդւոյ և Թոռան ժամանակ (Հենրիկոս Գ. և Իրուանդ Ա.) ժողովուրդը առաւել մեծ արտօնութիւններ ստացաւ նրանց միջոց հաստատուեց խորհրդարան (փարլամենթ ասացեալ իշխանաց պատգամաւոր ժողովքը։ Խորհրդարանը պալատ կրաժնուէր, վերին և ներքին, և վերին պալատում կժողովէին բարձր հոգևորականք և ազնուականք (Լորդեր). իսկ ներքին պալատում ընտրեալ պատգամաւորք փոքրիկ կալուածատէր ազնուականներից և քաղաքացիներից. Խորհրդարանի գլխաւոր իրաւունքը այն էր որ առանց նորա յօժարութեան թագաւորը իրաւունք չունէր հարկ նշանակելու և նոր օրէնք հրատարակելու։ Վերջը կտեսնենք որ խորհրդարանը հետզհետէ մեծ իրաւունք կստանայ և թագաւորի իշխանութիւնը կնուազի։

Ահա կտեսնեմք որ Անդղիայում և Գաղղիայում թագաւորաց իշխանութեան պատմութիւնը երկու միմեանց հակառակ ուղղութիւն ստացաւ։ Գաղղիոյ Կապետեանք առաջ շատ թոյլ էին, բայց միանալով քաղաքացւոց հետ՝ նուաճեցին իշխանաց և ազատ,

իսկ Անդղիայում Նորմանտիոյ թագաւորները առաջ ինքնակալ էին, բայց պարոնները միանալով քաղաքացւոց հետ՝ սկսան հետ զհետէ նուազցնել թագաւորի իշխանութիւնը և հասարակին ժողովրդեան իրաւունքները։ Երբ Անդղիայում թագաւոր ընտրուեց Փիլիպպոս Օ. Պ՚ալուան, Անդղիոյ թագաւոր Եդուարդը Գ. յայտնեց իւր ժառանգական իրաւունքը Անդղիոյ գահուն վերայ, վասն զի նա իւր մօրը կողմանէ Փիլիպպոս գեղեցկի թոռն էր։ Այս առիթով սկսած պատերազմը համարեա հարիւր տարի տևեց։ Առաջ այս պատերազմը Անդղիացւոց համար անյաջող կընթանար։ Դաջ Եդուարդը մեծ ջարդ տուաւ Փիլիպպոսին Բրէսի քաղաքին մօտ (Փիքարդիայում 1346 թ.)։ այն տեղ ոչնչացաւ Անդղիոյ ասպետաց նշանակութիւնը Անդղիոյ աղեղնաւորաց առաջ, և այս առաջին պատերազմն էր ուր առաջին անգամ գործ դրին վառօդը և թնդանօթը, այն էլ Անդղիացւոց կողմից։ Դեռ ևս չկատարելագործած թնդանօթները չկարողացան մեծ վնաս տալ Անդղիացւոց, բայց նրանց ձայնից կ՚կատարէին ձիաները և կանոնաւորեալ ասպետաց կարգը խսպառ կըխառնուէր։ Այն պատերազմին մէջ գլխաւոր քաջ ասպարապետն էր երրորդ Եդուարդի որդի Սեաւ իշխանը, այսպէս կ՚կոչուէր իրեն զինուց սեաւ գոյնից։ Նա յաղթութեամբ առաւ քանի մի նահանգներ հիւս. և արևմտեան Անդղիայում։ Այն պատերազմից Անդղիան շատ խեղճ դրութեան մէջ ընկաւ։ Պ՚եցերորդ Փիլիպպոսի թոռան Ե. Կարոլոսի ժա-

մանակ Անդղիացւոց յաջողութիւնը դադարից։ Էդուարդ Գ. և Սեաւ իշխանը մեռան, իսկ Գաղղիոյ զօրաց ապարապետ նշանակուեց քաջ և երևելի ասպետ Պերթրան Տիւկէքլէն։ Նա Բրիտանացի էր, և ի մանկութենէ ցոյց կտար իւր քաջութիւնը։ Պերթրանը անտիան կեանքը չսիրելով չսովորեց ոչ կարդալ և ոչ գրել։ Իւր ընկերաց հետ դաշտում և լերանց վրայ կրքօտնոյր որ իրեն հօր ամրոցի շրջակայքն էին, նրանցից զօրք կ'կազմէր, և շատ անգամ Պերթրանը տուն կվերադառնայր՝ գլուխը կոտրած և արիւնոտ երեսով։ Նորա անախորժ դէմքը և չար անպարկեշտ բնութիւնը կ'յուսահատացնէր իրեն ծնողաց։ Բայց սա կարողացաւ շուտով մխիթարել ծնողաց իրեն փառքով։ Երբ Տիւկէքլէնը առաջին անգամ երևեցաւ ճիախաղութեան ասպարիզի մէջ, ժողովուրդը հիացաւ նորա քաջութեան և արագաշարժութեան վերայ նա յաղթեց բոլոր ասպետաց որոնք կ'մենամարտէին նրա հետ։ Ճիախաղութեան ասպարիզից Պերթրանը շուտով վերադարձաւ և գնաց Գաղղիոյ թշնամեաց դէմ պատերազմելու, իւր քաջութեամբ այնպիսի յարգանք ըստացաւ որ Կարոլոսը Ե. նշանակեց նրան Գաղղիոյ ընդհանուր զօրաց հրամանատար։ Կարոլոսի խելացի կառավարութեամբ և Տիւկէքլէնին քաջութեամբ Գաղղիան կարողացաւ փոքր ինչ ոյժ և կարողութիւն ստանալ։ Բայց զինի մահուան սոցա (1380 թ.) Գաղղիոյ դրութիւնը առաւել վատ

վիճակ ստացու քան թէ ասաջ։ Այն ժամանակ ըն-
կաւ թագաւորել Լանքաստրեան տունը.

Լանքաստրեան ասն Կարոլոս հինգերրորդի ժա-
ռանգ Կարոլոս վեցերրորդը Ժանոթ էր մեր Լեւն
թագաւորին հետ։ Լեւնը երեք տարի Սպանիա մը-
նալէն յետոյ, Գաղղիայի Կարոլոս Ը. թագաւորին
այցելութեան գնաց և այն տեղ էլ թագաւորի ար-
ժանի ընդունելութիւն գտաւ. Երբ որ ասաջին ան-
գամ Կարոլոսին գնաց, թագաւորը գահէն կանգնե-
լով՝ վաղից իրեն գրկեց և սիրոյ համբոյր տուաւ,
յետոյ իրեն մօտ նստացուց և Սիլեզիայի վիճակին
և բոլոր արևելքին վերայ տեղեկութիւններ հարցը-
րուց։ Պատնից յետոյ հրամայեց որ նրան իւրաքան-
չիւր տարի թագաւորական գանձէն 6000 Ֆրանգ ասն,
5000 Ֆրանգ էլ միանուագ պարգևեց որ իւր բնակա-
բանին պիտոյքը հոգայ, նաև խոստացաւ որ նրան օգ-
նական զօրք տայ որպէս զի իւր երկիրը Սարակինոսաց
ձեռքէն ազատէ և Ս. Տնեի մէջ Ս. Անտոնի գերեզման
իրեն ընակարան տուաւ, Լեւն այն տեղ բնակեցաւ
և թագաւորին հետ հոնձաղ կեանքը էր, և արքու-
նեայց ամեն հանդէսներուն ներկայ կգտնուէր։ Այս
միջոցները Գաղղիացւոց և Անդղիացւոց մէջ անդա-
դար պատերազմ կլինէր, և նոյն տարին երկու կողմն
էլ ուզելով հաշտութիւն անել և չկարողանալով մի-
մեանց հետ միաբանել, Գաղղիայի թագաւորն որո-
շած էր որ այնուհետև ամենեին հաշտութիւն անե-
ու վերայ խօսք չրանայ, այլ պատերազմն ամենայն
սաստկութեամբ յառաջ տանի։ Լեւն երբ նոցա ո-

բոշուն մը խնայու, Թրխատնէական ամրով բարբոքած՝ սակայն ինքը միջնորդ լինել և երկու պատերազմող ազգաց թիւնեն միմեանց հետ հաշտացնել ու միաբանել, յուսալով որ սրանց հաշտութեամբ նաև բոլոր արևելեան Թրխատնէից և նոյն իսկ իրեն մեծ օգնութիւն կլինի։ Ուստի երբ Գոպրիսի թագաւորին մօտ գնաց, ինչ որ նրա խորհրդականներն ու իշխանները ժողոված էին։ Ընդ ոեզ ազգաց և գիղցիկ ճառ խօսելով, ցոյց առաւ որ Սարակինոսները Թրխատնէից ինչ վնասներ ու բռնութիւններ կանեն, և նրանց արած յաղթութիւնները ու կոտորածները մի առմի նրանց առաջ նկարագրեց։ Ընդ բանին զօրաւոր օգնութիւնը միայն ասէ որ Գոպրիսն և Ենդրեան միմեանց հետ միանան և Սարակինոսաց դէմ գնան, նրանց նու աձեն և երկիրը նրանց ձեռքէն ազատեն։

Եւ պատասխան եմ առաւ, որ համար Ենդրեա երթալ և թագաւորին հետ խօսել։ Կարծրատը ապ բանին իւր հաւանութիւնը առաջին պէս Լեոն շուտ ճամբայ եղաւ ու Պալդինէն նաև նամակով՝ յաջող հաղորդ Տուքի նաւատանդեան հասաւ, և այն անդ գտնուող Ենդրեայի իշխանները և թագաւորին ևս բարի կը բարդրդուն իւր գաղտնի պատճառը խնայ ալ ուս, նրանք էլ նրա հետ մարդիկ դրին ու Լեոնդան թագաւորի մօտ տարին։ Լեոնը Լեոնդան մնաց ժամանակ քաղաքին բնակիչք ամեն կարգից նրա անցնելու ճանապարհին ժողոված էին, նաև շատ երեսի իշխանները իրենց ընդ առաջ գնացին և մեծ պատ-

ւով ընդունելով ուրախութեան հանդէսներ կատարեցին։ Փոքր միջոցէն Յայոց Թագաւորն Անգղեցւոց Թագաւորին գնաց և նրա հետ սիրով տեսնուելով իւր դալուն պատճառը յայտնեց, որուն պատասխան տուին որ Թագաւորական խորհրդականներն ամենքը այ տեղ չ'լինելով հարկաւոր է սպասել մինչև որ ժողովին և այն ժամանակ խնդրոյդ կատասխանենք։ Ձորս օրից յետոյ Թագաւորը իրեն խորհրդականներով գնաց Վ. Եսոմինասրբի պալատը և Լ. Լեոնին էլ հրաւիրեց։ Այն տեղ խորհրդեան սրահին մէջ ինքն Թագաւորը իրեն դահը նստաւ, Լ. Լեոնին էլ իրեն մօտ, յետոյ զլխաւոր եկեղեցականը և վերջն խորհրդականները կարգաւ իրենց տեղը նստեցան և Յայոց Թագաւորին խնդրեցին որ իւր խնդիրքը առաջարկէ։ Այն ժամանակ Լ. Լեոնը ողջոյն եղանակաւ սկսաւ ցոյց տալ թէ այս երկու տէրութեանց մէջ եղած պատերազմը քրիստոնէութեան ինչ մեծ վնասներ հասցրուց և կհասցնէ, և թէ նոյն իսկ պատերազմող տէրութիւններին շատ վատնդի և վնասու պատճառ կլինի։ Գանդերպուրիի Արքեպիսկոպոսն ինչպէս որ յառաջագոյն իրեն յանձնուած էր, Լ. Լեոնին պատասխանեց և որոշուեցաւ որ Անգղեցւոց Թագաւորն իւր դեսպանները Գաղղիա ուղարկէ, և և այն տեղ Գաղղեացւոց կողմանէ խրկուած պատգամաւորներուն հետ խօսին ու հաշուութիւն հատատեն։ Նկան ժողովեցան Պուլոյն քաղաքը, բայց երկայն խօսակցութիւններից յետոյ չկարողացան վիճաբանիլ և առանց մէկ բան որոշելու իրենց քա-

ղաքը դարձան, թէպէտ Լ. Լեոն շատ աշխատաց որ նրանց միաբանէ։ Լ. Լեոնին այս ճիղը և աշխատութիւնը ղուր անցնելով և նրանով նա և իւր թագաւորութիւնը նորէն ձեռք ձգելու յոյսն կորցնելով, այնուհետև բոլոր իր կենաց մնացած ժամանակը արտաքսութեամբ անցուց և 1393 ին նոյեմբերի 22 ին Փարիզի մէջ վախճանեցաւ 11 տարի թագաւորելէն, 7 տարի Եգիպտոսի բանտը մնալէն և 12 տարի Եւրոպա պանդխտելէն յետոյ։ Շատ սուգ արին նրա մահուան վերայ Փարիզի բնակիչները, վասն զի իւր հմտութեանն, իմաստութեանն և բարի վարուցը համար ամենուն սիրելի էր եղել և մեծ հմտարար սարսել։ Թաղման հանդէսը շատ փառաւոր եղաւ, զրէթէ Փարիզի մէջ գտնուող բոլոր իշխաններն ու ժողովուրդն եկած էին իրենց վերջին սէրն և յարգութիւնը ցոյց տալու համար, և այսպիսի փառաւորութեամբ Կլեմանտինեանց Եկեղեցոյ մէջ Աստուած խորանին աջ կողմը պատին մէջ շինուած գեղեցիկ մարմարիոյ գերեզման դրուեցաւ։ Իր առաքինութեամբք և իմաստութեամբ բոլոր Եւրոպայի մէջ շատ անուանի եղած էր, այս պատճառաւ էլ չկայ ոչ մի պատմագիր՝ որ Լ. Եւոնի վրայ գրած ժամանակ մեծամեծ գովութիւններ չասայ և խոհեմ, իմաստուն, արթուն և հմտաստ ճանաչանէ։ Բոլոր ունեցած հարստութիւնը՝ որն որ Պատղեսացի, Անդրիացի, Պատրիկեացի թագաւորներուն և ուրիշ իշխաններուն իրեն նշանակած տարեկան մուտքերէն ժողովածէր, մէկ մասը Փարիզի աղքատներուն թողաւ, մէկ մասը իր տունը հա-

գացողներուն, մէկ մասը էլ Ծառայից և ընտանի բարեկամաց։ Կեղտաբնեան կրօնաւորաց էլ դրամագրելու խոսաւ որ իրեն համար անդադար աղօթեն և իւր կատակատար Անդրիայի Ռիքարդ թագաւորին նշանակեց։

Այսպիսի վախճան ունեցաւ Լեւոն Զ. Կիլիկիայի վերջին թագաւորն, որոյ մահուամբն Ռուբինեան Լեւոն Զ. ցեղին 300 տարուան իշխանութիւնն էլ բոլորովին դադարեց։ Իւր մեռնելուց յետոյ Կիպրոսի Յակոբ Ա թագաւորը Լուսինեան ցեղէն լինելով, յորմէ էր նաև թնքն Լեւոն Հայոց թագաւորի պատուանունն առաւ, թէպէտ և Կիլիկիա Սարակինոսաց ձեռքն էր. և իւր զինանշանին մէջ Հայոց դրօշին նշանն էլ, որն որ զլուխը թագով առիւծ էր, նկարել տուաւ, նաև իւր սահմանքուն վրայ էլ թագաւոր Հայոց գրել տուաւ։ Այս պատուանունն իւր յաջորդներն էլ պահեցին մինչև Յակոբը Գ—ին ժամանակը, Կիպրոս Վենետիկցոց ձեռքն անցնելով էն էլ դադարեց։

Պարոնս Հինգերորդի ժառանգ, վեցերորդ Պարոնը խելագարուեց։ Իշխանները զանազան ընկերութիւն բաժանուեցան և Երանցից իւրաքանչիւրը կաշխատէր թագաւորական իրաւունքը ձեռք բերել։ Սկսան ներքին խռովութիւնք։ Սրանից շահուեց Անդրիայ Հենրիկոս Ե. թագաւորը, տիրեց ամբողջ հիւսիսային Գերմանիայ, առաւ Փարիզը և իրեն անուանեց թագաւոր Գերմանիայ։ Բայց Հենրիկոսը շուտով մեռաւ, չկարողանալով վերջացնել իւր յաղ-

թութիւնները։ Գաղղեոյ մէկ մասը նորա դեռահաս Հենրիկոս Զ. որդւոյն ընդունեց թագաւոր, իսկ միւս մասը հաւատարիմ մնաց Կարոլոսի Զ. որդւոյն, Կարոլոս Գոֆինին կամ թագաժառանգ (Գոֆին կ'կոչուէր Գաղղիոյ թագաժառանգը, և այն օրից սաացան այս անունը, երբ Տոֆինէ նահանգը միացաւ Գաղղիոյ հետ)։ Ընդդիմադիք կշարու նակէին իրենց յաղթութիւնը և պաշարեցին Օրլէան քաղաքը՝ որ Գաղղիոյ դլխաւոր քաղաքներից մինն էլ սա էր, ու հաւատարիմ կմնար թագաժառանգին։ Թագաժառանգը Էկարոդանալով օգնութիւն տալ պաշարեալ Օրլէանին, վասն դի չունէր ոչ զօրք և ոչ դրամ, և ինքն էլ տարտամ դրութեան մէջ կդտնուէր։ Այն միջոցին Ընդդիմացւոց դառն լծից Գաղղիան ազատելու համար երևեցաւ մի երևելի Օրլէանացի օրիորդ Ժանա, Երք անուամբ Տօմ — Ռէմի տանից, Թիպօ — տ, Երքի դուստրը։ Սա մի դիւղացւոյ աղջիկ էր՝ Լոռէն նահանգում և արիութեամբ կվարէր բոլոր ծառայութիւնը, բուրդ կմանէր և կարածէր իւր հօր խաշինքը։ Իմանկութենէ Ժանա, Երքը շատ մտածող և վերացական բնութիւն ունէր, և շատ անդամ հեռանալով կերթար՝ մի մեծ կաղնոյ տակ կ'հանդստանար, որ փոքր ինչ հեռու էր իրենց դիւղից. աւանդութեամբ կպատմէին թէ այն կաղնոյ մօտ կժողովուին չար հոդիքը և կախարդները։ Երբ Գաղղիոյ թագաժառանգին թշուառ դրութիւնը լսեց Ժանա, Երքը, յայտնեց որ մի դաղանի ձայն կլսէ որ կհրամայէ նրան դնալ և ազա-

տել իրեն հայրենիքը։ Առաջ նրան խելագարուած կարծեցին, բայց երբ շատ թախանձեց՝ տարան թագաժառանգին մօտ։ Խելացի և իմաստալի ճառերով կարողացաւ նա համոզել թագաւորին որ վերին տեսչութիւնը որոշել է որ նա պէտք է ազատի իւր հայրենիքը թշնամեաց ձեռքից (կպատմեն թէ նա Կարոլոսին այն գաղտնիքը յայտնեց որ միայն իրեն էր յայտնի)։ Խոստացաւ որ Օրլէանը պաշարմունքից կազատի և Կարոլոսին կտանի Ռէմս քաղաքը ուր թագադրւում էին առ հասարակ Գաղղիոյ թագաւորները։ Թագաւորը տուաւ նորան մի գունդ զօրք, Յանտա, Երբ ասպետի հանդերձը վրան առած, սպիտակ դրօշակը ձեռքին, յաջողութեամբ մտաւ Օրլէան քաղաքը, և այնպէս քաջալերեց Գաղղիացոց որ Անգղեսացիք բոլորովին ջարդուեցան և պաշարմունքը վերուցին։ Այս օրիորդի քաջութեան լուրը տարածուեց ամբողջ Գաղղիայում, ամենայն տեղից սկսան գալ և զինուոր մտնել Կարոլոսի դրօշակի ներքոյ և Անգղեսացիք սկսան այնուհետև միշտ յաղթուիլ և մեծ վնաս կրեցին։ Այնուհետև Կարոլոսը ինքը սկսաւ առաջնորդել զօրաց, և Յանը անվնաս տարաւ նրան Ռէմս, ուր Անգղեսացւոց անթիւ զօրքը կրմնար։ Երբ թագաւորութեան հանդէսը վերջացաւ, Յանը ասաց Կարոլոսին որ այժմ նա իւր գործը վերջացրուց և կխնդրէր իրեն արձակել որ վերադառնայ իւր գիւղը։ Բայց թագաւորը թախանձելով Յանին համոզեց և մնաց։ Յանը մի փոքրիկ պատերազմի ժամանակ գերի ընկաւ Պուրգոնի-

ացուց ձեռքը, նոքա էլ վաճառեցին Անդղիացւոց վերայ։ Ոմերիմ թշնամի Անդղիացիք Յանին տարան Ռուան քաղաքը բանտարկեցին և սկսան դատել որպէս չար հերձուածող և կախարդ։

Դատաւորները վճռեցին որ նրան այրեն խարուկի վերայ, և այս բարբարոսական պատիժը կատարուեց Ռուանի հրապարակում (1431 թ։) Նրա մահը մեծ վնաս տուաւ Անդղիացւոց, վասն զի նրանով առաւել ևս թշնամացան Դաղղիացիք նրանց հետ։ Այնուհետև և Դաղղիացիք սկսան պատերազմել, և յաջողեցաւ իսպառ արտաքսել Անդղիացւոց Դաղղիայից։ Այս հարիւրամեայ պատերազմը այն օգուտը տուաւ Դաղղիացւոց որ նոքա իմացան միութեան նշանակութիւնը, և այնուհետև Դաղղիոյ առանձին մասերը սկսան միմեանց հետ միանալ անքակտելի միութեամբ։

Կարոլոս Է. Յան տ, Արքի մահուանէն զկնի թագաւորեց 30 տարի, և թէպէտ ծոյլ էր, սակայն կարողացաւ այն քայքայեալ տէրութեան մէջ խաղաղութիւն մտցնել։ Նա առաջինն եղաւ որ մշտական պատրաստ զօրք ունեցաւ։ Մինչև այն միջոցը զօրք կ'կազմէին վասալները։ Սրանից կ'երևի որ առաջ թագաւորի զօրութիւնը վասալներից էր կախուած։ Կարոլոս սկսաւ կանոնաւորեալ հեծելազօրք պահել, որոց ֆանդարմ կանուանէին, նրա որսորդներից կազմեց, բայց սաստիկ կարգապահ էին, կատանային լաւ ռազմիկ և զէնք, միշտ զինուորական կրթութեամբ կ'պարապէին, և միշտ պատրաստէին պատերազմելու։

Այս զօրաց օգնութեամբ կարողացաւ թագաւորը շատ իշխանաց նուաճել, մանաւանդ այն ժամանակից՝ երբ սկսան վառօդ գործ դնել, որոց դէմ չէր կարող մնալ ոչ ասպետական զրահը և ոչ նոցա ամրոցները։ Անիանայ թշնամի էր ասպետաց Կարոլոսի որդին Լուդովիկոս ԺԱ. (1461—1483 թ) շատ խելացի թագաւոր էր, բայց միանգամայն խիստ և ժլատ։ Նա քաղաքացւոց պաշտպանն էր, ամենայն կերպով կհալածէր ասպետաց իշխանաց. և կարողացաւ նրանց նուաճել։ Այն միջոց Գերմանիայում դարձեալ կային հզօր և համարեա անկախ Կ. ասաներ, ինչպէս Պրեթայնի և Պուրկոյնի դուքսերը։ Պուրկոյնի դուքսն էր Կարոլոս Յանդուգն նա էր շատ փառասէր, շռայլ և կրակոտ մինչև այն աստիճան որ իրեն անդամ կարող չէր զսպել։ Բացի Պուրկոյնից նրան կպատկանէր նաև Ղիդերլանդան կամ Սաորին Ղահանգները, չկարողանալով Կարոլոսին յաղթել, Լուդովիկոսը սկսաւ նրա հպատակաց դաղանի կերպով լրտեսներով կաշառել և ապստամբեցնել, և նրա դէմ կղնեաւորեր Օուիցերիացւոց և Լոռենացւոց։

Կարոլոս Յանդուգն իրեն կործանման պատճառ ինքն էր կամենալով իւր մասը ընդարձակել, կաշխատէր որ տիրէ Լոռէնի կամ Լոթարինկիոյ և Օուիցերիացւոց մասերին։ Բայց նոքա իմանալով նորա մտադրութիւնը միացան, քաջ Օուիցերացիք Կարոլոսին քանի մի տեղ մեծ ջարդ տուին մի պատերազմում, (Նանսի քաղաքին մօտ 1477 թ). նրա

ձին խրեցաւ ճահճի մէջ և դուքսը սպանուեց։ Լուդովիկոսը կարողացաւ նորա մահուամբ օգուտ քաղել. Պուրկունի մեծ մասին տիրեց, իսկ մնացորդը ընկաւ Գերմանիոյ Մաքսիմիլիանոս կայսեր, որ ամուսնացած էր Յանդուքն Կարոլոսի դստեր հետ։

Կասկածոտ Լուդովիկոսն ԺԱ. հաւասաք չէր ընծայում Գաղղիացի իշխանաց, և նրանցից միշտ հեռու կմնար։ Նա ունէր Սկոտիացւոցմէ և Օրլիցերացւոցմէ կազմեալ զօրք, և իւր վերջին տարիները բնակուելով մի ամուր ամրոցում որ անմերձենալի ճահճաց և անտառի մէջն էր, այն զօրքը կպահպանէր նրան այն տեղ անվնաս։ Լուդովիկոսը որքան խիստ և անընտրող, այնքան էլ սնապաշտ էր, շատ անգամ կտանջուէր իւր խղճի խայթից, և շատ կըվախենար մահից, կպահէր իրեն մօտ ատաղդէտ, և նրան կտիպէր որ իմանայ իրեն մահուան ժամը։ Ինչպէս Լուդովիկոսը մեծ գումար կրաժանէր թէ իրեն սերութեան մէջ և թէ ուրիշ սերութեանց մէջ գտնուած լրտեսաց։ Գաղղիան պարտական է երախտագէտ լինել նրան քանի մի կանոնաւոր գործոց համար, նա կանոնաւոր սուրհանդակներ հաստատեց, ինքն էլ միշտ կպաշտպանէր վաճառականութեան։ Ընդհանրապէս սաստիկ պատերազմ կշարունակուէր կարմիր և սպիտակ վարդի պատերազմ անուամբ որ շարունակուեց մօտ 30 տարի (1455 — 1485 թ.), և պատճառն էր այս։ Փլանթաժինէ թագաւորական գիծը բաժանուեց երկու գլխաւոր ճիւղ Լանքաստրեան և Յորքեան, առաջինը իւր դրօշակի վերայ ու-

ներկարմիր վարդ, իսկ միւսը սպիտակ, այս պատճառաւ էլ պատերազմը կոչուեց կարմիր և սպիտակ վարդի։ Հենրիկոս Զ. թագաւորը Լանքասթրեան տոհմից էր, ինքը բարեսիրա անձն էր, բայց շատ թոյլ և անընդունակ։ Այս պատճառաւ նորա ազգական Եօրքեան դուքսը մտադրուեց յափշտակել նորա թագը, և զենուորուեց նորա դէմ։ Հենրիկոսի պատուոյն պաշտպանութեանը համար պատերազմուեց նորա հանձարեղ և պատուախնդիր տիկնոջը Մարգարիտա Անժուցին։ Պատերազմը սկսուեց անխնայ կոտորելով թագաւորական ցեղն անդամից և երեւելի պարոնաց։ Մանի մի անգամ Հենրիկոսին գահիցը վար ձգեցին Լոնդոնի Թաւր կամ Աշտարակ բանտում բանտարկելով, բայց նա դարձեալ ազատուելով՝ իւր գահը կրարձրանար, այն էլ իրեն թշնամեաց իրարու մէջ ունեցած անհամաձայնութեամբ և Մարգարիտայի աշխատութեամբ։ Մարգարիտան զօրք կժողովէր Գաղղիայում և Անգլիայում, և ինքը անձամբ կառաջնորդէր Եօրքի դուքսին դէմ։

Մի անգամ Մարգարիտան յաղթուելով, իւր փոքրիկ զաւակին հետ փախաւ թաքչելու մութ անտառներում, որ թշնամեաց ձեռքը չանցնի, բայց աւազակաց ձեռքը ընկաւ. կպատմեն թէ երբ նոքա հարստութեան բաժանման ժամանակ սկսան վիճել Մարգարիտան յարմար միջոց դտաւ փախչելու, բայց վերահասաւ աւազակներից մինը, և կամեցաւ սպանել զբարեկամ, ասաց Մարգարիտան, ահա քո

թագաւորի զաւակը. քո պահպանողութիւնը կը-
յանձնեմ։ Ասպակը այս խօսքերից շարժեալ՝ ա-
ռաջադրելով նրան իրեն բարեկամաց մօտ տարաւ,
որոց օգնութեամբ մտաւ Գ. աղղ խ։ Մարգարիտան
վերջին միջոցները փոքր ինչ օգնութիւն խնդրեց իւր
ազգական Լուդովիկոսից Ժ.Ա. և անցաւ Ենգղեան,
բայց դարձեալ ջարդեց նրան Եդուարդը Գ. Եօր-
քի դուքսի որդին և դերի ընկաւ նրա ձեռքը։ Հեն-
րիկոս Զ. մեռաւ Աշտարակի բանտում, իսկ Մար-
գարիտային Լուդովիկոսը Ժ.Ա. ազատեց գերութիւ-
նից՝ մեծ դումար վճարելով, և իւր վերջին օրերը
Գ. աղղ խ. անցուց։ Այնուհետև Եօրքեան տու-
նը յաղթող հանդիսացաւ, սկսան ներքին խռովու-
թիւնք և չարագործութիւնք Եօրքեան ցեղի մէջ.
Եդուարդ Գ. մեռաւ, թողնելով երկու դեռահաս
զաւակունք, նրանց վերայ հոգաբարձու նշանակեց
Եդուարդայ կրտսեր եղբօրը Հռիքարդոսին։ Այս
Հռիքարդոսը սաստիկ չարագործ մարդ էր։ Բամա-
յեց որ իւր եղբօր մատաղահաս երեխայքը թողուն
բանտում, կալանաւորին, և յետոյ դահիճ ուղարկեց
որ նոցա սպանէ, Ինպատմեն թէ այն անմեղ երե-
խայից այն ժամանակ խեղդեցին՝ երբ երկուքը միա-
սին հանդարտ մի անկողնոյ վրայ կընջէին։

Հռիքարդոս Գ. թագաւոր յայտնեց իրեն, և
իրեն գաղանաբարոյութեամբը սկսաւ բոլոր ազգա-
կանաց և այն իշխանաց կոտորել՝ որոնք իրեն հա-
մար վնասակարէին, այլ և չկարողացան տանել նո-
րա բարբարոսութիւնը։ Լանքասթրեան կուսակցու-

թիւնը կրկին ոտի կանգնեց, և Գաղղիայից հրաւիրեցին Հենրիկոս Ութմոնդին կոմս Թուտորին որ Լանքասթրեան ցեղից էր։

Հոիքարդոս Գ. պատերազմելով Հենրիկոսին դէմ մեծ քաջութեամբ ցոյց տուաւ, բայց ամէն կողմից մնալով առանց օգնութեան՝ շուտով յաղթուեց և սպանուեց։ Այնուհետև Անգղիայում Թուտոր անուանեալ նոր տունը թագաւորեց, և առաջին թագաւորը եղաւ Հենրիկոս Է. (1485)։

Կարմիր և սպիտակ վարդի պատերազմի ժամանակ շատ իշխաններ կոտորուել էին, շատ դեղեր և քաղաքներ աւերակ էին դարձել, և Անգղիային շատ ժամանակ հարկաւոր էր որ իւր առաջին դրութիւնը ստանար։ Անգղիոյ դրացի երկիրները՝ Իռլանդացիք և հիւսիսային Սկովտիացիք անդադար կռուում էին Անգղիացւոց հետ, և նոքա կաշկանդեին որ նրանց առնեն իրենց իշխանութեան ներքոյ։ Իռլանդայում և Սկովտիայում Պէտք ցեղը կընակէր։

Սկովտիացիք իրենց քաջ լեռնականներով կարողացան անկախութիւն ձեռք բերել, իսկ Իռլանդան փոքր մասեր բաժնուած լինելով՝ շուտով ընկաւ Անգղիացւոց իշխանութեան ներքոյ։ Անգղիացիք նոյնպէս նուաճեցին Ուելսը Անգղիոյ արևմտեան լեռնային մասը այն օրից թագաժառանգը սկսաւ կոչուել "Ուելսի Ա-ելչ (ինչպէս Գաղղիայում ժառանգը Տօֆին կկոչուէր։) Պիրենեան թերակղզոյն Ը. դարում տիրել էին Մաւրիտանացիք. միայն հիւսիսային կողմը Աստուրեան լեռներում Գ-

սիրոթիները պահեցին իրենց անկախութիւնը։ Բայց յայնմանէ մեծն Պարոլոս մահմետականներից յաղթութեամբ առաւ թերակղզոյն հիւսիսային արևելեան մասը։ Այն երկրի իշխանները Աստուրեան Վեսիրոթաց ժառանգները միշտ կպատերազմէին Մաւրիտանացւոց կամ Մավրիների և առ սակաւ սակաւ յետ կառնէին նրանցից քաղաքներ և գիւղեր։ Այն պատերազմաց ժամանակ Սպանիացւոց մէջ մեսաւ քաջութեան հոգին, բորբոքեց հայրենասիրութիւն, և խիստ և մինչև անդամ կոյր հետևութեան կաթոլիկութեան։ Բայց Մաւրիտանացիք որ առաջ շատ քաջ էին՝ այժմ պարապելով երկրագործութեամբ և վաճառականութեամբ՝ բոլորովին կորցրել էին իրենց քաջութիւնը։ Մի և նոյն ժամանակ շատ կուսակալներ ապստամբեցան խալիֆաների դէմ, և ազատութիւն ձեռք բերին, այսպիսով սորանց խալիֆայութիւնը շատ մասեր բաժանուեց։ Յ.Ի. դարում Վրիստոնեայք արդէն կարողացան թերակղզոյն ամբողջ հիւսիսային մասին տիրել, և կազմեցին քանի մի պետութիւնք նրանցից ղլխաւորն էր Վասիլեան (կնշանակէ երկիր ամրոցաց առ սակաւ սակաւ յետ մղելով տաճկաց դէպ ի հարաւ, Վրիստոնեայք ամէն մի նուաճեալ քայլում ամրոց կշինէին։) Վասիլեայից դէպ ի արևելք էր Արագոնեան, իսկ Պիրենեան լերանց վերայ կազմուեց Նաւարրայի թագաւորութիւնը։ Մաւրիտանացւոց հետ ամենասաստիկ կպատերազմէին Վասիլացիք։ Նրանց ապետներից երևելին էր Ռոդրիկէս Տիասը, նա և Սիդ

կոչուեցաւ (այսինքն իշխան կամ յաղթական)։ Ընդ-
ունեցաւ քաջութիւնները վերջը Սպանիայոյ բանտասեղ-
ծիչ առարկայ դարձաւ։

ԺԵ. դարում Երազանիոյ թագաւոր Ֆերդինանդ
Ե. կաթոլիկը ամուսնացաւ Կաստիլիոյ ժառանգուհի
Իզաբելլայի հետ։ Այսպէս երկու հզօր քրիստոնեայ
տէրութիւնները միացան և կազմեցին Սպանիոյ թա-
գաւորութիւնը։ Ֆերդինանդ կաթոլիկը մնադրուեց
ջնջել թերակղզւոյն վերայ եղած Մաւրիտանացւոց
վերջին պետութիւնը այն է Գրանատայի խալիֆայ-
ութիւնը։ Դա քաղաքներուն բոլորին տիրից, յե-
տոյ պաշարեց Գրանատան։ Այն մեծ և հոյակապ
քաղաքը ունէր 200,000 բնակիչ։ Դորա պարսպաց
վերայ կային մօտ 1000 աշտարակներ, Մաւրիտա-
նացւոց քաջ ասպետները ժողովել էին այն տեղ
քրիստոնէիցմէ ազատելու այն քաղաքը։ Մաւրիտա-
նացիք նուազելով, և այլ ևս ոչ մի կողմից օգնու-
թիւն և պաշար չստանալով՝ պարտաւորուեցան
անձնատուր լինել (1492 թ)։ Ֆերդինանդը իւր
ժամանակակից Լուդովիկոսի ԺԱ. նման չէր դրժ-
ուարանում, ամենայն խիստ հնարքներով աշխա-
տեց Սպանիայում հաստատել հզօր թագաւորա-
կան իշխանութիւն։ Առաջ այն տեղ թագաւորա-
կան իշխանութիւնը շատ նուազ էր, հոգևորականք,
ազնուականք, և քաղաքացիք իրենցից պատգամա-
ւոր կընտրէին, և նրանց ժողովը կկոչուէր Գորթէս,
և թագաւորը առանց քորթէսի համաձայնութեան
ոչինչ գործ կարող չէր հոգալ։ Ֆերդինանդը կարո-

դացաւ քաղաքացւոց դրաւել, և նրանց օգնութեամբ նուաճել պարսնաց, և մի և նոյն ժամանակ անհնազանդ պարսնաց կկախէր և նրանց ամրոցները անխընայ կքանդէր: Ընտահման իշխանութիւն հաստատելու ժամանակնա մեծ օգուտ տեսաւ հոգևորական կրօնաքննութիւնից: Սպանիոյ բնակչաց մեկ մասը կբաղկանար Հրէաներից և նուաճեալ Մաւրիտանացիներից, նրանց հաւատոյ մասին կհալածէին և նոքա ստիպուած էին կամ հեռանալ Սպանիայից, կամ ընդունել քրիստոնէական հաւատքը, շատերը թէպէտ առ երես կընդունէին քրիստոնէութիւն, բայց դարձեալ գաղտնի իրենց նախկին դաւանութեան վերայ հաստատ կմնային: Ա՛ման այնորիկ պապը Փերդինանդի խնդրանօք հաստատեց Ինկվիզիցիա (կրօնաքննութիւն) Սպանիայում որը կհալածէր հերետիկոսաց և մոլորեալներին: Փերդինանդը այն կրօնաքննութիւնից մեծ օգուտ քաղեց, իրեն թշնամեաց կդատապարտէր և կայրէին: Կրօնաքննութեան ատեանը ամենայն տեղ լրտեսներ ունէր, և մեծ սարսափ տարածեց ժողովրդեան վերայ: Այն մարդուն որոյ վերայ կարծիք կունենային թէ նա մոլորուած է՝ կսկսէին տանջել, նեղել և ի վերջոյ կայրէին, և նրա հարստութիւնը կսեպհականէին արքունական գանձարանին. և այն պատիժը կ'կոչուէր ա—նը—պա — ֆէ, որ էր խարուկի վերայ այրել: Աբ-թօ — տաֆէ պատիժը շատ հանդիսով կ'կատարուէր. այնտեղ ներկայ կլինէր ինքը թագաւորը, իշխանները, և մեծ բազմութիւն ժողովրդեան: Սպա-

նիոյ ժողովուրդը սատիկ կրօնամոլ լինելով՝ ոչ ինչ ղդացմունք չունէին այդ պատժոյ ժամանակ. վասն զի նոքա այդ պատիժը կստանային հերետիկոսութեան համար։ Հրէայք և Մաւրիտանացիք կը-կազմէին ժողովրդեան ամենաշխատաւոր մասը, և Ինկվիզիցիան հալածելով նրանց՝ Սպանիային մեծ և անտանելի հարուած տուաւ։

Սպանիայի մօտ կազմուեց մի նոր թագաւորութիւն Փորթուկալի։ Դա կազմուեց մի փոքրիկ կոմսութիւնից որ առաջ կախու�ունէր Կաստիլիայից։ Էլիոնս Ա. մեծացրեց այն կոմսութիւնը յաղթութեամբ միացնելով Մաւրիտանացւոց հողերը, վերջը բաժանուեց Կաստիլիայից, և ընդունեց թագաւորական տիտղոս ԺԲ. դարում։ Վերջը Փորթուկալացիք նեղութիւն կրելով Սպանիացիներից ըսկսան ծովային երկրակալութիւններ անել, որով բաւական երկիրներ ձեռք բերին։

Գերմանիան Հապսպուրգեանց ժամանակ, Իսպանիա և Սկանդինաւիա։

Երբ Հոհենշտաուֆենաց տունը վերցաւ, սկսաւ դէջոց պարապոյ (անիշխանութիւն) 1254 – 1273 թ։ Իշխանաց մի մասը ընտրեց թագաւոր Ընդղեոյ արքայազուն Ռիչարտին, իսկ միւս մասը Կաստիլիոյ թագաւոր Էլիոնսին Ժ. բայց ինչպէս առաջինը՝ նոյնպէս և միւսը բաւականացան միայն թագաւորական տիտղոսով, և չեկան Գերմանիա։ Այն ժամա-

նակը շատ խառն միջոց էր Գերմանիոյ համար։ Մին. չև փոքր իշխանները անդամ ոչինչ իշխանութիւն չէին ճանաչէր, և այս եղաւ պատճառ որ Գերմանիան շատ մասանց վերայ բաժանուեց, և անկախ պետութիւնք կազմեցին, որք էին՝ Դուքսեր, Կոմսեր, նահանգի կոմսեր, գաւառի կոմսեր, Եպիսկոպոսունք, պարոններ, և աղատ կամ կայսերական կոչուած քաղաքներ (այսինքն այնպիսի քաղաքներ՝ որք կախու�ունէին միայն կայսերից)։ Պարոնները և ասպետները յայտնի աւազակութեամբ կպարապէին, ճանապարհաց վերայ կողոպտելով վաճառականաց, կգերէին ճանապարհորդաց և մեծ դումար առնելով կազատէին, և անպատիժ կմնային իրենց ամրոցներում՝ որք լերանց վերայ կլինէին, ճանապարհի կամ գետի մօտ՝ ուր նաւագնացութիւն կլինէր։ Ձ՝դիտէին թէ որ մարդուց կարող են արդարութիւն պահանջել։ Այս տեսակ անկարգութեանց առաջն առնելու համար քանի մի բարեսիրա անձինք գաղտնի կերպով մի դատարան կազմեցին, և կոչուեց գաղտնի դատարան և դաշնեւ դպրութեան։

Այս բարեմիտ անձինք այն խորհրդով կազմեցին որ չարագործ մարդկանց պատժին, բայց նոքա չկարողանալով յայտնի ներգործել, գաղտնի կերպով կժողովէին ծպտեալ կերպարանօք կամ դիմակ երեսին առած անտառում և այն տեղ կքննէին գործ և վճիռ կտային։ Եւ ում մահու կդատապարտէին, նա փոքր միջոցում կսպանուէր գաղտնի դահճից։ Այս գաղտնի դատարանը Վեստֆալիայում սկսուեց

և այն տեղից ամբողջ Գերմանիա տարածուեց, և մօտ երկու տարի շարունակուեց, բայց վերջը դատաւորները սկսան արտաքոյ իրենց նպատակից դուրս գալ, և իրենց անձնական թշնամեաց դէմ մեղանչել։ Այդ միջոցում էլ շատ քաղաքներ սկսան միմեանց հետ դաշն կապել, որ հասարակաց ծախիւք պահպանեն զօրք և նաւատորմիղ, որով կարողանային ազատուել աւազակներից և իշխանաց յարձակմունքից։ Այն դաշնակցից գլխաւորն էր Հանսեան դաշն՝ հիւսիսային Գերմանիայում։ Այս դաշնի գլխաւոր քաղաքներն էին Լիւբէք, Համպուրգ, և Պրեմէն։ Հանսեան քաղաքները շուտով հարստացան և համարեա Հիւսիսային և Պալթիկ ծովերի վաճառականութիւնը իրենց ձեռքին էր, այն դաշն մինչև ԺԵ. դարը ծաղկեալ դրութեան մէջն էր, մինչև որ նոցա վաճառականութեան թշնամի Հոլանդացիք և Անգլեացիք առաւել ծաղկեցան վաճառականութեան մէջ։ Այսպիսի դաշինք կապել էին նաև Հռենոսի և Շուապիոյ քաղաքները։

Պարապ միջոցի խռովութիւնները մեծ նեղութիւն տուին իշխանաց։ Նոքա վճռեցին մի կայսր ընտրել իրենցմէ, բայց ոչ քաջ իշխաններից (որ նա իրենց ազատութեան վտանգաւոր չլինի)։ ընտրութիւնը եղաւ և վիճակ ընկաւ Ռուդոլֆ Հապսպուրգեն (1273 — 1391)։ Նա ունէր փոքրիկ կալուածներ Զուրիցերիայում և Էլզասում, և երևելի էր իւր քաջութեամբ, բարեպաշտութեամբ և հաստատ բնաւորութեամբ։ Ռուդոլֆի վերայ ինչ

յոյս որ ունէր ժողովուրդը՝ կատարեց։ Նա հանգիստ թողաց Իտալիան, որոյ վերայ մեծ նեղութիւն կրեցին իրեն նախորդները. և ինքը միշտ կաքնէր որ խաղաղութեան և հանդարտութեան մէջ պահպանէ Գերմանիան։ Ընաչառ և խիստ դատաւոր էր. կը պաշտպանէր հարստահարելոց, զինուք կհալածէր ապստամբ՝ որք միշտ աւազակութեամբ կպարապէին, և քանդեց շատ ամրոցներ։ Այս միջոց ամենից հզօր Պոհեմիոյ թագաւոր Օթթոնը չէր կամենում Ռուդոլֆից կախումն ունենայ, և սկսաւ, նը բա հետ պատերազմել, բայց յաղթուեց։ Այն յաղթութեամբ նա առաւ Պոհեմիացոցմէ Աւստրիա, և տուաւ իւր որդոց։ Որանից սկսաւ Հապսպուրգեան տան հաստատութիւնը։ Ռուդոլֆը և նորա յաջորդները այն քաղաքականութեան կհետևէին, ինչպէս և Բաբիլեթեանք Գաղղիայում, նոքա իրենց հողերը վասալաց չէին բաժանի այլ ընդ հակառակն կաշխատէին որ իրենց հողերը շատացնեն։ Ռուդոլֆի որդին Էլպրեխտ կամ Ալբերտ Ա. կայսր խիստ և ժլատ մարդ էր, և նորա դէմ ապստամբեցան քաջ Զուիցերացիք։ Զուիցերիան ի հնումն Հելուետիա կկոչուէր, և անդ կբնակէին աղքատ՝ բայց քաջ հովուական ազգ (Ալպեան ցեղից)։ Մէջեն դարերում Հելուետեան Գերմանիոյ կայսերութեան մէկ մասն էր, և այն տեղ քանի մի անկախ մասանց մէջ կային դուքսերի և կոմսերի կալուածատեղեր։ Նրանք անտառային (նահանգները) Շուից, Ուրի և Ունթերվալտին՝ Զուիցերիոյ Ալպեան լերանց մէջ տեղն են,

նկարագրական և դեղեցկատեսիլ Փիրվայշտեսեան լճի չորս կողմը: Այս նահանգաց լեռնականները հընուց պահպանել են իրենց ազատութիւնը, և միայն Ռուսաստանի Հապսբուրգի հովանաւորութեան ներքոյ կմնային. որոյ հողերը հիւսիսային Օուիցերիոյ մասն էին: Բայց Ալբերտը մտադրուեց խստառնուաճել այն երեք նահանգները և նշանակեց այն տեղ երկու խիստ կուսակալ կամ Գոդոտ: Գեսլերին և Հանդին Պերդին, որք կնեղէին ժողովրդոց ծանր հարկերով և սաստիկ պատիժներով: Նոքա զայրացած՝ խորհուրդ կաղմեցին որ ապստամբին: Նշանակեալ օրը իւրաքանչիւր նահանգից 10 մարդ եկան Ռութլի դաշտը որ մասն էր լճից, և այն տեղ երդմնական դաշն կապեցին երեք նահանգաց մէջ, որ միացեալ զօրութեամբ ազատութիւն ձեռք բերին և ազատուեն կուսակալաց բռնութիւնից: Ժողովրդեան աւանդութիւնը այսպէս կպատմէ Օուիցերիոյ ազատութիւնը, թէ մի կուսակալ Գեսլերը հրամայեց որ Ալթորֆ քաղաքի հրապարակի մէջ կանգնացնեն մի ձող, և նորա վերայ կախեն Աւստրիոյ դուքսի գլխարկը, և իւրաքանչիւր անցաւոր պարտական էր խոնարհել նրա առաջ: Եր մի ասարդ գիւղացի Գուլիելմոս կամ Վիլհելմ Թելը, որ երևելի ազեղնաւոր էր, անցաւ և չը խոնարհեց: Նրան բռնեցին և Գեսլերը իրրև պատիժ հրամայեց որ նա ստիպեամբ վար ձգի իւր որդւոյ գլխոյ վերայ դրած խնձորը: Վիլհելմ Թելը յաջողութեամբ վերջացրուց այն պատիժը, և այն տեղ ասաց հրապարակաւ այսպէս, եթէ այս նետը սպանէր

իմ որդոյն միւս նեռը պատրաստ ունէի Կեսլերի համար։ Այս բանի համար Կեսլերը հրամայեց որ նը-բան բանտարկեն, և իրան հետ տարան նրան Պիւստ-նախ ամրոցը, որ Փիրվելշտեռ լճի միւս եղերաց մօտ էր։ Լիճը անցնելու ժամանակ մրրիկ բարձրացաւ Վիլհելմ Թելին ազատեցին շղթաներից, և նա հը-մուտ նաւավար գոլով, նրան յանձնեցին նաւակի կառաւարութիւնը։ Վիլհելմը յաջող միջոց գը-տնելով նաւակը մօտեցրուց եղերքին, ինքը թռաւ ցա-մաքի վերայ և թաք կացաւ լերանց մէջ։ Վերջը նա փնտռելով Կեսլերին ճանապարհին սպանեց լերանց մէջ։ Այս լուրը լսելով մեծ ապստամբութիւն եղաւ։ Պաղանդի օրը 1308 թուին Ղուիցերայի գիւղացիք անասուններից և թռչուններից պարգև բերին միւս կուսակալ Հանտինբերգին. նրանց հրաման տուին որ իւրեանց անասուններով մտնեն ամրոցը։ Յարմար միջոց գտնելով գիւղացիք հանեցին իրենց սրերը, զինուորաց կոտորեցին և ստիպեցին կուսակալին որ իրենց երկրից հեռանայ։ Ալբերտ Ա. կպատրաստուէր որ խիստ կերպիւ Ղուիցերիայից վրէժն առնու, և այն միջոց նա սպանուեց իւր եղբօր ձեռամբ, որուն նա զրկելէր իւր հայրենական ժառանգութիւնից։ Սակայն Ալբերտի որդիքը անուշադիր չգտնուե-ցան դէպի Ղուիցերացիք։ Երթն տարի անցնելուն պէս Աւստրիոյ հզօր զօրքը եկաւ Ղուիցերի, ան-հնազանդ հպատակաց պատժելու ազազաւ։ Ղուի-ցերացիք նրանց հանդիպեցան Մորգարթենի մօտ փոքրիկ դաշտում։ Նրանց մի մասը բարձրացաւ լե-

բանց վերայ, և սկսան այն տեղից մեծամեծ քարեր թափել. որով ասպետաց մեծ վնաս հասցրին, իսկ միւս մասը չկարաց թշնամեաց վերայ և մեծ ջարդ տուին նրանց: Յետ այնորիկ միւս նահանգներն (Լուչերնա, Յուրիխ և Պեռն) միացան անտառային կոչուած նահանգաց հետ, և այսպէս կազմեցին մի նոր պետութիւն Օուիցերիոյ հասարակապետութեան (դաշնակցութիւն) անուամբ: Օուիցերացիք դարձեալ բաւական ժամանակ կպատերազմէին Հապսպուրկեանց դէմ: Ամենամեծ յաղթութիւնը եղաւ Սեմպախի մօտ: Այն տեղ Օուիցերացւոց մէկ խումբը պատերազմեց Աւստրիոյ դուքս Լեոպոլտի դէմ, որ իրեն հետ բերելէր քաջ ասպետաց: Վատ զինուորուած լեռնականները չկարողանալով ասպետաց կարգաց մէջ մտնել մի գիւղացի Արնոլդ Վինկելրիդը բռնեց քանի մի նիզակներ թշնամեաց, կոխեց իւր սրտին մէջ և սրանով ճանապարհ բացաւ իրեն հայրենակից լեռնականաց որ մտնեն ասպետաց կարգաց մէջ որով կարողացան մեծ յաղթութիւն առնել: Ինքը քաջն Լեոպոլդը սպանուեց այս պատերազմում (1386 թ.): Ինսնսուն տարի անցնելով՝ Օուիցերացիք հեռացրին քաջ Պուրկունդիոյ դուքս Կարոլոս վստահին և այն օրից նոքա անյաղթ զօրականաց պատիւը ընդունեցին այնպէս որ դրացի Գերմանիոյ և Իտալիոյ թագաւորները նրանցից զօրք կվարձէին և Օուիցերացի թիկնապահներ կունենային իրենց մօտ: Ալբերտ առաջնոյն յետոյ Գերմանիոյ իշխանները քանի մի կայսր ընդունեցին ոչ թէ Հապսպուրկնե-

րից, այլ ուրիշ ցեղից և մեծաւ մասամբ Լուքսեմ-պուրգեան տանից, որ այն միջոցները Պոհեմիոյ թագաւորութեան տիրել էին։ Այս տանից ամենից երևելին է Կարոլոս դ. (1347—1378)

Կարոլոսը շատ կաքնէր և կաշխատէր իւր Պոհեմիոյ թագաւորութեան ծաղկելու վերայ և իւր մայրաքաղաք Փրակայում առաջին Գերմանական համալսարան հիմնեց. Կարոլոս կարգ դրաւ որոյ համաձայն կայսրը պէտք էր ընտրուել։ Այն օրից կայսր կընտրուէր Գերմանիոյ իշխանների ժողովքով, և այն էլ եօթը գլխաւոր իշխանների ձեռքով, որոց Գիւրֆիրստ (պալատական) կանուանէին և չորս աշխարհական իշխաններ էին, Պոհեմիոյ թագաւորը, Հռենոսի կոմը, Սաքսոնիոյ դուքսը և Պրանտենպուրգի գաւառապետ, իսկ երեքն էին հոգևորականք, Մոդունտիոյ, Կոլոնիոյ, և Տրենիրի Եպիսկոպոսունք)։ Ընտրութիւնը կլինէր Ֆրանքֆորթ քաղաքում իսկ թագադրութիւնը Աքուեսկրանա (Ախէն) քաղաքում։ Այս օրէնքը Կարոլոսի Դ. անուանուից ոսկեայ կնիք պատճառ որ այն գրութեան վերայ կախած էր թելից ոսկեայ կնիք։

Կարոլոսի կրտսեր որդւոյ Սիգիսմունդի (1410—1437 Թ.). թագաւորութիւնը անուանիէ մեծ բաժանմամբ կաթոլիկաց եկեղեցւոյ և Հուսի պատերազմներով։ Կաթոլիկաց եկեղեցւոյ բաժանման գրբ-խաւոր պատճառն էր պապերի Աւենիոն քաղաքում տեղափոխուիլը։ Պապը Գրիգոր ԺԱ. Հռոմայեցւոց խնդիրքը յարգելով վերադարձաւ Հռոմ։

Նորա յաջորդը նոյնպէս Հռոմում մնաց իսկ նորա հակառակ կարդինալներն ընտրեցին ուրիշ պապ և նրա հետ միասին գնացին Աւենիոն քաղաքը։ Այս շփոթութեան առաջն առնելու աղագաւ ժողով կազմուեց (Փիզա քաղաքում) ուր նոր պապ ընտրեցին, և նախկին ընտրուած երկու պապերին խստաւ հրաժարացրին իրենց պաշտօնից։ Միայն թէ նոքա չէին յօժարում իրենց կոչումն թողուլ, և այսպէս յանկարծ երեք պապեր ունեցան նոքա, որոնք միմեանց կբանադրէին։ Այս բաժանմունքը եղաւ պատճառ որ պապերի նշանակութիւնը և փառքը սկսաւ նուազել։

Եւ եղան մարդիկ որք կբողոքէին պապերի անսխալականութեան դէմ։ Բարողիչներից երևելի էր Յովհաննէս Հուսը։

Յովհաննէս Հուսը Փրակայի համալսարանում Աստուածաբանութեան վարժապետ էր, երևելի էր իւր գիտութեամբ և քրիստոնէավայել հեղութեամբ։ Հուսը զինուորուեց պապերի չարադործութեանց և նոցա հոգևորականաց անպարկեշտ կենցաղավարութեան դէմ. մի և նոյն ժամանակ պահանջեց որ աշխարհականք սրբութիւն առնելու ժամանակ ոչ թէ միայն մարմինը ճաշակեն այլ և գինին (այս ինքն արիւնը) ընդունեն. նա և կպահանջէր որ եկեղեցական երգեցողութիւնը ոչ թէ լատիներէն լեզուաւ լինէր, այլ ժողովրդական։ Փրակայի համալսարանում Հուսի կողմը պահեցին Ջեհ, այս ինքն պոհեմացի վարժապետները և ուսանողները։ Գերմանացիք ընդ-

դիմացան նորա վարդապետութիւնը, և մօտ 5000 ուսանողք իրենց վարժապետաց հետ միասին հեռացան Փրակայից և հիմնեցին քանի մի նոր համալսարաններ, և առաջինն էր Լէյպցիք քաղաքում (Սաքսոնիայում). Կաթոլիկ Եկեղեցւոյ մէջ եղած անկարգութեանց և դատարկութեանց առաջ փակելու համար Սիգիսմունտ կայսեր յօժարութեամբ ժողով դումարեց Կոստանդիա քաղաքում: Բմենայն կողմից ժողովեցան Կաթոլիկաց հոգևորականք, քաղաքականք և պաշտօնականք, ուստիական Ճառուածաբանք, ասպետք, և քաղաքներից ընտրուած պատգամաւորք, այսպիսի հանդիսաւոր և փառաւոր ժողովք երբէք եղած չէր արևմտեան Եւրոպայում:

Կոստանդիան ժողովը չորս տարի շարունակուեց (1414 — 1418): և վերջը վճռեցին այնպէս որ երեք պապերին էլ հրաժարեցրին և նրանց տեղը ընտրեցին մի նոր պապ (Մարտինոս Ե). նոյնպէս քննեցին Կաթոլիկաց քանի մի հոգևորականաց անկարգութիւնները և վերջը իրենց ուշադրութիւնները դարձրին Հուսի հերետիկոսութեան վրայ: Հուսին ժողով հրաւիրեցին: Պայմանը խոստացաւ նրան որ անվտանգ պահպանէ, բայց ժողովը չընդունեց այն խոստմունքը, վասն զի հերետիկոսին էր խոստացել: Հուսը ժողովքում սկսաւ պաշտպանել իրեն վարդապետութիւնը: Հոգևոր դատաւորները նրան դատապարտեցին, և նրա շարադրութիւնները այրեցին: Հուսին տարան ժողովը հոգևորական հանդերձը առին,

գլխին գրին թղթեայ գլխարկ՝ երեք սատանայ վրէն նկարուած, և նրա վրայ գրուած կար Հերետիկոս, յետ այնորիկ նրան յանձնեցին քաղաքական իշխանութեան որ նոքա այնուհետև իբրև հերետիկոսի դատեն, նորան խարուկի վերայ բարձրացրին, սիւնից կապեցին, չորս կողմը փայտ դիզեցին, վրան էլ յարդ, մինչև ամբողջ ծածկուեց Հուսը: Հուսը քաջութեամբ ընդունեց այն մահը և մինչև վերջին շունչը սաղմոսերգութեամբ պարապեց (1415 թ). մի և նոյն վիճակին հանդիպեցաւ Հուսի բարեկամ հետևող պոհեմիացի ասպետ Հերոնիմոս Փրագացին: Երբ Հուսի մահուան լուրը տարածուեց նորա բարեկամաց մէջ, մեծ շփոթմունք ընկաւ Պոհեմիայում: Բաց յայնմանէ Պոհեմիացիք Գերմանացւոց նաև այն պատճառաւ կատէին որ նոքա ամենայն կերպով կաշխատէին որ Գերմանացւոց սովորութիւնները և ոգին մտցնեն Պոհեմացւոց մէջ: Պոհեմացիք կատիպէին և կպահանջէին որ իրենք սուրբ մարմնով և արեամբ ճաշակեն այլ ոչ միայն մարմնով (այսինքն նշխարով). և նոքա իրենցմէ մերժեցին Սիգիսմունդին, և այլ ևս իբրև թագաւոր չէին ընդունում: Հուսեանց առաջնորդն էր քաջասիրտ Ժերունին Դն Ժիժքա: Սիգիսմունդը ի զուր կաշխատէր սրով նուաճել, և պատերն էլ նոյն ժամանակ Հուսեանց դէմ խաչակրաց պատերազմ կառաջարկէին: Ժիժքան շատ հանճարեղ զօրավար էր, և Պոհեմացիք սաստիկ քաջալերուած էին. պատճառ որ նոքա իրենց կրօնի հակառակ թշնամեաց դէմ

կպատերազմէին, և նոցա նպատակն էր կրօնական ազատութիւն և քաղաքական անկախութիւն ձեռք բերել: Երանց դէմ Գերմանացիք ոչինչ յաղթութիւն չկարողացան անել, քանի մի անգամ ջարդուեցան ցիր և ցան եղած կփախչէին: Յիժքան ամբողջ Պոհեմիան պատեց, անխնայ կոտորեց կաթոլիկների վարդապետաց, և սկսաւ քանդել վանքերը, եկեղեցիք, և մինչև անգամ քաղաքներ ուր կաթոլիկներ կբնակէին: Այն պատերազմներում մի աչքից զրկուեց. բայց դարձեալ յաղթութիւններ կգործէր: Սարսափելի ծերունին մեռաւ մի պատերազմում: Երանից յետոյ Հուսեանք քանի մի յաջող պատերազմ ունեցան և Գերմանական երկիրներում, բայց նոցա քաջութիւնն էլ սկսաւ նուազել, Հուսեանց մէջ էլ անհամաձայնութիւն և խռովութիւն ընկաւ: Սրանից օգուտ քաղեց Միգիսմունդը, նա Հուսեանց մի մասին կողմն անցաւ, և միւս մասին նուաճեց: Յետ Հուսեանք վերջապէս ստացան իրենց պահանջմունքը այն է կհայրդուէին հացիւ և գինեաւ և կ.քարոզէին ժողովրդեան Պոհեմական լեզուաւ (1433 թ.) Միգիսմունդի մահուանէն զկնի Լուքսեմպուրգեան տունը վերցաւ, Գերմանիոյ աթոռը կրկին անցաւ, Հապսպուրգաց և կայսր ընտրուեց Աւստրիոյ Ալբերտը Գ: Ալբերտը թագաւորուեց նոյնպէս Պոհեմիոյ և Հունգարիոյ թագերով: Ալբերտի ժառանգ Փրիդերիկոսը Գ. փոքր միջոց թագաւորեց (1440 — 1493.) և նա կսիրէր հանդիստ անդրադ կեանք, որովհետև նեղքին անկարգութեանց և խռովու-

թեանց։ Պոհեմացիք և Հունգարացիք խոպան հե-
ռացան նրա իշխանութիւնից, և նա անհոգութեամբ
կնայիր Տաճկաց յարձակութեան և Թիւրանդիսնի առ-
նելուն վերայ։ Գրիգորիկոսի ժառանգը Մաքսի-
միլիանոս Ա. խաղաղութիւն մտցրեց Գերմանիայ-
ում, և էր շատ գործունեայ և առաջադէմ մարդ։
Նա ամուսնացաւ Կարոլոսի Մարիամ դստեր հետ,
և իւր թագաւորութեան հետ միացրուց Մարիամի
նոր հողերը, այսինքն Նիսերլանդա երկիրը։ Կայսե-
րական ժողովոյ անդամոց հետ համաձայնելով՝ կաղ-
մեց բարձրագոյն կայսերական դատարան, ուր կը քն-
նէին Գերմանիոյ իշխանաց, և կալուածատերաց վէ-
ճերը։ Ամբողջ կայսերութիւնը բաժանեց տասն մաս
և իւրաքանչիւր մասին մէջ կար նոյնպէս առանձին
դատարան որոյ դատաւորները և պաշտօնակալք օգ-
նութիւն կտային որ շուտով բարձրագոյն կայսերա-
կան դատարանի վճիռները կատարուին։ Այս դա-
տարանի հիմնելու նպատակն այն էր որ Գերմանիոյ
իշխանաց մէջ խաղաղութիւն լինի, որ նրանց մէջ
հողերի մասին առաջ մեծամեծ անբաւականու-
թիւններ կծագէր։

Իտալիան հետ ղհետէ սկսաւ մանր տէրութեանց
վերայ բաժանուել։ Հարաւային Իտալիայում Նա-
փոլիի թագաւորութեան մէջ թագաւորական կառա-
վարութիւն էր։ Հիւսիսային Իտալիայում մեծաւ
մասամբ ազատ քաղաքներ էին, որոնք հանրապետ-
ական կառավարութիւն ունէին։ Այն քաղաք-
ներից առաջին տեղն ունէին՝ Միլան, Ֆլոռենսիա և Փլ-

ղենցիա։ Ինչպէս տեսանք առաջ, Միլան երբեմն էր Լոմբարտիոյ դաշնակից քաղաքաց գլխաւորը, Ֆրիդերիկոս Պարպարոսայի դէմ ունեցած ապստամբութեան ժամանակ։ Վերջը նա Գերմանիոյ կայսերներից անկախ քաղաք դարձաւ, կազմեցին ազնուապետական հասարակապետութիւն, որոյ կառավարութիւնը ազնուականաց ձեռքին էր։ ԺԳ. դարու վերջերում Միլանում մի հարուստ տուն Վիսքոնթի, այս կառավարութեան գլխաւոր իշխանութիւնը ձեռք ձգեց, սաստցաւ դուքս տիտղոսը և նուաճեց Լոմբարտիոյ մեծ մասը։ ԺԵ. դարում Միլանի դքսութիւնը Սֆորցա ցեղին անցաւ։ Երևելի բան է այս տան ծագումը։ Առաջ Իտալիոյ քաղաքները իրենց ապահովութեան և ազատութեան համար իրենց քաղաքացիներից զօրք կկազմէին, բայց հետզհետէ վաճառականութիւնը ծաղկելով և հարստանալով այլ ևս զինուորութիւն չէին ընդունում և քաղաքները ստիպուեցան վարձու զօրք պահելու։ Իտալիայում շատ մարդիկ ժողովեցան որ զինուոր մնանեն, զօրապետները զօրք կազմելով միշտ վարձով կծառայէին կամ թագաւորութեանց կամ հասարակապետութեանց։ Այս տեսակ զօրապետները կոչուեցան Առաջնորդք (քոնտոթիէր)։ Քոնտոթիէրները փոքրիկ պատերազմներ ունենալով ժամանակին փորձած քաջ և հնարագէտ զօրապետներ էին դառնում և նոցա զօրքը վերջը օրինակ դարձաւ Եւրոպայի միւս ազգաց համար։ Կ'պատմեն թէ երբ այս զօրքից մի դունդ փայլուն հանդերձով՝ նուա

զարդաններով և ծաղանեալ դրօշակներով կանգնէր մի գիւղի միջով, մի գիւղացի Աթենթօլ անուամբ, հիանալով նրանց կարգաւորութեան վրայ՝ ինքն էլ ընդունուեց այն դնդին մէջ։ Իւր աննման քաջութեան համար նրան անուանեցին Սֆորցա (այսինքն ոյժ, զօրա-ին) և վերջը նա իւր հանճարով այնպէս բարձրացաւ որ նրան մեծ սպարապետ նշանակեցին։ Նորա որդին Ֆրանչիսքոյ մնաց զինուորական ծառայութիւն Միլանի Վիսքոնտի դքսին մօտ և ամուսնացաւ նորա դստեր հետ, երբ Վիսքոնտին անժառանգ մեռաւ, Ֆրանչիսքոս Սֆորցան նուաճեց Միլանու աղնուականաց, և ինքը եղաւ այն նոր տան ցեղապետ։— Այդ միջոցներում համարեա թէ Իտալիոյ բոլոր քաղաքներում հակառակ կուսակցութիւններ կային, Գայսերաց կուսակիցները պապերի կուսակցաց դէմ կմաքառէին, այսինքն Գուէլֆեանք Գիպելինաց դէմ, ժողովրդեան սատրին կարգը միշտ կըմաքառէր և կապստամբէր հարուստ և երևելի իշխանաց դէմ քանի մի պատուանդիր անձինք մեծ օգուտ կարողացան տեսնել այն ներքին խռովութիւններից. քօնտօթիէրաց օգնութեամբ իշխանութիւն ձեռք կբերէին Յունաց բռնակալաց նման. շատ անգամ էլ իրենք Քօնտօթիէրներն էին բռնակալ լինում։

Թոսքանայի հասարակապետութեան մէջ գլխաւոր քաղաքն էր Փլորենտիա կամ Ֆլօրէնցիա։ Այս քաղաքը յաջող պատերազմներով ընդարձակեց իրեն տէրութիւնը, և նրան հպատակեցան Թոսքա-

նայի միւս քաղաքները։ Այն հասարակապետութեան մէջ նոյնպէս անդադար խռովութիւն կշարունակուէր և իշխանութիւնը կանցնէր երբեմն ազնուականաց ձեռքը, երբեմն ժողովրդականաց։ ԺԵ. դարում մի հարուստ լոմբարդոյ՝ Մեդիչի անունը՝ կարողացաւ ժողովրդեան համակրութիւնը և սէրը գրաւել իւր առատաձեռնութեամբ և խոհեմ բնաւորութեամբ։ Այն տան գլխաւորն էր Կոզիմա Մեդիչին որ վերջը եղև առաջին անձը իւր իշխանութեամբ հասարակապետութեան մէջ։ Նա առաւել մեծ համբաւ ստացաւ՝ երբ սկսաւ պաշտպանել և օժանդակել ամենայն կերպիւ որ ծագկի արհեստը, նա կհրաւիրէր երևելի ճարտարապետաց և ուսումնական անձանց և մեծ գումար ծախս արաւ քաղաքի վերայ, կառուցանելով հոյակապ շինութիւններ. շինել տուաւ նաև երևելի արձաններ, պատկերներ և մեծ ծախս արաւ ուսումնարանաց և մատենադարանաց վրայ։ Նորա Լաւրենտիոս թոռը որ կոչուեց մեծադործ նոյն կերպիւ սկսաւ պաշտպանել ուսումնականաց արուեստաւորաց, բանաստեղծաց և միշտ մեծամեծ պարգևներ կրաժանէր նոցա իրենց աշխատութեանց համաձայն։ Մեդիչեանց ժամանակը պատմութեան մէջ կոչուեց,, դիտութեանց և արհեստից վերածնութեան դար,, սակայն քանի մի երևելի անձինք ասելութեամբ կնայէին Մեդիչի ցեղի վրայ. որոնցմէ իշխանութիւն էր յափշտակել։ Դաւադրութիւն կազմեցին Լաւրենտիոսի և նորա եղբօր Յուլիանոսի դէմ։ Մի որոշեալ ժամանակ երկուց եղբարց վերայ յարձակ-

ուեցան Եկեղեցւոյ մէջ, այն էլ երբ նոքա պատարագ կըմատուցանէին (1478 թ)։ Նոքա կարողացան ապանել միայն Յուլիանոսին, Լաւրենտիոսը կարողացաւ սրով ընդիմանալ, և շուտով մնաւ պահարանը, որ ունէր շատ ամուր դռներ և կարողացաւ իրեն ազատել։ Այդ լուրը հասնելով Ֆլորենտիոյ ժողովուրդը շատ նեղացաւ, դաւադրութեան անդամոց չարաչար մահուամբ սպանեցին և Լաւրենտիոսի իրաւունքը առաւել ընդարձակուեց. սորա յաջորդները շատ թոյլ լինելով քանի մի անգամ արտաքսուեցան Ֆլորենտիայից։ Սակայն մէջը Մեդիչիք բոլորովին հաստատուեցան և մեծ դքսի տիտղոս ընկալան։ Իտալիոյ միւս երկու քաղաքները՝ Վենետիկը և Genովան երկար միջոց պահպանեցին հասարակապետական կառավարութիւնը։

Վենետիկն է Աղրիական ծովու հիւսիսային եզերաց մօտ փոքրիկ կղզեաց վրայ հիմնուած, հիմնուեց այն ժամանակ՝ երբ Հունաց աշխարհակալ Աստիղասը արշաւեց Իտալիոյ վրայ։ Այն կղզեաց լաւ դրութենից և ժողովրդեան աշխատութենից քաղաքը հետզհետէ մեծացաւ և մեծ հարստութիւն ունեցաւ։ Այն կղզիները միացան միմեանց հետ գեղեցիկ կամուրջներով, հոյակապ մարմարիայ պալատներ շինուեցան և երևելի տաճարներ (սուրբ Մարկոսի եկեղեցին և դքսերուն պալատը), և Վենետիկեցւոց վաճառականութիւնը տիրեց Միջերկրական ծովուն։ Հզօր նաւատորմիղներով և վարձած զօրքով Երշիպելագոսի շատ կղզեաց նուաճեցին

(մանաւանդ Լատինաց կայսերութեան ժամանակ) և ձեռք բերին նաև Աղբիսական ծովու արևելեան եզերաց մէկ մասը, այն է Դատմատիան։

Վենետիկում սկսաւ ազնուապետական կարգադրութիւն, բոլոր իշխանութիւնը անցաւ երևելի իշխանաց ձեռքը, ղլխաւոր կառավարութիւնն էր բարձրագոյն խորհրդարանը և նորա անդամները այն տանից կընտրուէին՝ որոց անունը նշանակուած էր ‘‘ոսկի դիրք,, անուանեալ տումարի մէջ։ Ինքքին խաղաղութեան վերայ կհսկէր տասանց տաւանը, նա կրդատէր յանցաւորաց, և ամենայն կերպիւ կհսկէր որ ազնուապետական կառավարութեան դէմ ոչինչ տարաձայնութիւն չպատահի, այս պատճառաւ էլ նոքա շատ լրտեսներ կպահէին, որք ծպտեալ կերպարանքով կպտրտէին և ամենայն բան կհաղորդէին։ Բերք ղլխաւոր Ինկվիզիտորաց այսինքն քննչաց։ Այս Ինկվիզիտորաց տասանց խորհուրդը, կընտրէր իրենցից, և նոքա գաղտնի դատարան կկազմէին, որք ունէին անսահման իշխանութիւն։ Ո՛ր և իցէ կասկածելի մարդոյն այնպէս կանհետացնէին որ ոչ ոք չէր իմանայ, և ոչ ոք իրաւունք չունէր նրան հարցանելու կամ փնտռելու, և այսպէս Ինկվիզիցիան այն պիսի մի երկիւղի մէջ ձգեց ժողովրդեան որ նոքա լաւ կարողացան հաստատել բռնակալ ազնուապետական կառավարութիւնը։ Վենետիկոյ ղլխաւոր կառավարիչը դոժ կանուանուէր (այսինքն դուքս), որ մինչև ցմահ կընտրուէր։ Առաջ նա մեծ իրաւունքներ ունէր, բայց վերջը միայն նրան արտաքին կերպով մեծ

յարգութիւն կոտային, կրնակէր հոյակապ պալատի մէջ, ունէր թիկնապահ զօրք և թագ։ Դա ամենայն տարի հանդիսաւոր կերպով կնշանուէր Աղբիական ծովուն հետ։ Համբարձման ասնին օրը բնակիչք կը-ժողովէին, դոժը կնաւէր քաղաքին և նրան կը հետեւէին անթիւ նաւեր, ինքը դոժը շատ զարդարած նաւի վերայ նստած՝ և մեծ հանդիսով կձգէր ծովու մէջ մի թանկագին ոսկեայ մատանի, և նրանով կընշանուէր ծովու հետ։

Դ՝Գ դարում Վ՝ենետկոյ դօժերից մինը, ծերունի Մարին Ֆալիէրо, մտադրուելց որ ազնուականաց իրաւունքներ ձնչէ, նա նեղացած էր այն պատճառաւ որ չկարողացաւ մի ազնուականից այն վրէժը առնուլ որ նա միանգամ նորա դեռահասակ կնոջ անպատուել էր։ Նորա մտադրութիւնը ազնուականները իմանալով՝ պալատին մէջ սպանեցին։ (Գլխաւոր խորհրդարանի դահլիճում բոլոր դոժաց պատկերները կան, իսկ Մարինо Ֆալիէրոյ պատկերի տեղ շըրջանակի վերայ սեաւ քող է քաշուած։)

Ա՝ենովան ծովային վաճառականութեան մասին միշտ նախանձաւոր է եղել Վ՝ենետկոյ։ Ա՝ենովան նոյնպէս շատ հարստացաւ և զօրացաւ, բայց Վ՝ենետկոյ նման հաստատ կառավարութիւն չունէր և ներքին խռովութիւնը մէջը ունպակաս էր նորա Վ՝ենետկոյ հետ ունեցած պատերազմի հետեւանքն այն եղաւ որ երկրորդունց հասարակապետութիւնն էլ թուլացաւ։

Իտալիայում ազատ քաղաքաց հետ կային նա և քանի մի ազատ իշխաններ։ Ներանցից երևելիքն էին Սաւոյայի իշխանները, զինու զօրութեամբ և ճարտար քաղաքականութեամբ նոքա հետ զհետէ կարողացան ձեռք բերել Փիէմոնթ նահանգը, և սատացան դուքսի տիտղոս։

Մինչև Իտալիայումն էր պապին տէրութիւնը, և նրա մէջ կային նոյնպէս փոքրիկ անկախ իշխաններ։ Հռովմում կային քանի մի ազդեցութիւն ունեցող ցեղեր, որոնք կ'հարստահարէին ժողովրդոց, և միշտ գոգռելով ժողովուրդը խռովութիւն կ'ձգէին նրանց մէջ։ Այս խռովութիւնք առաւել ևս սատակացան այն միջոց երբ պապերը Աւինիոն տեղափոխուեցան։ Այդ միջոցում ժողովրդոց մէջ մի ուսումնական և երևելի մարդ կար Ռիէնցի անուամբ։ Նա սկսաւ ժողովրդեան յայտնել Հռովմայ հին շքեղութիւնը և նշանակութիւնը ցոյց տալով հին արձանները և շինութիւնները, սկսաւ քարոզել ժողովրդեան Հռովմայ անցեալ մեծութեան վերայ և նոցա նախնեաց փառաց վերայ, որ նոքա սիրելի էին և կրադդադէր Հռովմայ անցեալ դրութիւնը ներկայ աղքատ դրութեան հետ։ Իւր ճարտարութեամբ Ռիէնցի այնպէս ոգևորեց ժողովուրդը, որ նոքա ի միասին ապստամբեցան ազնուականաց դէմ, նրանց գըլխաւորաց արտաքսեցին քաղաքից, և հաստատեցին Հռովմայ հանրապետութիւնն (1347 թ.) Ռիէնցի արիբունի տիտղոս սատանալով՝ համարեայ ինքնագլուխ տէր դարձաւ, բայց Հռովմայեցւոց այս

յաղթութիւնը երկար միջոց չտևեց, նոքա միշտ կը-պատերազմէին ազնուականաց դէմ, որք մերձակայ ամրոցներում կընակէին, և ծանր հարկերը կժողովէին պատերազմաց ժամանակ, սա էլ անբաւականութեանց գլխաւոր պատճառներ լինում, և սորանով նուազեց նրանց սէրը դէպի հասարակապետութիւնը: Ազնուականները յարմար միջոց գտնելով՝ վերադարձան իրենց Հռովմայ պալատներում բնակուելու, որք ամրոցներ կձևացնէին: Բիէնցին սպանուեց ժողովրդեան խռովութեան ժամանակ, և նրան հետ միասին ջնջուեց Հռովմայ հասարակապետութիւնը, և կրկին սկսան տիրապետել ազնուականները, մինչև որ պապերը Աւինիոնից վերադարձան: Թ և Ժ դարերում:

Այն միջոցներում, երբ Նորմանդիոյ հէնրը (ծովային աւազակները) արևմտեան Եւրոպայի երկրքները կաւերէին, Սքանդինաւիայում և Տանիմարքայի կղզեաց վերայ մեծ փոփոխութիւն կլինէր, առաջ փոքրիկ տէրութիւնք կկորուսանէին իրենց անկախութիւնը և նոքա միացան երեք նշանաւոր տէրութեանց հետ, Տանիմարքայի, Շուեդի և Նորուեկիոյ: Տանիմարքայի տէրութիւն հաստատողն կհամարուէր Հորմ Ծերունին, Նորվեկիոյ Հարալդ Հաարֆակերը (այսինքն գեղեցկահեր), իսկ Շուեդում Երիքը Ուփսալա քաղաքին տէրը, ուր Օդին հաստատոյ գլխաւոր տեղն էր: Այն ժամանակից սկսաւ Նորմանդացւոց մէջ քրիստոնէութիւնը տարածուել, այն էլ մեծաւ դժուարութեամբ, վասն զի կը-

ռապաշտ քուրմերը կհալածէին քրիստոնէից։ Երբ քրիստոնէութիւնը և թագաւորական իշխանութիւնը բարձրացաւ քան նոցա կռապաշտութիւնը և փոքրիկ սէրութեանց իշխանութիւնը, շատ անբաւական Աքանտինաւիացիք հեռացան իրենց հայրենիքից և գնացին ուրիշ տեղ իրենց համար բնակութեան տեղ դտնելու։

Նորվեկիայի գաղթականները Իսլանտայ կղզոյն վերայ բնակվեցան, և այն տեղ ամերիկայ միջոց Օդին շատաուածը կպաշտէին։ և Իսլանտայից քաջ Նորմանդացի ծովագնացները նաւեցին մինչև հիւսիսային Ամերիկա։ Քրիստոնէութիւնը կուսուցանէր նրանց խաղաղ կեանք վարել, և հաստատարնակ, և նոքա այնուհետև կպարապէին երկրագործութեամբ և արհեստներով։ Լեռնային Աքանտինաւիայում՝ որ մետաղներով հարուստ էր՝ սկսան հանքեր փորել, և տեսակ տեսակ մետաղներ դտան։ Կաթոլիկաց հողևորականք ինչպէս ամենայն տեղ մեծ հողեր ձեռք բերին, և աղնուականաց հետ հաւասար արտօնութիւններ ստացան։ Յողով քունէին նոքա որ կըկազմուէր հողևորականաց, աղնուականաց և քաղաքաց պատգամաւորներից, և նոցա խորհրդով կըվարուէր թագաւորը և այն ժողովը կհաստատէր նոր օրէնքները և հարկի առաւելացնելը։ Աքանտինաւիոյ երեք տէրութեանց մէջ ամենից հզօրն էր Տանիմարքան. Տանիմարքացիք, ինչպէս յայտնի է, քանի մի միջոց կտիրէին Անգղիային, այն էլ Ռանութ մեծի ժամանակ։ Ռանութի յաջորդ-

ները ընդարձակեցին իրենց տէրութիւնը պատերազմով, Պալթիկ ծովու հարաւային և արևելեան եզերքաց մօտ բնակող ազգաց հետ։ Պ. ալտիմիրի Ե. ժամանակ (Յ.Ղ. դարում) նոքա մեծ յաղթութիւններ ունեցան, նուաճեցին Հոլշթէյնը, Մէքլենպուրկը, Ինգիլանդեան, Փոմիրանիոյ և Ռուսիոյ մի մասերը, միով բանիւ Տանիմարքայիք հիւսիսային Գերմանիայում և Պալթիկ ծովու վերայ առաջին ազգն եղան։ Սակայն այն թագաւորի խստութիւնը առիթ տուաւ ազգաց անրաւականութեան։ Մինչդամ երբ Պ. ալդիմիրը որսորդութիւնից յետոյ կնքնջէր իւր վրանի տակ առանց թիկնապահի, նորա Պ. ասանեներից մինը՝ Մէքլենպուրկի կոմսը յարձակուեց թագաւորի վերայ, և զերի տարաւ նորան։

Եւ դ լսելով միւս կոմսերն էլ ապստամբեցան։ Պ. ալդիմիրը վերջապէս կարողացաւ ազատութիւն ձեռք բերել, այն էլ ամենադժուար պայմաններ ընդունելով, և շատ ցեղեր էլ ազատուեցան նրանից։

Յ.Ղ. դարում Ս. քանտինաւիոյ երկք թագաւորները միացան, և մի թագաւորութիւն կազմեցին։ Տանիմարքայի ժառանգուհի Մարգարիտան ամուսնացաւ Նորվեկիոյ թագաւորին հետ, յետ մահուան հօրն և ամուսնոյն նա կտիրեր Տանիմարքային և Նորվեկիային, յետոյ նա համոզեց և Շուեդացիք էլ ընդունեցին իրենց կառավարիչ։ Շուեդի Վալմար քաղաքում Եպիսկոպոսունք և ազնուականք Տանիմարքայի, Շուեդի և Նորվեկիոյ ժողովեցան և ստորագրութեամբ ընդունեցին երկք թագաւորու-

թեանց միութիւնը (1397 թ.)։ Այս դաշնադրութիւնը կոչուեց Քալմարեան։ Յետ մահուան Հանճարեղ Մարգարիտայի Հռետորիք սկսան աշխատել որ Տանիմարքացւոց թագաւորացմէ ազատուին և սա եղաւ պատճառ ներքին խռովութեանց։

Սլաւեանք և Ռէ-ղանդիոյ Կայսերութեան անկումն։

Ազգաց մեծ դաղթականութեան ժամանակ Գերմանացիք բնակուեցան արևմտեան Եւրոպայի կէս մասին մէջ, իսկ Սլաւեանք արևելեան Եւրոպա։ Սլաւեանց բնակութեան տեղն էր Լէպա գետից մինչև Ադրիական ծովը և Արշիպեղագոսը։ Այս նահանգին երկիրը բաց ի հարաւային արևմտեան մասից, ընդարձակ դաշտ կձևացընէ, որ ի հնումն մեծ անտառներ ունէր և ճայնի դաշտեր։ Թշնամեաց յարձակման ժամանակ Սլաւեանց դլխաւոր ապաստանարան էին նոցա անտառները և ճահիճները, Սլաւեանք բազմաթիւ և քաջ ժողովուրդ էին, բայց Գերմանացւոց նման պատերազմասէր չէին, և թշնամեաց դէմ մի բան չէին պատերազմի ժամանակ։ Նոքա փոքրիկ ցեղեր բաժանուած էին, և միմեանցից առանձին կընակուէին, իւրաքանչիւր ցեղը քանի մի գերդաստանից կբաղկանար, առ հասարակ տան մեծը կընակէր իւր եղբարց, որդւոց և թոռանց հետ և նոքա բոլորը նրան կհնազանդէին։ Ցեղապետները երբեմն միասին կժողովէին որ և իցէ վճիռ տալու և կը-կազմէին ժողով։ Այս ցեղապետներից ոմանք իրա-

ուունք ձեռք ձգելով կոչուեցան դուքս։ Ըստ բնակութեան նոքա երեք մասն բաժնուեցան՝ արևելեան, արևմտեան և հարաւային։ Արևմտեան Սլաւեանց մէջ գլխաւոր տեղը ունեցան Զեհիրը Մորաւացոց հետ և Լեհացիք։ Զեհիրը բնակուեցան Պոհեմիայում, որ չորս կողմից պատսպարուած էր լեռներով, նոքա հիմնեցին բաւական հզօր տէրութիւն։ Այն տեղ երկար միջոց կիշխէր Փրեմիսլի տունը։

Այս տան ծագման վերայ ժողովրդական երգի մէջ այսպէս կպատմուի Լիւպուշի դատ։ Ընդամ մը Զեհական երկրում կթագաւորէր դքսուհի Լիւպուշան, որ երևելի էր իւր իմաստութեամբ և արդարութեամբ։ Երկու եղբարք իւրեանց հօր մահուանէն զկնի սկսան վիճել ժառանգութեան բաժանուելու ժամանակ և եկան Լիւպուշայի մօտ որ նա մի կերպ վերջացնի։ Դատը տեսան ժողովրդականաց ներկայութեամբ, և ժողովը այնպէս վճռեց որ Սլաւեանց հին սովորութեան համաձայն նոքա անբաժան միասին պէտք է բնակուէին, Լիւպուշան էլ վաւերացրեց այն վճիռը։ Երէց եղբայրը անբաւական էր, և սկսաւ Պոհեմացւոց նախատել որ նոքա կնոջ ձեռքով կկառավարուին։ Լիւպուշան լսելով այն հրաժարականը առաջարկեց և խնդրեց ուրիշ մի դուքս նշանակել կառավարիչ։ Ժողովուրդը պատասխանեց թէ նոցա դուքսը նա է՝ ում հետ որ Լիւպուշան կամուսնայ։ Լիւպուշան ամուսնացաւ մի երկրագործ Փրեմիսլի հետ, դեսպանները նրան անդաստանի մէջ գտան, և բերին Վիշեկրատ քաղա-

քը, Պոհեմացւոց մայրաքաղաքը (այժմեան Փրա-
կան) Մորաւա գաւառն եղերաց մօտ։ Արդարև Փրե-
միսլը շատ խելացի և քաջ մարդ էր, և նրա ցեղը
պատուով կթագաւորէր Չեհի երկրում։ Կպատա-
մեն թէ Փրեմիսլի կեղևեայ սրեխները երկար միջոց
պահեցին Վ. Հշեհրատում, և երբ նորա ցեղից նոր
թագաւոր կընտրուէր, նրան ցոյց կտային, որպէս զի
նա չհպարտանայ, և մտաբերի թէ ինչ ցեղից է ծա-
դել։ Չեհերը ստիպուած էին անդադար պատերազ-
մելու Գերմանացւոց կայսերաց դէմ՝ իրենց ազա-
տութիւն պահպանելու համար մինչեւ Կարոլոսի
ժամանակից սկսեալ։ Մինչեւ ՈԹոնի ժամանակը
Չեհացւոց դուքսը Գերմանիոյ Կայսեր Վասալ-
թիւնը ընդունեց, իսկ Փրիդերիկոս Պարպարոսան
տուաւ նրան թագաւորական տիտղոսը։ Եւ Չեհ-
երը շատ սովորութիւնները առին Գերմանացւոց։

Չեհերի և նոցա ցեղակից Մորաւաց մէջ քրիս-
տոնէութիւնը տարածուեց Թ. դարում, նրանց մօտ
կգային Հռովմից քահանայք, և նոքա լատիներէնով
պատարագէին որ անհասկանալի է ժողովրդոց։ Այս
պատճառաւ Մորաւիոյ դուքսերը Ռիւզանդիոյ կայ-
սերից խնդրեցին որ նոցա համար քրիստոնեայ ու-
սուցիչներ ուղարկի, որ գիտենան նաև Սլաւեան լե-
զու (պատճառ որ Պարգանեան թերակղզոյ վերայ
շատ Սլաւեանք կընակին)։ Կայսրը նրանց մօտ
ուղարկեց երկու եղբարց՝ Կիւրեղ և Մեթոդիոս։
Այս երկու եղբարք նրանց համար այբ-բեն հնարե-
ցին և թարգմանեցին Սլաւերէն լեզու Աստուածա-

շունչ սուրբ դիրքը։ Նոցա քարոզութիւնը մեծ ներգործութիւն ունեցաւ ժողովրդեան վերայ շատ ժողովուրդ մկրտեցին, և անուանուեցան Աստուանց առաքեալք։ Ձեհիայում նոցա պաշտպանն էր Ձեհհաց դուքս Պուրոմի կինը սուրբ Լիւդմիլան։ Բայց նորանց դէմ զենուորուեցան Լատինաց հոգևորականք, այն ժամանակից բաժանուեց եկեղեցի երկու մաս՝ ալեքեան և արևմտեան։ Հռովմայ պապերը կաշխատէին որ Աստուան ազգերը նոցա իրաւանց ներքոյ լինին, որպէս և Գերմանացիք։ Երդարև նոքա կարողացան Մորաւիայից և Ձեհերից Աստուական լեզուաւ ժամերգութիւնը վերցնել և իրենցը մղացընել։ Որա գլխաւոր պատճառն եղաւ Հունգարացւոց դաղթականութիւնը Թ. դարում։

Գերմանիոյ Թագաւոր Առնուլֆը, ինչպէս յայտնի է Հունգարացւոց հրաւիրեց իրեն օգնութիւն Մորաւացւոց Սվեաթոփոլք դուքսին դէմ, որ այն ժամանակ Աստուան մի հզօր պետութիւն էր կազմել։ Հունգարացիք աւերեցին Մորաւիոյ տերութիւնը, և նորա երկրին մեծ մասը բռնեցին, որով նոքա Բիւզանդիոյ ճանապարհը փակեցին Ձեհերաց և Մորաւացւոց համար, և վերջը իրենք քրիստոնէութիւն ընդունեցին Հռովմայ հոգևորականներից։ Ձեհիայում կթագաւորէր Վացլաւ ա. երբ Մոդոլք և Թաթարք Պաթուի առաջնորդութեամբ յարձակեցան արևելեան Եւրոպայի վերայ։ Ռուսիան, Լեհաստանը տապատակելով և աւերելով մնան Մորաւիա որ Ձեհաց թագաւորի իշխանութեան ներքոյ էր, և

այն տեղ Մողոլները Չինէրից մեծ ջարդ կերան։ Այն մեծ հարուածը ստանալուն պէս նոքա կրկին արևելք դարձան։ Վ. այլաւի որդի ՈՒԹԹոկարը բ. (1253—1278 թ.) կաշխատէր նոր երկիրներ ձեռք բերելու, և նրա ժամանակ Չինաց թագաւորութիւնը շատ ընդարձակուեց։ Նրա յառաջադիմութեան պատճառն էր Գերմանիոյ մէջ եղած անկարգութիւնները որք ծագեցան Հոհենշթաուֆենաց տան վերջանալուց զկնի։ Երբ Ռուդոլֆ Հապսպուրկեանը կայսր ընտրուեց պահանջեց Չինաց թագաւորից հպատակութեան երդումն, իսկ նա մերժեց նրա առաջարկութիւնը։ Խորամանկ Ռուդոլֆը կարողացաւ զինուորել ՈՒԹԹոկարի դէմ իրեն դրացեաց և մինչև անդամ քանի մի Վ. ասաները ապստամբեցան նրա դէմ։ Այն պատերազմը շատ անյաջող եղաւ Չինաց թագաւորի համար։ Նա չկամենալով տանել այն նեղութիւնները՝ որ նա կրեց Մորաւայի եղերաց մօտ, ինքն էլ այնտեղ սպանուեց պատերազմի մէջ։ Այն պատերազմի հետևանքը այն եղաւ որ Չիները կորցրին Աւստրիան, Շթիրիան և քանի մի ուրիշ փոքրիկ տէրութիւններ։ Վ. այլաւի Գ. մահուանէն զկնի (1306) Փրկիչի տունը վերջացաւ և գահը անցաւ նորա ազգականաց ձեռքը Լուքսիմպուրկեան տան որ այն միջոցը նա կկրէր նա և Գերմանիոյ Կայսեր տիտղոսը։

Չիները անբաւականութեամբ կնայէին Գերմանացոց իշխանութեան վերայ, և շատ կնեղանային որ նոքա կախու�ունին նա և Հռովմայ պապից։ Այս

էր պատճառը որ երբ Յովհաննէս Ալուսը սկսաւ քարոզել ժողովրդեան պատի չափազանց իրաւանց վերայ, և պահանջից որ ժամերգութիւնը Սլաւական լեզուով կատարուի (ինչպէս որ կար Կիւրեղի և Մեթոդիոսի ժամանակ) Ջնհերը Ալուսի կողմը անցան և ապստամբեցան Սիգիսմունդ կայսեր դէմ։ Այսպէս սկսաւ Ալուսեան կոչուած երևելի պատերազմը։ Ջնհերը անմիջապէս Սիգիսմունդից յետոյ իրենց համար թագաւոր ընտրեցին ազնուականներից խելացի և քաջ Վէոդրդ Փատիպրանին։

Նա մեծ խոհեմութեամբ և պատուով կառավարեց Ջնհիան և Մորաւիան (1458—1471), բայց ունեցաւ հզօր թշնամի, այն է Հռովմայ պապը, որ նա միշտ կաշխատէր որ Ջնհերին արգելէ հաղորդուել հացիւ և գինեաւ, վասն զի նոքա առաջ միայն հացիւ կճաշակէին, այս պատճառաւ նրանց դէմ զինուորից Գերմանացւոց և Հոնգարացւոց։ Հոնգարիայում կթագաւորէր Արփատայ ցեղը որ իւր իշխանութեան ներքոյ միաւորել էր Հոնգարիոյ ցեղերը։ Այն տեղ քրիստոնէութիւնը տարածուեց Ս. Ստեփաննոս թագաւորի ժամանակ, որ պապից ստացաւ արքունական թագ (1000 թուին),, այն օրից Հոնգարացիք սկսան հաստատ բնակութիւն ունենալ, և թագաւորական կառավարութեան մէջ մտցնել շատ բաներ Գերմանացիներից, այն տեղ նոյնպէս զօրացան Մաքսիմիլիանոս ազնուականք։ Յետ դարու սկզբում վերջացաւ Արփատայ ցեղը, և այնուհետև սկսան թագաւոր ընտրել։

Ամենից երևելի թագաւորն էր Հունգարիայում, մեծն Լուդովիկոս (1342—1382) Անժուիան տան՝ց, որ կթագաւորէր Նափոլիի մէջ։ Լուդովիկոսը ընդարձակեց իրեն տէրութիւնը մինչև Սև և Ադրիական ծովուց եղերքը ժե. դարում Հունգարիոյ թագաւորութիւնը շատ ծաղկեց, մանաւանդ Մատթէոս Քորվինի ժամանակ. պատից համոզուած նա ևս թշնամացաւ Գէորգ Փոդիպրադի հետ և մասդերուեց Հայոց թագն էլ յափշտակել, իսկ Փոդիպրադը քաջութեամբ ընդդիմացաւ։ Այս կերպով այն երկու դրացի թագաւորութիւնք իրարու հետ պատերազմելով միմեանց ոյժը բոլորովին կորցրին։ Միւս դարում Պոհեմիան և Հունգարիան անցաւ Հապսպուրգեանց ձեռքը։

Լեհաց թագաւորութիւնը կազմուեց Սլաւեանների՝ որք կրնակէին Վիսթուլա գետին և նորա ակունքների մօտ։ Այս Սլաւեանք՝ որք Լեհ, Լեխ կամ Փոլք կանուանուէին, կբաժանուին ցեղեր, Մազուրիք միջին Վիսթուլայի մօտ. Քույաւիք և Քաշուպիք Մազուրներից դէպի հիւսիսային արևմուտք, և ընիկ Լեհք՝ Վարտա գետոյն մօտ, Քրաքովիան էր վերին Վիսթուլայի մօտ։ Իշխաններից ամենից երևելին էր այն տեղ Փեասթի տունը, որ ինչպէս կպատմեն՝ սա էլ Փրեմիսլովի նման մի հասարակ երկրագործ մարդ է եղել։ Փեասթերից մինը Միչեսլաւը, որ ամուսնացած էր Հայոց Դառանդուհի Տոմպրովքի հետ ընդունեց քրիստոնէութիւնը նախ Հայերից՝ արևելեան արարողութեամբ։ Իսկ յետ մահ-

ուան Տոմբրովկայի անմուսնացաւ Գերմանիոյ մի Յոհաննդուհոյ հետ նրա ժամանակ Լեհաստանում Գերմանացւոց ներգործութիւնը զօրացաւ, և այն տեղ տարածուեց քրիստոնէութիւն Հռովմայ դասանութեամբ. (Ժ. դարու երկրորդ մասում): Միևնոյնաւրը մի և նոյն ժամանակ Գերմանիոյ Կայսրը Ղասարութիւնը ընդունեց: Նորա որդին Պոլիսլաւ ա. քաջը (992—1025) Լեհաստանում միապետութիւն կազմեց և ընտրուեց թագաւոր իւր յաջող պատերազմներով շատ ընդարձակեց իւր տէրութիւնը: Նա տիրեց Փոմերանիան, Մորաւիան, Սլեզիան, և կարմիր Ռուսիան կամ Գալիցիան որ յափշտակեց Կիևու մեծ դքսի սրբոյն Վլադիմիրի յաջորդներից, նրանց միջին խռովութիւնը յաջող միջոց տալով նրան: Նորա թագաւորութեան ժամանակ Հայոց սուրբ Գրիգորիս արքեպիսկոպոսը (որ կկոչուէր նա և Ալբերտ) Պոլիսլաւի հովանաւորութեան ներքոյ լենելով գնաց Գիսթուլայից հարաւ և սկսաւ քրիստոնէութիւն տարածել վայրենի Ռուսաց մէջ: Ռուսացիք նրան վատ ընդունեցին, կպատմեն թէ միանգամ երբ Գրիգորիսը մի խիտ անտառի միջով կանցնէր, վատակեալ իւր ճանապարհորդակիցների հետ մի խոտաւէտ տեղ ծառի տակ նստաւ հանգստանալու, և երբ նոքա նընջեցին յանկարծ լսեցին մի ձայն, այն կռապաշտից ձայնն էր, որ կարգելէին այն տեղ հանգստանալու, վասն զի այն տեղը ուր որ նոքա եղել էին՝ սուրբ և անմերձենալի էր զլեռաւոր շատուածոյ տեղն էր, և

միայն կարող էր մուտ դրծել նոցա քուրմը։ Քուրմերը սաստիկ զայրացած՝ սպաննեցին Պ. ոյիտեխին։ Պոլիսաւորը նրա մարմինը ստացաւ՝ մարմնոյն կշռով արծաթ վճարելով և մեծ հանդիսով թաղեցին նրան Կնեժնեան մայր եկեղեցոյ մէջ։ Կնեժին քաղաքը Լեհացւոց հոգևորականութեան մայրաքաղաք դարձաւ, այսինքն արքեպիսկոպոսի բնակութեան տեղ։ Լեհաց պատմութեան ոսկեայ ժամանակը, որ սկսաւ Պոլիսաւ առաջնից, վերջացաւ Պոլիսաւ երրորդից Խեղաբերանի հետ, որ (1138 թ.) բաժանեց տէրութիւնը չորս դքսութիւն, Քրաքովի, Սենտոմիրի, Մազովեցկի և Փոզնանի վերայ։ Քրաքովը տուաւ իւր մեծ որդւոյն՝ թագաւորական տիտղոսով և ծայրագոյն իշխանութեամբ միւս դքսերի վերայ։ Այս դուքսերը սկսան իրենց դքսութիւններն էլ բաժանել իւրեանց որդւոց վերայ, և սա եղաւ գլխաւոր պատճառ ներքին երկպառակութեանց։ Իշխանք և հոգևորականք այս ներքին խռովութիւնից մեծ օգուտ կը քաղէին և մեծամեծ արտօնութիւններ ձեռք կբերէին, տրանով կտկարանար թագաւորի ոյժը և կը սաստկանար խռովութիւնը, այս խռովութեանց ժամանակ Պոլիսաւ քաջի ձեռք բերած երկիրները բոլորը հեռացան և ազատուեցան։ Լեհք այն աստիճան թուլացան որ իւրեանց սահմանները չկարողացան պաշտպանել մի չնչին Ռուսաց ցեղից և Լեհացոց մի դուքս Վանրադ Մազովեցկին օգնութիւն հրաւիրեց Տեւտոնեան ասպետաց (1225 թ.) Տեւտոնեանք յաղթեցին Ռուսաց և վերջը նոքա վա-

սակար եղան Լեհաստանի հանար։ Այնուհետև Լեհք պարտաւորուեցան նրանց հետ պատերազմելու, որ երբեմն իրենց պաշտպան կհամարէին։

Այս թշուառութեանց վերայ հասաւ նա և մի մեծ խեղճութիւն այնէ ժդ. դարու Մողոլաց յարձակմունքը։ Այն միջոցում Լեհաստանը երկու գլխաւոր մասն էր բաժանուած, հիւսիսային նահանգը, ցած և լճային նահանգը որ մեծ Լեհաստան կըկոչուէր, փողնան և Կնեժնօ գլխաւոր քաղաքներով, և հարաւային որ Կարպատեան լերանց մօտ էր կկոչուէր փոքր Լեհաստան Կրաքով քաղաքով՝ Վլատիսլաւ ա. Լոքեդէկ թագաւորը (1306—1333) միացրուց մեծ Լեհաստանը փոքրին հետ և սրանով միապետութիւն կազմեց։ (Մազովիան Վարշաւ քաղաքով մինչև ժդ. դարու սկիզբը առանձին անկախ տէրութիւն կձևացնէր)։ Այս ժամանակից Լեհաստանը սկսումէ հետզհետէ բարձրանալ և ծաղկել, Վլադիսլաւի որդին Կազիմիր դ. մեծն երևելի է իւր օրէնսդրութեամբ և նեղբին կառաւարութեամբ (հիմնեց Կրաքովի համալսարանը)։ Նա մեծ երկիր ձեռք բերաւ, միացրուց իւր տէրութեան հետ Ռուսաց հարուստ Գալիցիա նահանգը, որ այն միջոց իշխանական ցեղը վերջացել էր։ Կազիմիրի մահուանէն զկնի (1370 թ.) Փեաստեանց տունը վերջացաւ։ Նորա յաջորդն էր նորա բարեկամ Լուդովիկոս Անդարիոյ թագաւորը և Լեհաստանի իշխանները (Մագնաթները) հրաւիրեցին Լուդովիկոսին և այն պայմանաւ ընտրեցին, որ նա նրանց արտօնութիւնները

վաւերացնէ, որով նոքա սահմանափակեցին թագաւորի իշխանութիւնը։ Լուդովիկոսից յետոյ իշխանք ընտրեցին թագուհի նորա կրտսեր դստեր զեղեցիկ Դաղվիկային, և յետ այնորիկ նոքա առաջարկեցին և նա ամուսնացաւ Լիթուայի մեծ դուքս Դագելոն նի հետ որ և եղև Լեհաց թագաւոր, և այն պայմանաւ ամուսնացաւ որ ինքը և իւր ժողովուրդը քրիստոնեայ մկրտուին, այն էլ կաթոլիկ դաւանութիւնը ընդունելով, և Լիթուան միացաւ Լեհաստանի հետ (Ռուսաց ցեղակից Լեթուացիք նոյնպէս կըռապաշտ դոլով առաջ ոխերիմ թնամի էին Լեհացւոց)։

Դաղվիկան երկար միջոց ընդդիմացաւ իշխանաց ցանկութեանց։ Նա ի մանկութենէ նշանուած էր Աւստրիոյ Վիլհելմ դքսի հետ և շատ կըսիրէր նրան այն միջոցին հրաւիրեց իւր ամուսնոյն Փրաքով քաղաք, Փրաքովի քաղաքապետը Վիլհելմին չթոյլատրեց քաղաք մտնելու, և նա պարտաւորուեց քաղաքից դուրս իջևանելու։ Դաղվիկան գնաց նրան տեսութիւն Փրանկիսկեանց մի վանքում։ Նրան հետ ճանապարհորդեցին նա և պալատական տիկնայք, իսկ դուքսին կշրջապատէին Գերմանիոյ ասպետները։ Այդ վիրջը, երբ Դաղվիկան կրկին գնաց դուքսին տեսութիւն որ պետք արդէն ամուսնանային, քաղաքի դռները տեսաւ փակուած, այն էլ իշխանաց հրամանաւ։ Թագուհին հրամայեց բանալիքայց պահապանք չլսեցին նրան, թագուհին զայրացած տապալով սկսաւ դռները կոտրել, և նորա

մերձաւորներից մինը նրան համոզեց որ շատ չընդիմանայ, Ալիհալը պարտաւորուեց վերադառնալու, և կաթոլիկաց հոգևորականք սկսան համոզել որ բարեպաշտ թագուհին ամուսնանայ Նակիլոնին հետ այն պատճառաւ որ նա խոստացաւ իւր ժողովուրդը քրիստոնեայ մկրտել, և այն տհաղին բազմութիւնը որ մինչև ցայսօր կռապաշտութեան մէջ ընկղմած է եղել փրկուի Նաղվիկայի շնորհիւ։ Նակիլոն մկրտուեց քրիստոնեայ, և ամուսնացաւ Նաղվիկայի հետ (1386 թ.), յետ այնորիկ գնաց Լիթուայի Վիլնա մայրաքաղաքը, իրեն հետ առնելով կաթոլիկ վարդապետաց և քահանայից, և սկսաւ մկրտել իրեն ժողովուրդը։ Նշանակած օր Վիլնոյի բնակիչք ժողովեցան, և նրանց ներկայութեան շինուցին այն սրբազան հուրը որ անդադար անշէջանելի կպահէին ի պատիւ Փերկուն աստուծոյ, կոտորեցին նրանց աստուած կարծեցեալ կենդանեաց և սղոցեցին նրանց սրբազան կաղնի ծառը։ Յետ այնորիկ սկսան մկրտուել և մեծ բազմութիւն միասին կմկրտուէին ալք և կանայք առանձին։ Նորոդ մկրտելոց ապիտակ շուխայից հանդերձ կրաժանէին, և այն հանդերձի պատճառաւ աղքատ Լիթուացիք քանի մի անգամ մկրտվում էին։ Նակիլոն կամ Վլատիսլաւ բ. (1386—1434 թ.) Լեհաստանի նոր թագաւորական ցեղապետ եղաւ։

Նակիլոնի յաջորդները Լեհաստանի հետ միացրին Լիթուայի դքսութիւնը, որ այն ժամանակ Լիթուան կրաղկանար ամբողջ հարաւային արև-

մշտեան Ռուսիայից։ Այսպիսի Լեհաց և Լիթուա-
նաց միացեալ թագաւորութիւնը ամենահզօր պե-
տութիւն դարձաւ արևելեան Եւրոպայում, նորա
տարածութիւնն էր Պալթիկ ծովից մինչև Սեաւ
ծովը, և Օաեր գետից մինչև Տներեարը։ Տեւտոնեան
կարգը որ մինչև այն ժամանակ երկիւղալի դրացիք
էին Լեհաստանի և Լիթուայի համար, այժմ հա-
զիւ կկարողանար իրեն պաշտպանել քանի որ այս
երկու նրա հակառակ ազգութիւնք միացան։ Լեհա-
ցիք, Լիթուացիք և Ռուսք Տեւտոնեան ինքնուն հա-
զար ասպետաց ահռելի զօրքը խսպառ ջնջեցին Թան-
ենենպերկի պատերազմում (1410 թ. Գրուսիայում),
այն պատերազմում սպանուեց նա և ինքը մեծ Մա-
դիստրը ընտիր ասպետներով և միայն նոցա Մարին-
պուրկ քաղաքը կարողացաւ ընդիմանալ։ Դակելլո-
նի որդին Վլադիսլաւ գ. երբ Լեհաստան կթագա-
ւորէր (1434—1444) ընտրուեց նա և Հունգարիոյ
թագաւոր։ Բայց նա շուտով սպանուեց Տաճկաց
պատերազմում Վառնա քաղաքին մօտ։ Նրան յա-
ջորդեց Լեհաստանում Դակելլոնի միւս որդին Կա-
զիմիր գ. (1444—1492)։ Կազիմիր գի. թագաւորու-
թեան ժամանակ նորոգուեց Տեւտոնեան կարգին հետ
յաջող պատերազմ։ Թորն քաղաքում դաշնագրու-
թեան համաձայն (1466) ասպետաց կարգը պարտա-
կանէր իրենց երկրի արևմտեան մասը տալ Լեհաց, և
իրենք պէտք կախուէին ունենային Լեհաստանից։
Թէպէտ Լեհաստանը մեծ և հզօր տէրութիւն էր,
սակայն մեծ նեղութիւն կկրէր նեբքին անկարգու-

թիւնից։ Աղնուականք մեծամեծ արտօնութիւններ ձեռք կրերէին, և թագաւորական իշխանութիւնը հետզհետէ կնուազէր։ Թագաւորը վերջը ստիպուեց իւրաքանչիւր գործ ժողովոյ համաձայնութեամբ վճռել։

Ժողովը կկազմէին աղնուականք և հոգևորականք, քաղաքացիք ոչինչ ձայն չունէին։ Մեծաւ մասամբ քաղաքացիքն էին Գերմանացիք և Հրէայք, և ամբողջ վաճառականութիւնը նրանց ձեռքն էր անցած։ Գիւղացիք էլ իրենց նշանակութիւնը խստաւ կորցրել էին, և նոքա էլ աղնուականաց ստրուկ դարձան։ Թագաւորի և ժողովոյ մէջ խռովութիւն եղած միջոցին պատահեց նա և մի նոր խռովութիւն Կաթոլիկաց և Յունաց մէջ։ Ռուսիոյ բնակիչք որք միացեալ էին Լեհաստանի հետ՝ էին յունադաւան, իսկ Կաթոլիկաց հոգևորականութիւնը կաշխատէր որ նոցա Կաթոլիկ դարձնեն։ Այս տեղից սկսաւ մեծ անբաւականութիւն, որ և եղև Լեհաստանի թուլութեան և աղքատութեան պատճառ։ Երևմտեան միւս Սլաւեան ցեղերը, որք կընակէին Օտեր և Էլպա գետերի մէջ, և որոց մի անուամբ կկոչէին Վենէդ, մանր պետութեան կրաժանուէին, և այն էր դլխաւոր պատճառը որ չկարողացան իրենց ազատութիւնը պաշտպանել Գերմանիոյ հզօր տէրութեան առաջ։ Այս տէրութեան դլխաւոր պետութիւնն էր Պրադենպուրկեան նահանգապետութիւնը, որ հիմնուել էր Ժ. դարում, որոց դլխաւոր քաղաքն էր Պերլին։ Նահանգապետները (Մարքկրաֆները) սկսան

ան սակաւ սակաւ նուաճել դրացի Սլաւեան ցեղերը, նրանց կիսրաէին կաթոլիկ, և նրանց երկիրներում կշինէին մեծամեծ և հաստատ ամրոցներ։ Մի և նոյն ժամանակ սկսան գերմանական լեզու գործածել, ընդունեցին նրանց սովորութիւնները, և համարեա թէ իսպառ գերմանական հոգի ստացան և իրենց ազգութիւնը մոռացան։ Միջին դարուց վերջերում Պրանդենպուրկեան նահանգապետը հզօր դուքսերից մինն էր, և պալատական (կուրֆիրստ) տիտղոս էլ ունեցաւ։ (Վերջը Պրանտենպուրկեանց պալատականութիւնը միանալով Բրուսիոյ կամ Տեւտոնեան կարգին հետ՝ կազմեցին Բրուսիոյ թագաւորութիւնը։

Կռապաշտութիւնը երկար միջոց մնաց Պալթիկ ծովու եղերաց մօտ բնակող ցեղերի մէջ Սլաւեանց ցեղերից երեւելիքն էին Պոմերիչիք, Լուտիչիք և Փոմորեանք։ Նրանք ունէին լաւ վաճառաշահ քաղաքներ, ինչպէս Շթեթին Օտերի գետաբերանի մօտ, և Վոլին կամ Իւլին քաղաքը Օտերի գետաբերանի մօտ գտնուած կղզոյ վերայ։ Պալթիկ ծովու մօտ բնակող Սլաւեանց գլխաւոր սրբարան տեղն էր Ռեքոնա քաղաքում Ռուկին կղզոյ վերայ։ Այնտեղ կար գլխաւոր Սվեաթովիտ չաստուծոյ տաճարը, տաճարին մէջ կար նրա արձանը, որ կներկայացնէր մի հսկայ մարդ չորս գլխով, որ չորս կողմը կնայէր։ Աջ ձեռքին ունէր փող գինեաւլի (ինչան նորա որ Սվեաթովիտը կպարգևէ երկրին պտղոց առատութիւնը)։ Նրա մօտ կար նա և սանձ, թամբ և ահա-

գին սուր, տաճարի մօտ կպահէին միշտ Սվաթովիսի ձին, սպիտակագոյն երկար պոչով և գեղեցիկ բաշով, Սլաւեանք կկարծէին թէ Սվեաթովիտը երբեմն ձի կհեծնի և սուրը ձեռքին պատերազմաց մէջ կմտնի, իւրաքանչիւր տարի հնձից յետոյ մեծ տօն կկատարէին ի պատիւ Սվեաթովիտ չաստուծոյ, Արքունի տաճարի մօտ ահագին բազմութիւն կժողովեր և կսկսեր զոհաբերութիւն, և գլխաւոր քուրմը նրա փոգը որ ձեռքին ունէր մեծ հանդիսով կցնէր գինեաւ։ Երբ նոքա պատերազմելու կլինէին, նոքա Սվեաթովիսի ձիուն վերայ նայելով կգուշակէին պատերազմի յաջող կամ անյաջող լինելը։ Նոքա այս ձին կանցկացնէին երիք նիզակաց վերայէն, և թէ մի նիզակի վերայ առաջ ձախ ոտքը բարձրացներ նոքա կգուշակէին որ պատերազմը անյաջող կլինի և այլ ևս չէին պատերազմի։ Քուրմերը մեծ յարգանք ունէին և շատ անգամ դուքսերից էլ մեծ պատիւ և իրաւունք կունենային։

Պոլթիկ ծովու մօտ բնակող Սլաւեան շատ դուքսեր ունէին որք անկախ էին միմեանցից և յաճախ խռովութիւն էլ կպատահէր նրանց մէջ, ինչպէսով իրենց քաջութեանը վերայ նոքա չկարողացան երկար միջոց պաշտպանել իրենց դրացի ազգերից Սաքսերից և Տանիմարքացիներից, սորա գլխաւոր պատճառը այն էր, ինչպէս և վերը յիշեցինք, մանր դքսութեանց բաժանուելը։ Հենրիկոս Առիւծը, ինչպէս յայտնիէ, գլխաւոր պատճառ եղև որ Լիւտիչիք և Պոտրիչիք Գերմանացան (Մեքլենպուրկում։ Այն

միջոցին Տանիմարքացիք նուաճեցին Փոմերանիան և քանդեցին Էրքոնեան սուրբ տեղը։ Արևելեան Սլաւեան ցեղերը որք կընակէին այժմեան Ռուսիոյ մի մասին մէջ մեծաւ մասամբ կընակէին Տնեպրը գետին և Իլմեն լճին մօտ, (նոցա գլխաւոր քաղաքներն էին Քիէվը և Նովգորոտ)։

Թ. դարում Նորմանտիոյ դուքսերը, Բիւրիքը եղբարց հետ, որ ինքն էր Ռուս անուանեալ փոքր ցեղից հիմնեցին Նովգորոդ նահանգում մի դքսութիւն։ Նրան անուանեցին Ռուս, և հետզհետէ ընդարձակուեց արևելեան և հարաւային կողմից։ Նրա հետ միացան համարեա բոլոր արևելեան Սլաւեանք և Ֆին ցեղի մի մասը որք կընակէին Վ՚ոլգա և Օքա գետերի մօտ։ Բիւրիքի յաջորդները Ռուսը բաժանեցին փոքրիկ դքսութիւնք, և ԺԳ. դարում այն դքսութիւնները ընկան Մողոլաց իշխանութեան ներքոյ։

Մողոլեան դառն լուծը Ռուսաք կրեցին մօտ 200 տարի։ Առաջին հարուածը առաւ նրանց Մոսկվայու մեծ դուքս Դմիտր, Դոնսկոյեան դպաշին վերայ (1380 թ.) մեծ պատերազմաւ։ Դէ որանից հարիւր տարի անցնելով՝ բոլորովին ազատուեցան Մողոլներից, այն էլ Դմիտրի թոռան որդւոյ Յովհաննէսի դքաջութեամբ, այն միջոցում էլ Մոսկվայում դուքսը կմիացնէր միւս փոքրիկ դքսութիւնները և կկազմէր ինքնակալութիւն։ Հարաւային Սլաւեանք նրանց կանուանեն՝ որք կընակէին Պալքանեան թերակղզոյ վերայ՝ Դանուբի աջակողմեան եզերաց և

Ադրիական ծովու մօտ։ Նոքա կրաժանուեն երիք գլխաւոր ցեղ Ռուզարք, Սերբք և Խրվատք։ Դանուբեան Ռուզարները այս անունը, ստացան մի թափառող ցեղից, որք եկան Դանուբի մօտ Բամայ—Ռուզարիայից (Բամի և Պոկա գետերի եղբաց մօտեն։) Այս թագաւորական ցեղը նուաճեց Դանուբեան Սլաւեանց մի մասին, խառնուեցան նրանց հետ և կազմեցին մի առանձին Ռուզարաց թագաւորութիւն։ Ռուզարիոյ թագաւորները համարեա թէ անդադար կռուսերազմեին իրենց դրացի Ֆրանգիոյ կայսերաց հետ, Ֆրանգիայից Ռուզարները ընդունեցին քրիստոնէութիւն կարամեն թէ սուրբն Մեթոդիոս որ վերջը գնաց Մորաւիայ, մկրտեց սրանց Պորիս թագաւորին։ Ռուզարիայում երբ ընդունեցին քրիստոնէութիւն, սկսաւ տարածել նա և գրականութիւնը։ Աստուածաշունչը և եկեղեցական գրեանք թարգմանած էին յունարէնից Սլաւեան լեզուաւ, այն թարգմանած գրքերը վերջը տարածուեցան նոյնպէս Սլաւեան ազգաց մէջ։ Պորիսի որդին Սիմէոնը (888—942) ջերմեռանդ օրէն կրաշտպանէր և կհոգար որ հոգևորականութեան մէջ լուսաւորութիւն տարածուի, և մինչև անգամ ինքը միշտ թարգմանութեամբ կզբաղէր։ Ռուզարիոյ թագաւորաց մէջ ամենից հզօրն և երևելին սա էր։ Այդ նորա Պետրոս ժառանգի ժամանակ Ռուզարիան համարեա թէ բոլորովին նուաճուեց և ընկաւ Ռուսաց Սվեաթոսլաւ իշխանի ձեռքը։

Ֆրանգիոյ կայսր Յովհաննէս Զիմկիկը այս երկի-

ը խլեց Ավեսթոսլուից և Բիւզանդիոյ կայսրութեան հետ միացրուց։ Նրա յաջորդաց ժամանակ Ռուզարները ազատութիւն ձեռք բերին։ Բայց վերջը միւս Սլաւեան ազգաց հետ միասին նուաճուեցան և ընկան Տաճկաց իշխանութեան ներքոյ։ Սերբաց կամ Սերբլաց զլխաւոր նահանգն է բարձր լեռնոտ երկիրը Մորաւա գետոյն և նորա ակունքների մօտ։ Սերբացիք (Սերբակերը) խիստ և քաջ էին՝ քան թէ միւս Սլաւեանք, նորա Ռուզարաց նման յաճախ կռուտերազմէին Բիւզանդիոնի հետ և յունաց քարոզիչներից ընդունեցին քրիստոնէական սուրբ վարդապետութիւնը։ Սերբացիք առաջին ժամանակներում՝ մանր ցեղեր կրաժանուէին, և նորա կկառավարուէին իւրեանց իշխաններով կամ Ժուպաններով նորա փոքր միջոց կախումն ունէին Բիւզանդիոյից։ Ժ. դարում Ժուպաններից մինը Պոխպաս անուամբ ազատամարուեց և ազատուեցան Բիւզանդիոյ իշխանութենից։ Ի Ռ. դարում Ստեփաննոս բ. երեւելի Նիմանեան ցեղապետը միացրուց իւր իշխանութեան ներքոյ հատարեա բոլոր Սերբացւոց և կոչուեց „մեծ Ժուպան„։ Նա պաշտպանելով Սերբիան Բիւզանդիոյ կայսերաց յարձակումներից, նոյն ժամանակ կաշխատէր որ Սերբաց եկեղեցին անկախ լինի Հռովմայ պապից, վասն զի պապը կաշխատէր որ Սերբաց եկեղեցին նրան հպատակի։

Ստեփաննոս Նիմանի մին որդին սուրբն Սաբա գնաց Աթոս լեռը և Սրեզոյ ձեռնադրուեց և բնակուեց Աթոս լեռան երեւելի վանքերից մէկի մէջ։ Նա սկսաւ

հանդիպել իւր հօրը որ նա ևս թողու արքունական գահը և վանականութիւն ընդունի (1195)։ Երկար և հանձարեղ կառավարութիւնից զինի ուրեմն ամեայ Ստեփաննոսը գնաց Էթոս և իւր որդւոյն հետ միասին այն տեղ հիմնեց մի նոր վանք Խրիանդար անուամբ, այն տեղ միայն Սերբացի վարդապետք կընակէին յետ մահուան Ստեփաննոսի նորա որդին Սաբա Կ. Պօլսոյ պատրիարքի համաձայնութեամբ դարձաւ Սերբիոյ առաջին արքեպիսկոպոս և առանձին Սերբիոյ անկախ եկեղեցի կազմեց։ Նա պատկից և օծեց թագաւոր իւր Ստեփաննոս բ. եղբօրը Սերբիոյ առաջին թագաւոր և այն պատճառաւ երկրորդ Ստեփաննոսը կոչուեց «առաջին պսակաւոր»։ Այն ժամանակը Սերբիոյ բարձրանալու և ընդարձակուելու միջոցներէր, նրա ժամանակ շինուեցան շատ շքեղ եկեղեցիք և հատատուեցան մեծ և կանոնաւորեալ մենաստաններ, և որպէս եկեղեցիք՝ նոյնպէս և վանքերայք ունէին իրենց ուսումնարաններ, սկսուեց վաճառականութիւն դրսի աղգաց հետ, մանաւանդ Իտալիոյ քաղաքաց հետ, Սերբիան առաւել ևս բարձրացաւ պատերազմասէր Ստեփաննոս ղ. Տուշանայի ժամանակ 14 դարում։ Նրա ժամանակ Սերբիոյ պետութեան տարածութիւնը էր մինչև Էդրիական ծովը արևմտեան կողմից, իսկ հարաւային կողմից մինչև Երշիսկեդոնիա, Ստեփաննոսը երևելի է նա և իւր օրէնսդրութեամբը նրա հրամանաւ ժողովեցին գրաւոր օրէնքները և մի օրինաւոր դիրք կազմեցին։ Սակայն Տուշանայի մահից յետոյ Սերբիան

սկսաւ սկսրանալ։ Նրա տան մէջ անրաւականու-թիւն ծագեց, և կուսակալները սկսան անկախ կա-ռավարել։

Այն միջոցը Պալքանեան թերակղզոյ վերայ հաստատուեցան Օսմանեան Տաճիկները։ Աղուրաց Զեն-կիզխանի աշխարհակալութեան ժամանակ Տաճկաց մի խումբը թողաւ իրեն բնակութեան տեղը Թաթա-ղարանը, և գնաց դէպի արևմտանդիմը Ասիոյ։ Այս Տաճիկները իրենց Օսման Սուլթանի անուամբ կոչուեցան Օսմանեան Տաճիկք։ Նոքա նուաճեցին փոքր Ասիայում գտնուած Բիւզանդիոյ նահանգ-ները, և վերջը մտան Պալքանեան թերակղզին, ինչ-պէս և միւս արևելեան աշխարհակալները։ Օսման-եան Տաճիկները երևելի էին իրենց վայրենի քաջու-թեամբ և Մահմետականութեան կրօնամոլութեամբ։ Դայց մի և նոյն ժամանակ շատ օրինաւոր կարգ ու-նէին զօրաց մէջ։ Սուլթանները հարկ կառնէին, և շատ անգամ հարկին տեղ քրիստոնեայ մանկանց կժողովէին։

Այս մանկունքը կուսանէին Սուլթանի դրան առաջ Մահմետական կրթութիւն և ուսումն կստա-նային, և կպարապէին զինուորական կրթութեամբ։ Նրանցից կազմեցին մի գունդ հեռաւոր զօրք, որք ենիչերի կկոչուէին, նոքա մեծանալով իրենց ծագումն և կրօնը խստաս մոռանալով, միայն Սուլթանին կը-ճանաչէին և հաւատարմութեամբ կծառայէին նրան։ միշտ Սուլթանի մօտ կընակուէին և մեծամեծ պար-գևներ կստանային և մեծ գումար ոռճիկ։

Ենիչերիք կհաղնէին գեղեցիկ կարմրագոյն հանդերձներ և փայլուն զէնք կկրէին, նոքա այն դարուն առաջին հետևակ զօրքն էին աշխարհիս վերայ միայն։ Օռխանի զօրքը կարող էր հաւասարուիլ նրանց հետ։ Իրենք Տաճիկները ինչպէս Թագաւորական ժողովուրդ գեղեցիկ հնձելազօրք կկազմէին։ Մուրատ ա. Սուլթանը իրենց մաքաքաղաք ընտրեց Ադրիանուպոլիսը։ Սերբիոյ Թագաւորն ազատը կամեցաւ Մուրատի յաղթութեանց առաջն առնել, միացաւ Խուլգարաց և Խերբուսթից հետ և պատերազմեց Տաճկաց հետ Գոսովոյի մօտ։ Պատերազմի օրը մի քաջ Սերբացի պատանի ուղղակի մտաւ Սուլթանի մօտ, և սրով վերաւորեց որ քիչ միջոցից զինի վախճանեց։ Թէպէտև Սուլթանը ս զանուեց, սակայն դարձեալ Տաճիկները պատերազմի մէջ յաղթող հանդիսացան։ Ազատը գերի ընկաւ, և կասկածեցաւ Մուրատի առաջ ոկսան Ազատոսին չարչարել (1389 թ.)։ Գոսովոյի պատերազմից յետոյ Գանուբեան Սլաւանք այլ ևս չկարողացան Տաճկաց ընդդիմանալ, ընկած Տաճկաց բարբարոսութեան և նոցա ծանր լծի տակ պարտաւոր էին իրենց զօրք կազմել օգնել Տաճկաց որ նոքա միւս ազգաց էլ նուաձեն։ Մուրատայ որդին Պայազիտ ա. շարունակեց իւր հօր սկսած յաղթութիւնները։ Նա Նիկոպոլիս քաղաքի մօտ Լարդեց Հունգարացւոց, Գերմանացւոց և Գաղիացւոց որի դէմ Լուսչիկրաց պատերազմի կը պատրաստուէին և նա մտադրուեց Կոստանդնուպոլիսը առնելու։ Բայց այս նպատակին արգելք ե-

գու։ Մոդոլաց նոր աշխարհակալ Լենկթիմուրը կամ Լանկթամուրը (Թամերլանը). այս Լենկթիմուրի վերայ առասպել կպատմեն թէ երբոր ծնաւ իւր ձեռքին մէջ ունէր բռնած արեան կաթ և երբոր ծերունի ապիտակ մազերով ծնաւ։ Լենկթիմուրը կրկին միացրուց Ջենկիզ Խանի ահագին տէրութիւնը որ այն միջոց մանր մասունք բաժանուած էր և աւերելով անցաւ Ասիա։ Տիրեց Թաթարստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, և փոքր Ասիոյ։ Լենկթիմուրի աշխարհակալութեան ժամանակ շատ բազմամարդ քաղաքներ իսպառ աւերեցան, և նորա յաղթութեանց յիշատակութեան համար կշինէին աշտարակներ մարդկային գլուխներից։ Նա կպատուէր միայն ուսումնականաց, հրամայից որ դիտնական անձանց չվնասեն, և շատ անգամ նրանց հետ ժամանակ կանցուցանէր։ Երբ նրա հրամանաւ Հալեպ քաղաքը կայրէին թշուառ ժողովրդեան ձայնը օրք կրակի մէջ կայրուէին, ամենևին ներդործութիւն չունեցաւ նրա վերայ, նա հանդիստ անվրդով կխօսակցէր նրանց Մօլլաների հետ։

Պայազիտը հպարտացած Եւրոպիայում ունեցած իւր յաղթութիւններով՝ սկսաւ պատերազմել նա և Լենկթիմուրի հետ, փոքր Ասիայում Անկիւրիա քաղաքին մօտ հանդիպեցան միմեանց զօրքերը որք կազմած էին չանազան ցեղերից (Պայազիտի զօրաց առաջին կարգը Սերբացիներից էր կազմած)։ Կըպատմեն թէ մօտ մէկ միլիոն զօրք կար այն պատերազմի մէջ։ Բայց բախտը չբերաւ Պայազիտը յաղ-

թուականը (1405), և դերութեան մէջ մեռաւ, փոքր միջոցէն զէնի Լէնկթեմուրն էլ մեռաւ, Զմիւռնայեանի պատերազմի ժամանակ։ Այս ժողովեց Մողոլաց զօրագլուխաց և ասաց, իմ և ձեր հոգոց վերայ շատ մեղք կայ, մինչ Մահմետականաց արիւնը շատ թափեցինք, ժամանակէ ուրիշ արեամբ մաքրել մեր մեղքերը, եկէք այժմ գնանք Հեթանոսաց վերայ այնէ Զմիւռնայեան։ Լէնկթեմուրի մահուանէն զէնի նորա տղային տէրութիւնը կրկին մաս մաս բաժանուեցաւ։ Իսկ վայրենի Մողոլները կրկին նախկին սովորութեանը համաձայն սկսան իրենք թափառել փոքր Ասիոյ անապատներուն, նոցա երդոց մէջ կ՚լիշուին երբեմն իրենց նախնեաց փառքը ու քաջութիւնը։ Այն հարուածը Լէնկթեմուրը տուաւ Տաճկաց տէրութեան՝ բաւական միջոց Օսմանցիք դադարեցան պատերազմելուց, և 50 տարի Կ. Պոլիսը աղատ մնաց Տաճիկներից։ Եւրոպայի ազգերը այն միջոցէն ոչինչ օգուտ չկարողացան քաղել, նոքա ժամանակ տուին Տաճկաց կրկին իրենց նախկին ուժը և կարողութիւնը ձեռք բերելու և կրկին պատերազմելու Եւրոպացուն։ Թիւզանդիոյ կայսերութիւնը համարեա թէ իւր բոլոր նահանգները կորսրել էր, այժմ ունէր միայն Կ. Պոլիս քաղաքը և փոքր ինչ շրջակայ տեղեր և կայսրը արդէն իսկ հարկատու էր Սուլթանին։

Յովհաննէս Պալէոլոգ կայսրը Թիւզանդիոյ կամենալով իւր տէրութիւնը փրկել թշնամեաց ձեռքէն, և արևմտեան Եւրոպայէն օգնութիւն առանալու,

ազգաւ մասդրուց Յունաց եկեղեցին Հռոմայ եկեղեցւոյ հետ միացնելու, և իրեն եպիսկոպոսաց հետ միասին գնաց Իտալիոյ, Փլորենտիա քաղաքում հոգևոր ժողովոյ մէջ պապի իշխանութեան և քաւարանի վերայ երկար վիճելուց զինի այսպէս որոշեցին և սահմանեցին որ երկու եկեղեցիքը միացաւ և այս միութիւնը կոչուեց,, Փլորենտեան դաւանողք գլխաւոր պապին (1439) թ։ Պապն էլ որ խոստացել էր արևմտեան պետութեանց կողմից օգնութիւն տալու, չկարողացաւ իրեն խոստմանը համաձայն օգնութիւն հասուցանել միայն կարողացաւ համոզել Լեհաց և Հունգարացւոց թագաւոր Վլատիսլաւ գ- (Վագիլոնի որդին)։ Վլատիսլաւը քաջ, բայց դեռևս անփորձ պատանի՝ գնաց պատերազմ Հունգարացւոց Իան Հունիատ սպարապետի հետ, որ երևելի էր իւր քաջութեամբ ընդդէմ Տաճկաց (Մատթէոս Վորվինի հայրն էր)։ Վլատիսլաւը մեծ անզգուշութեամբ և սակաւաթիւ զօրքով մտաւ Թշնամեաց հողը, հասաւ մինչև Սեաւ ծովու ափունքը և Վառնա քաղաքին մօտ հանդիպեց Մուրատ Սուլթանի բազմաթիւ զօրաց։ Առաջին պատերազմը քրիստոնէից համար յաջող վերջացաւ։ Բայց կրակոտ Վլատիսլաւը չբաւականացաւ իւր յաջողութեամբ իրեն յաղթութեան վերայ հպարտանալով՝ իրեն Լեհացի թիկնապահներով հեռացաւ գլխաւոր զօրքից և յարձակուեց Սուլթանի անթիւ հեծելազօրաց վերայ։ Երբ վիրաւորեալ ձին ընկաւ գետին, ենիչերներից մինը Վլատիսլաւը գլխատեց։ Նիզակի վերայ

բարձրացած կանէր։ Այս անբաղդութիւնը մեծ հարուած տուաւ Բրիստոնէից, բոլորովին վհատեցան և մեծ ջարդ կերան Տաճիկներից (1444 թ.)։

Մուրատի բ. որդին Մահմէտ կամ Մէհէմմէտ բ. մեռադրուեց որ իւր հօր նպատակը ինքը առաջ տանի այն էր Կոստանդնուպոլիսը առնի, նա պաշարեց քաղաքը երկու հարիւր յիսուն հազար զօրքով՝ ապրիլ ամսում 1453 թ։ Կոստանդիանոս ժ. Պալէոլոգը Բիւզանդիոյ վերջին կայսրն էր։ Նա իւր կոչմանը համաձայն քաջութեամբ և անվեհեր սիրտ ունենալով, սկսեց պատրաստուել պատերազմելու, բայց նորա ոյժը համեմատելով Տաճկաց զօրութեան հետ ոչինչ բան էր, ունէր միայն հօթը հազար զօրք, նոքա կպաշտպանէին Պոլսոյ պարիսպները, Ջենովացիք և Վենետիկցիք էլ փոքր ինչ օգնութիւն տուին։ Այն պատերազմի ժամանակ կայսեր աջ բազուկն էր Ջենովայի փորձեալ և հմուտ զիւցազն Ջիուստինեանը։ Մէհէմմէտը սկսաւ քանդել պարիսպները հին մեքենաներով և նոր գտած հրացաններով և թնդանօթներով։ Կպատմեն թէ նա ունէր մի ահագին թնդանօթ՝ որոյ տանելու համար հարիւր լուծ եզն էր պատրաստուած մեծ քարեայ գնդակներ էր արձակում։ Կպատմեն թէ պաշարման ժամանակ յանկարծ այն թնդանօթը ձեղքուեց և սպանեց իրեն շինող արհեստաւորին։ Այն միջոց չգիտէին օրինաւոր դործ դնելը նորագիւտ թնդանօթաց և այդ է դլխաւոր պատճառը որ նոքա Պոլսոյ պարիսպներին մեծ վնաս չպատճառեցին։ Պոլսոյ նաւահանգիստ

մոնելու անցքը, որ կիսուն Ոսկեղջիւր փակուած էր երկաթէ շղթաներով այնպէս որ Տաճկաց նաւերը չկարողացան անցնել, ծովային ճանապարհաւ քաղաքին մերձենալ։ Սուլթանը հրամայեց որ նաւերը ցամաքով տանեն և մոցնեն նաւահանգիստը, և տախտակների վերայ տանելով որ իւղած էր կարողացան սողալով տանել նաւերը և մոցնել նաւահանգիստը։ Վերջապէս Մայիսի 29 ին Մէհէմմէտը վերջին յարձակմունքը տուաւ։ Բիւզանդիոյ պաշտպանները անօրինակ քաջութիւն ցոյց տուին, կայսեր քաջութեամբ խրախուսուած՝ որը իբրև հասարակ զինուոր կռուեցաւ։ (Կայսրը առաջին երեկոյին խոստովանուեց և ընդունեց սուրբ Հաղորդութիւնը բարեւեց բոլորեցուն և գնաց պատերազմ)։ Աստիկ պատերազմի ժամանակ վիրաւորեալ Ջիւստինիանը հեռացաւ պարսպից։ Նորա բացակայութեամբ մեծ վհատութիւն տիրեց զօրաց վերայ։ Տաճիկները սրանից մեծ օգուտ քաղեցին և յանկարծ մտան քաղաքը սկսան այնուհետև սաստիկ կոտորել և կողոպտել ողորմելի ժողովրդոց։ Ինքն Կոստանդիանոսը պատերազմում սպանուեց, նրան վերջը դատն դինուորաց մէջ և կարողացան ճանաչել նրա թանկագին կօշիկներից որը զարդարած էին ոսկի արծիւներով, գլխատեցին և բարձր աշտարակի վերայ մի փայտից կախեցին ի տես բոլոր ժողովրդեան, երեք օր սրածութիւնը շարունակուեց Պօլսոյ մէջ, վասնզի Սուլթանը առաջուց խոստացել էր զօրաց որ քաղաքը երեք օր իրենց կյանձնէ։ Տաճիկ-

նները անբաւ գանձ և հարստութիւն ժողովեցին այն տեղից, և դերեաց իրենց սարսուկ դարձրին։ Շատ երևելի արձաններ և հնութիւններ ոչնչացան այն երեք աւուր մէջ անկիրթ Տաճիկները սկսան կոտորել երևելի մարմարիոնեայ արձանները, իսկ ոսկի և արծաթի անօթները կհալեին որ վերջը հաւասար բաժանեն իրենց մէջ։ Մէհէմմէտը հրամայեց որ շինութեան ձեռնամուխ չլինին, պատճառը որ իրեն համար մայրաքաղաք էր ընտրել, հոյակապ սրբոյն Սոփիայի տաճարը մզկիթփոխեցին, և կաթողիկէի խաչին տեղը կիսալուսնի ձևը դրին, այս կերպիւ վերջացաւ Բիւզանդիոնի ահագին կայսերութիւնը, և նրա աւերակաց վերայ հաստատուեց Տաճկաց ահարկու տէրութիւնը հետզհետէ սկսաւ ընդարձակուել, և նրա հետ միացաւ Պալքանեան թերակղզին, Մորայի և Սեաւ ծովու հիւսիսային եզերաց հետ, փոքր Ասիան, Ասորիքը, Եգիպտոսը, և Աֆրիկէում Պերբերիստան նահանգը։

Մէջնադարեան վիճակը։

Մինչև դարերում զլխաւոր ժողովրդական կարգն կկազմէին կալուածատիրական ազնուականները, (Ֆէոդալ)։ Ինչպէս յայտնի է, նոքա ծագեցան մեծաւ մասամբ Գերմանիոյ կամաւոր զինուորներից, որք իրենց զինուորութեամբ շատ տեղ Եւրոպական տէրութիւնք հաստատ պահպանեցին։ Այս զինուորները թագաւորներից վարձ իրենց ծառայու-

թեամբ երկիր կատանային, նոքա թագաւորի նեղ միջոցը միշտ օգնութիւն կհասնէին օրինաւոր կերպիւ զինուորեալ և հեծելազօրք կազմած և ով որ շատ հող ունէր՝ նա առաւել շատ մարդ կպատրաստէր պատերազմի ժամանակ։

Փոքր միջոց անցնելով՝ կալուածական ազնուականք միւս ազնուականներից բարձրացած մեծ երկիրներ ձեռք բերին և մեծամեծ տիտղոսներ ստացան դքսութեան, մարգիզութեան, կոմսութեան, պարոնութեան, նոքա ևս ունէին վասալներ, որոց իրենց կողմանէ հող կտային։ Կալուածատէր ազնուականք առհասարակ ամրոցներում կենակէին։ Այն ամրոցները բարձր լերանց վերայ կշինէին, մինչև անգամ շատերին անմերձենալի էր, մեծ պարսպապատ և բուրգերով զարդարած։ Պարսպի չորս կողմը խոր խրամ կփորէին, երբեմն ջրով լցրած, և այն խրամի վերայ կար շարժական կամուրջ շղթաներով շինած որ հարկաւոր միջոց միայն կթողնէին խրամի վերայ, իսկ մնացած ժամանակ կբացբացընէին, շատ ամրոցներ ունէին երկու երեք պարիսպ, նոյն թուով և խրամներ էին փորած իրենց կամուրջներով։ Ներքին յարկը որ հողին մէջն էր, այն տեղ էր իրենց գումարը, սաորերկրեայ բանտը, մառանը, շտեմարանը, իսկ երկրորդ յարկին մէջ բնակութեան տեղը, փոքրիկ սենեակներ էին նեղ պատուհաններով, միայն թէ պարոնների ընդունելութեան և իրենց բնակութեան սենեակները ընդարձակ էին և զարդարած, պատերի վերայ կկախէին թանկագին

զէնքեր, եղջերուաց և եղնիկի գլուխներ, և որսորդութեան զանազան գործիքներ սրահի մէջտեղն էր գլխաւոր աշտարակը ուր կպահուէր գանձը, հարկաւոր թղթերը և թանկագին հնութիւնները, երկաթ ստորերկրեայ ճանապարհները կշինէին երկիր գի համար նրանց ճանապարհը կհասնէր մինչև որ ուիցէ անտառ կամ դաշտ, որ տեղից որ վտանգի ժամանակ կարող էին դուրս գալ և փախչել։ Յայտնի բան է որ փոքրիկ պարոնների ամրոցները անհամեմատ առաւել փոքր էին լինում, նեղ, մութ և կոպիտ շինութիւն առանց զարդուց, իսկ հարուստ պարոնայը մեծ էին, շքեղ և լաւ զարդարած, օրինաւոր քանդակագործութեամբ և կամարներով և իրենց պալատները շատ գեղեցիկ շինուածք էր լինում. աղնուականք առ հասարակ ասպետ (ձիաւոր) կկոչուէին, և առանձին հանդիսով կատարար ասպետութեան պատիւը։ Աղնուականաց որդիքը մեծաւ մասամբ ամրոցներում կուսանէին, մանաւանդ երևելի ասպետաց մօտ, և մանկութեան ժամանակ իբրև աղնուատոհմ պատանի կծառայէին, իսկ յետոյ իբրև զինակիր։ Այդ միջոցում նոքա կսովորէին պատերազմական ձևերը, և այն նեղութիւնները կկրէին որ պատերազմի ժամանակ միշտ կպատահին նրանց։ Զինակիրը իւր ասպետի հետ կերթար պատերազմ, նրա ձին և զէնքը կպահպանէր և միշտ նորա հետ միասին կպատերազմէր։ Եւ վերջը նորա քաջութիւնը տեսնուելով ասպետութեան տիտղոսը կատարար։ Ասպետութեան տիտղոսը երբեմն այս տեսակ հանդիսով կատա-

յին։ Օ.ինակիրը մի միջոց պահք կպահէր, և առաջին գիշերը աղօթիւք կպարապէր եկեղեցւոյ մէջ, միւս առաւօտուն կերթար բանկիք և կհագնէր սպիտակազոյն և կարմրազոյն հանդերձ, այն էր որ նա իրեն միշտ մաքուր և անարատ պարտական է պահպանելու և յանուն Քրիստոսի իւր արիւնը թափելու։ Հանդէսը եկեղեցւոյ մէջ կկատարուէր, և այն էլ դլխաւոր ասպետի ձեռամբ։ Նրիատարը կերդուէր և կխոստանար որ սրբութեամբ պահպանի աստուածութեան կոչումը և պահանջմունքները, այն է բարեպաշտութիւն, արդարութիւն, տկարաց օգնութիւն, մանաւանդ որբոց և այրեաց պահպանութիւն։ Յետոյ նրան կտային ոսկիէ շինած զարդ որ կոշկի ծայրին կլինէր, այն ասպետութեան նշան էր յետ այնորիկ ձեռնադրողը երիք անգամ սրոյ տափակ երեսով թիկունքին կդարնէր, և նրանով հանդէսը կլվերջանար։ Նոր ասպետը կհիծնէր ձի, և ցոյց կըտար իւր քաջութիւնը և պատերազմական հանճարը, և շատ անգամ կսկսէր ուրիշ ասպետի հետ մենամարտել։ Յետոյ հացի կոանէին, և պարգևներ կրաժնէր հիւրոց։ Հարուստ ասպետները մեծ հանդիսով կկատարէին, իսկ աղքատները հասարակ կերպիւ։

Ասպետաց զինուորական պարագայքը սոքա էին՝ պողպատեայ ամուր զրահ, որ հատարեայ թէ ամբողջ մարմինը կծածկէր, սաղաւարտ որ փետուրներով կամ ձիու բաշով զարդարած էր, երկաթեայ երեսի պահպանակ, այնպէս էր շինած որ մի-

այն աչքերը կերևային, ձեռքերը և ոտքերը նոյնպես երկաթեայ զրահով էր պաշտպանուած։ Բացի սրբանից ունէին նաև վահան։ Եւ ասպետը ինչպես տեսանք՝ գլխիցը մինչև ոտքը երկաթով էր պատած և այս էր գլխաւոր պատճառը որ միջին դարուց պատերազմաց ժամանակ մեծ արիւնհեղութիւն չէր պատահում (արիւնհեղութիւն կպատահէր վատ զինուորուած հեսուակ զօրաց մէջ)։ Պատերազմի ժամանակ եթէ ասպետի ձիւ սպանուէր, նա իւր զինուծանրութիւնից այլ ևս կարող չէր ազատ շարժել։ Ասպետաց ձիաները նոյնպես զրահով պատած էին։ Ասպետի գլխաւոր զէնքն էր երկայրի սուրբ՝ խաչաձև կոթով և երկար նիզակ, ասպետին կհետևէին իրեն զինակիրը և քանի մի էլ ուրիշ զինուորական մարդիկ (և միշտ վեց հօթը մարդ կլինէր մի ասպետի հետ)։

Ասպետաց սովորութիւններից մինն էլ այս էր որ նոքա իգական սեռը շատ կյարգէին։ Ամ հասարակ ասպետը կընտրէր իրեն համար մի,, կին իրեն սրտի,, և նրանից մի որպիսի ևիցէ յիշատակ կտանար, ինչպես մատանի, և մեծաւ մասամբ փնջաղարդ աղջուխ բրդեայ որ թիկանց վերայ կպահէր, ի պատիւ այն տիկնոջ մեծամեծ քաջութիւնք կգործէր։ Պատուածապետ ասպետները կոպիտ լինելով և ոդէտ, որ ոչ կարդալ գիտէին և ոչ գրել, նոքա իրենց խոսուածն և երդումն, այսինքն՝ արդարութիւն և վեհանձնութիւն չէին պահպանում, սակայն մի և նոյն ժամանակ մեծ յարգութեամբ կվարուէին կանացի սեռի հետ։ Այն օրից սկսաւ Եւրոպայում տարած-

ուել կանանց հետ սիրով և քաղաքավարութեամբ վարուելը։ Ասպետները միշտ իրենց պատիւը կպահպանէին և թէ նոյա որ ելիցէ մարդ վերաբերէր նոքա մենամարտելու կհրաւիրէին։ Այս մենամարտութիւնը վերջը Եւրոպա էլ տարածուեց։ Խաղաղ ժամանակ ազնուականք իրենց ժամանակը կանցուցանէին ուրախութեամբ, որսորդութեամբ, և պատերազմական խաղերով (որ Թուրնիր կասուէր)։

Թուրնիրը այսպէս կսկսէին՝ թագաւորը, դուքսը կամ հարուստ իշխանը որ ելիցէ տօնի կամ հանդիսի պատճառաւ կհրաւիրէր դրացի ասպետաց։ Թուրնիրի համար կպատրաստէին մի մեծ հրապարակ շրջապատած վանդակով, տիկնայք և միւս հանդիսականք այն հանդիսին կնայէին պաշտամունքից։ Նշանակեալ օրը, ասպետները կժողովէին գենուորեալ, ասպետները իւրեանց երեսի պահպանակը մինչև վերջը չէին բարձրացնում և նրանց չճանաչելով՝ իրենց վահանի վերայ եղած պատկերով կանուանէին, ինչպէս ասպետ առիւծի, վիշապի, խաչի ևն. (ազնուականք այն տեղից առին իրենց ազնուականութեան նշանակը կնիքը)։ Յետոյ ասպետաց պարտաւորութիւնն էր գոնեա Թուրնիրի դատաւորներից մէկին յայտնելը իւր անունը, որպէս զի ոմանք մարդ Թուրնիրի մէջ չի գտնուի։ Դրանց սկսելով միմեանց հետ մենամարտել, շատ անգամ մեծ վէրք կհասցնէին միմեանց և դատաւորները քաջութեանց համաձայն յաղթողներին, նոյնպէս տիկնայք կպարգևատրէին նրանց, կտային ոսկի շղթայ կամ ոսկի պսակ կամ

ոսկի թելով զարդարուած գօտի։ Այս թուրքերաց ժամանակը ազնուականաց կանայք շատ շքեղ կերպով կզարդարուէին, և միշտ նրանցից մինը կընտրուէր թագուհի ուսնախմբութեան։ Հատատուն ամբոցները, երկաթեայ և պղնձեայ զրահները և զէնքերը և մարմնոյ կրթութիւնը և արագաշարժութիւնը, որ ի մանկութենէ կուսանէին, պատճառ եղան որ ասպետները միջին դարերում քանի մի դար մեծ նշանակութիւն ունէին Եւրոպայում, մինչև վառօդի գտնուիլը և կատարելագործուիլը։ Դիւղացիք, որք կընակէին ազնուականաց հողի վերայ, բոլորովին սարկութեան մէջ էին, նոքա կապրին իրենց պարոնաց ցորեան, կաթ, ձու, և ամենայն բերքից որոշեալ մաս, իրենք էլ ամենադժուար ծառայութիւններ կկատարէին իրենց տիրոջ մօտ շատ անգամ գանահար կլինէին, և մինչև անգամ սրոյ ճարակ, դատաստան չկար նրանց համար։ Ա. հասարակ միջին դարերում դիւղացիք ամենաթշուառ դրութեան մէջ էին։ Եւ այս էր պատճառը որ դիւղացիք յաջող միջոց գտնելով շուտով կապստամբէին և բարբարոսաբար իրենց վրէժը կառնէին ազնուականներից։ Ա. յսպլիսի ապստամբութիւն պատահեց հիւս. Գերմանիայում ժդ. դարում, և այս ապստամբութիւնը յայտնի մեղ Ժաքերի անուամբ, այս ապստամբութեան դադարացնելը շատ դժուարութեամբ եղաւ, մեծ բաղմութիւն կոտորուեցին, և շատ դիւղօրայք էլ խսպառ ջնջուեց կրակից։ Գլխաւոր հոգևորականքն էլ աշխարհականաց նման կալուածատէր իշխան էին, Ե-

պիսկոպոսունք, որոյք ունէին մեծ կալուածատէրունք, և կրաժանէին ասպետաց, որով նոքա հոգևոր աղնուականաց կհպատակէին: Գլխաւոր հոգևորականք նոյն կեանքը կվարէին ինչպէս և քաղաքական իշխանները, և դրամական միջոցն էլ կնոյնէր նրանց շուայլ կեանք վարել: Նոքա էլ աշխարհականաց նըման մեծ խնջոյք կատային որսորդութեամբ կպարապէին և շատ անգամ պատերազմ էլ կերթային շատ երևելի վանքեր ուղղակի կախումն ունէին պապից, ամենայն իշխանից կամ եպիսկոպոսից: Նոքա էլ իրենց կանոնապրութեամբ կարգեր և ընկերութիւններ կրաժանուէին, առաջին ընկերութիւնը էր Բենեդիկտեան: Այս կարգի վարդապետները ուխտել էին խիստ կեանք վարելու, և իրենց ժամանակը աղօթիւք և աշխատութեամբ անցուցանելու, և իրենց հարստութիւնը հասարակաց լինելու: Նոքա երկրագործութեամբ կպարապէին, միշտ գրեանք կարտագրէին ուսումնարաններ կհիմնէին և կքարոզէին հեթանոսաց ճշմարտութեան բանը: Բենեդիկտեանք երկար ժամանակ մեծ համակրութիւն ունէին և մեծ յարգանք: Բայց ժամանակի հետ իրենց չափաւոր և խիստ կենցաղավարութիւնն էլ այլ տեսակ փոխուեց: Այս կարգերից երևելիքն են կամուր աղքատաք Փրանկիսկեանք և Դոմինիկեանք: Նոքա կըխոստանային և կերդուէին որ կթողուն իրենց կալուածքը և աղքատութեամբ ապրելու են այնուհետև, հիւանդաց օգնելու են և քրիստոնէութիւն քարոզելու, քանի որ իրենց խոստումն կկատարէին՝ սաքա էլ

շատ սիրելի էին ժողովրդեան, բայց հետզհետէ սրանք էլ սկսան դրամ ժողովել, և միայն արտաքին ձևով, կեղծաւորութեամբ կվարուէին իրրև կրօնաւոր։ Դոմինիկեանց գլխաւոր գործն եղաւ հերետիկոսաց հալածելը, և իրենց ձեռքին էր հողևոր կրօնաքննութիւնը Ինկվիզիցիան այս Ինկվիզիցիան ամենեան խստութեամբ կջնջէր Աղիգեանց հարաւային Գաղղիայում, և շատ հերետիկոսաց ի հուր մատնեցին Սպանիայում։

Աշնուականաց և հողևորականաց յետոյ երրորդ կարգն էր քաղաքացւոց, քաղաքաց թիւը Եւրոպայում սկսաւ հետզհետէ բազմանալ։ Շատ գիւղեր որք ամրոցների մօտ էին իրենք էլ սկսան խրամներ փորել, ջրա՞կողմը, և պարիսպներ շինել և իրաւունք կտանային կալուածատէրից որ իրենց համար կառավարիչ ընտրեն, և այսպէս քաղաքներ հիմնեցին։ Պաշտպանութեամբ քաղաքները հարստացան, և հարստութեամբ կարողացան հետզհետէ աշնուականաց իշխանութենէ ազատուել, այն էլ երբեմն զրամով երբեմն էլ զենուորութեամբ։ Քաղաքացիք երբեմն էլ իրենք կկազմէին զօրք, բայց շատ անգամ վարձու կպահէին, շատ քաղաքներ երիրս պարսպով էնի ամրացած և մարտկոցներով, գնների վերայ կային մեծ աշտարակներով ուր պահապանները կընակէին և յարձակման ժամանակ շուտով քաղաքին լուր կտային, քաղաքի պարիսպն էր գլխաւոր պատճառը որ քաղաքը չէր ընդարձակւում և անները միմեանց շատ մօտ կշինէին, և այդ էր պատճառ որ փո-

ղոցները շատ նեղ էին և հրդեհ պատահելուց մեծ վնաս կտար քաղաքին, բայց աժանութեան պատճառաւ շուտով կնորոգուէր։ Գլխաւոր հրապարակի միայն բարձր աշտարակ կար շինուած նեղ պատուհաններով։ Այն տեղ էր նոցա քաղաքական խորհրդարանը բնարեալ ատենակալներից կազմեալ։ Պուրկոմիստարի նախագահութեամբ (Գերմանիայում), իսկ Մերի նախագահութեամբ (Գոտղիայում և Անգլիայում)։ Այս քաղաքական խորհրդարանի անդամները և միւս պաշտօնական անձինք առհասարակ հարուստ տեղից կընտրուէին (Հռովմայեցոց պատրիկաց նման)։ Քաղաքի արհեստաւորք ըստ իրենց արհեստի կրաժանուէին օրինակի համար մատդործք, կօշկակարք, դերձակք և այլն. նրանք առանձին ընկերութիւն կկազմէին, ունէին իրենց համար գլխաւոր օրէնքներ։ Իւրաքանչիւր արհեստաւոր միայն իրեն արհեստը կճանաչէր, եթէ նա ուրիշ գործով պարապէր, կպատժուէր և տուգանք կվճարէր։ Պատերազմի ժամանակ իւրաքանչիւր հասարակութիւն արհեստաւորաց իւրեանց դրօշակով իւրեանց գլխաւորի առաջնորդութեամբ պատերազմ կերթային։ Տօն օրերը նոյնպէս այս ընկերութիւնները իւրեանց դրօշակներով մեծ հանդիսիւ կպաշտէին փողոցները։ Մեծ և վաճառաշահ քաղաքներում տօնախմբութիւնք մեծ հանդիսով կկատարէին և շատ շռայլութեամբ, փողոցներում կպատրաստէին սեղան, ահագին խորոված եղներ և գինի։ Ուկեղցիքը և ամբոցները և հասարակաց շինութիւնները կը-

զարդարուէին զոյն զոյն գորգերով և դրօշակներով, երեկոյեան ժամանակը փողոցներում հրավառութիւն կլինէր և ժողովուրդը գեղեցիկ հանդիսաներով կպտրտէր։ Ամ հասարակ քաղաքացիք կսիրէին մեծամեծ խնջոյքներ պատրաստել, մանաւանդ հարսանեաց և թաղման ժամանակ։ Գարնան սկիզբն կպարէին երդելով սրնդաց վերայ, և մարմնակրթական զանազան խաղերով կպարապէին, այս ասնը կը-կոչուէր մայիսի ասնախմբութիւն։

Բայց անկրթութեան դար լինելով այս ասնախմբութիւնք առանց արիւնհեղութեան չէին վերջանում։ Փողոցներում յանկարծ կպատահէր կռիւ զանազան կարգերի մէջ, քաղաքացիք կկռուէին աղնուականաց հետ, արհեստաւորք ուսումնականաց ևլն։ Սորա գլխաւոր պատճառն էր արբեցութիւնը, նոքա / բինց հետ միշտ սուր կպահէին (մանաւանդ Գերմանացիք կսիրէին չափազանց գործածել գինի և գարեջուր)։

Մինչև դարու վաճառականութիւնը գլխաւորապէս հրէից ձեռքին էր։ Այս խելացի և աշխատասէր ժողովուրդը հետզհետէ ցրուեցաւ ամբողջ Եւրոպայում և կարողացան մեծ հարստութիւն ժողովել։ Մանաւանդ հարստացան լոմբարդոխները որ մեծ տոկոսաւք դրամ կտային ուրիշ վաճառականաց, սակայն այս ողորմելի ազգը մեծ հալածանաց կհանդիպէր։ Գերմանիայում և Գաղղիայում անկիրթ ժողովրդականք հրէից կկողոպտէին և կկոտորէին շատ անգամ զրպարտելով նրանց։ Եթէ ժանտախտ պա-

տահեր, հրեից կմեղադրէին, իբր թէ նոցա կախարդութեամբ առաջ կգայ, և կսկսէին կոտորել և ջարդել նրանց։ Նոցա մեծ հարուած հասուցին խաչակրաց պատերազմի ժամանակ, երբ ժողովրդեան մէջ կաթոլիկաց հոգևորականք կրօնամոլութիւն տարածեցին։ Այն հարուածը ստացան նոքա ժդ. դարում երբ «Սև մահ» անուամբ ժանտախտ պատահեց, որ ոչ թէ հրեայք էին մեղաւոր, այլ Իտալիայի նաւերը գալով Ասիայէն՝ նոքա բերին այն ցաւը, որ տարածուեց ամբողջ Եւրոպայում։ Գռեհիկ ժողովրդականք կարծեցին թէ Աստուծոյ հաճելի կլինի, և ժանտախտը կվերանայ եթէ նոքա կոտորեն հրեից և սկսեցին ստրատիելի կոտորած։ Շատերն էլ իրենց այնքան կջարդէին մինչև որ արիւն կթափէին իրենցից, որպէս զի Աստուած դթայ նոցա վերայ և ժանտախտը վերանայ։

Մինչև դարերում շատ բարբարոս դատաւորներ կային, ինչպէս կտեսնենք նա և Ինկվիզիցիայի ժամանակ, դատաւորները շատ անգամ դատապարտեալի աչքերը կհանէին, ականջները և քիթը կկտրէին և կհանէին և կայրէին ողորմելի բանտարկեալներ։ Մինչև դարուց վերջերում դրաւոր օրէնքներ հրատարակուեցան, Գերմանիայում դուրս եկաւ օրէնք Սաքսոնիոյ անուամբ։ Համալսարաններում սկսան ուսուցանել Հռովմայ իրաւաբանութիւնը, որ վերջին օրէնսդրութեան հիմն դարձաւ։

Մինչև դարուց կրօնական և զինուորական բնութիւնը յայտնի կերևայ իւրեանց շինութեանց վե-

բայ, որ կոչուեց գոթացի (Գերմանական) ոճ։ Գոթացի ճարտարապետութեան յիշատակները են ամբոցները, վանքերը, քաղաքաց բանտերը մանաւանդ մայր եկեղեցիքը։ Գոթացի տաճարները առ հասարակ շատ բարձր էին շինում, ինչպէս Սթրասպուրգ քաղաքի եկեղեցոյ զանգակատունը, որ աշխարհիս վերայ այնպիսի բարձր շինութիւն չկայ։ Գոթացի ճարտարապետութեամբ շինուած երեւելի շինութիւնները են Կոպենիոյ (Ռէնի) մայր եկեղեցին, Վենետիկի Սան-Մարկոսի զանգակատունը և Վիսթմինսթրի աբբայարանք Լոնտոնում, Իտալիայում, մանաւանդ Ռիզանդիոյ կայսերութեան մէջ հին ճարտարապետութիւն կար որ մնացած էին Հռովմայեցիներից և Յոյներից։ Յունաց ճարտարապետութեամբ շինուած ամենաբարեւելի տաճարն է սրբոյն Սոփիայ մայր եկեղեցին Յուստինիանոս մեծից շինուած։ Մինչեւ պատկերները բոլորը սրբազան պատմութիւնից են առած, Քրիստոսի պատկերն է, Աստուածածնայ և սրբոց։ Իսկ Գոթացի տաճարները առ հասարակ արձաններով կղարդարուէին։

Վերջապէս եկեղեցական ժամերգութեան մէջ էլ զանազանութիւն կար, արեւմտեան եկեղեցին Լատինացւոց ժամերգութեան ժամանակ ունէր նա և նուագածուք իսկ արեւելեան եկեղեցիքը ոչ։ Մինչեւ դարուց վերջերում Իտալիայում շատ ծաղկեց նկարչութեան արհեստը, և փոխանակ Ռիզանդիոյ ցամաք պատկերաց, այժմ Իտալացիք սկսան նկարել ամենագեղեցիկ պատկերներ, որ շատ կենդանի տեսք

կոային։ Ինչ որ կվերաբերի ուսման, միջին դարերը անկրթութեան դարեր էին, մինչև անգամ ազնուականք և երևելի անձինք գրել և կարդալ չգիտէին, ուսումնականք միայն հոգևորականք կհամարուէին։ Այն դարերում դեռ ևս չգիտէին ապագրութեան արհեստը, և միայն ձեռագրաց վերայ կուսանէին, նոքա մագաղաթի վերայ կգրէին, վասն զի հասարակ թուղթ շինելը դեռ չէին հնարել։ Այս էր պատճառը որ գրքերը շատ թանդ էին և հազուադիւտ, ձեռագրաց արտագրութեամբ մեծաւ մասամբ վանականք կպարապէին։ Երևանց խցերում հանգիստ միշտ գրքութեամբ կպարապէին և շատերը այնպէս դեղեցիկ կգրէին որ այժմ շատ անգամ ապագրած գրքից չենք կարողանում որոշել։ Ձեռագրաց մէջ գլխաւորները առ հասարակ շատ զարդարուն էին և տեսակ դոյներով ներկած։ Ուսումնական յօդուածները այն դարերում լատիներէն լեզուաւ կգրէին և Հռովմայեցիներից այդ լեզուն մնաց և եկեղեցական ժամերգութեան մէջ և հոգևորականք պարտաւորեալ կուսանէին Լատինաց լեզուն։ Եւրոպայի առաջին ուսումնարանները հիմնուեցան վանքերից և եկեղեցեաց սրահներում, և այն էր պատճառ որ կրօնական ուղղութիւն ունէին։ Գլխաւոր առարկան էր աստուածաբանութիւնը իսկ աստուածաբանութիւնը կասուէր նա և փիլիսոփայութիւն, ուսումնական աստուածաբանք կաշխատէին հաստատել այնպիսի օրէնքներ կաթոլիկաց դաւանութեան համար ոչ թէ միայն աւետարանական, այլ և փիլիսոփայական

ապացուցութիւնք։ Նրանք Արիստոտելի փիլիսոփայութեանը վերայ կուսանէին, որ Լատինաց լեզուաւ թարգմանած կար։ Մինչեւ դարու ուսումնականաց կանուանէին գօֆոգ, (ուսուցիչ կամ վարդապետ) շատ անգամ այն ուսումնականը միմեանց դէմ կգրէին, իսկ եթէ պատահէր որ պապի կամ հոգեւորականութեան դէմ գրէին, նոյն ժամայն կդատապարտէին և հերետիկոս կանուանէին։ Այս հարուածը սատանայաւ ուսումնական Աբելիար ժբ. դարու գիտնական աստուածաբանը։

Աբելիարը Գաղղիացի մի ասպետի որդի էր, բայց արհեստ սիրելով թողաւ իւր կոչումը, պարապեց փիլիսոփայութեամբ և աստուածաբանութեամբ, և հիմնեց իրեն համար ուսումնարան։ Աբելիարը միւս ուսումնականաց հետ երբ գրաւոր կերպիւ ուսումնական վէճ կմանէր, ինքը միշտ յաղթող կհանդիսանար իրեն ճարտարութեամբ, և սրանով կարողացաւ շուտով մեծ համբաւ ունենալ։ Մի և նոյն ժամանակ Աբելիարը կուսուցանէր մի հարուստ մարդոյ քրոջ աղջկան Էլոյիզին։ Այն խելացի և գեղեցիկ օրիորդը սիրեց իւր ուսուցչին թողաւ իւր հարուստ տունը և ծածկապէս ամուսնացաւ նորա հետ։ Էլոյիզի եղբայրը զայրացած այն տեսակ վարմանց վերայ սաստիկ կերպով վրէժ առաւ Աբելիարից, հրամայեց իւր ծառայից որ նրա վրայ յարձակուին և վերաւորեն (խեղանդամ առնեն)։ Ողորմելի Աբելիարը Փարիզի մի վանքում կրօնաւորութեան կոչումն ընկալաւ, Էլոյիզան էլ իւր ամուսնոյն հետևելով

կուսանաց վանք մտաւ։ Աբելիարի աշակերտները նորա ճարտարութեան և ուսումնականութեան վերայ սիրահարուած լինելով միշտ կգային նրա մօտ, նորա ճառերը և նորա դասաւորութիւնը լսելու։ Այն քան կժողովէին որ նա պարտաւորած բացօթեայ տեղ կուսուցանէր Յունաց հին փիլիսոփաների նման։ Բայց նա հոգևորականութեան ամենայն տեսակ պակասութեանց և մոլութեանց վերայ կյարձակուէր և կրողքէր, ողորմելի ժողովրդականք կուրօրէն կընդունէին պապի անսխալականութիւնը, նորա թշնամիքը այս լսելով նրան հերետիկոս անուանեցին։ Նա հեռացաւ գնաց մտաւ Հ. ամպանիոյ խիտ անտառը, այն տեղ իրեն համար մի փոքրիկ խրճիթ պատրաստեց և իրեն բնակութեան տեղը, գնացին դաան և կրկին շարունակեցին իւրեանց ուսումը, նախ բնակուեցան ծառերի տակ, յետոյ իրենց համար տներ պատրաստեցին։ Այն տեղը կոչուեց Պարակլետ (այսինքն մխիթարիչ)։ Մի վանքի միաբանութիւնը Աբելիարին իրենց վանահայր ընտրեցին։ Նա դնարով իրեն վանքը վանահայրութեան պաշտօնիս, այն Պարակլետ կոչուած տեղը Էլոյիզային տուաւ, նա էլ այն տեղ կուսանաց վանք հիմնեց, և ինքը մայրապետ ընտրուեց։ Աբելիարի թշնամիք դարձեալ չէին հանդստանում, կարողացան նորա դէմ դրդռել ուրիշ երևելի սրբային Բեռնարդոսին (որ երկրորդ խաչակրաց պատերազմ քարոզողն էր քաջութեամբ)։ Մի կրօնական ժողովում Բեռնարդոսը սկսաւ Աբելիարի քանի մի ասուածաբանական շարադրութեանց

դէմ հակաճառել, և անուանել հերետիկոսի գրութիւնք, պապը ժողովոյ վճիռը հաստատեց: Աբելիարը լսելով զայն խստաս վհատեց, շարադրութիւնները թողաւ և իւր վերջին օրերը միայնակեցութեամբ անցոյց, և յետ մահուան՝ իրեն ցանկութեան համաձայն Պարակլետում թաղեցին: Հաւատարիմ Եղոյիզան էլ նորա մօտ թաղուեց:

Այն ուսումնարանները որք երևելի էին իրենց վարժապետներով և ուր մեծ բազմութիւն ուսանողաց կդիմէր վերջը փոխուեցան համալսարան, այսինքն բարձր ուսումնարաններ դարձան: Դին և ամենէն երևելիքն են Անգլիայում Օքսֆորդի, Գաղղիայում Փարիզու, որ երևելի էր իւր աստուածաբանական գիտութեամբք, Իտալիայում Պոլոնիոյ, ուր իրաւագիտութիւնը շատ ծաղկածէր և Սալերնայի՝ իւր բժշկական գիտութեամբք:

Գրեանց թանգութեան պատճառաւ մեծաւ մասամբ այս առարկաները առանց գրի կաւանդէին ուսանողաց, և այս պատճառաւ լաւ համալսարաններում մինչև անդամ հեռաւոր տեղերից կդային լսելու և ուսանելու երևելի ուսուցիչներից, և շատ համալսարաններում ուսանողաց թիւը մինչև 10,000 կհասնէր: Առ հասարակ խաչակրաց պատերազմներից յետոյ երբ Եւրոպացիք ծանօթացան Բիւզանդիոյ և Արաբացւոց ուսմանց և գիտութեանց հետ, այն ժամանակից սկսեալ Եւրոպայում ուսումնարանաց թիւը սկսաւ հետզհետէ բազմանալ և լուսաւորութիւն տարածուել: Մինչև դարուց ուսումնակա-

նութեան մէջ կար նաև սնապաշտութիւն։ Օրի-նակի համար ուսումնականք որք կդիտէին երկնային մոլորակները կամ աստղերը կկարծէին նրանցից կա-խողն դուշակել ապագայն և նոքա աստղաբաշխ կը-կոչուէին, շատերը կզբաղէին քիմիական գիտու-թեամբ (բնալուծութեամբ), և կաշխատէին գտնել փիլիսոփայական քարը որով կարողանան զանազան մետաղներից ոսկի գոյացնել և դարձեալ՝ գտնեն կե-նաց բժշկական հեղանիւթ, որով կարողանան ծերոց կրկին երիտասարդական հասակ պարգևել, դարձեալ՝ նոքա կհաւատային թէ գիւթութեան արհեստը սո-վորելով կարող են գիւաց հետ հաղորդակցութիւն ունենալ, և նրանց ձեռքով դերբնական գործեր ցուցանել։ Ժամանակակից անց քերի այսինքն միջին դարուց օրաղրողք մեծաւ մասամբ հոգի որականք էին, նրանցից երևելին էր Գաղղիայում, Գրիգոր Տուրոնացին (Թուր քաղաքի եպիսկոպոսը) որ զ. դարու մարդ է և Թողաւ հետաքրքրական պատ-մութիւնք Մերովեան թագաւորաց վերայ, նրանից յետոյ Փրուասսարը, սա ժդ. դարում Անգղիոյ և Գաղղիոյ մէջ եղած հարիւր ամեայ պատերազմի ժամանակ Փրուասսարը շատ էր ճանապարհորդել, մի ամրոցից միւս ամրոցը դնալով և այն ամենայն զը-րաց ունի ինչ որ տեսել էր և լսել։ Նրա պատմու-թեանց մէջ շատ կենդանի նկարուած են ասպետաց վարքը և սովորութիւնները, թէ նոքա ինչպէս կենա-էին երանց ամրոցներում, ինչպէս կերթային պատե-բազմ, ինչպէս կպատերազմէին, նոցա թուրնիր կոչ

ուած հանդէսները եւն։ Գերմանիոյ գրողներից երեւելին էր Ոթոն Ֆրեյզենկենցին, Կոնրադոս գ. Հոհենշտաուֆեն թագաւորի հօր եղբօր որդին, նա իւր պատմութեան մէջ կգրէ նա և Ֆրեդերիկոս Պարպարոսայի գործողութիւնները։

Մինչեւ դարերում թէպէտ գիտութիւնը և արհեստք հոգեւորականաց մէջ ծաղկեցան, բայց մի և նոյն ժամանակ բանաստեղծութիւնը աշխարհականաց մէջ ծաղկեց։ Այն բանաստեղծները, որք ասպետական ցեղից էին, միշտ սիրոյ վերայ կերգէին, ասպետաց քաջութիւնները և սխրագործութիւնները կգովէին, և շատ անգամ իրենց բանաստեղծութեանց մէջ յայտնապէս պախարակելով կխնդային ժամանակակից մարգկանց պակասութեանց վերայ նոքա Գաղղիայում կկոչուէին Թրուպադուր, իսկ Գերմանիայում Մեննէզենկեր։ Այս անսակ բանաստեղծները մեծ մասամբ կթափառէին մի ամրոցից միւս ամրոցը, և ամենայն տեղ սիրելի էին, մանաւանդ եթէ ասնախմբութեանց ժամանակ պատահէին։

Միւս բանաստեղծները հնութիւնը կգովէին, և երգոց մէջ իրենց նախնի դիւցազանց առասպելախառն պատմութիւնները կերգէին։ Գաղղիայում բանաստեղծութեանց գլխաւոր դիւցազն էր մեծն Կարոլոս և նրա երկոտասան ասպետները որոց մէջ երևելին էր Ռոլանդը որոյ վերայ շատ երգեր կան։ Ռոլանդի երգը դիւցազին վերջին քաջութիւնները կգովաբանէ, Կարոլոս մեծը Սպանիոյ արաբացւոց նուաճելով՝ կրկին դնաց պատերազմելու Գաղղիայ իսկ

Սպանիայում թողաւ զօրաց մի մասը, նաև Ռոլանդին և նորա բարեկամ Օլիվիէին և քանի մի ասպետաց։

Գանելոնը կայսեր մերձաւորներից մինը, Ռոլանդի թշնամին գաղտնապէս Արաբացւոց հետ դաւադրութիւն կազմեց Ռոլանդի դէմ։ Պիրենեան լեռները անցնելու ժամանակ ահագին զօրաց բաղմութիւն յարձակվում է Գաղղիացւոց վերայ։ Սկսում են պատերազմ, թէպէտ Ռոլանդը և Օլիվիէն մեծ քաջութիւններ են գործում, սակայն Գաղղիացիք թուով սակաւ լինելով իսպառ ջարդուում են։ Ռոլանդը տեսնելով իւր թշուառ դրութիւնը, իւր փողը երիք անգամ հնչում է։ Կարոլոսը որ բաւական ճանապարհ հեռացել էր՝ լսելով Ռոլանդի փողի հնչիւնը շուտով վերադարձաւ օգնութիւն հասնելու։ Մինչև նորա գալը Գաղղիացիք իսպառ ջնջուեցան և Արաբացիք լսելով Կարոլոսի գալստեան լուրը պատերազմի դաշտից փախան։ Ռոլանդը զգալով իրեն մահը կամեցաւ իրեն դէ-բանդալ սուրը ջարդել որպէս զի անհաւատից ձեռքը չանցնի, քարի վերայ խփելու ժամանակ փոխանակ կոտրուելու զանգակի ձայն կը հանէր։ Դիւցազնը թուլանալով մեկնուում է կանաչ խոտոյ վերայ և իւր կողքին է դնում իւր սուրը և փողը։ Կարոլոսը երբ հասնում է իւր ասպետներով պատերազմական դաշտը, տեսնում է իւր սիրելի Ռոլանդին մեռած։ Կարոլոսը վշտացած և զայրացած, մեծ հարուածներ է տալիս Արաբացւոց և դաւաճան Գանելոնին էլ չարաչար մահուամբ սպանել է տալիս։

Իսկ Գերմանիայում դիւցազնական պատմութեանց ժողովածը կոչուի երգ Նիբելունգաց վերայ, ինչպէս և հին Գերմանացւոց և Ս. քանոնաւորեանց բոլոր վիպասանական երգերը նոյնպէս և այս երգը Նիբելունգաց շատ սասոիկ է և նշանաւորական։ Նիբելունգաց երգին մէջ գլխաւոր դիւցազն է Զիգֆրիտը Նիբելունգայի իշխանը, նա գնում է Գուրիկոնեացւոց (Նիբելունգաց) երկիրը և խնդրում է Գունտեր թագաւորից նորա դեղեցիկ Քրիմհիլտա քոյրը իրեն կին, Գունտերը համաձայնում է նոյն պատճառաւ որ Զիգֆրիտը Գունտերին օգնէ որ նա կարողանայ Պրունհիլտայ թագուհոյն ձեռք ձգէ։ Պրունհիլտա թագուհին շատ ուժեղ կինէր, և կիսոպատանաւոր նրան հետ ամուսնանալ ով որ մենամարտութեամբ նրան կյաղթէ։ Զիկֆրիտը ընդունեց նրա առաջարկութիւնը, օգնեց Գունտերին և յաղթեց Պրունհիլտային։ Դեռ մի օրում երկու հարսանիք եղաւ միասին, Զիգֆրիտը ամուսնացաւ Քրիմհիլտայի հետ, իսկ Գունտերը Պրունհիլտայի հետ։ Բայց Պրունհիլտայն անբաւական իրեն ամուսնուց կնախանձէր Քրիմհիլտայի վիճակի վերայ։ Քանի մի տարի անցնելով՝ Զիգֆրիտը և Քրիմհիլտան գալիս են Գունտեր մօտ Վորմս քաղաքում մի երեւելի թուրնիրի, այն ասպետաց հանդիսի ժամանակ։ Պրունհիլտան այն տեղ ցանկանալով իրեն նախանձորդին տոր ձգել, Զիկֆրիտին անուանում է իւր ամուսնոյ վասալ, բայց Քրիմհիլտան էլ շուտով նրան կտաւչեցնէ ցոյց տալով որ Զիգֆրիտը յաղթող հանդիսացաւ

այլ ոչ թէ Գունտերը։ Պրունեհիլտան զայրացած ուխտուէ որ սատիկ կերպով վրէժն առնու Քրիմհիլտայից, կանչուէ իրեն բարեկամ Ատակենին և հրամայուէ որ նա Օլիգֆրիտին սպանէ։

Գունտերին և նորա եղբարց էլ յայտնի էր այն դաւադրութիւնը։ Յետ այնորիկ դիւցազնը կերթայ պատերազմ, Օլիգֆրիտը երբեմն սպանել էր վիշապ, և լողացել էր նրա արեան մէջ, և այն էր պատճառը որ նրա մարմնոյ վերայ ոչինչ զէնք չէր ներգործուում, միայն լողանալու ժամանակ մի տերև էր ընկել ծառից, կպել նրա թիկանց վերայ, և այն տեղն էր միայն մերձենալի զինուց համար Քրիմհիլտան նեղանալով և մտածելով իւր ամուսնոյ վերայ յայտնուում է այն գաղտնիքը Ատակենին, և խնդրուէ որ այն տեղը պաշտպանեն. որպէս զի զէնքով չվիրաւորեն Օլիգֆրիտի թիկունքը, դաւաճան Ատակենի խորհրդով Քրիմհիլտան թիկանց այն տեղ, որտեղից որ ինչպես կպատահէր Օլիգֆրիտին, այն տեղ խաչ կարեց որ Ատակենը կարողանայ վահանով այն տեղը լաւ պահպանել, Օլիգֆրիտը շատ ծարաւելով երբ ջուր կխմէր մի աղբիւրից Ատակենը յարմար միջոց գտնելով նիզակով տուաւ այն թիկանց տեղը և անմիջապէս սպանեց ազորմելի Օլիգֆրիտին։ Քրիմհիլտան անմխիթար դրութեան մէջ տասն և երեք տարի ողբաց իւր ամուսնոյ վերայ։ Վերջը նա ամուսնացաւ Ատոնաց թագաւոր Լ՝թելի հետ (Ատտիլլոս)։ Քրիմհիլտան այն նպատակաւ ամուսնացաւ Ատտիլլոսի հետ որ նա երբ զօրանայ, Օլիգֆրիտի

սպանողներից վրէժ առնու։ Ընդամենը 13 տարի և Լթելը իւր ամուսնոյ խնդրանօք հրաւիրում է թագուհոյ եղբարց իրեն մայրաքաղաքը։ Եղբարք գալիս են իրենց Պուրկոնտիոյ զարդարուած տպաւորներով, Հակենը թէպէտ զգում է որ մի վնաս կրելու է սակայն չկամենալով խեղճ ձեւանալ՝ ինքը ևս գնում է նրանց հետ։ Հպիւ թէ Պուրկոնտիոյ դիւցազունք մտան Լթելի ամրոցները, Բրիմհիլատանոյն բոպէին Հոնաց ղեկուորեց նրանց դէմ։ Պուրկոնտացիք պատապարուելով ամրոցի մի մասնեկում, բաւական միջոց կարողացան ընդդիմանալ Հոնաց զօրութեանը, այն էլ Գոթացւոց Տիթրիխի (մեծին Թէոդորի) օգնութեամբը, բայց վերջը բոլորքեանք էլ սպանուեցան բացի Գունտերը և Հակենը, որոց Տիթրիխը կարողացաւ մի կերպ պահպանել սպանման վտանգից։ Բայց Բրիմհիլատան ոչ ոքի չէր կամենում կենդանի թողուլ, նրա հրամանաւ Գունտերին գլխատեցին, իսկ Հակենին ինքը սպանեց։

Հոնաց մի տպեռը այնպիսի մի սոսկալի տեսարան նից ապշելով, և այլ ևս չկարողանալով համբերել սպանում Բրիմհիլատային։

Մինչեն դարուց վերջերում Իտալիայում գրականութիւնը, մանաւանդ բանաստեղծութիւնը շատ ծաղկեց։ Իտալիոյ երևելի բանաստեղծն է Տանթէ, Տանթէ ծնաւ Ֆլորենտիա ում։ Նա էր Կիպելինաց կուսակցութենէ և երբ Գուէլֆաց կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ, սա էլ միւս Կիպելինանց հետ արտաքսուած իւր վերջին տարիքը օտարու-

թեան մէջ անցոյց։ (Տանթէ վախճանեց 1321 թ.) Տանթէն գրեց մի երևելի վիպասանութիւն, ‘‘Աստուածային կատակերգութիւն,, այս գրուածոյ մէջ կնկարագրէ իրեն երևակայեալ ճանապարհորդութիւնը դժոխոց, քաւարանի և արքայութեան մէջ, և այնպէս կնկարագրէ՝ ինչպէս որ այն ժամանակ կաթոլիկները կընդունէին, դժոխոց և քաւարանի իւրաքանչիւր աստիճանաց վերայ՝ նրան կպատահեն զանազան պատմական անձինք, որք իրենց մեղաց և յանցանաց համեմատ կտանջուէին։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐՈՑ

Եվ նայեց դեպքին։ (Տարեմուտ վերջանալու 1321 թ.)
Տարին էլ գնաց մի գեղի մի գեղի մեջտեղումը։ «Էստա-
ղաշտի խառնիճաղանիներ», ասա մեր գեղացիներ մեջ
գնացին։ Ամառվանի գեղի գեղերի մեջ։ Ամառամուտ
Եկան դարձյալ, բաղանիք և սեղանի մեջ մեջ,
և գնան գիշերվանի, Ինչպես որ գանվում էր
Եկան գիշերվանի գեղերի գեղերի մեջ։ Ամառամուտ
գնացին դարձյալ։ Ամառամուտ գեղերի մեջ։ Ամառամուտ
գնացին

Spec In

115d

ՀՀ Ազգային գրադարան
NL0341279